Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L Gn
1351

1999

ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՂԵՏԻՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԿԱՄ

ՅՈՒՐՈՒԱԳԻՏ ՊԳՏՈՅ ԵՒ ԸՆԹԱՑԻՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅՕՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԶՄԻՒՈՆԱՅՈՅ ԸՆԴ ՆՄԻՆ ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ Ի ՎԵՐԱՅ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅՆՈՅՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ԵՒ

ՀԱՄԱՌՕՏ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի ՎԵՐԱՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ԱՅԼ ԱԹՈՌՈՅ ԵՒ ՎԱՆՕՐԵՒՑ ԱԶԳԻՍ

ԲԱԶՄԱԹԻՒ ԵՒ ԱՅԼԱՆԱՏԵՍ ԱՆՁԱՆՑ ԽՆԴՐԱՆՕՔ Ի ԴԻՄԱՑ ԱԶԳԻՍ ԳՐԵԱՑ

ԹՈՂԵԱՅ ՄԻՀՐԻԱՆ Տ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ ՄԻՀՐԱՏԵՍԵԱՆՑ

ԱՆՑՔ Ի 1820 ԱՄԻ ՄԻՆՉԵՒ ՅՎԵՐՋ ՆՈՅԵՄԲԵՐԻ

1860 ԱՄԻ ՓԲԿՉԻՆ

ՔՍԱՆԵԻՒՆՆԵՐՈՐԴ

ԳՈՐԾՔ ՀԵՂԻՆԱԿԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Տպագրութիւն Յ. Մուհէնտիսեան

1860

1199

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-ի ՊՄ ՍՍՀ
им. А. Мясникяна
АН Арм. ССР

Ի ՓԱՌԱՆԱՑԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՅ ԳԱՀԻՆ ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԱՌԱՔՆՈՅ

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Տ. ԿԻՐԱԿՈՍԻ Բ.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԺԹ.

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՍԱՐԳԻՍԻ Ե.

41354-ա

Հ8 1354

Ա. Ջ. Դ

Ներկայ հրատարակութեանս նիւթին վրայօք՝ ընթերցողաց շատերը պիտի զարմանան, նախ՝ ըսելով թէ՝ շատ ուշ մեացած է... երկրորդ՝ պիտի ըսեն թէ՝ ի՞նչ պէտք է վախճանեալ անձի մը ընթացքը և կամ ունեցած պակասութիւնները պարարակել, քանի որ ինքը մեզի բաժնուեր ու յաւիտենականութեան մէջ մտեր է։

Կ'ըսեմք, թէ՝ կամ մեր և կամ Աղգիս դժբաղդութենէն է, որ այսպիսի հետաքրքրական և Աղգօգուտ գործոց ձեռնամուխ ըլլող Բարերարք քիչ կը գտնուին Աղգիս մէջ. և ընդհակառակն կարողութիւն ունեցողներ ալ որ գտնուին մէկ մէկ նպատակի կը ծառայեն, որով շատ բանի մէջ հատարակութեան հաճելի չըլլալէն զատ՝ այլ և շատ ժամանակ ալ տարաձայնութեան տեղի տան։ Էր, փորձառութիւն ալ գիտէն Աղգիս բնաւորութիւնը՝ կամ լաւ և ուսման և ընթերցասիրութեան կողմէն ունեցած տմբութիւնը, վասնզոյց այսպիսի հետաքրքրական գործքերը՝ կամ չէն կարող հրատարակել տալ, և կամ կարողանան ալ ընթերցող ու գնող շատ քիչ կը գտնուին. որով թէ հեղինակք չեն օգտիր, և թէ հրատարակիչք փնաս կը կրեն, որուն որ փորձառու եմք...։

Կ'ըսեմք նաև, թէ՝ մենք թէպէտ և չեմք ուզեր հանգուցեալ մը անունը պախարակել և կամ անոր պատուոյն տրատ մը բերելու փափաքող լինել, քանի լեցի... բայց և այնպէս չեմք կրնար ալ ատութեան և մարդասէրութեան գլուխ և պարանոց խոնարհեցնելով՝ հակառակ մեր բնաւորութեանցը և ընդ դեմ Աւետարանական սկզբանց՝ այսին այո, և ոչին ոչ չ'ըսելոյ. վասն զի գրեալ է, թէ՝ անկից աւելին 'ի չարէն է, կամ լաւ և անոր թերադրութենէն է...։

Կ'ինացուենենք նաև պատուելի հատարակութեան, թէ՝ մենք յառաջիկայ գործը՝ ոչ այս և ոչ այն նպատակաւ աշխատեցանք ու հրատարակել փութացանք, այլ մեր նպատակը՝ Յովհաննէս Պատրիարքին, և կամ անցեալ Աղգային Պարշութեան ի՞նչ ընթացք բռնելը, և ի՞նչ նպատակի ծառայելով 'ի խորխորատ դեգերելնին՝ իբր հայելի մը մէջ ցուցնել էր, և

է. որով գտնէ մէկ օգուտ մը քաղած կ'ըլլայինք։ Բայց աւանդ աշխատութիւնս. և վայ դժբաղդութիւնս. որ վերոյիշեալ պատճառներուն համար՝ իրենց ընթացից և վարուց պակերը հրատարակած չեմ։ . . . Եւ քանզի Յովհաննէս Պատրիարքին վախճանած ժամանակը մանրայ տակ էր հրատարակութիւնս, և այն օրէն մինչև ցայդ չէնկերան պատճառն ալ՝ ասնոր դրամական օգնութիւն մը չըլլալն էր. որով չի կարողացանք ժամ յառաջ՝ ի լոյս ընծայել(*). բայց այժմ Աղդասէր ոռ Բարեբար Աստուծոյ նպաստիւբը կարողացանք՝ ի լոյս բերել, ըստ է որ մանրայ տակէն ազատել։ Յուսամք թէ՝ միւս աշխատութիւններնուս ալ օգնութիւն ու ձեռնտուութիւն մը ընկերի Բարեսէրք. անոնց ալ հրատարակութիւնք կրնան տեսնել Աղդայնք. և կրնան ալ հասկանալ յայնժամ՝ որ Աղդասիրական եռանդէն շարժեալ՝ քառասամ օրինակս՝ ժամանակին պարագայներէն տարգալ՝ աշխատեր եմ՝ ի սեր Աղգիս. բայց դժբաղդաբար երեսի վրայ մնացած է այսօր. և կը համարձակիմ

(*) Գ. խատես թէ՝ Աշտարակայս կողմանէ եղև այս ալ . . . քանզի, ամենայն իրայ ձախանն է գոնէէ կ'ըսի։ Նա մանաւանդ կ'ըսեմք. թէ՝ որչափ մնաս և դեշութիւն կը պատահի նէ մարդուս. յայտնի է որ շատս պատճառներէ յառաջ կուգայ գլխաւորաբար. նախ՝ ոգիտութենէ. երկրորդ՝ շահասիրութենէ. երրորդ՝ գինովութենէ. և չորրորդ՝ կրնց զայրացմանէ. և ահա այս չորս իրաց մէջ եթէ գտնուի մարդս՝ անհրաժեշտ է, որ անոր բան հասկրցնես և ըրած դեշութիւններուն հաշիւը տալով բան մը շահիս. բայց երբոր գինովութենէն ոգիսի. և կամ զայրացամբ վրայէն անցնի. յայնժամ ըրած դեշութիւնները առջին դնելով հաշիւ ցուցնես նէ իրեն. աւելի շահաւոր կ'ըլլայ. քան թէ վերոյիշեալ ազգերից մէջ եղած ժամանակը այնպիսոց բան հասկրցնելու։ Նա այժմ օրինակիս. եթէ մեր ալ դրամական օգնութիւն մը գտնէրով՝ քանի մը ամիս յառաջ հանած ըլլայինք նէ յառաջիկայ ազգասրն նկարագրութիւնս մանրայ տակէն. կարելի է՝ որ այնքան շահաւոր չէր ըլլար. քան թէ հիմայ։ Նա որում Աստուած հեռի՛ ընէ. կիրբերը զարգացած ըլլալով՝ շատերը գինովի պէս՝ իսօսածներն ու գրածներն չգիտցան ու մէկզմէկ անարգեցին. և որով մէկզմէնիս ալ խօսք չկրցին հասկրցնել և հասկանալ. բայց որպէսզի աւելա այժմ՝ խօսքը ինչ կիրբերը հանդարտած և ամէնքը իրենց գինովութենէն գրեա՛ թէ ոգիսած տեսնելով. և միանգամայն եղած վնասներն ու ազէսներն ալ առջևնին կեցած ըլլալով՝ կը յուսամք, որ աւելի ազդեցութիւն պիտի ընէ այժմ յառաջ.

ասել. թէ մեր բնական կենցաղավարութեամբը խորութիւն չընելով՝ այսինքն երբեմն գիտցածնիս, և երբեմն ալ գլաւոր ուխտաւորութիւնիս հաղորդելով ուռուամտաբ բանասերաց, վաստներաց (եթէ պարծիլ արժան է . . . .) մեզմով իրենք են պարծելք՝ ու վառաց ի փառս բարձրացեր են շատերը շատ պարագայներու մէջ. ու մենք և մեր աշխատութիւնները իբր թէ թագաւոր մեռցեր է. բայց չեր ինչ ի ծածուկ . . . :

Եւ ահա ասենք գիտնալով՝ սիրարամիտ անձինք շմեղադրեն զմեզ (ինչպէս կը ըսեմք) ըսելով թէ՝ ի՞նչ պէտք է որ մեր մարդ մը վերնանելէն էպիքանոր ընիաքը և վարքը գրի դրուի առեր է . . . :

Կ՚ըսեմք նախ՝ եթէ այդ օրինակ ըմբռնում մը ըլլար մարդկային սեռին մէջ. ուրեմն ի՞նչ հարկ կար. որ ամէն ազգի մէջ պատմագաններ եղեալ աշխատէին և մեծահատոր մատեաններ ի լոյս ընծայէին. արդեօք մենք ալ ինչ՞ պիտի գիտնայինք. որ մեր Ազգին մէջ Վասակի պէս անիծեալ մէկը եղեալով Ազգս Թուրագլոյ ու բնաջինջ ընելու ջանացեր է. և անոր գէմ Վարդանի պէս յաղթող գիւցազուն մը եղեր՝ բռնանդակ Ազգ մը և եկեղեցի մը վերականգնեցնելու

ջիկայ հրատարակութիւնս. քանի թէ նոյն ազգասոյն միմոցներուն երեսն ան հանած ըլլայինք. մանաւանդ թէ՝ ասալ անշնչաս սուտերի զայրացում մըն ալ մենք տուած պիտի ըլլայինք . . . ինչպէս որ բարեմտութեամբ հրատարակած ԵՐԿՈՒ ԽՕՍՔ անուանով յայտարարութիւնէս փրծը առինք. որմէ փոխանակ շնորհակալութիւն առնելու՝ ընդհակառակն անարդութիւն ալ տեսանք. իրեն կրիցը ծառայող երեւելի Հայրապետի մը . . . որն որ բոլոր ասելութեան ու կռուոյ պատճառ. եթէ զնեքը դնելու որ ըլլամք. կարծեմք թէ չեմք սխալիր . . . և այս ալ ոչ թէ հիմայ ներկայիս՝ այլ և 25 տարիէ ի վեր ժամանակ ժամանակ եղածներուն ալ ապացոյց մըն է . . . և այս ալ կը խոստովանիմք. թէ իրմէն չէ այս դէշութիւնները. այլ իրեն մասնիր անուանուող Ա. շակերտէն (Սեթեան Յովհաննէս վարդապետն) է. որ յարաժամ իրեն զիր կը դրդէ՝ իրեն և իրեն նման անձանց նպատակը յառաջ տանելու համար. վերջապէս հատարակաց կարծիքը կ՚ըսեմք. թէ Յակոբոս Գաստրիաքը բարեսիրտ ուսիամիտ մարդ մըն է. բայց իրեն աշակերտներն են զինքը ապատաւոր ցուցնողը. զի անխոհեմութեամբ միշտ իրենց ա և իցէ շարութեանցը դործիք ըլլած են՝ այս ծերունի և պատկառելի Սրբազան Հայրապետը : . . . :

պատճառ եղեր է. նաև ի՞նչպէս պիտի գիտնայինք, որ Ս. Լուսաւորչի Աթոռը՝ Մելքիսեդեկի պէս անարժան և Շնորհալիի պէս ալ ոմանելի Սուրբ մը յաջորդեր է, մի և նոյն Առաքելական և Լուսաւորչական Աթոռն. նմանապէս ալ ոչ սակից պիտի տեղեկանայինք, որ Աւետիքի եւայն Պատրիարքաց պէս բուռնակալ և անարժան անձինք՝ Քրիստոսի և Աստոր Եղբայր անուանեալ Յակոբ Սրբազան Առաքելոյն Գահը տիրապետած են. բայց և այնպէս՝ դեռ մօտ ժամանակներս Գրիգոր Պարոնտէրի ու Շղթայակրի պէս ոմանելի Հայրապետներ ալ նստած են մի և նոյն Աթոռը. և ահա ասոնք մեզի վկայաբանութիւնները ու պատմութիւնները կը սորվեցնեն. որոնք ժամանակակից անձինք՝ դրի տակ առնելով հասուցած են մեզի. նոյնպէս և իմն ներկայ պատմութիւններս ալ հանդուցեալ Յովհաննէս Պատրիարքին։ Եւ որովհետև մեկ մարդուն գործքերն առնելով կը դրէ ու կը դատէ մարդս՝ ինչպէս որ այս վերոյշէալ անձանց գործքերն առնելով ժամանակակից պատմագրաց և հեղինակք մեզի գրով աւանդեր են. որպէս զի անոնց մէջէն բարի ընթացք ունեցողներուն հետեւինք, ու չարին ետ կենանք. և այս է սուսերդգոյն մատնեագրաց բուռն նպատակը՝ որուն և մենք ալ հետեւեցանք։

Երկարդ՝ գիտնան որ՝ մենք իրեն կենդանութեանը գրեր և իր կենդանութեանը մամլոյ տակ դրեր ենք, որուն բարձրութիւն անձինք վկայելէն զատ՝ ներկայ բայերն ալ նոյնպէս անիծախոս թարգմանեցին. հասկրցուցնելով որ իրեն կենդանութեանը գրուած և իրեն կենդանութեանը տպուած է. միայն թէ հրատարակութիւնը ուշանալուն համար՝ արդի աղտաղի պարագայներուն վրայօք ալ քանի մը խօսք աւելցուցինք, ինչպէս որ յաւելուածներուն մէջը պիտի տեսնուի. Եւ գիտեմք՝ որ անոնք ալ՝ շատ բարի կամեցողուս անհաճոյ պիտի երեւի, բայց սակայն մեր անկողմնապահութիւնը կը պարտաւորէ զմեզ. հառաջակաց կարծիքը և կամ գիտցածներս ըսելու։ Եւ ալ գիտնան որ՝ նիւթին պարունակութիւնը առաւել Աղգայինի կը վերաբերի՝ քան թէ Հանդուցելոյն։

Նաև յայտնի է, որ մեկ մարդուն մահը կենաց յայտնել իր գործքերը, թէ բարի և թէ չար. ըստ իմաստնոյն Սիրաքայ որ ասէ. «Վախճան մարդոյ յայտնութիւն առնէ գործոց իւրոց»։ (Սիրաք. ԺԹ. 29. ըստ հին թարգմանութեան)։ Այլ և

ըստ Տէառն բանի. «Ի բանից արդարանայ՝ և 'ի բանից պարտաւորի մարդս ». (Մաթ. ԺԲ. 37։ Տես նաև Յակ. Բ. 14-16)։

Դա մանաւանդ ինքը օրքան որ վախճանած է նէ՝ իրեն գործքերը կենդանի են. ինչպէս որ մինք ալ իրեն գործքերին առնելով գրած ենք. այլ իրեն ներքինը՝ մի միայն Աստուած գիտէ. և Դա միայն կրնայ դատել. այսու ամենայնիւ դարձեալ չեմք կրնար ուրանալ, որ արտաքինը՝ ներքինին պատկերն է մարդուս . . . ։

Արդ՝ այս պարզցուցներուս թող ապացոյց համարուի. այս օրուան անցած ցաւալի և աղետալի անցքերը, որ սիրելի և միանգամայն տառապեալ Ազգս՝ հանգուցեալ Երուսաղէմցոյ Պատրիարքին և անցեալ Ազգային Վարչութեանը գործքերէն պիտոյ կը քաղէ կոր . . . որոնք երանի թէ օրինակ ըլլային այժմեան Ազգային Վարչութեան. որն որ յառաջիկայ գործերնիս ալ՝ մի միայն այս նպատակաւ 'ի լոյս ընծայեցինք։

Տա՛ Երկինք, որ արթնանալով իրենց թմրութեան քունէն, շահասիրութիւնը՝ տարաձայնութիւնը և կռուանկրութիւնը մեկդի թողլով, միաբանական ոգւով՝ արծանաւոր ու բանիբուն Անձ մի ընտրեին՝ հանգուցեալ Պատրիարքին յաջորդ. և միանգամայն Մատենիս մէջի նկարագրուած աղէտքներուն ալ դարման և օգնութիւն մը ընելով՝ Ազգիս արդարացի իրաւունքները Ազգասիրաբար պաշտպանէին՝ ձեռք ձեռքի տալով . . . որուն անձկանօք փափաքող և բարեմաղթող եմք։

Ի վերջոյ և այս ալ կ'իմացուցեմք բարեմիտ հաւարակութեան, որ այս մեր գործը, և ուրիշ սատ նման գրութիւններ՝ Թերևս քանի մը շահախնդիր անձանց անհաճոյ երեւի, իրենց ներքին ՔՀԷՐՈՆ և ՈՍՂԷՆԷՐՈՆ գոչելուն համար. և գիտեմ ալ, որ սատ ոչ միայն զմեզ պիտի պախարակեն, նաև ոչ միայն մէջէն պակասութիւն մը գտնելով և կամ քանի մը բառ առնելով վեր վար պիտի քաշկռտեն. այլ և իմաստակութեամբ այս գրուածներուս մէջէն շատերն ալ՝ կամ կասկածելի պիտի ցուցնեն, և կամ սուտ հանելու հնարը պիտի մտածեն. և որով զերեմք իբր թէ քաղահմուտ (*) և կամ՝ իբր թէ անա-

(*) Սա՛ ալ կ'իմացուցեմք, որ մեր գրութիւնները՝ ըստ մեծի մասին ոչ այնքան ներքինից և ուսումնական կերպիւ, և ոչ այնքան ճարտասանական ձևերով ու բանասաստեղծական ոճե-

քատ երեւցընելու պիտի աշխատին. և այս ալ թէ իրենք ի-
բենց ուսումնասիրութեամբը, և թէ իրենց դրդմամբը ու խորհր-
դովը կամ դրամովը (որով կերպիւ և իցէ) այլոց անուամբը հը-
րատարակել տալով. որպէս զի (եթէ հնար է) կարենան իրենց
վերջին արատը բառնալ։ Այս կամիսաւ կ'ըսեմ, որ անով ալ
բան մը չպիտի կրնան շահիլ. քատ որում աւելի եւս զիրենք
Երուսաղէմայ Պատրիարքին, և անոր Պօղոս Փոխանորդին, և
կամ գործոյս մէջ նշանակուած ի և իցէ անձանց պատաս-
խանները ըլլալնին պիտի յայտնին. քան թէ ճշմարտութիւն մը
պիտի կրնան յայտնել։ Ըստ առաջին, Ա՛ռ տէրոյնը՝ Խո՛ր ախոռ։
՝Ձ ոՏ ՈՐ ԼԵՐՏ ՈՏՆԻ ՆԷ՝ ՆԷ ԻՐԻՆՆԷԿ . . . ։ Եւ քանզի՝
Ձ՝Շ ՄԻԱՅՆ ՄԻՏՔԸ ԵՂՈՂ ԱՆՁԱՆՑՄԻՆ ՏԵՂԵԿԱՆԱԼՈՎ. ԳՐԵՑԻ, ԵՑԻ.
Ձ՝Ի ԵՍ ԻՆՔՆՍ Ի ՄԱՆԿՈՒԹԵՆԻՆ ԱՆՏԻ ՏԵՍԱՆԵԼՈՎ՝ ՆԿԱՐԱԳՐԵՑԻ։

Թ. ՄԻՀՐԴԱՏԵԱՆՑ

1861 Հոկտեմբեր 16
Ի Պօլիս։

բով, նաև ոչ ալ Գաղղիական՝ Գերմանական՝ Ռուսական և Անգղիական եղանակաւ գրուածքներ են, ինչպէս որ կը տես-
նեմ այժմ ոմանց հրատարակած գրութիւններուն մէջը. թէ
ինչ տեսակ ուսմունք որ առնեն՝ նոյն եղանակաւ կը վարուին
իրենց գրութիւնքը մէջ. որոնց շատերուն մէջը նիւթ մը շար-
դուտնակիւին զոտ՝ այլ և ընթերցողաց շատերուն ալ ամենասակ-
նարկ և խորթ են այդ ձեւերը. որով մեղ կը թուի թէ աւելի
իրենց գիտութիւնը ու գիրքը կ'ուզեն ցուցընել այնպիսիները՝
քան թէ հասարակաց բարիք մը ընել ու բան հասկընել. . .
Ըստ մեր կարծեաց՝ այդ Բանաբերները եթէ պարզ գրաբա-
ռերով ու ոճով գրեն՝ աւելի ազէկ կ'ընեն, քան թէ ազբա-
տիկ և աշխարհաբառ ու խորթ լեզուով ու ոճերով գրեն և
հրատարակեն։ Կ'ըսեմ խոսարհաբար, որ եթէ այդ ընթացքը
և այդ ձեւերը բանեցնելու որ ըլլայինք, նախ՝ ամէն մէկ գը-
րութիւններու մեծահատոր գրքեր կ'ըլլար՝ նիւթին առատու-
թեանը նայելով, և մէյ մ'ալ՝ որ մենք գրաբառ չգրեցինք՝
այլ աւելի աշխարհաբառ և հասարակաց հասկանալի ոճովը ու
ընտանի լեզուովը գրեցինք, որ ամենքը կարենան կարդալ ու
հասկանալ. նոյ մասնաւանդ մեր միտքը ու գիտութիւնը
հոտարակութեան բան հասկընելէ, և ոչ թէ ինքզինքիս ու
գրչիս ցոյց տալ է . . . ինչպէս որ ոմանք այս մեսիաուս-
թեան ուզում կ'աշխատին . . . ։

ՈՒՂԵՐՁ

ԱՌ ԱՋՆՈՒԱՄԵԾԱՐ ՊԵՐՃԱՓԱՅԼ

ԳԻՈՐԳ ՊԻՇ ԵՐԱՄԵԱՆ

ԱՋԳԱՍԷՐ ԻՀԽԱՆ

Վ ՍԵՄԱՓԱՅԼ ՏԷՐ, չնա ժամանակ և ամեն առթի՝ մէջ Ձեր ցուցցած Ազգասէրական ոգին տեսնելով, մանաւանդ խմանալով աչ Ձեր բարեպաշտական ոգին, որ իբր նոր Նոյ բաս ցաւելով սուգ առնէք 'ի վերայ աղէտից նորոյ Սիոնի, վասնորոյ մեր համոզումը առաւել ևս կ'արդարացնէ, թէ Դուք՝ եթէ ձեռն կարկառէք, անշուշտ Ինոր վրայէն մթութեան մեայլը վերնալով՝ նախնի լուսաւորութիւնը ու փառքը պիտի առանց։

Ուրեմն հնուս առ Քեզ գոչէ Նշուսաղէմ. արի, յոտն կաց, և այց ել, ո՛ Բարերար Իշխան. քանզի Սիոն Աստր մեր ամենեցուն՝ հեծելով հեծէ, և տրտսմէ յոյժ, նա և տառապեալ յոյժ յոյժ. վասնորոյ և մեք Ազգովին ամենեքեան 'ի սուգ և 'ի տրտմութեան եմք,

և զԲՌԵՂ ունիմք միայն պաշտպան. և Քոյին խնամոցդ ակնարկելով՝ ապատեալ մնայ Երուսաղէմ։

Ապաքէն վստահութեամբ մեր այս փոքրիկ աշխատութիւնը նուիրելով 'ի պատիւ Ձեր Ընտան, միանգամայն ուրիշ ակնկալութիւն ներէ բաղդաւորին հեռու, միայն սա կը խընդրեմք Ձեր Վսեմութենէն, թէ հաւատայք, որ բնաւ ո՛և իցէ կուսակցութեան պատճառէ չ'ստիպեցաք գրել, այլ միայն ճշմարտութեան խեղամուտ լինելով՝ համարձակեցաք այս աշխատութիւնս յանձն առնուլ, վասնորոյ և Դո՛ւք ալ՝ այս գրուածը՝ առանց ո՛և իցէ կուսակցութեանց ունկն դնելու՝ ուշադրութեամբ կարդալէն զկնի՝ կարեկից ոգւով Ձեր պաշտպանութիւնը սիրով մատուցանէք, (քանի որ միջոցը և ժամանակը ձեռքերնիդ է..) 'ի սէր Աղգիս և Աթոռոյն Երուսաղէմի. որով Ձեր Աղգասիրութեանը և Խարեպաշտութեանը նոր ապացոյց մի տայք։ Եւ ահա մենք ալ՝ յայնժամ աշխատութեանս բաւական փոխարինութիւն մը առած համարելով բարեմաղթու կ'ըլլամք Ձեր անգին կենացը.

Խոնարհ ծառայ

Թ. Մ. ՏԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ

ՄԻՀՐԴԱՏԵԱՆՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յայտնի բան մրն է, որ ամեն ճշմարտութիւն մէկ մէկ հաւկառակ կուենենայ, և ամեն բարեաց դէմ մէկ մէկ չարիք կը պատահին. և ահա այս օրինակ ալ երեւցաւ Ս. Երուսաղէմայ Աթոռոյն վրայ. գիտէ՞ն թէ այս ալ Աստուծոյ մէկ նախախնամութիւնն է, որ ճշմարտութիւնը երեւան ելնէ, ու ընտրեալները յայտնուին։

Ա յսինքն՝ հոմարեան թէ՝ ասկից 35 տարի յառաջ եղած պժգալի տեսարանները Ազգատէր անձանց ջանքովը Ինոր վրայէն վերնատրով՝ բարեկարգութեան մէջ մնաւ, ու փոքր ինչ հանգըստացաւ ալ նէ Ս. Աթոռը, բայց սակայն դեռ ուրախութիւնը չկատարած և Ինոր ցաւերը չեմնացած, ընդ հակառակն անոր դէմ ալ երեսուն տարիէ ի վեր մեծ տարաձայնութիւն մը կը պրծաբ ի մէջ Երուսաղէմայ և ի մէջ Պոլսոյ. որուն պատճառը շատերը չգիտնալով տարտամ եղանակաւ բերան կ՚առնուն ու կը խօսին կերպ կերպ զրոյցներով, և կամ երբեմն կերպ կերպ կասկածութեամբ։

Բայց մենք՝ Ինոր նեղքին և արտաքին անցից ու կառավարութեանը, և Ինոր ազէտից պատճառը և աղբիւրը ոչ սկիզ և ինչ բանի համար յառաջ եկած ըլլալը գիտնալով, և հաւատալիմ ու ակնատես անձանցմէ ալ տեղեկանալով՝ կամենանք սոյն կարճառօտ և սաստիկ պատկերը և ուրուագիծը նկարագրել. որպէս զի ընթերցողք բարեաց տեղեկանալով՝ աշխատին գործման մը տանելու, ի փառս Աստուծոյ, և յօգուտ Ազգիս, և ի սէր Ս. Աթոռոյն Երուսաղէմի։

Եւ այս ևս չգիտցուի, թէ ասկէց շահ մը կամ անձնական պատիւ մը որոնելու դիտմամբ, և կամ կուսակցութեան ազդեցութեամբ այս ասպարէզը մտնել կ՚ուզենք, և կամ թէ յիշեալ Երուսաղէմայ Յովհաննէս Պատրիարքին, և ո՛ և իցէ անձանց հետ քէն ու վրէժ մը ունենք առնել, քանի լեցի։ . . . Այլ նախ՝ արդարութիւնը և միանգամայն Ազգիս իրաւունքը պաշտպանելով՝ անաչառ պիտի խօսինք, և ճշմարիտը պիտի յայտնենք. և երկրորդ՝ ժամանակիս Ազգային կանոնները ու ջանքերը տեսնելով՝ պարտաւորեցանք հետաքրքիր տեղեկութիւնները տալ. յուսալով նախ՝ որ տարաձայնութիւնը վերնայ ու նախատաճնաց պժգալի խօսքերը ջնջուին Ազգիս մէջէն. և երկրորդ՝ Ս. Աթոռն ալ բարեկարգութեան մէջ մտնելով՝ Ազգն ալ բարիքներ քաղի՝ ու փարելէ Ինոր կանոնաւոր վիճակէն։ Եւ այսպէս թիւ քանի մը գիտողութիւններ ալ աւելցուցինք ի վերայ բարեկարգութեան Ս. Երուսաղէմայ, և այլ Աթոռոց և վանքերէից Ազգիս։

„Երանեալք իցեն ոչք սիրեալ
„ցեն զքեզ՝ Երուսաղէմ, և ցըն-
„ծացեն նոքա 'ի խաղաղութեան
„քում։

„Եւ անիծեալ լիցին ամենայն
„ատելիք քո, և եկեսցեն օրհնու-
„թիւնք 'ի վերայ սիրելեաց քոց»։

(Տ՞ԷԻՐ · Գ՚Ը ԺԳ · 16–18)։

ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՂԵՏԻՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԿԱՄ

ՈՒՐՈՒԱԳԻՑ

ՈԳԻՈՑ ԵՒ ԸՆԹԱՑԻՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԶՄԻՒՌՆԱՑԻՈՑ

«Մի՛ բարձրացուցաներ զքեզ, զի մի՛ անկանիցիս
»և ածիցես ի վերայ քո անարգանս. և յայտ-
»նեսցէ Տէր զդաղտնիս քո, և ի մէջ ժողո-
»վրդեան կործանեսցէ զքեզ»։

(ՍԻՐԱՔ. Թարգմանութիւն Ղեւոնդեայ)։

«Ո՛չ ինչ բարեգոյն քան զբարեպէս կեցողն ի
»կրօնի, և ո՛չ ինչ չարագոյն քան զկործան-
»եալն ի նմին»։ (ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍ)։

Ա՛ՇԽԱՐՀԻՍ մէջ գլխաւորաբար չորս կարգ մարդ կը տեսնուի իրարու ներհակ բնաւորութեամբ։ Ա՛ռաջին կարգը՝ բարութիւն գործելով՝ բարի անուն ձգելու ետեւէ են. Երկրորդը՝ չարագործութենէ վխտրելով՝ իրենց վատութեան յիշատակը կը թողուն կ'երթան. Երրորդը՝ ո՛չ այնքան բարութիւն, և ո՛չ այնքան չարութիւն կրնան ընել, այլ անտարբեր

վիճակի մը մէջ մնալով՝ իրենց գաղանիքը սրտերնուն մէջ տեւողաբար կը պահեն. Իսկ չորրորդը՝ յաջող բաղդ՝ և յարմար ժամանակ գտնելով՝ և կուսակցութիւն ալ շահելով՝ ուզածնին կը գործեն համարձակապէս, թէ բարի և թէ չար. յորմէ ստիպուելով ոմանք՝ իրեն արտաքին գործերէն դատելով ու ցոյց տալով, Ուրբի Ուրբի կը ձայնեն. և շատերն ալ՝ անոր ներքին ապէտքները նկատելով ու տեսնելով՝ չարաչար կը պախարակեն. և ահա այս չորրորդ կարգի մարդոցմէն կընայ համարուիլ Ս. Նրուսաղէմի Ներկայ Պատրիարքը. ինչպէս որ իրեն գործքերէն պիտի տեսնուի։

Այս, Յովհաննէս Պատրիարքը՝ ծիծաղորդ է իր նիւթական շինուածեանցը կողմէն. որպէսզի՝ եկեղեցոյ Նրուսաղէմատունը, Իւսկիւտարու Այգիին տեղը Վանքի՝ ու տուներ և փողոցներ հաստատուիլը՝ որ ճապի մնահոսի Ակրտիչին արդիւնքն է. Նրուսաղէմայ հոյակապ Պատրիարքարանը, և հոն Լուսամնաբան անուամբ ամարանոցը, և այլն. որ ասոնք արդարեն պէտք են։ Այց ասոնց հակառակ՝ իր անխոհեմ կառավարութեամբը՝ Ս. Աթոռին տուած վնասներովն՝ աւելի Աս ծիծաղորդ է. որոնք որ ներքին պէտք են. զոր օրինակ.

Ներկայ Պատրիարքը Ս. Նրուսաղէմի, առկոյ եբր 42 տարիի չափ յառաջ Ինդրիանու-

պօլսոյ Նախկին Առաջնորդ Մեսրովպ վարդապետին քովը սպասաւորութիւն կ'ընէր. երբոր յիշեալ Առաջնորդը Ս. Էջմիածին կարգ առնելու որ գնայ՝ իր հետը տարաւ, և՝ վերադարձին Կեսարիա իր հայրենիքը հանդիպելով՝ իր քովէն ճամբեց սպասաւորը. նապ ալ ելաւ Իզմիր իր հայրենիքը գնայ։ Մեսրովպ Եպիսկոպոսը դեռ Կեսարիա գտնուած ժամանակը, յայնժամ Պոլսոյ Ազգային Պարչութենէն հրահանգ մը ստացաւ, որուն մէջ կը հրամայէր Պողոս Սրբազան Պատրիարքը, թէ՝ Կեսարիոյ Առաջնորդ Աբեդիք Սրբազան Եպիսկոպոսը իր հետը առնելով՝ Ս. Երուսաղէմայ Աթոռին այցելութեան երթան, ու հոն բարեկարգութիւն մը հաստատեն։ Յիշեալ Եպիսկոպոսները երբոր Սուրբ Երուսաղէմ ճանապարհորդեցին նէ՝ սա իմանալով՝ որ իւր Մեծաւորը Մեսրովպ Երուսաղէմէ, նոյն ժամայն Իզմիրէն ելաւ ու եկաւ գնաց, որպէս զի վերատին անոր քովը մնայ. և երբոր տեսաւ, թէ Մեսրովպ Եպիսկոպոսը զինքը ընդունէր, հոն Կիրակոս Երուսաղէմացի Եպիսկոպոսին քովը սպասաւոր մնաւ. վերջապէս հնարը գտնելով՝ հոն Աբեղայութեան կարգն առաւ Դաբրիէլ Պատրիարքէն, յիշեալ Կիրակոս Եպիսկոպոսին միջնորդութեամբ, միանգամայն և հիւրընկալի օգնական (էմիր հարճի համախ) կարգուեցաւ։

1820, Թուին սկիզբները՝ երբոր յիշեալ Ա. յդեղու ու բարեկարգիչ Սրբազան Եպիսկոպոսները՝ Երուսաղէմէն ելնելով Իրենց վիճակը դարձան նէ, սա Յոհաննէս Վարդապետն ալ՝ երբ թէ յիշեալ Եպիսկոպոսներուն ուղեկից ըլլալով մինչև ցՅոպպէ անոնց հետ եւ գնաց. և հոն իմանալով որ Մօտայի վիճակը Տաճկաց Տէրութիւնէն ապատամբեր է, յայն ժամ ինքն ալ ուխտաւորաց հետ մինչև Իրմիր իր հայրենիքը գալով՝ հոն կեցաւ ժամանակ մը։ Մինչդեռ մը եռաբը եկաւ, ու Պատրիարքարանի և Երուսաղէմայ տաճարը մէջ կը ջրէր. և քառասնամբ մը Օնաքարիա Եպիսկոպոսին քովը կը դեգերեր, որն որ նոյն ժամանակ Երուսաղէմայ փոխանորդութիւնը կը վարէր՝ ի Պոլիս։ Երբ եռաբը կուսակցութիւն շահելով՝ զինի Օնաքարիա Եպիսկոպոսին 1829(¹) Թուին Երուսաղէմայ փոխանորդութեան պաշտօնը տուցաւ։ Երբ ապա երբ ժամանակ որ Ա. Թուին Վարչութիւնը քանի մը անգամ հաշիւ պահանջեց անկէց ու չտուցաւ նէ

(¹) Ա յս Թուականները, որքան որ մեր յիշողութեան մէջ բռներ էինք, և. որքան ալ ուրիշներէն տեղեկութիւն կրցինք ստանալ նէ՝ այնքանով բաւականացանք. քանզի քանի քանի անգամ խնդրեցինք այժմեան Երուսաղէմայ փոխանորդ Սահակ վարդապետէն՝ բայց չկրցինք ստանալ. ուստի Թուականին ճանաչութիւնը վերաբերեալ սխալ մը եթէ գտնուելու ըլլայ, Թող ներողամիտ ընթերցողք, գիտնան որ յանցանքը իմն է. այլ յիշեալ ոսոսմեաբէր վարդապետինն է։

յայնժամ իւր վստահութիւնը անոր վրայէն վերցնելով՝ տեղը Փոթիշանցի Մարկոս եպիսկոպոսը յուղարկեց 1835 թուին, որ ապստամբելին ձեռքէն փոխանորդութիւնը առնէ. բայց նա նենգաւոր հնարիւք իր կուսակիցներուն ձեռօքը ճամբել տուաւ Պոլիսէն (²)։

Նոյն միջոցներուն Անդրիանուպոլսեցի երբեմն Պոլսոյ Պատրիարքը Պողոս Սրբազանը՝ Ազգին կողմէն Ս. Աթոռին բարեկարգութեանը համար Տնօրէն դնացած ըլլալով՝ նայեցաւ որ՝ Յովհաննէս վարդապետը դէռ իր ապստամբութիւնը կը շարունակէ. յայնժամ 1838 թուին՝ երբ որ Ղորլուցի Երեմիա վարդապետը Ռումելիի վիճակներուն նուիրակութեան հանեց նէ՝ անոր հետ նամակ մը ուղարկեց Պոլսոյ Ստեփան Պատրիարքին, որով կը բողոքէր Պողոս Սրբազանը՝ Յովհաննէս վար-

---

(²) Ո՛չ թէ միայն Աթոռին փոխանորդութեանը վրայօք եղած հաշտոյն համար էր, այլ աւաւել ևս Երուսաղէմին էր կամ՝ ու իր ձեռօքը վճռաւուած ծանրագին բաներուն ուսմնագուսմար դրամոց համար էր. որ նոյն միջոցին Պողոս սրբազան Պատրիարքը՝ Աթոռին պարտուցը ու բարեկարգութեանը համար այցելութեան դացած ժամանակը Ազգիս կողմէն, հոն գտնուած պահեստի զորդերը՝ այսինքն՝ մարդ արիսի։ սակէղնի, արծաթեղէնի, և այլ ուրիշ ծանրագին բաներու վերաբերեալ նիւթերը և ինչքերը՝ հոս Պոլիս խրկեց, որպէս զի ծախուելով՝ անկէ դտցած տակը՝ ժողովրդեան տուած կամաւոր ողորմութեանը հետ՝ Աթոռին պարտուցը տրուի։ Ինչպէս որ արուեցաւ նոյն միջոցին. որ ըստ ամենց ՀԷՅ, և ըստ ամենց ՈՒՆ հաւար քսակ էր։

դասեռին հաշիւ ջտալուն և անհնազանդութեանը համար. (3) բայց նա՛ալ ապարդիւն եւ դառնալով՝ իրեն հայրենիքը դնաց յիշեալ Մարկոս եպիսկոպոսին նման, և եւ թը Աստուծոյ նուիրակ կարգուեցաւ Աթոռին։ Բանդի ոչ թէ միայն Սոեփան Պատրիարքը անարի ըլլալով գործ մը չկրցաւ տեսնել յիշեալ վարդապետը. այլ և Յովհաննէս եպիսկոպոսը նոյն միջոցներուն Պոլսոյ Պատրիարքարանի կառավարութիւնն ալ ձեռք ձգած էր, իրեն կուսակից Փիշմիշեան և Փափազեան Աղիրայից տնօրէնութեամբը . . . . . ։

Եւ ապա 1840 թուոյն վերջերը՝ այսինքն զկնի վախճանին Դաբրիէլ սրբազան Պատրիարքին՝ Դաղատացի Իսահակ վարդապետը առաքեցաւ փոխանորդ Հրուսաղէմի, միանդամայն Հրուսաղէմայ Պատրիարքին մահը իմացուներու համար Պոլսոյ պատրիարքարանին. յայնժամ իմացաւ Մինասեանութիւնը, թէ Յովհաննէս եպիսկոպոսը Հրուսաղէմայ Պատրիարք ըլլալու կ՚աշխատի՝ իրեն կուսակիցներուն ձեռօքը. վասնորոյ երբոր Պոլսոյ Պատրիարքարանը ըստ սովորութեան առաջարկեց Աթոռին՝ որ իրենց մէջը գտնուած եպիսկոպոսներուն ցուցակը ուղարկեն, որպէս զի անոնց մէջէն մէկը ընտրեն Պատրիարք Հրու-

(3) Ա յս նամակը կրնայ տեսնուիլ Ի վախճան մատենիս, տես Յաւելուած Ա։

սաղէմի. յայնժամ Պիտանութիւնը առիթ առնելով մանաւանդ թէ՝ իբր պատեհ միջոց մը համարելով՝ իրենց ստորագրութեամբը հերքեցին յիշեալ Յովհաննէս եպիսկոպոսը Պիտանութենէն, և միանգամայն Ստեփան Պատրիարքին ընդ նմին և Ամիրայից ժողովին բողոքելով իմացուցին, որպէս զի անոր թելադրութեանը նայելով՝ Երուսաղէմայ Պատրիարքը կացուցանելու փորձ մը չփորձեն զանի. ՀԱՅՍ ՈՐ Կ'ԸՍԷԻՆ՝ այնպիսի անարժան և անհաւատարիմ անձին ընտրութիւնը՝ յեպին էր ամենեցուն, և Ս. Հրոն ալ առաւել ևս ինչպէս իրեն անոր երեսին (4)։ Ինչպէս որ կատարեցաւ գուշակութիւնին, որպէս տեսանեմք այսօր . . . ։ Եւ ի վերջոյ տեսնելով Ամիրայք, որ չպիտի յաջողի իրենց նպատակը յառաջ տանիլ, յայնժամ Օնաքարիա սրբազանը ընտրեցին Պատրիարք Երուսաղէմի, և հրովարտակն ալ յիշեալ Խահակ վարդապետին ձեռքը Երուսաղէմ ուղարկեցին։ Եւ քանզի ասոր ալ փոխանորդութիւնը չյաջողեցաւ. ըստ որում նոյն միջոցներուն ալ, այսինքն՝ 1841 թուին՝ Պոլսոյ ազգայնոց Էնաֆիներուն ու սարաֆներուն մէջ խռովութիւն ծագելով՝ վերատին արգիւնք մը չունեցաւ, և եռքը ճիզուիթական հնարքով մը յետս կոչեցաւ յիշեալ վարդապետը՝ միան-

(4) Տես դարձեալ Յաւելուած Բ. ի վերջոյ գործոյս։

գամայն իր հետը տանելով Օ՛աքարիա սրբազանին Պատրիարքութեան հրովարտակը՝ ինչպէս ըսինք. որուն փոխարէն 1842 ին Հ՛ընդկոստանի Վերջին Նո-Իրակո-Ռի-ն տրուեցաւ յիշատակաց արժանի հանգուցեալ վարդապետին . . . ։

Այդ 1841 ին Օ՛աքարիա սրբազանին Պատրիարք ընտրելն եղաւ, անմիջապէս Օ՛էյթինեան Յովհաննէս վարդապետը առաքեցաւ փոխանորդ Երուսաղէմի. բայց Յովհաննէս եպիսկոպոսը առանց հաշիւ մը տալու՝ մնաց իւր ապստամբութեանը մէջ . . . և միանգամայն Մինգաիւղի եկեղեցւոյն իբր քարոզիչ կարգուեցաւ. և հոն Ռ՛անիկ ամիրային հետաւելի յարաբերութիւն և մտերմութիւն հաստատելով՝ երբոր յիշեալ Ամիրայն Ս. Երուսաղէմ ուխտի գնայ նէ՝ Յովհաննէս եպիսկոպոսը իր հետը տարաւ, որպէս զի Միաբանութեանը հետ հաշտեցնելով՝ վերստին փոխանորդական պաշտօնը ստանալ տայ. սակայն Օ՛աքարիա սրբազանը և Միաբանք վերստին չընդունեցին . . . ։ Իսկ նա այն օրուընէ գուն կը գործէր և վերստին հնար մը կը բնտրուէր իր կուսակիցներուն ձեռքը, (Պօլսոյ Պատրիարքութիւնը չեղաւ նէ . . .) ձեռք բերել գոնէ Երուսաղէմի Պատրիարքութիւնը, ինչպէս որ բերաւ ալ, որ քիչ մը վարերը պիտի տեսնուի ։

1846 Մին, այսինքն Օ՛սաբրիա Սրբազանին վախճանէն զկնի՝ Յովհաննէս Եպիսկոպոսը վերստին շտապ աշխատեցաւ՝ որ Երուսաղէմի Պատրիարքութիւնը ձեռք ձգէ. բայց չի յաջողեցաւ այս անդամին ալ. վասն զի Ճարտարապետ Սէրվէրեան Յովհաննէս Ամիրայէն ակնածութիւն կ'ընէր Մատթէոս Պատրիարքը (ինչպէս որ ինքը՝ անոր միջնորդ եղող Իզմիրցի երիս Յարգելեաց կը զուրցեր . . . .) ըստ որում Ազգասէր Ամիրան՝ անոր վրան համարում մը չունենալէն զատ, այլ և սաստիկ զայրացած էր, անոր մէկ քանի անարժան ընթացկացը համար. վասնորոյ այս պատճառաւ յաջորդին ընտրութիւնը 1847 մինչև ցիսեմբրիամիսը աւելց, որ նոյն միջոցին Երուսաղէմացի Կիրակոս Սրբազան Եպիսկոպոսը Երուսաղէմի Պատրիարք ընտրուեցաւ. որուն հրովարտակին ալ՝ Պոլսոյ Երուսաղէմատան փոխանորդ յիշեալ Օ՛էյթինեան վարդապետը տարաւ Ս. Երուսաղէմ, միանգամայն փոխանորդութիւնը Ռոմանցի Թէոդոր վարդապետին յանձնեց. որն որ Երուսաղէմայ Ազգային Խորհրդարանի հաշուետուութիւնը բերած էր յայնժամ Ազգային Վարչութեան պահանջմամբը: Եւ արդ՝ ահա այս միջոցին էր, որ 120, հազար ղուռուշ տարեկան ամսական կապեց Աթոռը, Հիւանդանոցի, Թանգարանի և Ճեմարանի անուամբ. և այս ալ թելադրութեամբ Յովհաննէս Եպիսկո-

պոսի եղև . . . որով կը յուսար՝ թէ Ամիրա-յից հաճոյ երևնալով՝ կրնայ այս անգամ ձեռք ձգել Երուսաղէմի Պատրիարքութիւնը. բայց առողջ չի յաջողեցաւ . վասն զի յիշեալ Գէորգ վարդապետը, (որ այժմ Եպիսկոպոս և Աթոռին լուսարարապետն է), իմանալով անոր ըրած խորամանկութիւնը, խնդրեր Աթոռին կողմէն՝ զինքնելով այս որոշմանը ստորագրութիւն տուաւ՝ տարուէ տարի 120, հազար ղուռուշ Աթոռը հատուցանելու համար՝ որ յառաջ 60 հազար ղուռուշ կուտար, 1840 թուականէն սկսեալ Երուսաղէմի ճեմարան անուամբ . որով և Կիրակոս Սրբազանին անուամբը Պատրիարքական հրովարտակին աղ առնելու կարողացաւ և ուղարկեց Երուսաղէմ, ինչպէս յիշեցինք . իբր թէ կապալ (մուգաթա) մը ձգելով Աթոռին վրայ, և այս ալ շնորհիւ Յովհաննէս եպիսկոպոսին . . . : Եւ այս եղելութեանը լաւ վերահասու է Սատթէոս Սրբազան կաթողիկոսը, զի նոյն միջոցին Կ. Պոլսոյ Պատրիարքութեան պաշտօնը վարելովը՝ գրեաց թէ իրեն գործակցութեամբն ու տնօրինմամբը եղև :

1850, Մայիսի 24 ին՝ երբ որ Կիրակոս Սրբազանը վախճանեցաւ նէ՝ յայնժամ միջոց չանցունելով՝ խնդրեր իր յուսացածը ձեռք բերաւ Յովհաննէս եպիսկոպոսը, մէկ կողմէն Յակոբ Պատրիարքին տնօրէնութեամբը, մեւս

կոչմէն Ղ՝անիկ Ս՝միրային օգնութեամբը, մի-
անդամայն հետեւեալ կեղծ ու պատիր խոստ-
մանն ու դաշանցը վրայ հիմնելով իր Պատրի-
արքութիւնը. Ս՝յսինքն՝ Յովհաննէս եպիս-
կոպոսը Պատրիարք ըլլայ, բայց ժառանգաւո-
րաց դպրոց և բարեկարգութիւն հաստատե-
լու ջանայ Ս. Թոռին մէջ՝ ըսին. (իբր թէ
յառաջուց չկար . . .) և ինքը Յովհաննէս
Եպիսկոպոսն ալ ասոր կատարեալ հաճութիւն
և խոստմունք տալով միանդամայն սա պայ-
մանը ըրաւ Յակոբ Պատրիարքին և նոյն ժա-
մանակի Ս՝միրայից հետ. ըսելով թէ՝ Ս՝ղդ-
առաջարկութիւններնին անթերի կը կատարէ.
բայց եթէ այսուհետև մի միայն իրեն խօսքը
և ստորագրութիւնը բռնուին Ս՝ղդին ու
Պոլսոյ Պատրիարքարանին առջևը. և պէտք է
որ ուրիշ ո՛ և իցէ Ս՝միաբանից և Խորհրդական
անդամոց կնիքը և բաղքը չբռնուի որ ինքն
ալ գործ տեսնէ . . . ըսելէ որ՝ ինքը կարող
ըլլայ, թէ՝ Ս՝միաբանութիւնը նուաճել, և թէ
իրեն՝ ու իր կուսակիցներուն ո՛ և իցէ նպաստ-
տակը համաձայնակամ է յառաջ տանիլ, ինչպէս
որ եղաւ ալ . . . : Բայց այս գաղտնիքը և
դիտաւորութիւնը՝ կ՝երևի որ Բարեկարգ-Ռեան
Ժառանգաւորաց դպրոցի անունով ծածկեալ
պատրուակ մըն էր. որն որ գուցէ Յակոբ
Սրբազան Պատրիարքն ալ չգիտնալով խաբուե-
ցաւ նոյն միջոցին, ու այս դաշինքը ընդու-

նելով՝ իրեն հաճոյական սարքագրութիւնն ալ տուաւ Յովհաննէս եպիսկոպոսին. որպէս զի Միաբանութեանը մէջէն՝ թէ որ մէկը Յովհաննէս Պատրիարքին ապօրինաւոր և խարդախ ընթացքը դէմ Ազգային առեանը կամ Պօլսոյ Պատրիարքին բողոքելու որ ըլլայ՝ յայնժամ իբր թուր ի ձեռին ունելով զանի շողշողեցնէ, Միաբանից և Ազգին դէմ, ինչպէս որ ժամանակ մը եաբը այս զուրցածիս փորձը ըրաւ ալ. այսինքն՝ երբ որ Միաբանութիւնը իրմէն օրինաւոր հաշիւ պահանջեց, և երբ որ քանի մը անգամ իրեն անարժան ընթացից և կամապաշտութեանը դէմ բողոքեց նէ՝ յայնժամ Յակոբ Արբաղան Պատրիարքին տուած՝ յիշեալ պայմանագիրը ցոյց տալով՝ ըսաւ, թէ՝ Ազգը յեղ չճանչէր՝ այլ ինչ յանչնած է Ամրոսին ձեռքը....

Արդ՝ չերկնցընելով, և մեր պատմութեան շարունակութենէն ալ չի խոտորելով, դանք Յովհաննէս պատրիարքին ընտրութեանը և Երուսաղէմ երթալուն վրայօք խօսիլ. ինչպէս ըսինք, Կիրակոս սրբազան Պատրիարքին վախճանէն անմիջապէս եաբը 1850 ամին՝ վերոյիշեալ անձանց ձեռօքը և խորհրդովը՝ Պօլսոյ մէջ ընտրեցին սոյն Օմիւռնացի Մովսէսեան Յովհաննէս եպիսկոպոսը Պատրիարք Երուսաղէմի, որ նոյն միջոցին Երուսաղէմի փոխանորդութիւնը ձեռք ձգեր էր, հանգուցեալ

Դաւիթ եպիսկոպոսին միջնորդութեամբը կամ լաւ ևս միամտութեամբը, (որուն փոխարէն ապերախտութեամբ շատ անվայել ընթացքներով վարուեցաւ Երանելւոյն հետը, որուն մենք ալ ականատես եղանք սուրբ Երուսաղէմ եղած ժամանակնիս), և այս միջոցին Երուսաղէմէն երկու միաբան վարդապետներ յուղարկուեցան Հրաւիրակ (5). ուրոնք էին Բաղեշի Պուհաս վարդապետը, և Կէլիսօլուցի Զիլինկիրեան Յակոբոս վարդապետը, որ յիշեալ ընտրուած Պատրիարքը առնուն՝ ու տանին Ս. Երուսաղէմ, ինչպէս որ Պոլսոյ Պատրիարքարանէն հրաման ղրկած էին Աթոռին։ Յայնժամ դեռ չդացած՝ Իւսկիւտարու Ս. Խաչ եկեղեցին երբ ժամարար էր, և երկու հրաւիրակ վարդապետները քովը ապասաւորութիւն կ'ընէին, հոն Կենտրոն Հաղորդութիւնը ճաշակելու ատեն՝ (իբր պատրուակ նենգաւորութեան) կանչեց զա-

(5) Գուցէ կամ Պատրիարքին միտքն եղած է, և կամ կարդացած չէ, որ իրեն Հրայոյ յորմեալ և հրատարակեալ տուած Պարտաւորութիւնն արքոյ Թաղուտին Երուսաղէմի անուամբ պատրուակած գրոյն մէջը, անդ խստութեամբ Մկրտիչ Արծրունեան վարդապետը, (անդ երես 214) Կեսարացի Պատմէոս վարդապետին հանդարտալ կը գրէ. բայց նա հրաւիրակ եկած չէր, այլ նորոգ ընտրեալ Պատրիարքին ապրմանքը առ կանչելովը եկած էր, որ 'ի Պոլիս իրեն փոխանորդ կացուցանէ. ինչպէս որ նոյն միջոցին յիշեալ Պատմէոս վարդապետը Երուսաղէմի փոխանորդութեան պաշտօնը ընկալաւ՝ և վարեց ամենայն փաղփաղութիւնեամբ . . . :

նանք, և իր երկու քաղաքները բռնել տալ, ու ինքն ալ Ս. Ակիտը բռնելով, Բրիստոսի Մարմնոյ և Արեան վերայ սարսափելի երդում ըրաւ, ըսելով թէ՝ «Այսուհետև հանեցի սրտէս Միաբանութեան հետ ունեցած խէթս և ատելութիւնս. վկայ եղէք դուք ևս ընդ Մարմնոյ և Արեանն Բրիստոսի . . .» որով համարեա թէ՝ դատապարտութիւնը ինքն իրեն ըրաւ. ըստ որում նախապէս տեսաք՝ թէ՝ նէ ըրաւ այս ուխտին և երդմանը դէմ։

Արդ՝ երբ Երուսաղէմ հասաւ՝ նախնեաց մէջ սահմանադրուած կանոնները և երդման պայմանները չընդունեց (6), և չընդունելէն զկնի՝ նաև իրեն ստացուածոց և ունեցած ինչքերուն և դրամներուն տումարը ցոյց չի

---

(6) Ինչպէս և Ս. Եղիազարին կարգ տուած ժամանակն ալ՝ նախնեաց սովորութեան հակառակ վարուելով՝ Իշման տեղը Ս. Պատարագ չմատոյց. որուն համար առաջարկեցին ալ իրեն . . . նա մնաւանդ Ս. Գահին սովորութիւն ըլլալն՝ ի զատ՝ նաև նորատակ եպիսկոպոսունք զկնի ձեռնադրութեան իրը ուխտ դնելով՝ կը փափաքին նոյն նուիրական և երկրպագելի Ս. Տեղը Պատարագ մատուցանել, իրը շնորհք մը և օգնութիւն մը հայցելու ի վերուստ։ Բայց սա ձեռնադրութիւնը առնելուն պէս՝ խիստ ճանապարհ ինկաւ, ժամանակ չանցած Պօլսոյ Պատրիարքութիւնը ձեռք ձգելու համար . . . ինչպէս որ նոյն նպատակաւ եպիսկոպոս ընել տուին՝ իր նոսա՝ Սիրոյնները յանժամ . . . սակայն Վասիլի նեղուցը չի մնաց՝ հաղորդ էլեր Գամն. ինչպէս որ ինք ալ ցաւելով կ'ըսէր . . .։

տուաւ՝ ըստ սովորութեան Ազգուոյն Նրուսաղէմի. և ասոնք չընելէն ետքը՝ Մխիթարեանները կաշկանդելու համար հնար մը մտածեց և յաջողեցաւ ալ՝ այսինքն՝ խարդախութեամբ իրենց ձեռքէն ստորագրութիւն ալ առաւ հետեւեալ կերպիւ. Ս. Յակոբայ տաճարը բանալ տուաւ, ու հոն բոլոր Մխիթարեանները հաւաքելով՝ կեղծ ու պատիր ատենաբանութիւն մը ըրաւ, ըսելով թէ՝ Որովհետև որ Ազգը ձեզ Պապրիարք ընտրեց Ալրոթին՝ որով և ձեր վրայ ալ Տէրունական իրաւունք, դրանգամայն պէտք է որ՝ ձեր հաւանութիւնն ալ իրեն տաք՝ Պօլսոյ ազգային Վարչութիւնին շնորհակալութիւններ յայտնելով՝ ընդունելութիւն մը գրէք։ Ու այս գիրն ալ Ազգ միւռնայի Սաւազանեան պատուելիին յառաջուց գրել տուած էր, զանի ներկայացուց՝ որ հաճոյական ստորագրութիւններն անոր ներքեւը դնեն. յայնժամ Մխիթարը ինչ ըլլալնին չգիտնալով՝ յապուշ մնացին այս անակնուներելի և տարօրինակ առաջարկութենէն, բայց ինչ օգուտ եղածը եղած էր...։ Այդն ժամայն իրեր պատրուակ խորամանկութեան սկսաւ խօսիլ այսպէս. "Ու՞ յեղէ Պապրիարք ըլլալով՝ մի՛ կարծէք որ ձեր վրայ իրեր բռնակալ պիտի իշխեմ. այլ իրեր ձեր եղբայրը և վանքին յեղին ապասաորելին մեկը պիտի համարուիմ"։ Ու տարը իրը թէ գործքով մին ալ ապացոյց տալու համար՝ ապասաորներուն մէկուն կանչիկն խարազն (ջուլը) հա-

նել առաւ, և իր կռնակը հագաւ՝ ու հա-
նեց և համբուրեց զանի, ըսելով թէ՝ «Լիա-
ե՛ալ վանէին էերե՛ զմի 'ի սպասաւորայ եղէ»։ Յորմ
ամ սոխպեալ կամայ սկամայ սկսան սասրագ-
բուլթիւնեին դնել՝ յիշեալ պատրաստի գլա-
նուած գրոյն ներքեւը (բայց 'ի Պօղոս Սրբա-
զանէն, որ նոյն միջոցին հիւանդ էր), ուր տեղ
և ներկայ էր երբեմն Լսանայի և այժմ Հա-
լէպու Հրաշնորդ Սսեցի Նիկողոս եպիսկոպո-
սին ալ. և այս սասրագրեալ թուղթը առնե-
լուն պէս իր ծոցը դնելով ըսաւ, իբրեւ զի՞մի
Խարիրի՝ օլրո՞մ պիղէ. և անմիջապէս նոյն ընդու-
նելութեան գիրը Պօղոս Պատրիարքարանը ու-
ղարկեց, և առանկով եղև Պատրիարք Երու-
սաղէմի։ Յետ եռաբը Յաքիայի հիւպատոս Սբ-
բասիանեան պարոն Յակոբին՝ իւր բռնելիք
ընթացքը կերպիւ մը իմացուցեր էր՝ այսպէս
ըսելով. պո՞- վանէ՝ պէր Լապագ պալա պէնդէր, ֆա-
գամ է՞սպի՞նէ պէր Լնագըմ ՝՝՝՝ ՝՝՝՝ մ՞ալ՝ մ՞ինէ՝ պէր Լնագըմ
ՀՀՀՀ՝ ծ՞ալրը պէրեր պէրեր գօվալամալը չէ՝ էսպէ՞պէյ-
դիլ կիպի պալը պիլ եէյէլմ . . . ։ Յետ սկսաւ յա-
ռաջակայ ու բանիբուն Ընդամենը ցրուելու
և իրեն խորշեցնելու խորհուրդը կամ ելաւ։ Ա-
պարոնին առակաւ իմացուցածը 'ի գործ դրնել. նախ և յառաջ Ընթառակալ փոխանորդին
հետ ներհակեցաւ, որ Կարնեցի Դաւիթ ե-
պիսկոպոսն էր, և հեռզհեռէ միաբանութեան
հետ, միանգամայն յարիշաակելով անոնց ու-

նեցած իրաւասութեան արտօնութիւնը Ս. Աթոռին վերայ, որով մի առ մի ցրուելու պատճառ եղև անիսահմանութեամբ։ Այլ և մեկ քանի օրինաւոր անձինքն ալ պաշտօներ. նուն հանեց ու անոնց տեղը չ'պիտոյ ու տը. գետ անձանց պաշտօն յանձնելով՝ անանկները յառաջ քաշեց։ Եւ Միաբաններէն մեկ քա. նին՝ քանին եկեղ դիտելով, մանաւանդ թէ՝ յիշեալ Պարոնին հետ ըրած խօսքերն ալ իմա. նալով, յայնժամ Պատրիարքը որոնց որ պաշտօն յանձնելով հեռաւոր տեղեր ճամբել կ'ու. զեր նէ՝ նոյն ժամայն հեգնելով մը կ'աղաչէին իրեն հասկցնելով, թէ՝ Նէրէչէ՛ սրբապան, մենք այն մեղքին վրայի ճանճերը չենք, ո՞ յիշէք ալ ինաս մը ը՞նենք։ . . . ։ Այս բռնութիւնքն էին՝ Խալուցի Լուկաս՝ և Կեղիպօլուցի Յակոբոս վարդապետները, զորոնք իբր թէ՝ նուիրա. կութեան անուանով Պաղտատ զրկելու կը ջա. նայր։ Այն միջոցներուն էր, որ Դաւիթ Եպիսկոպոսն ալ տեսնելով այս գէշութիւննե. րը և խարդախութիւնները, նաեւ ապագայ վնասները գուշակելով՝ հրաժեշտ տուաւ Աթոռակալութենէն. և անոր եռեւէն սկսան խորհրդական Անդամներն ալ հրաժարիլ. որք էին՝ Գէորգ Եպիսկոպոս Լիսմանցի, Սարգիս վարդապետ Հաճընցի, Թէոդորոս վարդա. պետ Կեղիպօլուցի, Եփրեմ վարդապետ Հա. ճընցի, Աստուածատուր վարդապետ Գօլաս ցի,

և Մեսրովպ վարդապետ Տիգրանակերցի։ Բայց կը յուսային, թէ Պօլսոյ Յարգելենե-ռէն 'ի հարկէ հարց ու փորձ մը կ'ըլլայ այս բանիս վրայ, սակայն անցոյս ելան։ . . . և հասարակ Մնաբանք տակաւին կը յուսային ժողովք մը հաստատուելուն, և կ'սպասէին պատրիարքարանի շինուածեան աւարտմանը, որ գացածին պէս սկսեց, "պէն չէնէմդէն եաբաճաղըմ" ըսելով (7), թէպէտև Մնաբանութիւնը անոր նիւթը պատրաստած էր յառաջուց, և առթի մը կ'սպասէր շինելու։ 1854ին երբ աւարտած էր շինուածիւնը, և մինչեւ նոյն ժամանակը հաշիւ տեսնուած չէր՝ ըստ կանոնի Ազգոյն. յայնժամ Մնաբանութեան համբերութիւնն ալ լմնալով՝ սկսան առաջարկել հաշուոյն համար՝ ըսելով, թէ՝ "Ազգայ Մնաբանէ ինչ պիտի ըսեն, և կամ Ազգէն կարցնող ըլլայ նէ՝ ինչ պիտի պատասխանեն. նաեւ ընդհէր Ազգոյն նախնեաց օրէնքը խախտելով՝ օրինաց դէմ կը վարուի, և անհաւասարմութիւն կը գործէ"։

Բայց այս օրինաւոր առաջարկութիւնը չընդունելով՝ դէմ կեցաւ, և վախ մին ալ

---

(7) Կարծես թէ՝ Լոմբրի գաւառին մէջ հօրենական մնացած ժառանգութիւնին ու կալուածներին ստացած ու հաւաքած էր . . . և կամ թէ՝ Զմիւռնիոյ մէջ Եօրդանճիի աշկերտութիւն ըրած ժամանակը վաստակած ու իր հետը Երուսաղէմ տարած էր . . .։

ցոյց տուաւ, թէ՝ «չէ՞ նէ կ'ելլէմ Պօլիս կ'երթամ. մելլէթ պէկ ըռանըմաղ, պանա ռիսալիմ էրմիշ պիւ-ղենի, նայլի»։ և յայնմհետէ հակառակութեամբ վարուելով՝ բոլորովին պաղեցուց Միաբանութիւնը իրմէն, և մինչև 1856 տեւեց այս վէճը։ Եւ յայնժամ յիշեալ թուոյն միջոցներն ալ՝ երբեմն Պատրիարքին մտերիմ և Ա.Թոռոյն Աւագ Թարգման Կէլիպօլուցի Յակոբոս վարդապետն ալ՝ որ Յոպպէի Խարանիկնայի տեղւոյն դատաքննութեանը համար Պերութ գնացած էր, 'ի վերադարձին անմիջապէս նա՛ ալ հրաժարեցաւ. և այն միջոցներուն ալ Միաբանք սկսեր էին ցրուիլ (8). և այնուհետև Ա.Թոռին գործքերը խառնիխուռն և երեսի վերայ մնաց մինչև ցարդ։ Եւ հոգին

---

(8) Հմարկ կը համարիմք քանի մը տարիե 'ի վեր Ա.Թոռէն դուրս եկած ու Պատրիարքին երեսէն ցրուած Միաբաներուն անուանները նշանակել հոս, որպէս զի գիտցուի, թէ որքան յաջողութիւնը պակաց է Ա.Թոռին մէջէն. վանականները մէկմի առնելով՝ (որոնք որ 20 նէն աւելի կ'ելնէն,) կենդանիները յանանի յանուանի հետևեալքն են. այսինքն՝ վարդապետաց դասէն, Սիրոիչ, Արիստակէս, Մեքայէլ, Եղիշէ, Աբրահամ, Մելքիսեդ, Գաբրիէլ, Յակոբոս, Տիմոթէոս, Սարգիս, և այլն։ Եւ սարկաւագներուն դասէն, որոնք որ այժմ վարդապետ ու Առաջնորդ են. Յարութիւն վարդապետ, որ այժմ Առաջնորդ և Եպիսկոպոս է Կարնոյ. Ալեքսան վարդապետ՝ որ այժմ Պօլսոյ պատրիարքարանն է. Առաքել վարդապետ՝ որ մնտերս Մոլտաւիայ գնաց՝ ու այժմ Պոլիս է. Պետրոս վարդապետ՝ որ այժմ Մշու Առաքելոց վանքին 'վանայր է. թող նաև դպիրները ու հասարակ Միաբան եղբայրները։

խալբեալը- համար, սա աղէկ-ի՛կ-ն ալ ըրաւ Պատրիարքը, որ ուսանող աշակերտներն ալ ցրուեց, և անոնց վարժապետն ալ փոխանակ վարձատրելու՝ (որն որ ուրթը տարիէ՝ի վեր ծառայութիւն կ'ընէր Ս. Թոռին) անոր ալ ամսականը կտրեց, յորմէ նա ալ հրաժարականը տալով՝ մեկնեցաւ Ս. Թոռէն, որ էր Օ. Միւռնայի Տիգրան Հայրապետ Սաւալանեան սրբազանն։ Եւ յայնժամ Հանգուցեալն Պատրիարքը, գայթղեղութեան եռեռէն սկսաւ ըսել, թէ՝ «կ'ուզէնք կ'ելնէ ոչ-մէ, կ'ելնէ՝ կ'ելնէ՝ ոչ-մէ, ամմա ինչ պիր ըլլ եաբարը՝ թ՝ հէնգի պաղարնա կ'ուզէր ելլէր . . . ինչ ալ եէրինք ելլէ պաղարը, կ'ինք ելնէ՝ կ'ելնէ՝ ոչ-ոչ-մ»։ Ինչպէս և այս խօսքերը՝ ուխտաւորներն ալ շատ ժամանակ լսած են։

Իսկ մեացեալ Սինաբանութեան մէկ մասը՝ Ճարերեին հատնելով, այս անակնութեան աղէտքները Պոլսոյ ազգային Պատրիարքարանը իմաց տալով բողոքեցին 1856 ամին, յանսալով որ՝ Պոլսոյ սրբազան Պատրիարքը և Գերապատիւ ժողովը՝ այս ցաւին դարման մը կ'ընեն. որով վերատին բարեկարգութեան մէջ կը մնանէ Ս. Թոռը . . . բայց ցաւ է անտանելի զարմանալ, թէ ինչպէս և ինչ իրաւամբ յիշեալ բողոքագիրը ետ դառնալով՝ Երուսաղէմայ Պատրիարքին ձեռքն անցաւ յայնժամ, ինչպէս կը լսենք . . . (՝) . որով Պոլսոյ

(՝) Ոմանք կարծեն թէ՝ Երուսաղէմայ փոխանորդը իմա-

ազգային կառավարութիւնէն ալ յոյսերնին կորելով Միաբանք, յայնժամ առաւել ևս ցաւերնին սաստկացաւ։ Այս ընդ հակառակն Պատրիարքն ալ ինքզինքը վար չդնելով, ու անչիշաչարութիւն չընելով, բոլորովին անխոհեմութեան զէնքերը ձեռք առաւ, ու սկսաւ ևս առաւել խրոխտալ Միաբանութեան վերայ՝ ու անոնց հետ հակառակութեամբ վարուիլ[10] ըսելով թէ՝ "Խաչերէնիկ կինէ մահէր եաբընը, վէ կէրիրին պէն պէ պոյո՛մ ըլան իմպա գոյալը, էյլէ կէօնդէրին Պոմպոյա. հայ շաղիանլար հայ... Պոմ պոյլա չէմ վար, հէպսինինէ պիլի ճէպիմէպ պիր..." Այս այս խօսքը սովորութիւն ըրած ըլլալով՝ մինչև անգամ ուխտաւորաց ալ կը խօսի այժմ, իբր պահարակելով մը Պօլսոյս գլխաւորները. համարեա թէ՝ բազում իրաւամբ... քանզի նոքա Պատրիարքը կացուցին...։ Նաև այս

նալով յայնժամ, բողոքագիրը չ'տալով Ազգային Ժողովոյն՝ ևս դարձուցեր՝ ու Երուսաղէմայ պատրիարքին իրկեր է՝ թէ իրեն Սենծաւորին հաւատարիմ ծառայութիւն ընելու, և թէ՝ ըստ առնարուեան եղելութիւնը ծանիլու համար...։ Եւ ամենք ալ Յակոբ Սրբազանը՝ իր պարտականին և տուած տարագրութեանը վրայ իբր թէ հաւատարիմ կենալու համար՝ ևս իրենց ու չհամարձակեցաւ ինքիրը զարտուղեցնելու կրնան...։

(10) Ինչպէս որ ամենուն ծանօթ է Գերմանիկեցի Սկրոմիշ վարդապետին գործքերին յայտնի է Ազգայնոց, որ Գասանկոսի տեսուչ կարգեց, և եարբ պէտքան ենդգու թիւններ և տաբաբութիւններ բանեցուց անոր հետ... որն որ այսօր Գալատիոյ առաջնորդ և Աբրեպիսկոպոս է...։ Ընդհանրապէս Յովհաննէս պատրիարքը սոյնչափ պարտաւորեալ էր մոռացանել...։

բանիս գլխաւոր ապացոյց մին ալ ունինք, որն որ հարկ կը համարինք նշանակել. որպէս զի լաւ հասկցուի բանին եղելութիւնը, որ բոլոր Ազգիս ծանօթ արժանահաւատ անձէ մը խմացած է մեզ. և ահա այն է, Օշիւռնեցի Կոստանդեան մահտեսի Գրիգոր յարգելին։ Այս անձը՝ 1857 ին Ս. Նշուսաղէմ ուխտի գնացած ժամանակը՝ հոն Պատրիարքարանի դռանը քովը կապուած երկու սնտուկ տեսնելով՝ կը հարցնէ Պատրիարքին, թէ՝ «ասոնք ինչ են». և նա կը պատասխանէ, «իրէ պիրերին է՝. պիրեր ՀԷՄԻ Սրամպօլա օլանլարդ . . . .»։ Նոյն այս խօսքը ուրիշ ընդարձակողներ ալ կան, իբր թէ՝ յիշեալ խօսքին վրայ յաւելցուցած ըլլայ պատրիարքը, ըսելով թէ՝ «իրէ էրի ՀԷ-ՀԷՊԷ կեօնպերմիշլեր . . . Ղերամլարը բարդ . . .»։ Ահա և զայրան խմաստասիրեսջիք . . .։ Նոյն այս եղելութիւնն ալ՝ Հրաւիրակ դացող անձանց ժամանակն էր, որք էին՝ Պալաթիոյ Տ. Յարութիւն պատուարժան քահանայն, և Սամաթիոյ Տ. Պօղոսեան Դալուստ պատուելին. որոնք իբր թէ՝ յիշեալ Պատրիարքը Պոլիս պիտի բերէին՝ Պոլսոյ Ազգային ժողովոյն հրաւիրանօքը. բայց նա՝ այս դարանները կը գործադրեր յայնժամ . . . սակայն գրեալ է, «էնք ինչ 'ի ծածուկ . . .»։ Նոյն շատ կ'ըլլայ ըսել, մոխանակ Պատրիարքին՝ յիշեալ սնտուկները եկաւ յայնժամ, ու Ազգային վարչութիւնը

տակին ու վրայ դարձաւ, իրենց մէջը տարաձայնութիւն մտնելով...։

Եւ ասկից 'ի զատ՝ նոյն միջոցին ուրիշ խարդախութիւն մըն ալ բանեցուց. և ահա այն է, ուստուծաբանի մը անուամբ շինութեան ձեռք զարնելը. որովհետև գիտէր՝ որ ժամանակ մը 'ի վեր, թէ Աղգը, և թէ Միաբանութիւնը՝ օրինաւոր կերպիւ ժառանգաւորաց դպրոց մը կ'ուզէ. մանաւանդ թէ՝ ինքն ալ՝ այս դաղափարէ եղած է... նաև այս բանիս համար ալ արտունչ կայ. վասնորոյ թէ Միաբանութեան և թէ Պօլսոյ Աղգային ժողովոյն օրինաւոր և ստիպողական առաջարկութեանը՝ յայնժամ իբր թէ զինքը մ'ու հաւանութիւն մը ցոյց տալով (11), և այնուհետեւ խորամանկութեամբ Աղգը խաբելով՝ սկսաւ իրեն յանցանքները ծածկելու մոթէլ մը շինել՝ և յաղարկել Պօլիս նստող իրեն փոխանորդին. որ երէ-ելեցոյ դռները մաղէցնելով ցոյց պայ։ Այն ալ՝ կամ Մեծաւորին հրամանը տեղը տանելու, և կամ թէ Ինոր հաճոյ երեւնալու համար, (ինչպէս որ բնականաբար կը

(11) Եւ ահա այս միջոցին էր, որ նեղը մնալով՝ Թանգարանի մը հաստատուելուն համար ալ զինքը... ուրուն համար արժանապատիւ Եպիսկոպոսը բաղաք կընէր, որն որ այժմ Ցեսուչ է Թանգարանին։ Դեռ ըսածնուս նայելով Հրաւէրակ գացող անձինքն ալ կը յորդորէին զԳաղափարը, որ արտօնութիւն տայ՝ յիշեալ Վարդապետին առաջարկութիւնը ընդունելով։

հեռեւի) սկսաւ իւր Պատրիարքին յաջողակո-
ւիւնը ո՞ Ճարպիկո-ւիւնը, նաեւ ազգասէրական ջանք ո՞-
գոյն ո՞նենալը հաշիւ. . . իբր այնու դիտաւո-
ւութեամբ թէ՝ Բոլոր Մինասեան ո՞սո-ճնապէսց,
ազգապէսց և արապա՞որ. և Պատրիարքը ո՞սո-ճնասէր,
ազգասէր և անարա՞ք է. . . և ժամանակ չէն պար, որ
այսպիսի ազգօգո՞ւ բաներ ո՞ յե՞ զարնէ՝ ո՞ բարեկամ-
գո՞ւիւնց հեպե՞ի, ուեւ ինքը 'ի վաղ-ց անդի կ'ո՞ւզէ
և կը գոփոխի, բայց Մինասեան արգելը կ'ելլան, եւ-
այլն (12) : Եւ սկսաւ նոյն 1857 ին Ս-սո-ճնարան

(12) Բայց այսօր ինքը Սահակ վարդապետը, երբեմն կը
պարսաւէ, թէ՝ Մինասեան իրաւունքն ոնդին է՝ որ կ'ըսենդ. և
երբեմն լաւագոյց համար ալ է՝ նդ որ ըսեն և հրապարակեն արդ-
ծան է՝ կրսէ՝ իւր ծանօթմենդրութեն: Հանարեա թէ՝ կէրպիւ մը
զանանք համոզելու կաշխատի, և կամ ինքն ալ այժմ Պատրի-
արքին հետ քէն ունենալուն համար, երկոսցի բերան կը դար-
ձնէ կը. . . . քանզի Պատրիարքը (լատնուս նոյելով)
իրմէն հաշիւ կը պահանջէ կոր քանի տարիէ 'ի վեր. բայց
նա իրեն Մնձաւորին ընթացքին հետեւելով՝ հաշիւ չիտար
կոր. վանոցայ հսկիչ Երուսաղէմ խրկած փոխանակագիրները
եւս կը դարձնէ կոր Պատրիարքը. ու ինքը այս տեղ իւր թէ
գրսէն գրամ առած ըլլալով՝ անոր տակաւը կուտայ կոր, (և-
թէ իրաւ էնդ) որով Ամենէն ալ մեծ վնաս կրլայ կոր. . .
ոմ գիտէ, և որոնք հսկիչներու է այս գաղանիքները և ա-
զէաքնները. . . : Գուբն զոր փորեայ և պիղեայ, 'ի նոյն ան-
կաւ 'ի խորխորատ, զոր և գործեայ. . . : Եւ ահա իրեն
բրածին հատուցումը, որ ինքը Յովհաննէս պատրիարքը կը
հսկուռակիր իւր Դպրոցներուն հաշիւ տալ. . . Ինչպէս և
այժմ Մինասանութեան ալ չիտար. . . բայց ինչպէս ըսինք,
որ էնդ որ սերմանէ՝ նոյնը կը հնձէ կոր. և իրեն ընթացքովը
շար օրինակ եղիր Մինասանից. . . : Սակայն Ամենէն վատ-
նեները ուր գնեն . . . . . :

անուամբ շինուածքի մը հիմը դնել, որ Պոլիս գալէն ետ մնայ։ Այն ժամայն Միաբանութիւնը բողոքեց ըսելով թէ՝ արդէն ուսում նարան ունիմք շինուած՝ Կիրակոս սրբազանէն հիմնադրեալ, ի՞նչ պէտք է ժամանակ անցունել և երկու հազար քսակ դրամ ալ ընդունայն տեղը վատնել. մեղք չէ՞ մի ատակին...

Ահա հոր և ահա գիպ, ո՞ր է ոնիար յոյլանիէլ... այսինքն՝ ահա ուսուցիչարան և ահա Բանգարան պարարապի, ո՞ր է ուսանող աշակերտ և դասապետ վարժապետ կը գոչէին... բայց որի՞ կ'ըսես...։

Ի՞ երկ հոս (Ղթոռին մէջ) ալ չըլլայ նէ, գոնէ Յոպպէոն մէջ Հի-պապոս ազգասէր Սուրբ Իշխանին յէլապակ ֆիգած ազարակին մէջ ընդարձակ պուրը ըլլայ ուսուցիչարան, որ պարապ կեցած է կ'ըսէին. և իր ունեցած հողը մշակուելով՝ ինչպէս էր կ'ընէ. և երկ չեռաէ՝ հոն գեղեցիկ վանքին կալուածներն ալ՝ անոր կը կապէնք, ըսելով կ'աղաղակէին... որի՞ կը հասկցնես։ Որոնց դէմ կենալով Պատրիարքը, հէմ իւր խօսքը բրաւ, և ալ այն անենման ընդարձակ տեղը՝ երբ սարկի մը վաճառելու ձեռք զարկաւ, շահասէր անձին մէկուն ձեռքը, (այն է՝ Յովհաննէսեան Յակոբ Փասալ կոչուածը, որ այժմ Պատրիարքին նեբքին մտերիմն է). որպէս կրկին և կրկին վերնաս տուաւ Ղթոռին՝ և հետևաբար Ազգիս։

Ի՞ տպա 1858 ին՝ խմացաւ Միաբանութիւնը, որ Յունաց վանքին կամ վաճառած է,

և կամ վաճառելու վրայ է. իսկոյն տան երկու անձինք Միաբանութենէն՝ իմաց տուին Յունաց, որ ձեռք քաշեն (13), յորմէ սարսափեցան Յոյնք չառնուլ։ Բայց յիշեալ Յակոբը՝ ուրիշ անձ մը գտնելով (անշուշտ շահասիրութենէ և ագգասերութենէ շարժեալ, և գտնէ իր Հօրեղբօրը կտակին իրաւունքը չի պաշտպանելով, որով և Ինոր ուխտն ալ դրժելով, մանաւանդ թէ յիշատակն ալ ջնջելով.) 60 հազար զուռուշի ծախեց (14) Յոյն Բաթրիարկի մը, որուն անունը Անդոն Լյոսպ կը կոչուի։ Ինոց որ՝ այժմ չորս տարի եղաւ, բայց չինելիք ոսոսճարանը դեռ չի լմնցաւ. որով թէ բարոյապէս և թէ նիւթապէս մեծ դեան ալ եղաւ Աթոռին . . . և ընդհակառակն ինայողութեամբ կը մնայ, և ընդհանուն պէտք դրամ չի վարեր, ըսելով՝ Համբաւ հանած է . . . թող որ՝ եթէ լմննալու ալ ըլլայ, ոչ վարժապետ կայ, և ոչ ալ ուսանող կայ, ու ոչ ալ պիտի ըլլայ՝ այս ոսկեգանգ և ոսոսճապէր Պատրիարքին օրովը . . . քանզի եղածներն արդէն

---

(13) Որոնց գլուխ էր՝ Կոստանդնուպոլսեցի Տիմոթէոս վարդապետը, որն որ դրութեանս ժամանակը Պոլիս էր, բայց այժմ վերադարձաւ Ս. Երուսաղէմ։

(14) Գուցէ և այս ալ սուտ հանել ուզելով՝ աւելի դնով վաճառուած կը համբաւեն՝ Պատրիարքին կուսակիցները՝ չքեմ հացկատակները . . . բայց մենք՝ սոսկ աղբիւրներին առնելով՝ մանաւանդ թէ՝ ներկայ գտնուող անձանցմէն տեղեկանալով, իմացանք թէ՝ 60 հազար զուռուշի վաճառեր է։

ցրուեց՝ ու յաջորդութիւնը պակսեցուց . . »

Ասոնք ընելէն եաքը տես ուրիշ ինչ ըրաւ, երբ որ Պօլիս փոքր ինչ խմացուեցան այս վնասներն ու գէշութիւնները, և երբ որ Աթոռին ու Ազգիս դժբաղդութենէն՝ ախոյեան կանգնող քանի մը Ազգասէր վարդապետներն ալ նոյն միջոցներուն վախճանեցան նէ, յայնժամ միջոց և մնաւանդ օգնական ալ գտաւ իրեն՝ ի վաղուց անտի իւր մտերիմը եղող՝ Պօլսոյ տեր Յէորդ քահանայն Անդրէկեղեցւոյ, (որն որ Պատրիարքին հրաւիրանօքը իբր թէ ուխտի գնացած էր,) եւ սկըսաւ Միաբան Աղթամարեցի Սկրտիչ վարդապետին՝ ի վաղուց յօրինած՝ Սորագիրոն-ին սրբոյ Հաղարծնի Աշրոնաղէմի անուամբ գիրքը հանգանակելով հրատարակել, միանգամայն սրբագիրոն-ին ալ յիշեալ Քահանային ընել տալ. (ինչպէս յառաջաբանին մէջը կ'երեւի). որուն մէջ լի սուտ թեամբ և խարդախութեամբ իրեն վրայօք գովեստներ ալ գրել տալով, (և կամ՝ շահասիրութեամբ գրքին հեղինակին ու անոր գործակից Քահանայն գրելով,) միանգամայն իր յանցանքները՝ իբր թէ Միաբանութեան վերայ բեռցնել ուզելով՝ յիշեալ տեղւոյն վաճառումանը պատճառ՝ Խորհրդարան Անդամները ցուցնելէն՝ ի զատ՝ անպիտան վայր մը ձեւացնել յիշեալ երեւելի պալատը՝ ու բարեբեր երկիրը . . . (տես անդ, Սատր". եր" 31):

Որն որ Խորհրդական Ընդհամ չ'ըլալէն ու չ'ընդունելէն 'ի զատ 10, տարիէ 'ի վեր. այլ և չի ծախուելուն համար ալ բոլորը ըրին խեղճերը, ու ականջ դնող չ'եղաւ (15) . . . : Թէպէտ նաև յիշեալ երեւելի տեղը՝ գուցէ ոչ Պատրիարքը տեսած էր, և ոչ ալ Գործակից Բահանայն. և եթէ տեսած ըլլային՝ հարկաւ չէին կրնար համարձակելով անօգուտ վայր մը ձեւացնել . . . : Ա.Ղ միայն Սիսաբանեարէն չորս անձինք որսալով՝ անոնց հաւանութիւնը առաւ Պատրիարքը. որոնք են՝ Գէորգ եպիսկոպոս լուսարարապետ. Թադէոս ծերունի վարդապետ, Սեսրովպ վարդապետ, և Սիրուիչ վարդապետ: Ընտրեմ առջինը (չգիտեմք թ'նչ պատճառէ ասիսեալ) գուցէ Պատրիարքը նեղը դնելուն համար զինքը՝ լուեց . . . . Երկրորդը՝ բոլոր աշխարհի ծանօթ՝ խեղճ, միամիտ ու զառամեալ անձ մի է . . . Երրորդին՝ թ'նչ ըլլալն ալ՝ Իզմիրին անց.քէն յայտնի է,

---

(15) Ես մանաւանդ՝ յիշեալ Պ. Յակոբ Փապուլը՝ ոտք կը կոխէր՝ Սիսաբանից դէմ, որ վաճառուի. ապա թէ ոչ 15 հազար ղուռուշ կորնչիլ, պուրէ՛ ապոյտ որ լիովճառնի, կը գուշէր . . . : Ես խեղճերը կրսէին, թէ՝ մենք դրամ չունինք պարտ, նաև մենք լաւագոյնիներէն էլ վաճառելու. ոչ՝ որ այս խորհուրդը էլ պուրա՛ն՝ գնա՛ անկից պահանջ քարնած ու խնդրած դրամդ, էնէ այն ալ իրա՛ն է նէ . . . : Բայց որի կրսես . . . խորհուրդ, մանաւանդ թէ՝ երդում ըրած էին Պատրիարքին հետ, որ Սիսաբանից խօսքը չըլայ՝ ու վաճառէն յիշեալ Ագարակը եթէ ըստակ մը ալ տուող ըլայ . . .

և իրեն ինչ ոգւոյ տէր ըլլալն ալ՝ զինքը տեսնող ուխտաւորներէն հասկանալու է . . . և գուցէ իրեն արարմանցը փոխարէն՝ իրը յաստուկ պատիւ տուաւ Աստուած՝ իրեն ամենամարդ մահը, որ յետ վաճառմանն յանկարծակի մեռաւ անարգագոյն տեղը . . . և Յորդանանին ինչ ըլլալն ալ՝ իր հաւատափոխութիւնէն ու ճիշդ-ի թիւրական կենցաղավարութիւնէն յայտնի է, որ անոնցմէ սորվեցաւ Ի բանան . . . որուն փոխարէն ալ դարպասճիռիւն պատիւը ընկալաւ Պատրիարքէն՝ իրը կաշառ . . . և որոյ համար ալ Յիշեալ դրքին մէջ՝ միայն այժմեան Պատրիարքին վերայ դատվեսաներ գրելէն 'ի զատ, Յիշեալ տեղն ալ՝ անպիպան ո՞ անօգուտ վայր մը ձեւացուց շահասիրութեամբ, և այլն, և այլն։

Այս ահա այսքանը հասկցուելէն ետքը, գանք այժմ Պատրիարքին միւս կառավարութիւններն ալ նկարագրել. որոնց մէջ՝ վերոյիշեալ խնդրոց բացատրութիւնները տեսնուելէն 'ի զատ, և միանգամայն ինչ ոգւոյ տէր ըլլալն ալ՝ պիտի յայտնուի . . . ։ (16)

---

(16) Կարելի է որ՝ Փոսոյ Պ. Յակոբը, այս մեր զուցացածները՝ իրը սուտ հանելու համար, Պատրիարքին հետ վերջապէս խնդիրը նեղը դնելով և կամ հնարքով մը խաբելով Տանիբրագրոմիրեան մին ալ այս մասին ընել տայ, որով Միաբանութիւնը յանցանաւոր և կամ պատճառ ցուցնել վաճառմանը, ինչպէս որ համարձակ ալ ապել տուած է Պատրիարքը, Յիշեալ դրքին մէջ՝ վերոյիշեալ իրեն համախոհնե-

Ընդ այլոց. 1851 ին Պրուսացի Թագաւորն հատուցաւ պարոն Կարապետը, երբ որ Սուրբ Երուսաղէմ ուխտի գնացած էր, յայնժամ թէ՛ իր բարեպաշտութեամբը և թէ՛ Մարաշցի Անկրոնչ վարդապետին առաջարկութեամբը՝ Գալիլեացուն մօտ բաւական տարածութեամբ գետին մը պիտի առնէր Աբրաքացւոց ձեռքէն, որով և յիշեալ Բրիստոսակեցիկ վայրն ալ պիտի ազատէր. և ալ եթէ շինուել հարկ ըլլար՝ իրեն կարեացը չափ օգնելով դրամ ալ պիտի տար յիշեալ Ազգասէրը. բայց Յոհաննէս Պատրիարքը՝ թէ՛ յիշեալ առաքինի անձին արդելք եղև առնելուն, և թէ՛ անոր միջնորդ եղող Անկրոնչ վարդապետին հետ ալ սկսաւ ատելութեամբ վարուիլ՝ ըսելով թէ՝ ի՞նչ կը խառնոտիս այդպիսի բաներուն...: Եւ ահա դրեա՛ թէ ասկից սկիզբն առաւ յիշեալ վարդապետին ու Պատրիարքին մէջ տեղի ատելութիւնը ու վէճը, որմէ ոչ միայն յիշեալ վարդապետը՝ (որ այժմ Գաղատիոյ

բովը....: Այս զուրցածիս ապացոյց կրնայ ըլլալ՝ այն անցքը որ 1857ին ըրաւ Պ. Յակոբը. այսինքն՝ ոչ միայն քանի մը Սիւաանեներէն, այլ և Քաղաքացի անուանեալ միամիտ խեղճերէն ալ՝ ոմանք համոզելով, ոմանք ստակով շահելով, և ոմանց ալ երկիւղ տալով՝ խարդախութեամբ ստորագրութիւն հաւաքեց՝ ու Պոլիս յուղարկեց. (ինչպէս իմացանք Սուրբ Երուսաղէմ...) որով Պատրիարքը՝ իբր թէ Աբոռին պէտքանի. և անոր Աբոռէն հեռանալը վճռագիրոր՝ ոչ մէջ ելաւ նէ պարտաճուռէ. ըսել տուաւ....:

Ուաջնորդ է) այլ և բոլոր Միաբանք ալ պաղեցան Պատրիարքին։ Յետ եաքը Զիլինկիրեան Յակոբոս վարդապետը՝ հնարը գտնելով յիշեալ տեղը Ուրբաթացոց ձեռքէն գնեց, յուսալով որ՝ Պատրիարքը վանքին համար կ'առնու, բայց տեսաւ որ Պատրիարքը փոյթ չունի առանկ բաներուն . . . և իրեն ալ կամ ստակ պէտք ըլլալուն, կամ աւելի գին գըտնելուն, և կամ թէ Պատրիարքին հետ ալ առերեսութեամբ ըլլալուն համար (որով և իբրէ) յիշեալ գետինը վաճառեց Ռուսաց։ Ցաւ է ըսել, որ այսօր յիշեալ գետինը ոչ թէ Ռուսք առին յիշեալ վարդապետին ձեռքէն, այլ և անոր մօտը գտնուած Դալիբեան ալ Յոյնք յափշտակելով (ինչպէս կը ըսեմք) իրենց վանք շինելու կը պատրաստուին այսօր՝ իբր անտէր գտածի պէս՝ Հայոց Աղբիս ստացուածքները։

Երկրորդ՝ իրեն անարժան վարմունքներովը Աթոռին պատիւը կոտրեց, որ ոչ միայն իրեն՝ այլ առաւել ևս ընդհանուր Աղբիս կը վերաբերի . . . և քանզի միշտ ամենուն հետ խրոտով և առերեսութեամբ կը վարուի, և բարեկամ ստացածն ալ, առուրվան պաշտածը երեկոյին կ'անարգէ . այսինքն մինչև որ բանը ըլլինայ ու շահի անկից, յետ այնորիկ կ'այլանդի ալէրները ԵՐՅԸՆԵԼՎ . . . նաև թշնամի կը ձեւանայ, ու առածը չիտար . խօսք տուածը չի կատարեր . և սուտ խօսել՝ ու սուտ տեղը

երդում ընել՝ յաճախ ու ամեն բանի մէջ՝ կը սիրէր . . . . և այս բնաւորութեանը համար՝ ամենքը գործ տեսնելէն հրաժարած են, և երկիւղ կը կրեն չ'ըլլայ թէ վնասուին ու աղարգուին։ Ա՛յլ և ինքը օրինաւոր մարդկանց գործ տեսցընել չուզէր, և ամենքը իրը արաքաւոր և խարդախ կը համբաւէ. յսրմէ հետեւցընելով կ'ըսէ. թէ՝ ի՞նչ ընեմ մարդ չկ՚ունիմ . . . ընդհակառակն՝ եղածին ալ յարգը չի ճանչեր. և մասնաւոր պակասութիւն ունեցողմը որ գտնուի, իրը հայր չի շահեր զանի. այլ կամ կ'անարգէ, կամ փոքր եղելութիւնը կը մեծցընէ, և կամ մասնաւորը ընդհանուրի կ'աւանէ։ Կ՚ը հաւատարմութիւն ալ չընելով՝ պէն իշէմի չէնդի եշէմ իլէ կէօրի-ըի-մ, կ'ըսէ. որով մէկուն՝ հաղար ալ կը վատնէ, ու հոգը չէ. և կամ թէ՝ բան մը չգտնէ, կամ գոյացնելու համար՝ կ'սկսի ամենուն իրաւունքը յափշտակել, և գոչել թէ՝ պո՞նար պէնի սօյճաք պէ՞. . . . . և այլն։ Որոնք մինչեւ անգամ Պօլսոյ մահմետական Բաշա կաչուած տեղւոյն արհեստաւոր Հրեաներն՝ հարկ թէ կրնան ընել՝ . . . որոնցմով՝ ոչ ամօթ, ոչ պատկառանք, և ոչ ալ իրաւունք ճանչնալ մնացած է . . . Օրինակի աղագաւ՝ շատերէն մէկը դնենք. մէկ բանի մը սակարկութիւն ընէ, և կամ մէկուն վարձք մը տալու որ ըլլայ՝ անմիջապէս կամ խօսք տուած օրին չկատարէ. կամ

ժամանակ անցուն ելով կը յոգնեցընէ, և եռ-
քը հրեաներին վոխանակութեամբ հաւա-
քած պակաս դրամները տալ կ'ուզէ, (այն
և աւելի գնով տալու կ'աշխատի . . . .)
որուն համար չէ՞ր բարա կ'ըսեն հոն. և
կամ յառաջ մաքոր ատակի խօսք տալով գոր-
ծը լմնցնէն եռքը՝ չէ՞ր բարա կու տայ. (և
ասոնք իրեն զուարճութիւն կու դայ, և ալ
վաստակ կը համարէ . . .): Յայնժամ ո՞վ է
նէ այն անձը՝ կ'սկսի նախատական խօսքեր զը-
րուցելով՝ կռիւ ընել՝ ու Ս.ՁԳԸ պախարակել
. . . : Վերջապէս՝ ինչպէս ըսինք. այս վարմ-
ունքներովը՝ թէ՛ զինքը, թէ՛ Ս.Թոռը և թէ՛
հեռաւոր Ս.ՁԳԸ խանգք ու խայտառակ ը-
րած է . . , և այս բնաւորութեանը համար
մինչեւ անգամ օտար ազգաց ալ ծաղր ու
ծանակ եղած է . . . . :

Հրրորդ՝ վերը ըսինք՝ որ իրեն վաստակ մը
համարած է, բայց կրկինը կը կորնչցընէ ամեն
բանի մէջ՝ ու հոգը չէ՛, զոր օրինակ. մէկ չափ
ցորենը՝ եօթը ղուրուշով ժամանակին չ'առ-
ներ, և եռքը 35 ղուրուշի կ'առնէ. նմանա-
պէս իւղը՝ ճարան 40 ղուրուշ եղած ժամա-
նակը չ'առներ՝ (Միաբանից խօսքովը), եռքը
իւր կամապաշտութեամբը՝ (ճակատն քրտինքովը
վաստակած չէ՞ եա՛ . . .) 95 ղուրուշով կ'առ-
նէ. և ահա միւս վաճառականներն ալ ասոր պէս
են . . . : Որն որ տարին չորս հազար չափ

(Էօրջէկ) ցորեն կ'երթայ Յրուսաղէմայ վանքին. եթէ ժամանակին առնուի 7, կամ 8, ղուրուշով կրնայ առնուիլ. յայնժամ բոլորին գումարը կ'ընէ, 28,000 ղուրուշ, (եօթնէն). բայց ժամանակին չառնելով Պատրիարքը՝ եռքը 35 կամ 40 ղուրուշով կ'առնէ. և այս հաշուով՝ 140,000 ղուռուշ կ'ընէ՝ (35 էն): Նմանապէս և իւղը՝ մէկ ճառ-ան (որ 11 օքայէ) 40 ղուռուշով կրնայ առնուիլ ժամանակին. և տարին 1,000, ճառ-այ կ'երթայ. որուն գումարը կ'ընէ՝ 40,000, ղուռուշ. բայց Պատրիարքը ժամանակին չ'առնելով՝ եռքը՝ 95, կամ 100, ղուռուշով կ'առնէ. և այս հաշուով՝ 95, կամ 100,000, ղուռուշ կ'ընէ: Հիմայ եթէ հանենք 28,000 ղուռուշ ցորենին ողջգինը, և 40,000, իւղինը նոյնպէս. յայնժամ Ամթոռին եղած վնասը կ'ըլլայ՝ 112,000, ցորենէն, և 55,000, իւղէն. որ ընդ ամենը՝ 167,000 ղուռուշ վնաս կը կրէ Ամթոռը. և այս ալ միայն ցորենին և իւղին վնասն է. որ 1854, Թուականին տեսնողը պատմեց: Յետ միւս պէտք ըլլալու բաներուն համար՝ վատնած դրամներըն ալ՝ Թող ուրիշները փնտռեն ու տեղեկանան. թէ՝ ինչ ահագին վնասներ կ'ընէ կոր Ամթոռը՝ այս ինայողութիւնամբ խարճող Պատրիարքին օրովը՝ Դպրեվանքի կամք բաներցնելուն համար . . . : Յետ եթէ միւս վնասներն մէկդի առնելով՝ միայն վերոյիշեալ ցորենին կամ իւղին

համար վասնած դրամներէն համեմատելու՝ ու մէկզմէկու վրայ տարու տարի հաշուելու որ ըլլանք՝ (միանգամայն 17,000ն ալ՝ 167 հազարէն դուրս ձգելով,) յայնժամ այս մասին դիպն տուած զեանը՝ տարին 300, քսակ կ'ըլլայ. և տասը տարի է որ Պատրիարք եղած է, ասել կ'ըլլայ թէ՝ քիչէն քիչ 3,000 քսակ ընդունայն տեղը՝ դիպն ցորենին Խիզանի համար աւելի դրամ վասնած է Պատրիարքը՝ յականէ յանուանէ . . . : Թոռղ և միւս Տնտեսականի վերաբերեալ բաներուն վասնած դրամներն, այսինքն՝ օճառին, կարագին, բրինձին, դարիին, ընդեղինաց, բանճարեղինաց, և այլ արմոտաց, նաև փայտի, և այլ պէտք ըլլալու բաներու համար վասնած դրամները . . . Թոռղ նաև՝ թէ՝ շինուածոց, և թէ այլ և այլ բաներու համար վասնած մեծադումար դրամները . . . որոնց համար ալ՝ այս վերոյիշեալ երկու բանէն համեմատելով՝ կրնան մակաբերել ընթերցողը, թէ ոքան մեծամեծ ծնասներ կրած է՝ ու կը կրէ կոր Ս. Աթոռը . . . : Եւ անոնք ալ հաշուի առնելով՝ եթէ տարուէ տարի՝ 700, քսակ ալ՝ անոնց համար դնելու և համարելու որ ըլլանք՝ (միանգամայն խիզանի և ցորենին՝ 3,000, քսակն ալ մէկ տեղ առնելով,) յայնժամ կը լինի ծնասը՝ 10,000 քսակ՝ տասը տարուան մէջ . . . . : Եւ այս հաշուէն դուրս է՝ իրեն Պատրիարքութեանը,

և շինութեանց, և այլն բանեբու վատնած աւելորդ դրամներբ. որոնց համար ալ եռաբը պիտի խօսիմ։ Իշ. ահա պարեկան վասպանին հաշիւը Պատրիարքին, որով և Տաճկերնեբուն առածն ալ շատ յարմար կուգայ, որ ժբատներուն համար կ'ըսեն. թէ՝ ՃԻՊԻԼԷՅԷ ԻՒԼԷՂԷՆԱՔ՝ ՀԷՆԱՊԻՆԷ ՀԷԱՐ ԱՅԱՐ . . . ինչպէս որ օրինակը ցոյց տուինք։

Իշ. եթէ այս զանբցածներնիս չափազանց համարուի. ուրեմն թող ապացոյց լինի այժմեան նայելով ամոյն դէպքը, որ հոս Պօլիս բարեկամին մէկուն գրած է Պատրիարքը, որ 2,000 հատ (քիլէ) ցորեն առնէ և յանձնէ Նրուսաղէմ. . . յորմէ կրնան բարեաց հատկանալ, թէ՝ որքան վնաս ու դժուարութիւն կ'ըլայ Ս.Թռուին. և որքան ալ յաջողի՝ ալեր-ալեր է եղեր կառավարութիւնը և անտեսութիւնը Յովհաննէս Պատրիարքին, որ բոլոր ամառը անցուցեր՝ ու ձմեռ ժամանակ մէկուն քառասպակի վատնելով՝ և բազում դժուարութեամբ. նաև ճանապարհին աւելի ծախս ալ ընելով՝ ու ցորեն առնելով վանքին մէջի եղող խաշանները պիտի կերակրէ . . . . եթէ չնեղնայ անշուշտ մարդիկը կամ անօթութենէ պիտի մեռնին, և կամ վանքը ձգեն ու փախչին . . . . ուրեմն վանքը և Տնօրինական Սրբազան տեղերը ոմ պիտի կառավարէ, և ոմ պիտի սպասաւորանէ յերեսաց յափշտակութեանց ահա պրծաւ . . . :

Չորրորդ՝ անշարժ կալուածները Երեսի վերայ մնալը բնաւ մի հարցունելը. քան որում ոչ թէ միայն հոգը չէ, այլ և հնարը դանէ անոնք ալ ձեռքէն կը հանէ. (ինչպէս որ օրինակը ցոյց տուինք.) նա մանաւանդ մարդու յարդ ճանչնալ, և մարդու պատիւը և իրաւունքը տեղը տանիլ, նաև հանդարտ ոգւով ու խոհեմութեամբ մարդ կառավարել՝ բոլորովին այս Պատրիարքին մտացը մէջ գոյութիւն ունեցած չէ... որով ամէն սպասաւորներն ու պաշտօնեայները՝ իրմէն պատեցնելով, և կամ անոնց իրաւունքները յափշտակելով, ոմանք ցրուած են, ոմանք վախճանած են, և ոմանք ալ յուսահատելով հրաժարած են. Ուստի ոչ միայն կալուածները արդիւնք մը չեն բերեր, այլ և Վրիֆները (յիշատակները) անգամ ցիրուցան և Երեսի վերայ մնալով՝ խարապ (աւերակ) եղած՝ ու կորսուած՝ և կամ կորսուելու վրայէն մնացածներն ալ... Թող նաև՝ որ վերատին արդիւնաւորելու վերայ չեն... ու յոյս չկայ բնաւին... վասն զի Միաբանից աշխատութեամբն ու ջանքովն եղած է՝ ու կ'ըլլայ հանապազ.... և անոնց յարգը չգիտնալէն՝ ու վերատին յաջորդ չի հասցունելէն, նաև ցրուելէն եռաքը՝ ամ պիտի բեղմնաւորէ, և կամ եղածները չինութեան մէջ պիտի պահէ.... Այս որովհետև Երուսաղէմի Միաբանք, մինչև այս Պատրի-

աբքին օրովը՝ անանկ գիտէին՝ և անանկ ալ համոզուած էին, որ իրենք իրաւանց տէր՝ և ժառանգ են վանքին բոլոր կալուածոց և արդեանցը. (ինչպէս որ պատմութիւններէն 'ի զատ, հրովարտակներէն և հէօճէրնեդէն ալ յայտնի է, որք կը վկայեն.) վասնզի անոնց հսկելովը՝ ու գիշեր և ցերեկ աշխատութեամբն ու պահպանութեամբն և ջանքովն է, որ Տնօրինական Արքական վայրերը մնացած են. և անոնց համար ալ՝ անշարժ կալուածներ ըստացած և յիշատակ թողած են, թէ Միաբաններէն առաքինի անձինք, և թէ Նախնիքներէն բարեպաշտ ժողովուրդք. որ շինութեան ու պայծառութեան մէջ մնայ Ս. Աթոռը։ Նա մանաւանդ Միաբաններէն մեծագոյն մասին, (այն է, ապստամբութեամբ դուրս չելլողներն) թէ իրենց կենդանութեանը, և թէ վախճանելէն զետի՝ բոլոր վաստակներն և ինչքերնին ու կալուածներն՝ մինչև ց'մեկ դրամն անգամ Ս. Աթոռին կը թողուն ու կը մնայ ալ. ըստ որում իրենց սեպհական Տուն և ժառանգական արտօնութիւն ստացած են պէտք գիտեն 'ի նախնեաց անտի։ Այս ահա այսու դիտաւորութեամբ ու այսու սկզբմամբ և այսու հիման վերայ դրած են նախնիք մեր Ս. Աթոռը. որով և մինչև ցարդ ալ՝ մնացած է անոնց հսկողութեամբը Ս. Յակոբը. և որով իրաւամբ տէր են Աթոռին և Նոր բոլոր

կալուածոց և արդեանցը։ (17) Ուստի այս դովելի Միաբանական կապը՝ ուխտը՝ ու դաշինքը աւրուելէն ու քակուելէն ետքը՝ ալ ի՞նչ յառաջադիմութիւն և վատահութիւն կը մնայ հոն, և ի՞նչ արդիւնք կրնայ բերել. . . նա մանաւանդ Յնոցիական տեղերը և Ինոր կալուածները ով պիտի պահպանէ և պաշտպանէ այսուհետև . . . . այլ ինչպէս ըսինք՝ Միաբանք՝ հանդերձ Եպիսկոպոսներովն ու Պատրիարքովը՝ համահաւասար՝ Ընթռուին բոլոր կալուածոց և արդեանցը՝ ժառանգ և իրաւանց տէր են. և ոչ Պատրիարքը և կամ ո և իցէ անձ մը եղեան արտօնութիւն մը ունի Ս. Ընթռուին վերայ, այլ բոլոր Միաբանութիւնը. և Պատրիարքը իբր նախապատիս Եղբայր և իբր նախապատիս Ընդամէ Միաբանութեան իբր Ուսադերէցի պատուով. և ոչ Բացարձակ Դեսպեսպան՝ որ և գլուխ է նոցա . . . ։ Ուստի առանց Միաբանական խորհուրդի, և առանց անոր ունեցած խորհրդական Ընդամոցը՝ իրաւանց

---

(17) Եթէ օրինաւոր կերպիւ հոկեն՝ և Ազգին օգտին ծառայեցնեն անոր արդիւնքը. վասն զի որքան որ իրենք իրաւանց տէր են նէ՝ բայց տունն ալ և արդիւնքն ալ Ազգին ըլալով՝ իրենք բացարձակ տէր չեն կրնար ըլալ. այլ Ազգին կողմէն փոխանորդաբար հոգ տանող և անոր իրաւանցը և տնտեսաձոցը վերայ հսկող պաշտօնեայք կը համարուին։ Շատ կ'ըլլայ ըսել՝ որ ընդդէմ Պատրիարքին արարմանցը, Միաբանութեան Պատրիարքին հետ հաւասարապէս իրաւանց տէր ըլալնին կ'ուզենք հասկցնել։

ուունք և արտօնութիւն չունի բնաւ մէկը բան մը տեսնելու և սահմանելու, վատնելու և իշխելու, և այլն. ինչպէս որ Ադաբերէցն ալ չունի բնաւ . . . բայց այս գովելի նախնեաց ընթացքը աւրեց և խանգարեց՝ ներկայ Յովհաննէս Պատրիարքը Երուսաղէմի . . . :

Հինգերորդ. Աֆֆայի Խարանդինայի տեղւոյն գործը, որ 1855 էն՝ մինչև 1856 ին՝ Կէլիպօլուսցի Յակոբոս վարդապետը՝ եօթը ամիս աշխատեցաւ՝ իր թարգմանութեան ժամանակը. ու վաւերացեալ Մպղպղեան և Բնհան սուացաւ Վասիլ Բաշայէն, (որ նոյն միջոցին կուսակալ էր Ի Պէրութ.) բայց յիշեալ թարգման վարդապետը չ'գիտեմք ինչ պատճառաւ հրաժարեցաւն՝ նոյն ժամանակը անգործադրելի մնաց: Թէպէտ և եաթը՝ 1857 ին Լենճեան Պ. Մաղաքը՝ Տատեան Պօղոս պէյի առաջարկութեամբը աշխատեցաւ, (որ յայնժամ օգափոխութեան պատճառ Պէրութ գնացած էր). սակայն անոր ալ մահը վրայ դալով՝ նոյնպէս և մնացած գործը՝ անգործադրելի մնչև յարդ: Եւ այն անենման տեղը՝ 16 տարիէ Ի վեր Դրիեն յանիրաւի յափշտակած են, ու մեր ձեռքը սենդիրը կեցած է . . . (18) որուն շինու-

(18) Գուցէ այս յափշտակութենէն մեր արդարաբար և իրաւաբար Տէրութիւնը՝ և կառավարութեան պաշտօնի վերայ անցնող բարձրատեսիա Անձանց շատերն ալ տեղեկութիւն չունին . . . :

թեանը համար՝ Ս. Թոռը հազար քսակէն աւելի դրամ վատնեց, ասկից 27 տարի յառաջ. որ եկող գացող ուխտաւորք՝ հանգիստ տեղ մը ունեցան ըլլան . . . . բայց այսօր ցաւօք սրտի կ'ըսենք, որ ոչ միայն Պատրիարքին հոգը չ'ըլլալով՝ այնպէս յափշտակուած կեցած է (իբր անտէր) Ս. Ս. Թոռին ստացուածքը՝ այլ և Աղգապետներնուս ալ . . . յորմէ ոչ ոսկաւ անպատուութիւն ու նախատինք կը կրէ կոր Ս. Թոռը, հոն գտնուած միւս Քրիստոնէ ազգերէն. որով և համարումնին ու վարկումնին Աղգիս վրայէն վերցնելով, մանաւանդ թէ համարձակութիւն ալ առնելով՝ անոնք ալ ասնելիւղ յափշտակել կուզեն՝ միւս մնացած մեր Տնօրինական տեղերը ու ժառանգութիւնները և ստացուածքները, մինչև ցարդ ըրած յափշտակութիւններնէն չի բաւականալով. :

Վ. Եղերորդ. Նաև անդ Յոպպէ ու մէջ Հիւպատոս Ս՝ուրատ իշխանին՝ Ս. Ս. Թոռին կտակաւ յիշատակ թողուցած Ս. գարակին ապօրինաւոր վաճառուիլը, որ յիշեցինք վերը: Արդ՝ այս տեղը՝ որ անպիտան և աւեր ու անօգուտ վայր մը ձեւացնել կ'ուզեն, թէ՛ Պատրիարքը և թէ՛ անոր վաճառմանը համախոհ ու հեղինակ եղող անձինք. վերը յիշուած Սուրբ՞. . . . . Երուսաղէմի անուանեալ գրոյն մէջ. որ 1859 թուին՝ Ս. Երուսաղէմ տպուեցաւ. (Տե՛ս. Անդ. եր՞. 31): Բայց մենք՝ ակնա-

տեսներէն հասկանալով՝ մանաւանդ Ճշմարիտ և ստոյգ աղբիւրներէն առնելով կը նկարագրեմք, թէ՝ այս տեղը՝ օդը առողջարար ու հովասուն ընդարձակ վայր մըն է գեղեցիկ դիրքով. և մէջը ունի երկու հատ ահագին անուշահամ ջրհորներ. որ քիչ կը գտնուի Աշխարհի մէջ. ունի 18 հատ քարուկիր ընդարձակ սենեակներ՝ ու խոհարանով և դռնատունով հոյակապ շինութիւն մը. նաեւ ունի 35 հազար կանգուն էն աւելի պարտէզ մը. որուն մէջ 15 հազարի չափ մրգաբեր ծառատունկով և այլ ծաղկներով զարդարեալ. և պարտէզին բոլորտիքը՝ ոգեմայ Բոլոր կոչուած փշալի տունկով պատսպարեալ, զոր Ազրաբացիք՝ սապէր կամ սապր կը կոչեն. այլ և ունի իւր մէջը արեւելեան կողմը ուխտատեղի մը, որ Տաբիթայ տիկնոջ գերեզմանն է. որն որ Պետրոս Ս. Առաքեալը՝ մեռելոց յարոյց(19)։ Նաեւ այս պալատին ու պարտէզին շրջապատէն դուրս՝ իւր բոլորտիքը ելբ մշուն ու կէս տարածութեամբ վարուցան ընելու համար պատուական հող ալ ունի (20). որ ժամանա-

(19) Այս տեղը խաբէական ձեռնարկութեամբ, ընդունայն և սնամաշէլի կ'ուզեն ձեւացնել յերկիւղէ Ազրաբացւոց, յիշեալ գրքին հեղինակները, որ միւս դրածնուն նման սուտ է . . . ։

(20) Որուն համար ալ կ'ըսեն, թէ՝ «Հասամբ էր» յաւելապատիւել ի դրաշէայ»։ Նոյնպէս և կ'ըսեմք թէ՝ սուտ է բոլորովին. այլ Աթոռք անխնամ և անպաշտպան թողելուն համար.

կին յիշեալ Մուրատ Հայազգի Իշխանին որ դեգիր՝ Հիւպատոս Պ. Յակոբ Սրապիոնեանը ոչ միայն ցորեն կը ցանէր ու առատութեամբ կը հնձէր, այլ և 400 ոչխարին աւելի արածել տալով հոն կը պահէր . . . : Իւ ահա՛ այս ձեռք չ'անցնելիք տեղը՝ ցաւ է ըսել թէ՝ վաթսուն հազար ղուրուշի վաճառեց Յովհաննէս Պատրիարքը, 1858 թուին, որ այսօր երկու հազար քսակով՝ ոչ կը շինուի, և ոչ ալ կրնայ ստացուիլ անանկ տեղ մը . . . . : Իւ առնողն ալ՝ անցեալ տարի քսան և հինգ հազար ղուրուշի բերքը (մահսուլ) ծախեց մէջէն. ինչպէս որ ներկայ գտնուող՝ երբեմն Աթոռին Աւագ Թարգման Կէլեպօլուցի Չելեն կիրեան Յակոբոս վարդապետը պատմեց մեզի : Թող որ Ս. Աթոռին յիշատակ թողուած ըլլալով՝ եթէ հազար քսակ ալ տուող ըլլար՝ իրաւունք և արտօնութիւն չ'ունէր ծախելու՝ ոչ Պատրիարքը, և ոչ ալ կտակաթող Ազգասէրին Բոռն Ժառանգ անուանող անձը՝ Ազգասէր բարերարին յիշատակը ջնջելով . . . : Թէպէտ և յիշեալ գրքին հեղինակները կը կարկատեն, թէ՝ անոր փոխանակ Երուսաղէմայ

վանորայ քաղաքացի Սահաթճի Յակոբ Հայ անձը, մէկ փաքր մասին տիրապետելով, մշակեր ու պարտէզ ըրեր է՝ քանի մը տարի է, ու ինքը կը վայելէ . . . շատ կ'ըլլայ ըսել, թէ՝ Արոքոյնէրէն էրէիոզ մէն ալ կրած չունի, ու ՇՕտ մէն ալ տուած չունի . . . :

մէջ՝ Դամասկոսի դրան մերձ տուն մը առած են, էբր անջնջելի (ջնջելի) ճաղաց անուան կոպիտարար Հանգուցելոյն. և այլն։ Կ'ըսեմք, նախ՝ կոտակաթողին նպատակին դէմ է. որովհետեւ ուղեր նէ Խարբերդը՝ ուրիշ տեղ մը կրնար առնուլ ու յիշատակ թողուլ։ Երկրորդ՝ Երուսաղէմայ վանքը այդքա՞ն ալ ժամանակ չ'ունէր, որ 60.հազար ղուրուշի տուն մը և կալուած մը չկրնար առնելով՝ ունեցած երեւելի յիշատակը վաճառեց. և փոխանակ տարին 25 հազար ղուրուշ շահ բերող կալուածին (21), տարին հինգ հազար ղուրուշ վարձք բերելու տեղ մը ստացաւ՝ անարդ և ստորին թաղի մը մէջ... բէհ, բէհ... այս ի՞նչ օգուտ է, և ի՞նչ արդիւնաւորել է՝ որ մարդ մը չէ՛ մտացած միւսէւ ցարդ...։ Երանի՛ Աղգին, որ այսպիսի շահագիպ ու հանճարագիպ անձինքը գործի վերայ անցուցեր է՛... ասիկայ դարմանոցին մէջը շղթայով կապուած խեղճ գարեն ալ ղուրուցես՝ չկրնար հաւատալ այս խաբէութեան. ... և մարդ մին ալ չկրնար կուլ տալ այս ահագին ստուտը...։ Վերջապէս կ'ուզէ շա-

(21) Եւ այս ալ՝ անցեալ տարուան բերած շահէն ենթադրելով դրինք։ այլ մշակուելու որ ըլլայ, վանքին բանձարեղէնի վերաբերեալ արմտիքը ելնելէն ետքը՝ տարին 50 կամ 60 հազար ղուրուշ շահ ալ կը բերէ։ ինչպէս որ վկայեցին՝ խորհրդական անդամք ծերունիք։ և Պ. Յակոբ Սրապիոնեան Եաֆայի հիւպատոսը, երբ ժամանակ որ Ս. Երուսաղէմ գնացինք 1858 թուին։

հաւէտ ըլլայ և կ'ուզէ ջրլայ, արտօնութիւն չունէր Պատրիարքը՝ և ո՛և իցէ անձ մը վաճառելու Աղգին յիշատակը. եթէ ժամանակ չունէր ուրիշ տեղ մը առնելու նէ, թող չառնէր, և զանի ալ Ձեռքէն չի հաներ . . . . միթէ այդքան կարօտ էր վանքը՝ . . . և եթէ կարօտ էր, հապա ինչո՞ւ բարեբեր ու շահաւէտ տեղը վաճառեց, ու չպիտոյ տեղ մը ոտացաւ անոր տեղը . . . : Հոյց վաճառմանը գործակից եղող անձինք՝ յիշեալ գրոյն մէջ՝ կը հետեւցնեն, թէ՝ արդիւնք չէր բերեր՝ ու անօգուտ վայր մը դարձած էր յերեսաց Աբրահամեանց. և հետեւաբար յոյս չկար արդիւնաւորելու. անոր համար խոպիպաալ ըրին անոր փոխանակ այս պոռնը տուին, և այն : Ամ անօրինակ խաբէութեան . . . կ'ըսեմք, թէ՝ առկից 10 և 20 տարի յառաջները՝ տեղւոյն բարբարոս Աբրահամիք վանաս մը չէին ըներ կոր, արդեօք այժմեան հանդարտ և ապահով վիճակի և ժամանակի մէջ՝ ի՞նչպէս արդիւնք և օգուտ չէր բերեր՝ եթէ խնամք տարուէր ու մշակուէր . . . , միթէ առնող մարդը՝ Աթոռէն աւելի՝ արտօնութիւն ունի՞ . . . և միթէ Աթոռին վարկումը՝ այդքա՞ն ալ ինկած է, որ ինքը չկրնալ պաշտպանելուն՝ վաճառէց . . . ու առնող անձը՝ երեք տարի է մշակելով ու շինութեան մէջ պահելով՝ խաղաղութեամբ խնդութեամբ ապահովապէս կը

վայելէ ու վնաս մը չկրեր կոր . . . : Բայց ասոնցմէ զարմանք չէ՞ այս . քանզի միայն այս չէ՞ մեր Ազգին մէջ պատահած աղէտքները ու կորուստները . այլ եւ երկրորդ բնութիւն և ունակութիւն մը եղած է Ազգիս մեծագոյն մասին , որ այլոց բարիք ընել , և կամ իր ձեռքէ եղած բարիքը այլոց տալ , ու իր Ազգին չարիք ընել , և կամ ձեռքէն եկած չարութիւնը իւր Ազգին գործածել . . . , վասնորոյ շատ մեծ և երեւելի յանցանք մը չէ՞ Յովհաննէս Պատրիարքին ըրած գէշութիւնը Ազգիս Հայոց . նա մանաւանդ ինքը մինակ չէ՞ այս մասին , քանզի ութը դար յառաջ Ակրակոս երէց մի՝ Անի Սայրաքաղաքէնէս Յունաց տէրութեան վճառէց 30 դահեկանի . մի՞ թէ՝ անկից աւելի մեծ կորուստ մըն է՞ , Յովհաննէս Պատրիարքին Ազգիս մէկ Ագարակը Յունաց անձի մը վճառելը 60 դահեկանի՞ . . : Ուրեմն ասացէք միաբերան , յա-իրենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի՞ . . . :

Լ՝ օթներորդ . Աղուսաղէմայ քաղաքին սպրիսպէն դուրս՝ հարաւային կողմը ճառնէր կոչուած տեղւոյն վերայ՝ Յոդայի գիւղ ըսված տեղը , քաղաքին էվչաֆ դիւրիրի պաշ ռեմիպ Լոսոֆ էֆէնդին՝ քանիցս անգամ առաջարկեց Պատրիարքին՝ փոքր ինչ դրամով մը վանքին առնել տալ . 1853 , և 1854 թուականներուն . որն որ բաւական տարածութեամբ գեղեցկա-

գիր ու հովատուն վայր մըն է. և իւր բարձր գիրքովն ալ՝ քաղաքին վրայ կը նայի. և երբ կարուԹիւնը ժամ մը կը տեւէ՝ մինչեւ Յուն. Ս. Նշխարի վանքը, (որ Բեթլեհէմի ճամբուն վրան է.) և նոյնքան է լայնուԹիւնն ալ։ Նաւ ահա այս անենման երկիրը, (որ Նիրուսաղէմի մէջ հաղիւ կը գտնուի), 45 հազար ղուրուշով պիտի սատանայր մեր վանքը, վերոյիշեալ Էֆենտիին միջնորդուԹեամբը. այլ ընդ հակառակին ուրիշ անպիտան բաներու ընդունայն տեղը բաղնիք գտնձեր վատնեց Պատրիարքը, ու չ՚ատացաւ յիշեալ գեղեցիկը, որ բաղնիք պիտանին էր, և է՛. . . ։ Արդ՝ վերջապէս զանի եւս արԺնուԹեամբ մը Յոյնք յոփշտակեցին 1857 ին՝ կրնապատիկ գին տալով. որն որ ոչ միայն արդաւանդաղ ու պարապտ գեղեցն մըն է՝ որ մշակուելով բաւական արդիւնք կրնար բերել Աթոռին, այլ և գեղեցիկ գիւղաքաղաք մըն ալ կրնար ըլլալ Աղիս, հոն գաղԹականուԹիւն հաստատուելով, որ ամենապիտանին է Աթոռին համար, վասն պաշտպանուԹեան վանքին և Տբ. Նօրինական Ս. տեղեաց. ինչպէս որ Յոյնք և Լատինք ունին. և ալ որսալով երկրացիքը՝ իրենց իւրայուցած են. որոնց ձեռքը բաղնիք և կերպ կերպ ոճիրներ կը գործեն՝ ու մեր տեղերը և իրաւունքները ու սատացուածքները կը յոփշտակեն՝ քանի մը հարիւր տարիէ

'ի վեր. և մենք իբր անզէն կենալով՝ ոչ միայն նոր 'ի նորոյ չէմք հասցուներ, այլ և եղածներն ալ կորսնցուցեր և դէռ կորսնցուներլու վրայ էմք . . . : Եւ ահա այս անխոհեմ կառավարութեան և ընթացից համար է, որ Աթոռը միշտ և յարաժամ վտանգի մէջ ինկած է՛ . . . : (22)

Ուրթերորդ. Բաղաքին մէջ մեր վանքին մօտ երկու մեծադիր բնակարան տուները՝ (որոնք Յունաց Ս. Գէորգայ վանքին կից են,) որոնց մէկը Հրէից, և միւսը Այլազգեաց ձեռքն ըլլալով՝ կը ծախէին կոր 1854 ին. ուստի յիշեալ տուները մեր վանքին ծախելու համար տիրվքտանքը՝ բարեկամաբար խնայ տուին. և Միաբանք ալ՝ առաջարկեցին Պատրիարքին՝ որ առնէ. (և նոյն ժամանակը 200,000 զուրուշով ալ պիտի առնուէր.) բայց Պատրիարքը՝ Հ'գիտեմք յայնժամ որքա՞ն թեղադրութենէն ստիպուելով՝ հակառակեցաւ Միաբանութեան դէմ ու չառաւ. և 'ի վերջոյ տեսնելով՝ որ Յոյնք՝ առաւելագոյն գնով պիտի առնեն՝ ու վանքերնուս ալ կուշտը պիտի մնան, որով և իրեն անուանն ալ յաւիտենական նախատանաց տեղի պիտի տայ.

---

(22) Ասոնց բացատրութիւնը, տես Շանապարհորդութիւն 'ի Ս. Երուսաղէմ քաւած աշխատութեանս մէջ եթէ հրատարակի, որուն մէջ պիտի տեսնուի թէ հայոց Ազգը ինչքա՞ն է կրսուսեր, և ալ որքան ժողովուրդ այլակրօն եղեր է . . . :

վանորայ թէ այս պատճառաւ, և թէ Միաբանից կրկին առաջարկութեամբն ու բողոքով՝ ստիպուեցաւ 1857ին քառասպահիկ գին տալով՝ յիշեալ տուները առնել. վերոյիշեալ Փասքալ կոչուած Պ. Յակոբին ձեռքը . . . (23) Իւ ահա այս է Յովհաննէս Պատրիարքին խոհեմութիւն պատուոյ, և խնայողութեամբ կը մնայ դրամը՝ ըսելով անուն հանելը . . . որ փոխանակ չորս հարիւր հազար ստանալիք բանը, անխոհեմութեամբ ու մեպիպեպան կամ բանեցընելով երիս հազար հազարի չափ վատնեց՝ յիշեալ տուները ձեռք ձգելու համար՝ Մեծավասպակ Ս. Պատրիարքը . . . . : (24) Ահա այս օրինակ ալ ըսաւ Փիլիպոսի աղբիւր կոչուած տեղացին. որ քիչ մը ետքը պիտի խօսիմք . . . : Իւ ահա միւս ըրած կառավարութիւններն ալ՝ ու մեկած կամ վատնած դրամներն ալ՝ ընթերցողք կրնան մակաբերել թէ՝ ինչ արդիւնք ունի . . . :

Ինեերորդ. Յովակիմ Ենային տանը և-

---

(23) Որով կը կարծի թէ՝ յիշեալ Յակոբը թելադրած է յառաջուց չառնելուն, որ ետքը ինքը առնել տալով՝ կամ պատուաւոր երեւնայ Պատրիարքին ու Միաբանից առջև, և կամ թէ՝ շահի շահաւորութեամբ . . . և այս վերջինը աւելի հաւանական կ'երեւի :

(24) Ինչպէս որ պարծենալով ու գովութեամբ կը խօսին, յիշեալ գրքին հեղինակ Մկրտիչ Արծրունեան վարդապետը, և անոր գործակից գոնորդ Պօղոս Մայր եկեղեցւոյ Ֆ. Գէորգ քահանայն : (Տես Ստոր. եր. 181) :

ղած յափշտակութիւնը, որն որ Պատրիարքին անխոհեմ կառավարութեան պատուղը և արդասիքը, նաև անհոգութիւնն ու Ս. Թոռին իրաւանց և ստացուածոցը վերայ փոյթ չունենալը կրնայ համարուիլ։ Վանդի օրինաւոր թարգման մը չունենալով, և քաղաքին էֆէնդիներն ալ՝ իրեն հետ թշնամացնելով, որոնք Ս. Թոռին վրայէն բոլորովին համարուելին վերուցին, ու պատիւը ստրկի մը եղաւ . . . ։ Ու եթէ այս այսպէս չըլլար՝ և ինքը Պատրիարքն ալ՝ գործ պէտնող, ո՜ աչալուրջ ո՜ բանիբո՜ն և ազգասէր անձ մի ըլլար՝ (ինչպէս կը համբաւեն՝ իրեն կուսակիցները . . .) ո՜ մի պէրպէրան էլեանո՜ւ՜ն բանեցուցած չըլլար Միաբանութեան վերայ, ու չի ցրուէր զանոնք . . . հարկաւ Լատինք չէին կարեր քաղաքին դատարանէն իշխանութիւնով յափշտակել յիշեալ եկեղեցին, 1856 թուոյն. և անով ալ՝ մեծագոյն Տէրութիւնէն հրովարտակ հանել տալ . . . . իբր այսու առթիւ և հրամանաւ թէ՝ "Մաքաբիի պատերազմին մէջ խնող Դաղղիացի զինուորաց փոխարէն՝ այս պարգևը տուի . . " յորմէ ստիպուելով՝ գոնէ եռաբը Պատրիարքը՝ հանդերձ Միաբանութեամբ ոտք ելնելով՝ թէ՝ Տէրութեան և թէ՝ ընդհանուր աշխարհի աղերսելով՝ չմայցուց, մանաւանդ թէ՝ չ'ողջունեց՝ (Ազգիս իրաւունքը պաշտպանելով՝ այս լուսաւորեալ և ազատ դարուս մէջ՝) ըսելով,

թէ՝ եթէ Տէրութիւնը շնորհք մը կամ պարգև մը պիտի ընէ նէ՛ Լատինաց՝ իւր հողին մէջ այնքան անտէր մնացած տեղեր ունի, և անոնցմէ մէկ տեղ մը շնորհ ընէ. և մեզի ալ ողորմելով՝ իւր Նախնեաց մեր ձեռքէն յափշտակած եկեղեցին՝ վերստին մեզի վերադարձուցանէ . . . : Բայց մինչև ցայսօր հինգ տարիէ, բնաւ երբէք հոգը չըլլալով՝ այն Տընօրինական տեղն ալ՝ և սեպհական ստացուածքն ալ Աղգիս, ահա այս օրինակ կորսուեցաւ . . . : Սակայն Աղբրուներան Սկրտիչ Մինասեան վարդապետը՝ կամ անոր գրոյն Գործակից Գոնը-ոլ Պօլսոյ Մայր եկեղեցւոյ Տէր Գէորգ քահանայն, կամ գիտնալով և կամ չգիտնալով՝ յիշեալ եկեղեցին Լատինաց կ'ընծայեն, 1859 տարին, հրատարակուած՝ Սաղմոս՝ . . . Հրո-սաղէմ՝ անուանեալ գրոյն մէջ. եր՝ 176 : Մեզ թուի թէ՝ ասոր ալ եղելութիւնը ծածկելու կը ջանան խաբէական ձեռնարկութեամբ . . . Ինչ և իցէ՝ անոր ալ անտեղութիւնը կրնայ տեսնուիլ, Ռանապարհորդ-ին դ Ս. Հրո-սաղէմ անուանեալ աշխատութեանս մէջ՝ եթէ՝ ի լոյս ընծայի :

Տաներորդ. Յովհաննու ծնունդին Հղեսաբէթի տանը եղեալ եկեղեցւոյն անշքութիւնը, ու անոր յափշտակութեան յայտնի նշանները՝ որ կերևի այսօր Լատինաց վերայ. ընդհակառակն Պատրիարքը ամայի և անիրաւ

նամ Թողած է յիշեալ Տնօրինական տեղը։ Նա մանաւանդ՝ այս վանքին կուշտը՝ 1853 Թուոյն, բաւական մեծութեամբ պարտէզ մը ծախուեցաւ, և տեղւոյն ջերմերը (այսինքն՝ ելեւելները), չի ծախած առաջարկեցին Պատրիարքին՝ որ առնէ. իբր այնու դիտաւորութեամբ, որ եկեղեցին շինութեան մէջ մնալով՝ իրենք ալ շահին ուխտաւորաց երթեւեկութեամբը. և վանքին ալ շահաւէտ կրնար ըլլալ մէջի եղած ձիթենիներովը։ Բայց Յովհաննէս Պատրիարքը՝ խոջնդոտ եղև չառնելով. վասնզի Մխաբանք ալ հաճութիւն տուած էին առնուելուն։ Յաճ է ըսել, որ յիշեալ պարտէզը՝ Պաղդիացւոց դեսպանին Թարգման Հանա Գառոնոյ անուանով անձը առնելով՝ ու բոլորտիքն ալ պատ քաշելով՝ եկեղեցիներուս որմին հետ միացոյց, և այսօր Լատինք համարձակ եղու մուտ կ'ընեն մեր եկեղեցին. և իրենց ենջեցեանները ալ՝ հոն եկեղեցւոյն գաւիթը կը թաղեն, բոլորովին յափշտակելու դիտմամբ յիշեալ Տնօրինական տեղը. բայց այսու ամենայնիւ Պատրիարքին հոգը չէ . . . և ինչպէս վերն ալ յիշեցինք, ժողովուրդ ալ չունի որ պաշտպանէ . . . ։

Այս եթէ իրաւ է յիշեալ Սկրտիչ վարդապետին գրածը, Սասը՞ մէջ, էր՞. 253, որ բոլորովին յափշտակուած կը համարէ յիշեալ եկեղեցին, 1840, Թուականէն ի վեր . . . .

և անկից եաքն ալ՝ կ'ըսէ. «Լ ապէնէ Լա այթմ Ռողէալ Լ հէռ-ացէալ էն ապի, յերէսաց գալանա-բար-ոյ Էրէսաց-ոց, Լ ա-էրակ ճաացէալ կայ»։ Այս ևս յայտնապէս կ'երևի թէ եղելու-թիւնը թեթեւցնելու համար գրած է. վասն զի եթէ ստոյգը գրելու որ ըլլար՝ Պատրիարք-քին գառ-ը կ'աւելնար... բայց այս ալ չէր կրնար ընել. քանզի նախ՝ Պատրիարքը հրա-տարակուելուն թող չէր տար. երկրորդ՝ ինքն ալ պատուաւոր չէր կրնար ըլլար Պատրիար-քին առջեւ, ու դարպասճառ-ին չէր կրնար առնել...։

ԺԱ. երրորդ. Ի-եթէ-հէմի մէջ մեր գե-ղեցմնատան մէկ մասը յափշտակուելէն 'ի զատ՝ այլ և մնացած գերեզմնատան խեղ-ճութիւնը և անարգութիւնը՝ Աստուած հե-ռի ընէ..., տեսնողը բոլորովին կը գայ-թակղի ու սիրտը կը մորմնջի, և համբերու-թիւնը հատնելով՝ առանց անիծիւք և դատ-նութեամբ չկրնար անցնիլ անկից, ըստ որում ճանապարհի վրայ է։ Ի-ս քանզի գերեզմա-նատան արեւելեան կողմը՝ Յոյնք յափշտա-կած են, համարեա թէ՝ 30 տարիէ 'ի վեր. բայց 1854 ին՝ երբ ժամանակ որ՝ պատ քաշե-լով բոլորովին իրենց պիտի իւրացնէին նէ ա-նիրաւ Յոյնք՝ յայնժամ Միսաքանք մեր Աղ-գասիրութենէ շարժեալ դէմ կեցան ու բրլ-ցնելով տուին՝ յիշեալ պատը բդեշխին ձե-

ուքը. եւ նոյն Թուականէն մինչեւ յարդ աղբանոց և հասարակ դարձուցած են Յոյնք՝ և տեղւոյն ֆելլահ. 'ի գայթակղութիւն և 'ի նախատինս Աղգիս, և յանարգանս քրիստոնէութեան ... : Բայց Ս. Պատրիարքը՝ փոքր ինչ դրամ չմնալով՝ թէ՛ տեղւոյն ջրէն ձեռք չառնէր և թէ՛ բոլորովքը որմով չպատասպարէր, որ հէմ անարգութիւնը վերնայ Աղգիս վրայէն, և ալ բոլորովին չիկորնչի տեղերնիս՝ ամայի և աւերակ մնալովը ... : Արդ՝ ընդունայն տեղը 200 տարիէ 'ի վեր կ'ոսպասէ Աթոռին մէջ՝ տեղւոյն «ԷՆԷՐՆԵՐը», տակոյն գործադրելու Աղգասէր և Ազնիւ Ընձ մը և կամ օրինաւոր Տէր մը և Պատրիարք մը չկայ ... որ Աղգիս վրայէն անարգանքը վերցնելով, ու պատիւը և սեպհական սեպհականը Աղգիս ձեռք բերէ ու պաշտպանէ ... : Ուրեմն թող փառաւորուին Պատրիարքին պաշտպանութիւն ընող կուսակից շահատէրները, ու ազգատեաց լափլիզուները ... մանաւանդ անոնք, որ աչքովնին ալ կը տեսնան այս գեշութիւնները, ու չեն զգար, և վերջին պաշտպանութիւն ալ կ'ընեն ... Բաւուած դարձ տոյ այնպիսեաց ... :

ԺԲ. Երրորդ. Գաղային մէջ եղեալ եկեղեցիներնուս տեղը, որ Մարիամ Մագդաղենացւոյն տունը կը կոչուի աւանդութեամբ, և Երեսի վրայ անիմամ թողուած

է՝ շատ ժամանակէ 'ի վեր, և հոն առաջնորդ ու եկեղեցի ջրլալու՝ Յոյնք յափշտակած և Յունադաւան ըրած են մեր ժողովուրդները՝ Դերեկի, Նրիքովի, և Սալդի ժողովուրդներ. նուա նման . . . : Թէպէտև նախորդ Սրբազան Պատրիարքները պիտի բարեկարգէին զանէ՝ կամ ժամանակ չունեցան, և կամ ժամանակին պարագայները չէր ներեր . . . բայց գոհութիւն Աստուծոյ, որ քանի մը տարիէ 'ի վեր՝ յիշեալ երկիրները խաղաղութեան և ազատութեան մէջ է, և հոն գտնուող քրիստոնեայ ազգերը՝ թէ՝ Յոյնք և թէ Լատինք, իրենց շունեցածն անգամ կրօտանան ու ձեռք կը բերեն կոր. նաև իրենց ունեցած տեղերը շինութեան ու բարեկարգութեան մէջ կը պահեն կոր . . . հապա ինչո՞ւ համար մեր օրէնաւոր և սեպհական ժառանգութիւնները ձեռք չպիտի բերեմք ու բերելու պիտի չ'աշխատիմք . . . : Արդ՝ եթէ բանիբուն և Աստուածասէր Պատրիարք է նէ այժմեան տեղակալը, ինչո՞ւ Աթոռին իրաւունքները չպաշտպանէր ու շինութեան մէջ չպահէր . . . և ընդունայն տեղը՝ պէտք չըլլալու նիւթական շինքերուն Աստուծոյ դրամները անիմաստ կը վատնէ, ու բանաւոր շինքերը՝ և ցրուեալ ոչխարները չը հաւաքելով՝ եկեղեցւոյն Ս. Փարախը չի մնացուներ, և անոնց թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս շինութեանը և օգտին չ'աշխատիր . . :

ԺԳ. Երորդ. Այնպէս և Նապլուսի և կեղեցինիս ալ՝ որ շատ ժամանակէ 'ի վեր քայքայված ու ամայի մնացած է, և որուն հրովարտակներն ալ (ինչպէս կը լսեմք) Երեսի վրայ կեցած է, ու ժողովուրդը ցրուած և կամ յունադաւան եղած են։ Այդ այսօր Պատրիարքը՝ ունի բաւական պատճառ և արտօնութիւն, թէ ինչպէս որ Լատինք և Յոյնք, նաև այժմ Ռոմբականք՝ իրենց սեպհական չեղող ժողովուրդը կ'սանան ու կ'որսան կոր նէ, ինքն ալ՝ տասը տարիէ 'ի վեր Ս. Ա.թոռը գահակալած ըլլալով՝ պէտք էր որ՝ օրինաւոր քարոզիչներ հասցուներ, և կամ թէ եղածներուն յարգը գիտնալով ու շահելով զանոնք քաջալերեր, ու անոնց ձեռնտու և օգնական ըլլար. և որով իրեն ցրուեալ սեպհական հօտը՝ վերատին ձեռք բերեր։ Յայնժամ ոչ թէ միայն ինքը փառաւոր կ'ըլլար Միաբանութեան ու Ազգին առջև, այլ և Ս'էծ ալ կը հուր-էր երեսէն Ս. Ա.ռայ-ին դէջ՝ իւր պաշտօնը և սուրբ կոչումը կատարելով։ . . . Այդ ասոնք ոչ պիտի ընեմ՝՝. . . այլ եղածները՝ կամ կը ցրուեն, և կամ կը կորսնցունեն կոր այսօր, ոչ միայն Հրաւասաղէմայ Պատրիարքը, այլ և Ա.սիայու մէջ քանի մը վիճակներուն վարձկան Ա.ռաջնորդներն ալ. . . ։ Նաև նոյն օրինակին, և նոյն վերոյիշեալ աղետից ենթակայ եղած է, Շամ թ.արապլուսի՝

թէ եկեղեցիներս, թէ կալուածներնիս և թէ Հայազգի ժողովուրդներս. որոնք բոլորովին Յոյնք յափշտակած ու յունադաւան ըրած են. բայց ինչպէս ըսինք՝ հոգ տանող մը չկայ . . . : Այլ խնդրեմք, թէ օգնութիւնը և այցելութիւնը Ազգիս 'ի Տեառնէ եկեսցէ . . . :

Ժդ. երորդ. Մարմնի ազգէն մէկ եպիսկոպոս և մէկ ալ սարկաւագ, 1855 թուին՝ Պէրութէն աղերսելով առաջարկեցին Աթոռին, որ իրենք 30 տուն ժողովուրդ ունին, և կը փափաքին՝ որ Հայոց Ս. Եկեղեցին գան ու միանան՝ բոլոր կարգաւորութիւնը և արարողութիւնը ընդունելով. և խօսք ալ տուին, որ միւս մնացած իրենց համազգի եղբայրներնին ալ՝ կը միացնեն Հայկական մեծ եկեղեցւոյն: Հայոց Պատրիարքը, (ինչպէս ըսեցինք) միջնորդին (Յակոբոս վարդապետին) գրեր է, ըսելով, թէ՝ "Այս եղածները կը յոյսեմ կոր, և անոնցմէ պիտի եղեր եմ, դուռ ալ ելեր գլխոս պէլայ մի կը հանէս . . . : Այս ահա միւս խղճալի ազգայնոցս վերայ որչափ խնամք ու գութ ունի, և որչափ ալ իրեն ուխտին և սուրբ կոչմանը վերայ հաւատարիմ պաշտօնեայ է նէ այս եղելութենէն ալ կրնայ հասկցուիլ . . . :

Ժե. երորդ. Կիպրոսի մէջ եղած մեր երեւելի վանքը, որն որ Մակար Ճգնաւորի անուամբ կառուցեալէ, մեծ և ընդարձակ, ուբոլորտիքը պարտէզներով զարդարեալ, որոնք

որ վանքին կալուածներն են. նաև 40 տունի չափ Հայ ազգի ժողովուրդ ունինք։ Եւ այս տեղ ճգնաւորական կեանք անցուց մեր Հեթում բարեպաշտ թագաւորը Տանն Կիլիկիոյ։ Բայց քանի մը տարիէ՝ ի վեր օրինաւոր Տեսուչ մը չի դնելով Պատրիարքը, (որ՝ ի վաղուց հետէ Ամենայն Թէմն է), տեղւոյն ժողովուրդը անխնամ և իբր անառաջնորդ մնացած են ու խեղճութեամբ կանցունեն իրենց կրօնական պարագաներին, որուն համար քանի մը տարի է բողոք բառնալով՝ իրենց առաջնորդ և կամ օրինաւոր քահանայ մի կուզեն, բայց մը-տիկ ընող ու հոգ տանող չկայ . . . . ուրկից բաւական եկամուտ ալ ունի Ամենը, ջաղացներին, տուներին, պարտէզներին, և այլն. որոնք ժամանակին Ամենայն Միաբան վարդապետները ստացեր և Աշրուսաղէմայ վանքին յիշատակ տուեր են. որոնցմէ այսօր՝ տարին 60, հաղար ղուռուշ եկամուտ կը լինի. և եթէ օրինաւոր կերպիւ նայուի կալուածները՝ և ալ ըստ արժանւոյն մշակուին հողերը, տարակոյս չկայ՝ թէ առաւել ևս արդիւնք կընան բերել։ Սակայն այսօր յիշեալ եկամուտները անգամ չեն յուզարկեր կոր տեղւոյն ժողովուրդը. իբր պատճառ բերելով թէ՝ հոն տեղի գտնուած քահանային եկամուտ կապած են . . . ։ Եւ ահա այս ընթացքով՝ անշուշտ Աշրուսաղէմայ միւս կորսուած կալուածներ

ներուն նման. այսինքն Աղեքսանդրիոյ, Համ Թա-
բասկուսի, Տիգրանակերտի, Իտիրնէի, և
այլն քաղաքներուն մէջ կոտրուած կալուածնե-
րուն նման, ասոր ալ կալուածները, և միան-
գամայն ժողովուրդն ալ պիտի կորնչի . . . (25):

Ժ. Զ. Երորդ. Թափօրական Ս. Լերան վե-
րայ, 'ի նախնեաց անուն երեք հատ հռչակա-
ւոր վանք ունէինք. 'ի խորհուրդ և 'ի պատիւ
Ամենասուրբ Երրորդութեան, և 'ի յիշատակ
Երից գլխաւոր Սրբազան Առաքելոցն Քրիս-
տոսի, որք ներկայ գտնուեցան անդ՝ Տեառն
մերոյ Աստուածութեան հրաշալի օրը: Յիշ-
եալ Ս. Տեղւոյն վանքերը՝ յերեսաց և յեր-
կիւղէ բարբարոս Արաբացւոց՝ աւերակ և սա-
մայի մնացած է, համարեա թէ՝ իբր 300 տա-
րի է 'ի վեր: Բայց սակայն՝ 1858, թուականն՝
յիշեալ Ս. Լերան՝ Ռուսք տիրապետե-
լով՝ հռչակաւոր վանքի մը հիմը դրին հոն,
և մինչև յարդ (ինչպէս կը լսեմք) տակաւին
կը շինուի կոր:

Արդեօք պէտքը չէր մի Պատրիարքին, որ
ինքն ալ Ռուսաց ընկերանալով՝ վարդեմի կոր-
սուած ու աւերած Տնօրինական տեղերնիս
կամ պաշտպաններ, և կամ շինութեամբ պայ-
ծառացուներ, քանի որ առիթը և պատճառը
ձեռքն է. մանաւանդ թէ՝ անոնց ունեցած

(25) Ասոր բացատրութիւնը տես Յաւելուած Գ. 'ի վեր-
ջը գրածոյս:

ապտանութեամբն ու զօրութեամբը՝ երկիւղն ալ վերցած կրնայ համարուիլ . . . և այսու հետև Միաբանք կրնան ապահովապէս պատարագիլ, և ալ կրնան համարձակ երթևեռկութիւն ընել հոն՝ ուխտաւոր ժողովուրդնիս։ Բայց ասոնք չըրաւ, և չեղէն զինի, գոնե Ամուրն կողմն մէկ անձ մն ալ չուղարկեց (ինչպէս կառաջարկեր Ռուսարարատեանը, ըստ իւր ասութեան) որ կամ տեղերնիս յայտնուելով որոշուեր, որ ժամանակէ մը ետքը կրնար շինուէր. և կամ Ռուսք փորած և պեղած ժամանակնին՝ կարելի է մեր հնութիւններէն և արձանագրութիւններէն փափաքելի հնութիւն մը և կարեւոր տեղեկութիւն մը կը գտնուէր. սրն որ շատ հաւանական է . . . ։ Եւ ահա անկէց ալ յոյս չկայ այսուհետև Ազգիս, թէ հոն վանք շինելու մասին, և թէ հնութիւն մը գտնուելու որ ըլլայ՝ ստանալու. քանզի ոչ ոք և երբ ժամանակ Յոյները և Յունադաւան Քրիստոնեայները մէկ երկրի կամ մէկ քաղաքի մը տիրապետեր, և անոնց երեսէն հանգստութիւն տեսեր ու իր իրաւանցը տէր եղեր է տառապեալ Հայոց Ազգը . . . Նոյն պէս և իմն այս Ս. Լեառն ալ. որ առնողը առաւ, գտնողը գտաւ, ծախողը ծախեց, ու մենք մնացինք բացը . . . ։ Եւ շատ կրլլայ ըսել, թէ ահա այս Տնօրինական Տեղերնիս ալ՝ այս օրինակ ձեռքերնուս գնաց բոլորովին . . . ։

Ասացէք միաբերան՝ Աստուած յառաջիկայէն փրկէ . . . . :

Ժէ. երորդ . Աւ յաւելուած : Այս վերոյիշեալ յօդուածը գրած ժամանակը , բարեկամիս մէկը վրայ գալով՝ ձեռքէս առաւ ու կարդաց , և դարձաւ ըսաւ . կը զարմանամ քեզի , խենդեցիր ես թէ՞նչ ես ես՝ ես ալ չեմ գիտեր . ահա այս բնաւորութեանդ համար է , որ անարգութիւն կը կրես՝ ու պատիւդ կը կորսնցնես կոր . ինչո՞ւդ պէտք է , թէ՞նչ կ'ըլլայ թող ըլլայ . . . Մարդը՝ (Պատրիարքը) քթին տակի եղածը՝ ու ձեռքի գտնուածը չի՛նայիր ու կը կորսնցնէ կոր , դուն ելիր Երուսաղէմէն երկու կամ երեք աւուր ճանապարհ հեռի , և ժամանակաւ գտնուած ու այժմ կորսուած բաները կը նը կարագրես . և եթէ գրելու բան կ'ուզես , ա՛հա ես քեզի զուրցեմ : 1856 թին՝ Ս. Յարութեան տաճարին դրսիդին , դոպոխ խանան (կաշի չինելու գործարանը) կը ծախուէր կոր , և շատ մարդ ալ իրեն առաջարկեց՝ որ առնէ . քանզի Աղգերնուս համար մեծ պիտանաւորութիւն ունի , քանի որ հոն Ս. Յարութեան կողմը տեղմը չունինք պատապարուելու , և եղածներն ալ՝ յափշտակուած ու ամայութեան մէջ մնացած է . և յիշեալ տեղն ալ՝ մեր Հայր Աբրահամու վանքին մօտն է , որն որ այժմ Յոյնք յափշտակած են . . . և եթէ այս տեղը

առնուելու որ ըլլար՝ մէկ կողմէն յիշեալ վանք
քերնիս վերատին ձեռք կրնար բերուիլ. միւս
կողմէն ալ՝ մեր ձեռքը գտնուած Յովհաննէս
Աշեւտարանչի մատուռին ալ մերձ ըլլալով (որ
հոն Տաճարին գաւթին մէջն է՝ և Հայոց Աբ-
բահամու վանքին կից) զանի ալ վտանգէն կը
խալսէր։ Բայց ի՞նչ կրսես հոդ չրաւ Պատրի-
արքը. և վերջապէս ձեռքէն փախուց, ու
զանի ալ Յոյնք՝ Ռուսաց հետ ընկերութեամբ
առին, 1857, ին. հիմա մաղալանէր չինելով
կալուած ալ ըրին իրենց վանքին։ Ինչն ելեր
ի՞նչ կը գրես, և ի՞նչ կը բնառես, և որի՞ պի-
տի հասկցնես ասանք... եթէ մէկուն ենես
ասանկ բան մը զուրցես. մինչև անգամ Ս.
Էջմիածնայ Կաթողիկոսն ալ ըլլայ, կը դառնայ
ի՛ըսէ. թէ ինչ՞-ա պէտ-է. *ինչ ի՞նչ...
ի՞նչ ի՛ուլայ ի՛ուղ ուլայ... Հրո՞-սաղէմ մի՞ էրի՞ա-ա....
ի՞նչ բան ո՞նի՞-ա հո՞ն.... (չգիտնալով որ մի
միայն Ինով կը ճանչցուինք կոր այսօր՝ թէ աշ-
խարհիս երեսը՝ Հայ անունով Ազգ մը կայ..)
բայց Բարոյի գալու որ ըլլայնէ՝ Հրուսաղէմայ
Աթոռին կը դիմեն, ու անկից օգնութիւն կը
խնդրեն. այլ Հրուսաղէմ կարիքի կոր մի. իր
նախնի իրաւունքներին և արտօնութիւններ-
ին ձեռքը բան մը մնացած է մի, և կամ թէ
այժմ ի՞նչ արդիւնք կը բերէ կոր. և ասկից
եաքն ալ՝ ի՞նչ արդիւնք պիտի բերէ արդեօք.
քանի՞ որ Ազգերնիս արհեստներէ խնալով

թեղճո-ութիւն մեջ ինչ՞- . . . և քանի՞ որ ջերմեռանդն Աստուածպաշտութիւնը ու Եկեղեցասիրութիւնը վերցա՞- . . . և կամ քանի՞ որ Աղգերնուս մէջէն անհամբոյնութիւնը և երկպառակութիւնը չէ վերցա՞- . . . . և կամ թէ՝ քանի՞ որ Եւրոպայի պէս աշխատութիւնը մոռա՞նէ՝ մեր նորելուկ ազգասէրներուն և փափուկ շուշան ուսելաբարեպաշտ ուսուցիչներուն մեջը . . . . : Ասոնք ոչ գիտցող կայ, ոչ մուսաձոյ կայ, և ոչ ալ Ինոր ցաւին ցաւակից ու գարման տանող մը կայ . . . : Ահա միւս Բրիտանիէ Աղգերը՝ մանաւանդ Յոյնը՝ Երուսաղէմ ըսած ժամանակը, ոչ միայն իր ունեցածը բաղարոլին կուտայ՝ շինութեան ու սրբցառութեան մեջ մնալու համար Տնօրինական Ս. Տեղերը, այլ և բարեպաշտութեամբ և Հայրենասիրութեամբ՝ մինչև անգամ իր կեանքը կուտայ Ինոր համար . . . բայց մենք՝ այժմ պատրաստ գտնելով՝ անհոգ կեցեր՝ ու բաղարոլին զուրկ եմք մնացեր՝ յիշեալ գովելի Հայրենասիրութենէն և Բարեպաշտութենէն . . . և ընդհակառակն՝ գտնե՞ ինախանձ և կամ Աղգասիրական ոգիէ շարժելով՝ անունցմէ օրինակ ալ չէմք առներ, (բայց՝ ի անունց ուսնեցած մեղութիւններէն . . .) և կամ անունց օրինակին չէմք հետևիր, որոնք որ՝ ոչ թէ միայն մեզի հետ բաժանորդ են սրբազան Տեղերուն, և միանգամայն մեզի դրացի ալ են: Այլ ասանկ երթայ նէ՝ ոչ թէ միայն յուսա-

հատելով Երուսաղէմ մարդ չպիտի երթայ մեր Աղգէն, այլ և քիչ ժամանակէն քրիստոնէից առջև եկեղեցինիս ներկայացնող, և Աղգիս պարծանք՝ միանգամայն և բոլոր աղգաց նախանձելի և Ամն պէրեդրաց (26) եղող Սրբոց Յակոբեանց Առաքելական Գահը և հուսաւորս վանքերնիս ալ Յեռվանոս պիտի ելնէ . . . և ահա այս է մեր խոհեմութեան, բարեպաշտութեան, առաքինութեան, ազգասիրութեան, հայրենասիրութեան, լուսաւորութեան, և Աղգիս կառավարութեան պտուղը և արդիւնքը . . . . (27):

---

(26) Թող չպարծի Հռովմ, իրեն երեւելի շինքերովը՝ ու իր քաղաքը Խաղիոց մէջ մայրաքաղաք մը ըլլալուն համար, Ամն պէրեդրաց կոչել ինքզինքը մեծապարծութեամբ մը. այլ կը սեմք. Ս. Երուսաղէմ ոչ միայն Ամն և Եկեղեցի պէրեդրաց՝ և Ս. Քաղաք ու Ս. Երէր է՝ քան Ս. Գրոց. այլ և Մեր Եկեղեցին և Աթոռն ալ՝ Ամն և Գլուխ պէրեդրաց Տրիպոնէից է՝ ՅԱՌաջելոց անպի. նաև սրբոց Յակոբեանց Հայոց վանքն ալ (որ Զերեթիսին տունն է) Առաքելոց գահը և Ամենց Ժողովատեղի Մայր Սիոնն է . . . :

(27) Հարկ կը համարինք՝ մեր բարեկամին ըրած գիտողութիւնը՝ մանաւանդ թէ գուշակութիւնը ապացուցանել, որով և կը հաստատի, թէ ուրան իրաւացի է. թէ անոր և թէ մեր ըրած բաղդը ու ցաւակցութիւնը՝ այս մասին: Այսինքն՝ Յոյնք թէ և շատ ժամանակ անիրաւաբար Ս. Յակոբայ վանքը ունի է, ու դեռ Հայոց վաշխով պոռծ էնա. եայն, եայն ըսելով բանգաղաւշած՝ ու ժամանակ ժամանակ կուիւներ յարուցանելով՝ Աղգիս վիճաբերք ալ հասուցած՝ ու ձեռքերնին բան մը անցած չէ ալ՝ նէ՝ բայց սակայն ըրած անօրէնութիւններին չի բաւականալով, և այս առասպելը՝ իբր հիմնովին հաստատելու համար, սակից 54 տարի յառաջ Երուսաղէմայ պատ-

Եւ մենք ալ ըսինք անոր, թէ՝ կ'ուզեն խելագարի տեղ դնեն զիս, կ'ուզեն անզգամի. նաև կ'ուզեն նախատեն, կ'ուզենէ չարչարեն. և գիտեմ ալ Աստուծոյ բնաւորութիւնը՝ որ ասանկ բաներ ընելու և խօսելու պատրաստ են... բայց գիտցէր որ՝ այդ անարգական խօսքերը՝ զրպարտութիւնները ու բղռնութիւնները՝ շիտակ խօսողին ու ճշմարտութեան հետեւողին՝ իբր ճակատագիր մը, և կամ իբր վահան մը եղած է՝ ի սկզբանէ անտի. որոնք մինչեւ անգամ մեր Տէրոջն ալ յանդգնելով համարձակեցան Հրէայք զուրցել և ընել. դե՛ ո՛ ի՛ դէպ... կամ դե՛ ո՛ ի՛

մութիւն մը յօրինած՝ ու Ռուսաց կառավարութեան ներկայացուցած են. որով իբր թէ՝ իրենց ունեցած (շնորհեցած) իրաւունքներն (անիրաւութիւններն) պաշտպանելով և միանգամայն պահանջելով՝ կը գրգռեն Ռուսաց սէրութիւնը մեր վրայ. որ մեր դարմանեաց սեպհական ստացուածքը և Աստուծոյ ժառանգութիւնը՝ (եթէ հնա՛ր է նէ) իբր բռնի ձեռքերնուս յափշտակեն ամբարշտութեամբ... Եւ այս պատմութիւնն ալ՝ 1807 թն. և 1847 թն հրատարակած են. առաջինը Վիեննայի մէջ տպուած է, և երբոյն ալ՝ Պետերբուրգի։ Այսպէս անենք ժամանակին խարդախութեամբ Աստուծոյս տունը բլրտնելու դարանենք ու գօրծիքներ պատրաստեր ու կառավարութիւններ ալ շահելու ետեւէ ինկեր են... բայց մենք՝ աւաղելի և ապգակործան տարաձայնութեան մէջ թաւալելով՝ «ի թէ աչալրջութեամբ իրաւունքնիս պաշտպանելու համար օրինաւոր պատմութիւն մը չենք շինած անոր վրայ. և կամ գտնէ անոնց բարբանջմանցը դէմ. այլ և Յովհաննու քարոզը խորհելով՝ և անհոգութեամբ մը՝ իբր անիմաստ թողած ենք. Ս. Աթանասու արդարացի իրաւունքները՝ ու մեր դէշ ապրութիւնս, համեմատ՝ ամէն բանի մէջ վերջինին կ'ապասեմ. թէ իբր ոչնչի

նմա . . . և թէ՝ խաչէսցի՛, խաչէսցի՛ . . . վասնզ-
ըստ ինչ ըսելիք ունին նէ մեզի թող ըսեն. և
ինչ կ'ուզեն նէ ընեն. ըստ Աբրաքելոյն կ'ը-
սեմք. Երին մարդկան հաճոյ լինիք՝, ապա Քրիստոսի
ծառայ ոչ էիք . . . : Այլ և կ'ուզեն նէ Երու-
սաղէմայ Աթոռն ալ՝ բոլորովին կամ վաճա-
ռեն և կամ կործանեն. մենք պէտք է որ՝
ճշմարտութեան պաշտպան կենանք և ստոյգը
խօսելով՝ Աստուած իրաւունքը պաշտպանենք.
իբր այնու գիտաւորութեամբ և այնու յու-
սով՝ որ կամ Աստուած բարեկարգելու հա-
մար մեկը կը յարուցանէ, և կամ թէ ջելայ
նէ, ապագայ եկողները չեն ըսեր գանգատե-

կործանի, որ մենք արիութեամբ ու յայնժամ խելքերնիս գլուխ-
նիս գալով՝ ոգիներ և լացեր շարեմք և կամ յօգնիմք անօգուտ
աշխատութեամբ . . . : Եթէ Զմմատացի Յակոբ գիտնական
Քահանայն 1635 թիւ Փրկչին՝ այսինքն՝ 226 տարի յառաջ
և Բեթզեհեմցի Եղիա եպիսկոպոսը՝ 162 տարի յառաջ՝ և
Հանան Երուսաղէմցի հայրենասէր սրբազան եպիսկոպոսը
155 տարի յառաջները (իրենց գիտցածնուն չափ) Համառօտ
Երուսաղէմայ պատմութիւն շինած չըլլային՝ գուցէ այսօր
պիտի տարակուսէինք՝ թէ արդեօք յիրաւի է Յունաց ը-
նրած վայրահանգութիւնները՝ . . . : Բայց Աստուծմէ՝ մեր այս
մասին աշխատութեանը մէջ՝ ըստ բաւականին պիտի ապացու-
ցուի՝ թէ՝ ոչքան անտեղի՝ և ոչքան ալ սուտ՝ է բոլորովին
առասպել է՝ Յունաց ընրած պահանջմունքը: Շատ կ'ըլլայ
ըսել՝ թէ Նիկեփորոսին գրած Հայոց պատմութիւնն ուրեմն
առասպել մըն է՝ Ս. Յակոբայ վանքը մէրն է՝ ըսելը Յու-
նաց . . . . . բայց այս ալ կ'ըսեմք՝ թէ՝ անոնց հա-
մար շատ մեծ ամօթ չէ երբէք՝ ասանկ առասպելներ ստեղ-
ծելը . . . քանզի մի գիտցի իրենց ուղղափառ և ճշմարտապատում և
օրինաւոր քրիստոնէայ են ի մեջ ընդհանուր աշխարհի . . . :

լով և Աղգը պահարակելով թէ՝ բնաւ մեկ անգ մը չէ՞ եղեր արդեօք այս Աղգին մէջ՝ որ երեն Աղգին արդարացի երաւոնքները պաշպանելով երևան հանէ։ Այս ահա այս է իմ նպատակս. մանաւանդ թէ՝ ես ալ իբր Հայ, որով և իբր իրաւանց տէր ըլլալով, և այս գեղեցիկ թիւնները տեսնելով՝ իմանալով՝ ու գիտնալով՝ հրատարակեցի այս աղէտքները ու կը հրատարակեմ. որով և մեղքէն ու պարտականութենէն ալ կը խուսափիմ. ու խիղճս ալ զիս չի տանջեր այսուհետեւ. այլ պատասխանատուն Աղգային կառավարութիւնն է, որ ոչ միայն Աղգին, այլ առաւել ևս Աստուծի ահեղ Աթոռին Քրիստոսի՝ պարտական է պատասխան տալու . . . ։

ԺԸ. Երորդ. Սուրբ Յարութեան Աշխարհամատրան Տաճարին նորոգութեան հրովարտակները՝ որ հանգուցեալ Սուլթան Մահմուտի և անոր որդւոյն Սուլթան Ապտիւլ Մէճիտ բարեգութ թագաւորներին՝ յանկապէս մեր Աղգին ձեռքը շինուելուն համար, արտօնութեան Հրամանագիրները կան, որ Ռէձիդիպ կ'ըսվին։ Բայց այսօր ցաւօք սրտի կ'ըսեմք, թէ անգործադրելի մնացած են՝ Պատրիարքին անխոհեմ և անաշալուրջ կառավարութեան պատճառաւը։ Ուստի պարտապ տեղը այնքան աշխատանք ու դրամներ ալ վատնուեցան ժամանակին՝ յիշեալ Հրովարտակները ձեռք ձգելու համար . . . . ։

Լեթէ ընդունայն տեղը Պատրիարքարանի շինութիւնը, և Ալաումիարան կոչուած շինքին և Փիլիպպոսի աղբիւրին քով եղած փոքրիկ պարտէզն (28), և ուրիշ տեղերուն վառնած մեծապուժար դանձերուն փոխարէն՝ այս Տաճարին շինութիւնը համար իրաւունք պահանջելով աշխատէր, անշուշտ յաւիտենական յիշատակ և փառք մը պիտի առնուր, ոչ միայն ղինքը, այլ և Ազգը։

---

(28) Յիշեալ աղբիւրին տեղը, իբր մեծ և երեւելի բան մը կը ձեւացնեն յիշեալ գրքին հեղինակները. (Պատմ. եր. 255) նաև այնպէս կը նկարագրեն, որ իբր թէ Աստուծոյն աղբիւրը սոյն ընկոյց Պատրիարքը, յօգնութեան աղաչողութիւնամբ և բաղմաթոռմար դրամոտ... կ'ըսեմք, սուտ է... թէ և առած ալ ըլլայ աղբիւրը անկից ի՞նչ օգուտ, և ի՞նչ շահ կրնայ լինել Ազգս. մանաւանդ թէ՝ Հայ ազգի բնակութիւն մը շրջապէն եղբը՝ անօրինական տեղ մնն ալ չէ, որ գտնէ ժամանակին շինուելով՝ արգիւնք մը բերէ Աթոռին։ Այլ ինչպէս քանիք, աղբիւրին վրայօք փոքրիկ գեղեն մնն է առածը, և ինքը չգիտնալով այնպէս կարծեր էր, որ աղբիւրն ալ 'ի միասին վաճառած է Փեւլահ. բայց երբ ժամանակ մ' տեղը որոշելով շրջապատը որմ պիտի քաշեր նէ Պատրիարքը, խոկան գիւղացի Փեւլահ սաք եկնելով չթողուցին. ըսելով, թէ՝ Գիւղին սեպհական աղբիւրն ու խայտրանն է. ի՞նչպէս իշնա սպանալ. և այն։ Ուստի շատ սատկ ալ վատնեց Պատրիարքը, բայց վերատին չկարաց ձեռք բերել յիշեալ աղբիւրը. այլ անոր վրայօք իբր քարտնկեց հետաւորութեամբ մը՝ պատ քաշելով տեղը որոշեց, և մնաց աղբիւրը՝ Պատրիարքին հետ բացը... և ահա այս ևս իրեն անխոնջմոռնեան և հիպոքրիտեան խոհեմութիւն, և այնքան ալ մեծագուժար գրքամ վատնեց՝ ու չկրցաւ յաւացածը ձեռք բերել։ Յա՜ հ ըսել, որ հինգ հազար զուռուշով սատանալիք տեղը, համարեա թէ հինգ հարիւր քսանի չափ վատնեց, անօգուտ աշխատութիւնամբ։

Սակայն այս գովելի և փափաքելի Աղգս գուտ գործին ալ ձեռք չի կարկառեց, և մինայց գործը երեսի վրայ, և հետեւաբար մեր օրինաւոր ժառանգութիւնները (ըստ առաջնոյն) անշուք և ամայութեան մէջ մնայ. որ մէջ փոքր նախատինք և անարատութիւն է Աղգիս . . . : Թ. Էպէտեւ գիտեմք, քանզի պիտի ըսեն ոմանք, թէ՝ միայն այս Պատրիարքին օրովը չէր. այլ, բայց կ'ըսեմք՝ նախորդ Պատրիարքներուն օրովը՝ այս Տաճարին շինութեան խնդիրը չէր բացուած. բայց երբ որ 1853 թուին՝ Լատինք և Յոյնք՝ անոր շինութեանը համար մէջերնին կռիւ բանալով եւ ձգելին նէ շինութիւնը, ինքն ալ երբ բաժանուդ և երբ տէր Աթանասն, պէտք էր որ՝ իրաւանց տէր ըլլայը՝ ձեռքի եղած Հրամարակներովը յայտնէր, և կամ Աղգին իմաց տայր, որ գործադրութեանը հոգ տանէին, բայց բոլորովին հոգ չքրաւ . . . :

Ժթ. Երրորդ. Լաւ հոն Սուրբ Յարութեան Տաճարին մէջի ըսհորին անցքը, որ անխլնամ թողելով՝ ու օրինաւոր և հասատատուն լեղուագէտ Տեսուչ՝ ու բանիբուն | ուսարար մը չի դնելով հոն՝ անցեալ տարի զանի եւ բռնութեամբ մը յափշտակեցին Յոյնք մեր ձեռքէն. և ինձ կերպիս մը իրաւունքը չի պաշտպանեց Պատրիարքը. որուն հէօճէիները ու ֆէրմանները՝ իւր ձեռքը պահեստի կեցած

ենն . . . 'ի վերայ այսր ամենայնի կ'ասեմք , որ՝ եթէ իրաւունքը պաշտպանելու ալ ելնէ , պատիւ և համարում չունի , դատաւորներուն առջին , որոց դիմելով՝ Աթոռին իրաւունքը պաշտպանէ . վասն զի ամէնքն ալ իրմէն պաղեցուցած է . թող և վարկումն ալ կորսուած է , իրեն աչալրջ հառաջարկութիւնքը :

Ի . երրորդ . Աղուոց և Խրատոց եպիսկոպոսներուն ինքնագլուխ լինելը այժմ , որ յերեսաց վարմունքէն Պատրիարքին՝ ոտիպաւորեցան՝ իրենց իրենց արտօնութիւն տանալ՝ ու ապրստամբիլ Նրուսաղէմայ մէջ . որոնք յառաջ մեղի հպատակ՝ ու սիրով էին մեղի հետ . նաև մեր հրամանին և խշնամութեանը տակն էին : Այց երբ որ Պատրիարքը սիրով չվարուեցաւ անոնց հետ , ու գործ մը ունեցած ժամանակնին օգնութեան չի հասնելով անիսրնամ թողուցնէ , անոնք ալ ոչ միայն իրենց գործերնին իրենք կը տեսնեն կոր այսօր , այլ և ուղղակի իրենց գործին համար դատարանը և դուռը երթեւեկելու արտօնութիւն ունեցան . յորմէ մեղի հետ ալ՝ առելութեամբ են այժմ : Չ'մա կ'ըլլայ ըսել , որ թշնամի մնն ալ՝ ունեցաւ Աթոռը , թէ այս Պատրիարքին անիսհեմ կառավարութեան պատճառաւը , և թէ Յունաց դրդմամբը ու թելադրութեամբը , որ մեր հպատակութենէն հանէ . . : Այսուն օրինակ կրնայ լինել՝ Սարիոս Ա-էպարչ-

նիլէն պոռնը կոչուած Եկեղեցին՝ քաղաքին մէջ վանքերնուս մօտը, որն որ յառաջ մերն էր. բայց մեզի հետեւակ ըլլալնուն պատճառաւը Աստուծոյ նախնիք մեր անմխիթար չի թողելու համար զանոնք, թոյլատուութիւն ը-բեր են՝ իրենց պաշտամունքը հոն կատարելու. միանգամայն մերն ըլլալուն ալ իբր նը-շան մը ձգած են, որ տարին անգամ մը բա-րեկենդանին ուրբաթ օրը՝ մեր Միաբանութեան Սուրբ Պատարագ կը մատուցանեն հոն։ Նաև ինչպէս Խաչկալին վրայի յիշատակարանէն ալ յայտնի էր, որ այժմեան Աստուծոյ եպիսկոպոսը խանդարեց, և անհետ ըրաւ Հա-յոց յիշատակը . . . ։ Բայց զարմանք չէ այս. քանզի Հայոց Ազգը որի՞ բարերարութիւն չէ ըրեր՝ ու անկից վնաս չէ՞ կրեր . . . ։ Թուցէ այս եղելութիւններէն տեղեկութիւն չունի յիշեալ Մկրտիչ վարդապետը՝ և անոր գրոյն գործածիչ եղող Տէր Թէոդոր քահանայն, որ Սարագրութեան մէջ՝ ընտ բան մը չի յիշելէն զի զատ, այլ և յիշեալ եկեղեցին ալ՝ բոլո-րովին Աստուծոյ ընծայած են. ընդհակառակին՝ 1732 ին, և 1831 ին՝ մեր վանքը նորոգեց ծա-խիւքը և շինութեամբը։ Ի վերայ այսր ամե-նայնի ոչ յարգը գիտցող կայ, և ոչ ալ Ազգիս իրաւունքը պաշտպանող կայ . . . ։ Եւ ասկից զի զատ՝ Սուրբ Յարութեան Աշխարհամատ-բան Տաճարին մէջ Յովսէփ Արեմնեցիին

դերեզմանի կողմը գտնուած սեղանին վրայի եղեալ պատկերը՝ որ մերն է հանդերձ սեղանովը. բայց Ս. Թոռը Թայլասուրթիւնը ընած է Ս. սորուց՝ երբեմն պատարագ մատուցանելու համար. սակայն քանիցս անգամ է, որ յիշեալ Ս. սորուց եպիսկոպոսը՝ կ'աւրէ կոր պատկերին յիշատակարանը, (ինչպէս կ'իմանամք), որ քիչ ժամանակէն եաթը՝ յիշեալ Մարկոսին տանը պէս՝ զանի ալ բարբարոսին պիտի յափշտակեն Ս. սորիք։ Ս. տանը մէջ միայն այժմեան Պատրիարքին անխոհեմ կառավարութեան պատուղը և արդասիքն է, ու հոգն ալ չըլլալով՝ տանց պաշտպանութիւն չըներ, և կամ գոնէ իր պատիւը չի պահպանէր. (դուցէ ապագայից Բարի յիշատակ մը յիշելը- համար..) այլ և Ս. գիս անխոհեմ կառավարութեան, կամ լաւ ևս, անհամոյթոյնութեան պոռնկն է. որ երեսի վերայ ձգեր է՝ իրեն նախնեաց ստացուածքները և իրաւունքները՝ գոնէ անոնց այցելու ալ չըլլար, և գոնէ մինչև ցայժմ կորստուած ստացուածքներին և իրաւունքներին ալ չի դիմեր... ու անխնամ և միայնակ թողեր է Մխիթարեանց և Պատրիարքաց ձեռքը, ու հոգ և դարման մին ալ չի տանիր Ս. տանց, կամ բարեպաշտութեամբ և կամ Ս. գասիրութեամբ...։

ԻԲ. երբոր. Նաև Փիլիպպոսի աղբիւրին մերձ՝ Վէրձէ գիւղին մէջ գտնուած Ս. Թո-

ուշն այդ ինները ու ձիթաստոնով պարտէզ-
ները. որոնք որ՝ յիշատակաց արժանի Գրի-
գոր Պարոն Տէր Ս. Հայրապետին յիշատակ-
ներն են՝ հանդերձ գիւղին եղեբքը եղած աղ-
բիւրովը, որոնց անէնիներն ալ՝ Ա.Թոռին մէջ
կեցած են. (ինչպէս խմացանք Յակոբոս վար-
դապետէն). բայց հոգ տանող չըլլալով՝ Ա.
բաբայի բնակիչք յափշտակած են ու կը վա-
յելեն՝ առանց մէկէ մը պատկառելով. . . .
որուն (այդ ինն) ողկոյզները քաղելով ժամա-
նակին օրհնութեամբ հանդերձ բաժկուցու-
կը հանէին անկից սուրբ խորհուրդին՝ Սնա-
բանք Ա.Թոռոյն. բայց այսօր ոչ միայն յիշ-
եալ այդ իներ ու պարտէզներուն վրայ
կողոյ Ա.Թոռը, այլ և բաժկուցուն ալ դրբ-
ոէն Հրէանէրէն առնելու համար . . . : Սակայն
իրեն էֆին համար Պատրիարքը, Կիպրոսէն
խոմանպարիներ բերել կու տայ ու զեղխու-
թեամբ կը վայելէ՝ խոզի փսերով, որ ֆէռանայ և
ուռէնայ . . . : Իւ ահա տասով ալ կը հաս-
կըցուի ինչ խղճմտանքի և ինչ հաւատքի
տէր ըլլալը Յովհաննէս Պատրիարքին . . . . :
Ա.րդ՝ պէտքը չէր մի, Փիլիպպոսի աղբիւրին
քով փոքրիկ դեռնը գնելուն տեղը՝ նախ
նեաց այս ձգած արդիւնաւոր յիշատակները
ձեռք բերէր, և կամ գոնէ անոր (աղբիւ-
րին) վատնած բաղմագումար դրամներէն մէկ մաս
մ'ալ՝ անոնց համար մնխէր՝ ու յափշտակու-

թենք աղտոտեր . . . որով յայնժամ յիշեալ բաժկուցուլին անարգութիւնն ալ կը վերնար Ս.Թոռին վրայէն, (ինչպէս ցաւօք սրտի իմացանք, 1858 ամին . . .) և ինքն ալ սուրբ խորհրդոյն պարտական չէր մնար . . . : Ի՛հ, ասոնք ով պիտի ընեն . . . մենք եղածը կը կորսընցուցնենք, ընդհակառակն չունեցողները կը ստանան կոր այսօր. ինչպէս Յոյնք և Լատինք ստացան, որ քանի մը տարի յառաջ այդի մը անգամ չունէին Ս. Երուսաղէմայ մէջ . . . :

ԻԳ. Երրորդ. Ուսումնարանի կամ Դպրոցի համար ալ կ'ըսեմք, թէ՝ գոնէ այս մասին Յունաց և Լատինաց դպրոցներն և ուսումնարաններն ալ օրինակ չեն ըլլար. որոնք մեղնէ եռքը սկսեցին, բայց այսօր յառաջադէմ հանդիսացան. և մեր ունեցածը դժբաղդաբար ոչ թէ միայն յետադաս եղև, այլ և այս Պատրիարքին օրովը խաբանեցաւ ալ՝ ինչպէս զուրցեցինք: Սակայն քաղաքին Հայկազուն ժողովրդոց դպրոցին գալով՝ կ'ըսեմք, թէ անհընար է խեղճութիւնը նկարագրել. քանզի ոչ աղայոց տակը նստելու փնդրէր մը կայ. նաև ամենապիտանին է, և ոչ ալ գիրք ունին ձեռքերնին կարդալու. թող որ մէջն եղած պրաբիերն դասատու վարժապետին ալ ճամբայ տուաւ Պատրիարքը. որուն պիտանաւորութիւնը յայտնի է տեղւոյն համար, և որուն համար ալ կը բողոքեն մինչև ցարդ քաղաքացի

Հայաղդի ժողովուրդք, և կը խնդրեն՝ բայց լսող չկայ . . . : Օրինակի աղագաւ, 1858 ին բարեսէր անձին մէկը՝ ուխտի գնացած ըլլալով, այցելութիւն ըրաւ յիշեալ Պարտաւուն կոչուած տեղւոյն. և հոն առաջարկեց տիրացու Յակոբ գիտնական սարկաւագին, (որ յայնժամ բաղաքացւոց բողոքէն ստիպուելով՝ իբր դատատու կարգած էր Պատրիարքը), որ ինչքա՞ն պարապ կը նստին աղայքը. և գոնէ ինչքա՞ն քրիստոնէական վարդապետութիւն դաս չի տար, և այն : Այլ նա՛ ըսաւ. քանիցս անդամ ուղեցի դաս տալ, բայց յիշեալ տեսարակէն չի կայ, որ աղայոցը ձեռքը տամ, և քանի՛ քանի՛ հեղ զուրցեցի տեսուչ Պ. Յակոբ Փաշային, և նա՛ ալ զուրցեց Պատրիարքին, 'ի վերայ այսր ամենայնի արդիւնք մը չըստացանք. այլ իբր թէ՝ Պատրիարքը Պօլիս գրած է, որ քանի մը հատ Սաղմոս՝ Բրիտանական՝ և այն բերել տայ. բայց . . . . : Յայնժամ յիշեալ հիւրը՝ չհանդուրժելով՝ գնաց թէ՛ Պատրիարքին, թէ՛ Դէորդ Եպիսկոպոսին. ընդ նոսին և Տեսուչ անուանեալ անձին՝ և եղելութիւնը խնայ տալով առաջարկեց, որ այս գէշութեան առաջքը առնուի. և եթէ հընար է՝ աղայոց առջին երկու տախտակ գրասեղանի նման երկնցնել տալով՝ և ալ ոչքան տեսրակ կամ սաղմոս կրնայ գտնուիլ՝ անոր վրայ դնելով աղայքը կարդան. որպէս

ղև մէկմէկու ձեռքէն քաշկռտելով՝ բոլորովին առանց գլխի չի մնան. նաև եթէ կարելի էնէ՝ Սրբազանը հրաման ընէ տպագրիչին, որ քանի մը տաղմոս ու քրիստոնէական տպէ. որ տղայքը սառնալով կարդան. լաւ որում պատուիս չէ՞ Աթոռին, որ առանց գլխի մնան խըզճալի տղայքը . . . : Յաւէ է ըսել՝ որ ապարդիւն եղաւ ու չընդունուեցաւ յիշեալ անձին առաջարկութիւնը . . . : Իւ երկու օրէն եաքը՝ այս անձը՝ յիշեալ վարժապետին հետ մէկ ուրիշ հնաբը մը մտածեցին՝ և յաջողեցաւ ալ, ի՞նչպէս. և ահա, երկու հատ Քրիստոնէական գտնելով՝ ու զանոնք խղելով՝ մէկ մէկ եբեսնեբը մո-խաւայի վրայ փակցուցնելով պատէն վար կախեցին, ու այնպէս սրվեցնել սկսաւ խղճալի վարժապետը՝ խղճալի և անտէրունչ մանկանց . . . : Աբդ պէտքը չէր մի Պատրիարքին, որ Պատրիարքարան և Ուսումնարան անուամբ շինած պալատներուն և տարանոցներուն վատնած մեծագումար դրամներին ամենափոքր բաժին մըն ալ՝ այս խղճալի դըպրատանը խարճէ, և անոր պիտոյիցը հոգ տանելով գրենք տպել տայ՝ ու ինամք տանի աղքատիկ տղայոց, որ բարոյապէս ու նիւթապէս զարգանան ու գինքը օրհնող լինին, թէ տղայոց ծնողքը, և թէ բովանդակ Ազգը . . . ամենեւին ոչ . . . քանզի տէր չէ՞ անոնց . . . : Այլ անոր ինամքը Հրուսաղէմին եւ

ընեք ժամ անդին՝ Փիլիպպոսի աղբիւրը կոչուած տեղւոյն՝ ֆէլլահ՝ աղայոց վրայ է. և քանի որ երթայնէ հոն, պէտք է որ զանոնք շահէ քանի մը դրամով, որպէս զի կամ անոնցմով զբօսնու ու ժամանակ անցունէ. և կամ իրեն զուարճութեան համար առած տեղւոյն վրաս մը չընեն. և կամ թէ՝ անոնց ծնողացմէն պատիւ դանէ. . . . այլ ասդին ինչ կ'ըլլայ նէ թող ըլլայ՝ որովհետև հոգն է՝ . . . : Այս ահա՛ այս օրինակ աղգասէր՝ ուսումնասէր՝ ու հօրաւէր և մեծաշնորհակ Սրբոյն Հայրապետ մըն է՝ Յովհաննէս Պապրիարքը . . . եթէ չեմ հաւատար՝ գնայ Այրուսաղէմայ Միաբան Ազգուենեան Սիրտիչ վարդապետին, և անոր գրեցեալ եղող Պօլսոյ Մայր Եկեղեցւոյ Տ. Գէորգ Պահանային՝ հրատարակած՝ Սարգիս-Բի-ն Սրբոյ Խաչին Այր-սաղեմի անուանով պարբերական գիրքը առ կարդայ, և յայնժամ կը տեսնէս, թէ՝ ինչ մեծագործ Հայրապետ մըն է . . . որ ապատ և ապահով ժամանակ գտնելով՝ նաև դժբաղդաբար Ազգը անհամաձայն գտնելով՝ և կամ ինքը կուսակցութիւն շահելով՝ ու Միաբանութեան հաւատքած մեծագումար դրամներուն ալ ձեռք երկնցունելով, ուզած տեղը վատնեց՝ և դեռ կը վատնէ ազատաբար. ընդ հակառակին՝ իրեն Միաբանութեանը և գոնէ ժողովուրդին ալ խնամք չի տանիր ու կը ցրուէ . . . : Այլ և չեմք կրնար առանց յիշատակի թողուլ՝ վար-

ժամանակներուն ըրած անգթութիւնը՝ որ կը ներ Պատրիարքը. և ահա այն է. 45 ղուռուշ ամսականով ձայնաւոր վարժապետ մը բռնած էր. որն որ քաղաքացի պարկեշտ երիտասարդ մըն էր՝ Գէորգ անուն. խեղճը կուլար, որ եթէ հնար է նէ՝ քանի մը ղուռուշ ամսականը աւելցնէ՝ և ալ չէ-որ-* Բարա չիտայ Պատրիարքը. վասն զի կ'ըսէր՝ (վերոյիշեալ այցելուին) չեմ կրնար բաւականանալ. մանաւանդ թէ զեան ալ կ'ընեմ առած դրամներէս. և տանը խարճագնացութիւնը իմ վրա է, և ես ինչպէս պիտի ապրիմ, և այլն, և այլն (29):

---

(29) Թէպէտ և այսքան դրէլս ալ դիտեմ, որ մեծ յանդգնութիւն և մանաւանդ անիմաստութիւն է, ու խեղճերուն ալ վնաս է.... քանզի ճշմարիտը խօսիմք ու իրաւունքին պաշտպանեմք ըսելով՝ չըլայ թէ աւելի ևս դէշութեան հանդգցուցնենք խեղճերը. որով առաւել ևս հաստատուն Մատենադարանին խարոյկներուն մատնուին... վասնորոյ պէտք է որ՝ խոհեմութիւն բանեցնեն ընթերցողք, և զգուշութեամբ յաւերնուն յուսակից լինին.... Այսու ամենայնիւ մենք տեսածնիս ու լսածնիս չշնանդուրժելով գրեցինք, և վասն Ըստուծոյ կը վայելեմք. որուն դարմանն ալ Ազգիս վարչութենէն պէտք է որ ըլայ, ոչ միայն վարժապետներուն՝ այլ և առաւել ևս անօգնական եղբայրներուս և անոնց զաւակացը, որոնք որ Ազգիս պատկերը կը ներկայացնեն Ս. Երուսաղէմայ մէջ. նաև վասն իրաւանց Ազգիս, և վասն պաշտպանութեան Տեսրինական Ս. Տեղեաց և բաժանորդութեանց՝ բաղում վիշտեր կրած են ու դեռ կը կրեն... սրբեմն տարաձայնութիւնը մեկդի թողլով՝ անոնց յառաջադիմութեանը և զարգացմանը հոգ տանելու աշխատինք. Ազգասէրներ... Ի փառս Ըստուծոյ, և յօգուտ Ազգիս, և Ի սեր անընդգական Աթոռոյն Երուսաղէմի...:

Ոչմարիտ է տէր՝ այս վարժապետը այնքան ջանասէր, ու իրեն պաշտօնին վերայ ժիր և եռանդուն է, որուն նմանը Պոլսոյ ձայնաւոր վարժապետներուն մէջն ալ հազիւ կը գտնուի. քանզի ինչպէս ըսինք՝ ոչ թէ միայն ամենականը քիչ ըլլալուն համար ժլատութիւն և դանդաղութիւն չուներ իր պաշտօնին մէջ, այլ և համարեա թէ՝ եկեղեցիին պայծառութիւնը ասոր ջանքովն է ձայնաւորի մասին. որ հանապազ քաղաքին ազգայքը կը կրթէ երաժշտութեամբ, ու ասն օրերուն անոնց հետ կը փառաւորէ եկեղեցին։ Այսու ամենայնիւ յիշեալ Պատրիարքը յարգն ալ չգիտեր ու չգթար վրան. և եթէ երբեմն Աթանաք՝ զինքը չի յուսադրէն, և կամ երբեմն ոմանք առանձին ձեռնտուութիւն չունենն, հէմ դպրոցը բաղարովին պիտի ցրուի. և ինքը վարժապետն ալ յուսահատութեամբ պիտի ելնէ. բայց այս ալ չկրնար ընել, վասն զի Ինվէնիոյէն կը վախէ . . . քանզի ուր և որ՝ քով երթայ՝ կը ճամբրվի խեղճը . . . ։ Իր ահա այս գեշութիւններուն համար՝ աղոցմէն ոմանք, կամ իրենք Յունաց և Լատինաց ու Բողոքականաց դպրոցները կ'երթան՝ իրը գաղտուկ կարդալ և գիտութիւն սորվելու համար, և կամ իրենց ծնողքը երբեմն կ'ուղարկեն, որ լեզու սորվելով բարոյապէս յառաջանան իրենց զաւակունքը։ Բայց վախճանը ինչ կ'ըլլայ, և

ՈՒԲ կը կայանայ՝ այն մի հարցներ, վասն զի օ-
բինակներըը ցոյց տուինք . . . : ԱՀ. շատ կ'ըլ-
լայ ըսել, թէ Յոյնք, և թէ Լատինք, աշա-
լուրջ կառավարութեամբ՝ ոչ թէ միայն իրենց
ժողովուրդը կը կրթեն Հրուսաղէմայ մէջ, այլ
և Յեթլեհէմի, Նազարէթի, և այլն տեղեաց
ֆելլահ ժողովրդոց մանկանցը համար ալ դըպ-
րոցներ բանալով՝ իրենց լեզուն կը սորվեցը-
նեն՝ որով և կը որսան զանոնք՝ իրենց եկեղեց-
ւոյն ծոցը մոցնելով. որոնցմով ալ յարաժամ
կը խրոխտան մեր վրայ կռիւ գոյացնելով. որ-
պէս զի բոլորովին յափշտակեն՝ մեր ձեռքը
մնացած Տնօրինական Տեղերը՝ և ստացուած
ժառանգութիւնները. ընդ հակառակն մենք՝
մեր ձեռքի եղած ժողովրդոց մանկունքը ան-
գամ՝ ոչ թէ միայն չեմք կրթեր, այլ և կը ցըր-
ուեմք ալ . . . 'ի յափշտակութիւն թշնամեաց,
'ի վնաս Աղգիս, և 'ի նախատինս Հայ կրօնա-
ւորաց . . . ՈՀ, աւաղելի վիճակ . . . Տէր
տեսցէ և այց արասցէ Աղգիս . . . . :

ԻԴ. Երոյդ. Այլ ՈՒԲ Թողունք Թանգա-
բանին ու Տպարանին վրայի անցքերը՝ ու ապ-
արդիւն լինելը. որոնց համար՝ բոլորովին
փոյթ չունի Վեհը, վասն զի՝ ասելի և ընդոս-
դայն մասրաֆներ է՝ իրեն առջին, և իրեն պղայ-ութեան
ժամանակը չի կարնէ. Մրնէ ամենն ալ Ոռնա-ոռ-պ
եղած էին . . . : (Այսպէս իւր խօսքն է) : Նախ
և յառաջ Ոռիղ-էլեանի հնապաքով մը Արշալոյ-

լաւ է իրը դադրեցուց, և այժմ երթալու ալ ըլլայ նէ Երուսաղէմ, թէ յիշեալ և թէ միւս լաւ իրներեր՝ միայն իրեն մնալը կը կենայ, ու Վ. հարանէն դուրս չելներ. իբր այնու դիտաւորութեամբ, թէ՝ Միաբանք Ազգային և օտար լոյս վերայ տեղեկութիւն ստանալով բան չի սորվին, և կամ անոնց հրատարակիչներուն հետ յարաբերութիւն ունենալով՝ Երուսաղէմայ վրայօք լուր մը չի տան. այլ և կոյր ու անծանօթ մնալով Միաբանութիւնը՝ իբր թէ դուրսէն օգնական ու բարեկամ մը չունենան, որպէս զի անպաշտպան՝ և միանգամայն կոյր ալ գտնելով զանոնք, ուզած ճիզուելիականութիւնը բանեցնէ . . . : Իբ այս զուրցածիս ապացոյց և օրինակ կրնայ հանդիսանալ այն վարմունքը, որ կամ ուխտաւոր և կամ պատուաւոր անձ մի իրեն ներկայացնալու որ ըլլայ, նախ և յառաջ պատուէրներ դնելով՝ ճակատին կը ինդէ բոլոր մարդը. իբր թէ Սուրբ Լեռամիածինէն կարգ առած ժամանակը այնպէս ոսած ու հրահանգ առած ըլլայ . . . (30) և ուխտ ալ դնել կու տայ՝ որ Միաբանից

(30) Այս պատուոյն և արտաքոյութեանը մենք ալ արժանացանք 1858 ամին. բայց չգիտեմ թէ՝ արդեօք վարդապետ մի եղանք, չէ նէ եպիսկոպոս մի դարձանք . . . թէպէտ և առանց միւռոնի էր արտաքոյութիւնը . . . գուցէ նշանամէ առած էր այս ծէսը. քանզի նաքա առանց միւռոնի կը ձեռնադրեն . . . :

հետ բնաւ տեսութիւն չընեն. և հոն կ'սկսի հոգեկորուստ անուանակոտրութիւն ընել, զոր չէ՛ տեղւոյս նկարագրել. . . : Որով ուխտի գացող անձանց գաղափարը աւրելով՝ գայթակղութեան մէջ կը ձգէ. և ասով՝ կան շատերը՝ որ այս խարդախութեան միամտաբար հաւատք կ'ընծայեն՝ ու յուսահատելով անմիջապէս ետ կը դառնան. և կան շատերն ալ՝ որ աչալրջութեամբ կը որոնեն՝ և ըրած գէշութիւններն իմանալով ու տեսնելով՝ կը գայթակղին, որով տարաձայնութեանց տեղի տալով՝ փոխանակ բարւոյն և խաղաղութեան օրինակ ըլլալուն, չարութեան և տարաձայնութեան, նաև խռովութեան և ատելութեան ինքն լինի պատճառ. . . : Այս քանզի խորամանկութեամբ գիտէ՛ և կասկած ալ կ'ընէ, որ իր ըրած անվայել ընթացքները՝ Միաբանութիւնը կը պատմէ ժողովրդեան. վասն որոյ այս ճամբան բռնած է ողորմելին. իբր թէ՝ մարդ տեսութիւն չընելով անոնց հետ՝ տեղեկութիւն մը չըստանան. որով առաւել ևս տեղի կուտայ խեղճերուն՝ որ աչուընին բանան՝ ու տեղեկանան եղածներուն. մանաւանդ թէ՝ գաղանի բան մըն ալ չի կայ. այլ եղածները՝ եթէ մէկը գլխուն վրայ աչք ունի, ու անբան կենդանիներէն տարբերութիւն. . . հարկաւ յայտնի ու ակներև կը տեսնէ եղած գէշութիւնները, ու մէկու մը

տեղեկութիւն տալուն կարօտութիւն չունի բնաւ . . . : Կը թողունք նաև Տպարանին անչքութիւնը, և մէջի եղած արուեստաւոր անձանց խեղճութիւնը նկարագրել. որ ոչ աւնոնց վարձքը օրինաւոր կերպիւ և առանց տրանջանաց ու կուսոյ կը վճարէ . և ոչ ալ պէտք եղած բաները կ'առնէ Պատրիարքը, որ մարդիկն ալ գործ տեսնեն . . . : Եւ ասոր պէս ալ՝ Թանգարանին վերատեսչին՝ ոչ արտօնութիւն և ոչ ստակ կուտայ, որ կամ չեղած գրեանքը ստանայ, և կամ նախնեաց ընտիր ձեռագիրները հրատարակելով՝ ի լոյս ընծայէ որ իբր փառք մը ըլլայ Ազգին և Ազգիս . և որով գտնէ իրեն Ուսումնասէր և Ազգասէր անուն ալ հռչակուի . . . : Այլ ասոնք պաքաս (ՀԸՂԸԼԸ) խօսքեր են այս Վ ԷՀին համար . . . այլ ճիշտ ութեամբ՝ եթէ իր կուսակից ներուն մէկուն գրած հեղինակութիւնը կամ թարգմանութիւնը, և կամ իրեն վրայօք գովեստի վերաբերեալ գրութիւն մը ըլլայ՝ զանոնք իբր թէ իրեն պաշտպան մը ունենալու, և իբր թէ իրեն փառք մը ստանալու համար կը հրատարակէ . . . Չգիտեր թէ՝ փառքը ու պաշտպան գտնելը և համարում ստանալը ուրկից և ինչով կ'ըլլայ . . . :

Ի Ե . Երրորդ . Նաև ՈՒր թողունք այն ամենանարգ ու հաւատարմութեան ընդ նմին և մարդկութեան դէմ մեղանչումը Արբարան

Պատրիարքին, յորմէ գրգիռ կամ օրինակ առ-նելով Տէսուչները՝ երեկոյ Սեծաւորին կամ հրամանին և կամ ընթացքին կը հետեւին՝ քրիստոնեական յանցանք գործածելով . . . : Եւ ահա այն է, որ թէ Միքայանից և թէ դուրսէն ո-րոնք վրայ կասկած մը ունին, և կամ որոնք հետ ատելութեամբ են նէ՝ անոնց նամակները ձեռք անցուցնելով, և կամ կ'ըլլայ որ Աղգին տունը և Աթոռը ըլլալուն համար՝ հաւատարմու-թիւն ընելով ուղղակի կ'ուղարկեն նէ նամակաց տէրերը՝ յայնժամ այն ձեռք անցած նամակ-ներուն շատերը կը բանան՝ ու որոնք որ ուղղը-ված է նէ չեն տար . . . : Ինչպէս որ յսկա-նէ յանուանէ երկիցս մեզի, և քանի մը անգամ՝ Դաւիթ Արբաղանին, Կարապետ եպիսկոպոսին, Յակոբոս, Նոսայի, Տիմոթէոս վարդապետներուն և ուրիշ անձանց ալ պատահեցաւ այս գէշութիւնը . . . (31) և այս

(31) Անոնք չեն կրնար ուրանալ, այժմեան Երուսաղէմայ փոխանորդ Սահակ վարդապետը, Մայր Եկեղեցւոյ Տ. Գէորգ քահանայն, և անոր ազգական Տ. Պողոսեան Պ. Գալուստը . . . և էթէ ուրանան՝ Ճարի անուանող Սամաթիացի մահտեսի Յովակիմը Խաչէնէրուն մէջ հրապարակաւ պօռալուն նման՝ գուցէ յայնժամ Ճշմարտութենէ բուռնդատուելով՝ վերոյին կրնայ անոնց երեսին ալ ասոյգը խօսելով պօռալ . . . քան զարմանալի՝ յիշեալ անձը, այս մեզի հանդիպած գէշութիւնը 1859 թուին տեսնելով ու հասկանալով Երուսաղէմայ Պատրիարքին՝ լուսաւորեցուցած է, և ուզող ու խնդրող որ ըլլայ՝ յիշեալ ամենոյն՝ հանրագիրին, ու ՀՐՄՈՒԼԻ պապուն՝ մեզի համար ինչ գրած և ինչպէս մեր նամակները ձեռք անցուցած ըլլալը Պատրիար-

ընթացքին համար է, որ գլխաւորապէս հաւատարմութիւնը ու պատկառանքը վերցած է, թէ Պատրիարքին՝ Միաբանութեանը վրայէն, և թէ Միաբանից՝ Պատրիարքին՝ և կամ անոր դրած Տեսուչներուն վրայէն. և շատ ժամանակ խմացուելով այս զզուելի դէշութիւնները, անոր համար կռիւ և ատելութիւն եղած է ու կ'ըլլայ . . . չգիտեմք թէ՝ ինչ թերշուառ կառավարութիւն է, որ այս ճիզուիթական սարսափելի մեքենաները բանեցնելով Միաբանութեանը հետ կը պատերազմի դիշեր և ցերեկ. և ուրիշ զբաղմունք մը չունի՝ բայց ի Միաբանից ամբողջութիւնը բաժանելէն ու անոնց սէրը քակելէն . . . և համարեա թէ՝ հաւատաքնութեան բանդ մը դարձած է վանքը . . . քանզի դաւադրութիւն, զրպարտութիւն, մատնութիւն, նենգութիւն, և ատելութիւն պակաս չէ Ս. Թոռին մէջէն. ու

գին ըրած Բաղէշիպնէրովը կրնայ պատմել . . . : Դա՛ մանաւանդ՝ և մենք ալ 1858 թուին՝ երբոր Տ. Գէորգին հետ Երուսաղէմ եմք նէ. հոն Տիմոթէոս վարդապետին ալ (Պատրիարքին ձեռօքը) այս գէշութիւնը պատահած ըլլալով՝ բոլորք և կարելի՝ ըներ նէ յիշեալ վարդապետը Պատրիարքին հետ. մենք ներկայ գտնուելով յիշեալ քահանային հետ՝ դժուարաւ կրցինք առջին առնուլ այս վէճին . . . : Մենք աւելի բան մը չենք ըսեր թէ Սահակ վարդապետին և թէ յիշեալ պարոն-ելիին՝ այլ իրենց արարմանցը և ընթացքը նայելով՝ հասարակաց առածը կրնամք յատկացներ իրենց վրայ ըսելով, թէ՝ առաջ խնձոր են եղեր, և յամ անուշներին խնձոր են հաներ. ու վանդին (Երուսաղէմին) հաւերը ի՞նչպէս իմ՝ . . . :

ռով Միաբանից Ս. սէրն ալ վերցաւ՝ այս Պատ-
ուիրաքին օրովը . . . : Ի՛նչ որուն մինչեւ ըսինք՝
բաց 'ի ճիշտ ուխտական մեքենաներէն, այլ և
չպիտոյ՝ ոգէտ և անվայել անձինք ալ Միաբան
ընդունելով՝ մանաւանդ թէ այնպիսիներն ալ
գործի վերայ անցուցանելով՝ լաւեսներ կացոյց
զանոնք, որոնցմով ոչ թէ միայն Ա՛թոռին վար-
կումը ըսարկի մը ըրաւ, այլ և Բաժանից ո- դէ-
Բաժանէ Միաբանութիւնը . . . և որովհետև
լաւ սորված ու կարդացած է այն առածը,
թէ՝ Բաժանէա՛ զի պիրէպէ՝ . . . և ահա՛ կերպ
կերպ հնարքներով՝ ո՛չ թէ միայն բաժանեց,
այլ և 'ի կորուստ մատնելով՝ անոնց ստացած
լո՛ւանին և արեւին վերայ ալ տիրեց . . . : Յորմէ
երկու բան կը մակաբերեմք. այսինքն՝ կամ
Ազգային կառավարութիւնը չ'գիտէր այս ե-
ղելութիւնները՝ անոր համար լուռ կեցած է.
և կամ թէ գիտէ, բայց այս Ընձը՝ գործիք մը
ըրած է իրեն. որպէս զի Բոլորովին ցրո՛-է Միա-
բանութիւնը, որ եաքը մինքն ալ Բոլորովին պիրէ
Ս. Ա՛թոռին վերայ . . . սակայն մինչեւ պիտի
տիրէ՞ . . . քանզի բան չի մնաց . . . . : Բայց
առջինին համար չե՛մք կրնար յուսալ. այլ վեր-
ջինին գալով կը հաւատամք և կը վկայեմք ալ.
որովհետև համարեա թէ՝ 25 տարի է որ՝ կը
բաղաքեն կոր Միաբանք այս Ընձին համար,
բայց այսու ամենայնիւ ոսկանջ գնող չ'կայ . . :

Ի՛ջ. երորդ. Ա՛թոռին մէջ Հիւանդանոց

ու յատկացեալ օրինաւոր բժիշկ մը՝ կամ դեղարան մը չ'ըլլալուն, շատ ժամանակ անխնամ և առանց դարմանի մնալով՝ զուր տեղը կենդանաւոր կը լինին շատերը . . . . նաեւ շատերն ալ՝ ծովը խլնող մարդուն օրինակին նման, Յունացմէ օգնութիւն յուսալով՝ անոնց վանքը կ'երթան դարմանի համար. և անոնք ալ ստակ մը չէ՛ն առներ Պիտանութենէն. համարեա թէ՝ կամ'ի նախատինս Պատրիարքին, կամ որսալու դիտմամբ զՊիտանները, և կամ՝ և իցէ պատճառաւ . . . : Այս եւ չէ՛մք կրնար զանց առնել. քաղաքացի անուանեալ խեղճ և անտէրունչ Հայազգի ժողովրդոց ալ՝ միշտ այս ճախորդութեան ենթակայ լինելը. քանզի որոց շատերը աղքատ լինելով՝ ո՛չ հիւանդանոց մը կայ՝ որ հիւանդութեան ժամանակին երթալով դարմանուին. և ո՛չ ալ օրինաւոր և յատուկ բժիշկ մը ունի վանքը, որ իրենց հիւանդութեան ժամանակը կանչելով օգտին. այլ յուսահատ և անօգնական առանց դարմանի կը մեռանին : Ու այս վտանգէն աղատ չէ՛ն՝ նաև պանդուխտ և ուխտաւոր Հայ ազգի ժողովուրդնիս ալ :

Ի՞. երրորդ. Ո՞ւր թողուցնք նաև. ոխակալութիւնը ու քինախնդրութիւնը այս Պատրիարքին, որ ո՛չ միայն կենդանիներէն, այլ և մինչև անգամ մեռելներէն ալ վրէժ առնել կ'ուզէ, որն որ հասարակ քրիստոնէի մը անգամ չի վայ-

լեր , ՈՒր մնաց պատկառելի Աբրահամեան Դահի մը վերայ բազմող՝ ու Ժողովրդեան օրինակ և ուսուցիչ եղող Հովուապետի մը . . . : Օ՛ր օրինակ՝ հանդուցեալ Կիրակոս և Պօղոս Սրբազանները , իրենց կենդանութեանը հաշիւ պահանջելնուն համար այս Վ՛ենէն , վասն որոյ քէն պահելով՝ այն ոճնելի և Ա՛զգասէր Հայրապետաց գերեզմաններնուն վերայ մինչև ցայսօր տապանաքար մը չի դներ , որ 10 տարիէ առաջինը՝ և եօթը տարի է վերջինը վախճանած են . թող որ՝ երկրորդը՝ Ա՛թոռին ոչ միայն աշխատաւորն է , այլ և իրը ազատիչն է . . . ուրեմն պէտք չէր մի , որ մինչև ցարդ արձան մը կանգնեցներ անոր վերայ . այլ քինախնդրութեամբ և ապերախտութեամբ , իրը մերկ առանց քարի և նշանի թողած է յիշեալ Սրբազան Հայրապետներուն գերեզմանը . . . ընդհակառակն անոնց ձգած արդեանց գանձերը՝ իրեն կամքին և ընդունայն բաներու ու շինութեանց կը վատնէ , ու փոքրիկ մաս մին ալ անոնց դամբանին չի մնիներ . ուստի ՈՒրքան խղճմտանք ունենալը սակից ալ կրնայ հասկցուիլ . . . : Եւ դարձեալ՝ առաւել ևս հակառակը կայ բանին , որ երբեմն Պօղոս Եպրուսաղէմայ տանը փոխանորդ և Կիրակոս Սրբազանին աշակերտ եղող Կարապետ վարդապետին՝ իւր Մեծաւորին համար շինել տուած տապանաքարը կայ , որ

Լաֆայ կեցած է՝ վեց տարիէ 'ի վեր. զանկ
ալ վեր հանել տալու հրաման չնէր՝ ու գե-
ղեղմանին վերայ դնել չկտար . . . . գուցէ
գուշակելով՝ որ իրմէն ետքը նստող յաջորդ
Պատրիարքներն ալ՝ իրեն վրայ չպիտի դնեն,
իրեն ապօրինաւոր ընթացքովը Աթոռին պա-
տիւը կորսնցուցնելուն համար . . . . :

ԻԸ. Երորդ. Նաև այս օրերս ուրիշ հնարք
մին ալ հնարեց. յորմէ կրնան ընթերցողք տե-
ղեկանալ, թէ ինչ վարպետութիւն է ըրածը
. . . և ահա այն է, վանքին մէջ քանի մը տեղ
ունէր սկսաւ փորել տալ՝ ու գանձ բնտռե-
լու երթալ. յորմէ երկու բան կը մտածուի.
բայց վերջինը հաստատուն է. այսինքն՝ նախ
անանկ կ'երեւի, որ բոլորովին Աթոռին ու-
նեցած դրամները վատնեց ու մերկացուց.
քանզի ինչպէս լսինք, թէ՝ Բաֆանեա՛ զի պիրե-
յեա՝ լա՛ սորված ըլլալով՝ ուստի Բաֆանելէն
ետքը Միաբանութիւնը, Աթոռին դեղին և
սպիտակ մոմերուն անգամ պիրելով յեռ× երկնցու ու-
պիրեց . . . այս մասին չեմք գիտեր, թէ ինչ
պատճառէ ստիպեալ փակակալ Գէորգ եպիս-
կոպոսը՝ անոր ձեռք երկնցունել տուաւ հա-
ւատարմութեան և Աթոռին կանոնին դէմ
մեղանչելով, ինչպէս կը լսեմք . . . . գուցէ
խեղճը անօգնական մնալով, ու տարաձայնու-
թենէն ալ վախնալով՝ վասնորոյ Տէրոջը յանձ-
նեց, որ այն Արդարադատ դատաւորը ու

պաշտպանը Ս. Ազատն՝ ինքը դատախազ ելլայ . . . և որովհետև գիտնալով՝ որ ոչ պարոն-Ելի Խորհրդական Միաբանութիւն մը-նայ, և ոչ ալ ոնկնդրիր Ազգասէր ու բարե-պաշտ երեւելի Իշխան մը մնայ, որ Պատրի-արքին դէմ կենալով և անոնց ալ բողոքելով ի-ճայ տայ եղերութիւնը խորհրդարար . . . : Երկրորդ՝ եթէ այս յիշածներս ալ չէնք՝ ուրեմն նոր 'ի նորոյ խաբէական հնարք մըն ալ՝ այս անգամ կը բանեցնէ կոր. որպէս զի եթէ Ազգը կամ հաշիւ պահանջէ, և կամ փոխ դրամ ուզէ նէ՝ յայնժամ առարկայ և պատճառ պի-տի բերէ՝ ինքը ըսելով, թէ՝ « պէն էէրպէն մալ արամաղայ չըգմըշլմ դի վանէը իւար էրէյիմ դէյի, պո-նը ըարտա ծոռ ղըրիը՝ պէնդէն բարտ արամաղա գալգ-մըշար » . . . եւ ահա ասանկ հնարագէտ ու չի գանուած ծաղիկ մըն է Երուսաղէմայ Պատ-րիարքը . . . : Դա ասկից 'ի զատ՝ սկսաւ հիւ-անդնալ, որ ստէպ ստէպ կը պատահի իրեն՝ այս հիւանդութիւնը . . . որպէս զի Ազգը վրան խղճալով՝ կամ Պօլիս բերել չտայ ու հա-շիւ չի հարցնէ, և կամ ուրիշ եղանակաւ մը զինքը Աթոռէն չի հանէ : Ինչպէս որ այս վար-պետ-Ռիւանը 1857 ին ալ բանեցուց, երբ որ Ազգը հրաւիրակ խրկելով՝ (1856 Թուոյն վերջերը) կը կանչէր զինքը . . . : Դա այս վարպետ-Ռիւանն ալ՝ մինակ իրմէն չէ. այլ իրեն կուսակիցներ ալ ունի . . . ըստ որում այս տեղ

(Պօլիս) լուսեաններ ունեցած ըլլալով՝ վասնորոյ Պատրիարքարանին մէջ եղած Խորհուրդները՝ իսկոյն արագութեամբ խրեն կ'ուղարկեն, որով և Աղգիս մէջ շփոթ ու տարաձայնութիւն ալ կը ձգեն . . . և ահա նոյն ժամանակ ալ այսպէս եղև, որ և ժամանակ անցուցնելով չեկաւ, ու հրաւէրակները գրեա թէ չգիտնալով կ'ըսպասէին յայնժամ Ս. Էրուսաղէմ . . . . . : Էրդ՝ երբեմն օտար ազգի ճիւվիլիներուն՝ կամ անոնց գաղտնիքը պարունակող՝ ԹԱՓԱՌԱՅԱՆ ՀՐԵԱՅ անուանով գիրքը կ'առնուն ու կը կարդան հետաքրքրութեամբ՝ և չգիտնալով ալ միայն զանոնք կը պարսաւեն մեր բանտէրները. և կամ ոմանք ալ զանի թարգմանելու կամ թարգմանել տալու կ'աշխատին ու կը փափաքին ալ, առանց գրամ և աշխատութիւն խնայելու . . : Էլ չգիտեն կ'ըսեմ խեղճերը՝ որ մեր Աղգին մէջն ալ՝ 25 տարիէ 'ի վեր ի՞նչ ճիւվիլիներ կան, և ի՞նչ ճիւվիլիո-ռիւ-ններ եղած են ու կըլլան ալ. . . . : Թէպէտ և այս ալ կը խոստովանիմք՝ որ որքան մոլութիւն կայ Աղգիս մէջ, ըստ մեծի մասին օտարաց յարելով կամ անոնց ընթացքը հետեւելով ստացած է, ըսելէ որ օտարներէն մտած է մեր մէջը, ըստ սոցին օրինակի է և այս մոլութիւնն ալ. որուն աղբիւրը ու ծագումը վերոյիշեալներէն է : Այց դժբաղդաբար մինչև յայսօր հետաքրքիր անձ մը՝ այս մեր ճիւվիլիներուն գաղտնիքը հասկնալով՝ ԹԱՓԱ-

ՈՒՍԿԻՆ ԼՕՅՕԼԱՅԻ, կամ ԵՐԱՎՔ ՀՌՈՎՄԱՅ անու-
նով գիրք մ՚ալ գրող չեղաւ. որով հասկնար
Աստն ալ՝ թէ ինչքիր կը պատահի ամեն օր իր
մէջն ալ... որուն գլուխը Պալաթիա, բե-
բանը Իւսկիւտար, կռնակը Պէշիկթաշ, թի-
կունքը Խուսմասաբուս և Անիխասբուս, աջ թեւը
Շրուսաղէմատուն, ձախ թեւը Գուզկունճուք
և Խճատիկ, ոտքերը ամեն տեղ, և ե-
բանիները բոլոր վանքերուն մէջ տարածուած է
այս հրեշին... վասնորոյ մինչև ցայսօր բան մը
յառաջ չի գնաց, և այսուհետև բան մին ալ
յառաջ երթալիք չ՚ունի Աստուս մէջ. քանի որ
Բոյնը կամ լաւ ևս Բոյնը Աստուս մէջն է, կամ
Աստուս մէջէն է՛.՛.՛.՛: Ո՛հ, Սարգսարէանց,
և զարթիր, արդի՛ Հայկայ, ոնվէ հարկանողն
և տառապեցուցանողն զԲեղ.....:

ԻԹ. երրորդ. Լաւ՝ ի վերջոյ մեկ դէշու-
թիւնն ալ կը դնենք, որ դէռ մօտ ժամա-
նակներս ըրաւ, որմէ կրնան բարեաց հասկը-
նալ՝ բոլոր Աստայինք. թէ այս անձը ինչ
խղճմտանքի և ինչ հաւատքի տէր է. և ան-
կից միւս խղճալի և անարդ կառավարութիւն-
ներն ալ դէպրութեամբ մեկաբերելով՝ դու-
ցէ մեզի անմեղադիր կը կացուցանեն, միան-
գամայն և չափազանցախօս չենն ալ համարեր և
մինչև ցայս վայր գրածներնուս ալ հաւատք
կ՚ընծայեն, որն որ իրեն Հայրապետական պա-
տիւը խնայելով՝ բաւականէն աւելի սեղմե-

ցինք մեր գրիչը . . . : Այս ահա այն է, Պա-
մասկոսի մէջ եղած արիւնհեղութեան սոսկա-
լի ոճիրը բոլոր աշխարհի ծանօթ է այսօր.
թէ մէջը գանուող քրիստոնէ Աղբարներին
յանկարծակի գալով՝ ինչ անակնուեալի գէշու-
թեան և աղէտներու պատահեցան . . . որոնց-
մէ մէկն ալ էր՝ տեղւոյն Առաջնորդ Պարբիէլ
վարդապետը՝ Ս. Երուսաղէմի Միաբանը :
Արդ՝ այս անձը՝ յիշեալ գէշութիւնը չի պա-
տահած երկու ամիս յառաջ՝ իւր տարեկան
հաշուեցուցակը (ըստ սովորութեան Աթո-
ռոյն) Պատրիարքին ղրկելով՝ յորմէ խարճած
տակը կը պահանջէ. բայց դեռ խնդրած ըն-
տակը և տուած հաշուին ու գրած նամակնե-
րուն պատասխանը չառնելով վարդապետը՝
վերջապէս գրելով կը պահանջէ իրեն իրաւուն-
քը Պատրիարքէն : Այս երբ ժամանակ որ՝ այս
վերոյիշեալ եղեռնութիւնները վրանին կու-
գայ նէ՝ յայնժամ յիշեալ վարդապետը իր
հօրը հաւաքելով՝ բերդին մէջ պատսպար-
ուած կը կենայ՝ ու վերին օգնութեանը կ'ա-
պաւինի . . . Նոյն ժամայն ժողովուրդը ան-
դամ գրելով աղերս կը մատուցանեն Պատ-
րիարքին, որպէս զի գթալով՝ իրենց օգնու-
թեան հասնի, ըստ որում մաղապուրծ և իբր
մօրէ մերկ եղած՝ ու անօթի ծարաւ էին խեղ-
ճերը . . . : Այլ Ս. Պատրիարքը՝ խուլ ըլլա-
լով՝ և բոլորովին անգթութեան զէնքը ձեռք

առնելով, և մինչև անդամ Հրեից ազգէն ալ չի պատկառելով, որոնք ընկերութեամբ Հայոց խղճալեաց օգնութիւն կ'ընեին, այլ ընդ հակառակն՝ ինքը Հայր հասարակաց և Հովիւ վտանգեալ և տառապեալ ոչխարներուն պիտի ըլլայ, բնաւ երբէք աղերսներնուն ականջ չի դնելով՝ օգնութեան չէր հասներ . . . : Հրաման երբ ժամանակ որ ժողովուրդը յուսահատութեամբ կը ցրուի, յայնժամ Գաբրիէլ վարդապետան ալ՝ իբր մօրէ մերկ կ'ելնէ Ս. Հրուսաղէմ վանքը կը դառնայ, և ներկայանալով Վ. Էհին, նոյն պահանջած դրամը կը խնդրէ, որպէս զի իւր պիտոյքը հոգայ. բայց նա սկիզբը՝ հաշ-էպո-մարը չ'կա-, ո-իմ յէ-ոչս չանցա-՝ ըսելով կ'ուրանայ. և եաթը սա օրինա-որ պատասխանը կու տայ՝ գրիսիրդ Պատրիարքը՝ իբր գրելով մը խեղճին վերայ՝ ըսելով թէ՝ "սայէի էօլլուրդ, վէ օպա ղէյան օր-պո- օ-պէր ղեյլերին իլէն՝ նէ՞ օր-որ-մո-ղ, նէ՞ ալ-ճակ նէ՞ վերէ-ճէկ . . . :" Հրաման այս եղելութիւնը թէպէտև քանի մը անձանցմէ լսած՝ ու հաւատք ընծայած չէինք, բայց երբ ժամանակ որ՝ յիշեալ վարդապետին՝ հոս երեւելի և Աղգասէր իշխաններնուս մէկուն՝ (Խորասանճեան Պ. Պեսրասին) ողբական գրութիւնը որ տեսանք՝ յայնժամ ցաւօք սրտի հաւատացինք . . . : Ուրեմն թող տեսնեն ընթերցողք, որ այս օրինակ է ընթացքը և կառա-

վարութիւնը, և այս օրինակ է խղճմտանքը՝ գութը՝ ու սէրը՝ Միաբանից և ժողովրդոց վերայ, որ երբ Հայր և խնամածու Հովիւ անուանած ու կանգնուած է անոնց վերայ... Եղբ. Աղգին... որ այսպիսի Հովիւներ ունի...։

Եւ Երեսներորդ. Ապաքէն մինչև ցայս վայր՝ ինչ ասոիճան կրօնք, ինչ ասոիճան խիղճ, և ինչ ասոիճան ոգի, նաև ինչ ասոիճան կառավարութիւն ու խոհեմութիւն և գթութիւն ունենալն ալ՝ այս վերջի եղելութիւնէն հասկցուելով... կը թողունք իրեն փոխանորդութեանը ժամանակ ըրած սարսափելի ոճիրներուն վրայօք զուրցել. որ Երուսաղէմ երթալու համար ուխտաւորաց նաև բռնած ժամանակը (դեռ շոգենաւը չերեւցած Պոլսոյ մէջ՝ ու Եւրոպայ երթեւեկութիւն չըրած) աժան գնով հինգ վեց հազար զուռուշի չ-ր-ի-ս նաև կը մնտուէր՝ փոխանակ 20 և 25 հազար զուռուշի բռնելիք նաւերուն. որոնց մէջը կը լեցնէր՝ միամիտ և աղաւնաբարոյ Եղբայրներնիս՝ տասնապատիկ գին դնելով վրանին. (որոնք որ ջերմեռանդն սրտիւ կուտային, գխնայով ու կարծելով՝ վանքին շահ մը կ'ելլայ, ինչպէս որ ինքն ալ անոնց կը բարոզէր, լսա՛ և ս կը խաբէր...) և դրսէն վայրենի մարդիկ ալ հաւաքելով խեղճերուն վրայ կը դիմէր. և անոնցմէ ալ

չի բաւականանալով՝ ուրիշ բեռ կը փնտռէր՝ որ նաւին մէջը լեցնէ, որով նաւն ալ վտանգի մէջ ձգելով՝ սարսափելի անգթութիւններ կը գործէր՝ իրեն անիրաւ շահուն համար . . . . որմէ բաղում ու կերպ կերպ գէշութիւններ ալ կը պատահէր . . . : Եթէ կենդանի է նէ՝ նաւերուն վրայ մարգանդի անուանող Պ. Յովսէփ Հռոմէական անձը՝ կրնայ կենդանի վրայ լինել այս գէշութիւններուն. քանզի անոր ձեռքը կը բռնէր նաւերը. և յիշեալ անձը՝ շատ ժամանակ ժողովրդոց վրայ գթալով՝ թող չէր տար, բայց ինքը իրը Հայր պիտի ըլլայ՝ բնաւ չէր գթար, այլ կը զուրցեր յիշեալ Հռոմէականին, թէ՝ "օրորոցնին ես չէ՞ երերցուցեր ու ծծցուցեր եմ, այլ ինչի՞ շահ ըլլայ պէ՞ ի՞նչ ի՞ւլայ ի՞ոչ ուլայ" . . . : Եւ կը թողուինք իրեն ընտանեացը և հարազատ եղբարցը ըրած անողորմութիւնները գրել, որ Ընտաքեալը ի՞ հա՞ապոց ո՞ւրացեալէ, և չա՛ր և սան զանկա՞ապան է, կ՚ըսէ . . . : Նաև և կը թողուինք իրեն ուրչափ և ուր աստիճան ո՞նեցած ջերմեռանդ կրօնասիրութիւնը վրայ խօսիլ . . . : Նաև կը թողուինք իրեն ըրած զեղխութիւնները ու շռայլութիւնները, և որովայնը իրը աստուած պաշտելով ուռենալ և բքանալը . . . և անխիղճ ոգւով Աիսաանից և Աարապետաց ալ՝ աստուած դնելուն կերպարանները նկարագրել . . . : Այլ և կը թողուինք հաւատաւոր կանանց՝ կրած

անտանելի և անարգ խեղճութիւնները՝ ու նստած տեղերնուն անշքութիւնը և ամայութիւնը ճառել. . . որոնք Ս. Հրեշտակապետ եղեղեցւոյ մէջ կը բնակին . . . : Նաև և կը թողուցնք մանաւոր մանր մունր անցքերը՝ մեր համառօտութիւնը չի ներելուն համար պատմել. . . : Կը թողունք նաև մեզնէ ծածկեալ նեղքին ճիզուիթական բաներն և գուցէ այս յիշեալ յայտնի գէշութիւններէն աւելի տուած վնասներն ալ Աթոռին՝ այլոց մոռաբերել՝ որոնել՝ ու գտնել. . . :

Վերջապէս, եթէ այսքանը բաւական չէղաւ նէ ընթերցողաց, անոնք ալ մի ըստ միոջէ տեղեկանալով՝ եթէ նկարագրելու որ ըլլանք, վերատին ևս չպիտի բաւէ . . . . ուրեմն Սողոմոնին բերնովը գոչելով՝ բողոք կը բառնամք ընդհանուր Աշգիս Հայոց, թէ՝ Նէնքը 'ի վերայ Երուսաղէմի, և տեսէք, դիտեցէք և այրք Հայաստանի, և հարցէք նորին զառամեալ Աղաչնորդին, թէ՝ ո՞ր հովուէ, և ո՞ր հանգուցանէ զկրաւունս Աշգին, և զժողովուրդս 'ի միջոցէն . . . (այսինքն՝ 'ի մէջ լուսաւորեալ դարուս). և իմաց տուէք նմա, թէ ըրած գէշութիւններն իւր կոպարին մէջ չի մնալով՝ բոլոր աշխարհք տարածեցան . . . ալ անհնար է այսուհետև կուսակցութիւն յարուցանել և մարդ խաբել ու որսալ . . . որով և վերատին տարաձայնութիւն սերմնա-

նել Ազգիս մէջ . . . այլ եղածները բաւական է . . . այլ անցան , գնաց . գնաց այն մարդիկներն ու ժամանակները . . . . :

Ահ , Աշխատեցուցիր զիս 'ի չարիս քո , ո՞վ Յովէտ Պատրի . . . : (Յակոբ Նալեան Լոռոտաբեան Պատրիարք . 'ի Վենետիկ գիրս է՝ , ընդդէմ Յովէպոյ . յեռ՝ :)

Եւ ահա այսքանը Միաբաններուն ու Ազգին կողմէն՝ Եղուսալէմայ Պատրիարքին ընթացքին և կառավարութեանը վրայ խօսելնալ . և դառնանք այժմ վերատին Ընթերցողներնէն՝ քանի մը խօսք ալ՝ Պոլսոյ Ազգային Վարչութեանը վրայօք զուրցել :

ԳԱՆԻ ԱՐ. ԽՕՍՐ

Ի Վ ԵՐԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅՆՈՅՍ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼՍՈՅ

Արդ՝ մինչև յայս վայր այս գեշուԹիւն-ները նկարագրելով՝ պատճառ և մանաւանդ տեղն տուած չըլլամք՝ վերատին Պօլսեցւոց բո-լորովին Ա.Թոռին ձեռք երկնցուներու. ինչպէս շատերուն դիտաւորուԹեանը մէջ կ'երեւի, որ անհնար է... վասն զի բաւական և բա-ւականէն աւելի է՝ ԹէՀ ներկայ Հրուտաղէ-մայ Պատրիարքին և ԹէՀ Պօլսոյ անցեալ Կա-ռավարուԹեանը տուած ՀՅասները Ա.Թոռին։ Թէպէտ և փոքր 'ի շատէ Պատրիարքին տուած ՀՅասները՝ ու ըրած աղէտալի կառավարու-Թիւնները նկարագրեցինք. կը մնայ մեզի քիչ մըն ալ Պօլսոյ Ազգային վարչուԹեան ընդ նմին և Պատրիարքին վասնած դրամներուն վերայ խօ-սելով խորհրդածուԹիւն մը ընել. մանաւանդ ԹէՀ հաշիւ մը փնտռել, ԹէՀ ի՞նչ արդիւնք և ԹէՀ ի՞նչ ՀՅասս հասցուցեր են Ս. Ա.Թոռին՝ 20 տարիէ 'ի վեր. որուն իրաւունքը նախ՝ Միաբանից՝ և ապա և առաւել ընդհանուր Ազգիս վերաբերելուն համար, բողոքելով հաշիւ կը պահանջեմք. նաև արդարուԹիւն ու իրաւունք փնտռելով կը հարցնեմք Պօլսոյ Ազ-

գայնոց, թէ արդեօք 20 տարիէ ի վեր Սուրբ Աթոռէն առած մեծագուսմար դրամներն ինչ ըրին, և ինչ արդիւնք ունեցաւ . . . և կամ առնելով ալ՝ երբ և որ ժամանակ օրինաւոր կերպիւ Ս. Աթոռին գործերը ընցուցին. և կամ երբեմն իրենց նախնեացը նման ջերմեռանդութեամբ կաակներ ու կալուածներ թողուցին . . . այլ և երբ և որ ժամանակ Անոր նեղութեան ու վտանգաւոր ժամանակին օգնութիւն ըրին՝ ու արիաբար թշնամւոյն դէմ դնելով՝ Անոր իրաւունքները պաշտպանեցին. կարծեմ թէ շատ քիչ . . . և կամ երբ և որ ժամանակ գործ մը ու խնդիր մը առաջարկեց նէ վանքը, յայնժամ չ'սկսան սակարկութեան ձեռք զարնելու պէս Բարայէն չ'սկսել . . . . . որուն օրինակը՝ և ահա այսօր յայտնապէս կ'երեւի վերատին, որ քանի մը Աշխարանք անձամբ և բանիւ, և կամ Պօլսոյ ժողովուրդք հանդերձ ստորագրութեամբ, Օգոստոսի 25 օրուան՝ Նորոգ Աղդային Սահմանադրութեան համեմատ՝ Ընդհանուր ժողովք գումարուած օրը՝ Անոր բարեկարգութեանը համար բողոք բառնալով՝ կրկին և կրկին առաջարկեցին նէ Աղդային Ընդհանուր և Քաղաքական ժողովոց (32), բայց ընդհակառակն Յողովականք՝ Անոր բարեկարգութեանը չ'սկսած, Այլ՞ 4 օրուան նիստին մէջ՝ սկրսան

(32) Այս բողոքագրոյն օրինակը՝ տես նախ Յաւելուած Դ.

600,000 ղուռուշ պահանջել Ս. Թոռէն. իբր թէ Ս. Զէյին պարտքը առարկայ մը բռնելով, և իբր թէ Ս. Զէյին որ և իցէ ժամանակ ըրած պարտքերուն և ճնաներուն գանձատուն (գաղա պէլա սանդուղը) մը համարելով Ս. Թոռը. որ յարաժամ անխոհեմութեամբ գործի մը սկսելով և եռքը չի բերելով՝ պարտքը մնացածին պէս, կըսկսին Ս. Հրուսաղէմէն և ուրիշ վանքերէն ստակ պահանջել... (ինչ պէս որ օրինակ կրնայ ըլլալ՝ Փարիզի մէջ մաներս բացուած դպրոցին աղետալի անցքը, ու անկից մնացած պարտքը...)։ Արդ՝ մի՞թէ կ'ուզեն, որ Ս. Հրուսաղէմայ վանքն ալ իրենց բռնած ընթացքներուն ենթակայ ըլլայ... այսինքն՝ Իւսկիւտարու Ռեմարանին, Փարիզի Հայկազնեան վարժարանին՝ և այլն դպրոցներուն պէս Հրուսաղէմայ Թոռն ալ կործանի՛ ու բնաջի՛նջ ըլլայ... Թող ցուցնեն ընկերութիւն մը և հաստատուած դըպրոց մը, որ Պոլսոյ ժողովուրդը ու կառավարութիւնը հաստատեր ու եռքը բերեր է... յայտնի է թէ՝ չէ. և չիկայ... և եղածն ալ 10 տարի քշած չէ... վասն զի մէկ մէկ կուսակցութեամբ ու տարաձայնութեամբ կործաներ է...։ Այսպա ուրեմն ո՞րքան աղգատեցութիւն և ո՞րքան անխոհեմութիւն է, որ հաղարաւոր տարուան հաստատուած ընկերութիւն մը ու վանք մը, ներքին և արտ-

տաքին թշնամիներէն վնասուած ու վտանգի
ալ տակ մնկած ըլլալով այսօր, ընդհակառակն
Անոր պաշտպանելու ու ձեռնտու և օգնա-
կան ըլլալու կարծուած Անձինք ալ՝ կ'ենթեն
իբր թէ բոլորովին կործանելու դիտմամբ՝
ժամանակ ժամանակ Անոր վնաս կը հասցու-
նեն՝ փոխանակ Անոր ունեցած իրաւունքները
պաշտպանելու ու կորսուածները ձեռք բե-
րելու. և փոխանակ Անոր խանգարեալ վիճա-
կը բարեկարգելու և յառաջադիմութեան մէջ
պահելու, և կամ փոխանակ Ազգին ապագա-
յին և երեւելի դէպքի մը համար՝ Անոր ու-
նեցած գանձը պահպանելու և արդիւնաւո-
րելու . . . : Այս ասոնց հակառակ՝ մէկը կ'ել-
նէ՝ Ոնեմարան շինելու համար Անկից Բարա կը
պահանջէ . . . մէկն ալ կ'ելնէ՝ Պատրիարքա-
բան և այլ ջրեսաց շինուելիոնց՝ իրեն ֆէֆին
տակները կը վառնէ . . . մէկ մեւսն ալ կ'ել-
նէ՝ Ազգային պարտուց անուանով դրամ կ'ու-
զէ . . . մեւս մէկն ալ՝ Պոլիս գալու տակը՝
ճանապարհին դիմա-դրելով կը յափշտակէ . . .
և մեւս մէկն ալ՝ Երուսաղէմայ կալուածնե-
րուն եկամուտները՝ իրեն կը սեփհականէ . . . :
Ուրեմն (հարցընելս ամօթ չըլլայ) Տաճկնե-
ը Յաղմա . . . ըսելով կը պօռան նէ, միթէ
ոչս է, որ Երուսաղէմի Թոռին վերայ կ'ե-
ռեւի . . . ուրեմն երեւելի դէպք մը . . .
կամ անակնուանելի ձախորդութիւն մը (Ամա-

ուած հեռի արասցէ) պատահելու որ ըլլայ նէ Աղգիս՝ ոչ սկիզբ դրամ և օգնութիւն պէտի գտնէ՞ . . . ուրեմն եղիւկ մեր անխոհեմ ընթացից և կառավարութեան . . . :

Այսպէս կը հարցնեմք վերսոին, թէ մենք ալ՝ այս աղէտքները նկարագրեցինք նէ՝ արդեօք ասնք իրենց իբր առարկայ մը բռնելով ձեռքերնին՝ վերսոին ևս Բարեյի՞ն մի պիտի ըսկըսեն, չէնէ՞ Բարեկարգո՞ւթենէն մի՞ . . . Այդ՝ մինչև ցայս վայր այս աղէտքները գրելնուս և հրատարակելնուս պատճառը, ոչ թէ առաջարկել ու բողոքել է, թէ Նոր կալուածոցը և կամ ունեցած դրամոցը ձեռնամուխ ըլլայ ու Նոր իրաւանցը միջամտութիւն ընէ՝ Պօլսոյ Աղգային Պարչութիւնը, ոչ . . . այլ մեր նպատակը այն է, որ իրենց կացուցած Պատրիարքին վարմունքը, նաև Նոր՝ ընդ նմին (լաւ ևս) իրենց՝ Ս. Թուին տուած վնասներնին ցոյց տալով՝ գուցէ ըրածնուն վերայ կը զղջան, և անոր բարեկարգութեանը ջանադիր կ'ըլլան վերսոին, (ինչպէս որ երբեմն իրենց բարեյիշատակ նախնիքները, և Թուին ընտիր Միաբանները ըրած են:) Այլև մեր նպատակը այն է, որ Նոր յափշտակուած ու անիրաւ թողուած իրաւունքները, արտօնութիւնները, ու սեպհական ստացուածքները, և ուրիշ պէտք ըլլալու բաները ձեռք բերեն՝ ու հոգ տանին Նոր ցաւին ցաւակից ըլլալով

. . . որով յայնժամ ՝ոչ թէ միայն Պօլսեցիք (ըստ բերման ժամանակին) կ՚օգտին, այլ և բովանդակ Ազգն մեր . . . : Ուրեմն ըստ մեր կարծեաց՝ պէտք է որ՝ նախ և յառաջ տարաձայնութիւնը բառնալու և օրինաւոր կերպիւ յառաջ տանելու համար գործը, Պատրիարքին երեսէն ցրուած բոլոր Միաբանութիւնը հաւաքել, և Ազգիս Պարչութեանը կողմէն ալ երկու հաւատարիմ՝ ու պատկառելի անձինք ընտրելով՝ Հրուսաղէմ ուղարկել, որոնցմով (հանդերձ հոն գտնուող Միաբանութեամբ,) Յովհաննէս Պատրիարքէն հաշիւ բնտռել. և այս ալ՝ երեսն՝ի վեր, և ականջն՝ի վայր պօռալով, թէ՝ Տնդէս. պո՞ր պՀամար պըՀ-պէսո-ՐԻԷան ՀՈՄ . . . ընդ նմին բարեկարգութեան կանոն սահմանել. և անանկ կանոն մը, որ վաթսունէն աւելի ուսեալ ու լեզուագէտ միաբան Պարդապետ. տասնիւ չափ Եպիսկոպոս. քսանիւ չափ Սարկաւագ, և վաթսնիւ չափ Դպիրներ ունենայ միշտ Աթոռը . . . . որպէս զի՝ թէ՛ իւր վիճակին բարեկարգութեանը ու պաշտամանցը մէջ պակասութիւն մը չ՚ըլլայ. և թէ՛ Աթոռէն դուրս Ազգիս ուրիշ կարօտեալ վիճակացը օգնելու ալ կարող ըլլան . . . : Նաև ըստ սովորութեան Աթոռոյն. պատուաւոր անձին մէկը Տեղակալ, այլ և օրինաւոր և աչալուրջ Աւագ Թարգման, և հետաքրքիր ու քանի մը լեզու գիտցող

Դիւանապետ, ընդ նմին և հաւատարիմ անձանցմէ մէկը իրենց մէջէն ի ուսարարապետ, նաև խոհական անձինքներէն՝ խորհրդական Ընդամենամ Պարչութեան Յողովք կարգել.։ Այլև Բարադայ, Կիլիկիոյ, և Պօլսոյ Թոռներէն ալ՝ մէկ մէկ պատուաւոր և ուխտադիր Եկեղեցականներէն (առանց ներքին իրաւանց և արտօնութեանը միջամուխ ըլլալու) Երեսփոխան կացուցանել, իբր դէտ Թոռոյն և իբր հսկող Ազգիս իրաւանցը վերայ։ Եւ ապա Ընկից թէ բարոյապէս և թէ նիւթապէս արդիւնք ընտրել...։ Նաև թողուլ, որ իրեն իրաւաբանութեամբը աշխատի ու դարման տանի, թէ իրեն վիճակին՝ և թէ Ասիայի մէջ մնացեալ խեղճ և անտէրունչ վիճակաց, այլ ոչ միայն Պօլսէցոց... վասն զի անոր ըրած ձեռնտուութիւնը բաւական է... նա մանաւանդ ինքը (Պօլսեցին) դուրսերուն չափ կարօտութիւն չունի... այլ և յայտնի է, թէ Պօլսեցին երբէք չկրնար բովանդակ Ազգը ներկայացուցնելով՝ Ընոր ունեցած իրաւունքը և արտօնութիւնը ինքը միայն վայելել. և կամ մի միայն իրեն սեփհականել, քանի որ Թոռը՝ ընդհանուր Ազգինն է.... և եթէ Ազգինն է, ուրեմն ամեն մէկ անհատ Հայեր՝ իրաւանց պէր են...։ Եւ ասկից ի զատ, երիէ բաժանորդական ընկերութիւն է նէ Երուսաղէմի Ս. Թոռը, կ'ըսեմք թէ այս մասին ալ՝ ի՞ր բաժի-

նը ե-ելոյ ասածէ Պօլիս . . . ուստի եթէ ժամանակ ունին նէ Աթոռը, թող այսուհետեւ դուրսեբուն ալ օգնելու և անոնց ալ բաժինը պաղը- աղնապի՛ . . . որոնք անօգնական. անպաշտպան, և անխնամ թափառելով՝ որով կոյր և տգէտ ալ մնալով, իբր ցրուեալ և անտերունչ հօտի նման, որոնց մէկ մասը վարդիկանները ցրուեցի՛ն . . . և շատերն ալ՝ գիւղերը, ը-նդերը գողերը և ա-ապանները յափշտակեցին, ո- ՝ե՛- կը յափշտակեն կոր . . . : Այս ուրեմն անանկ բարեկարգութիւն մը ըլլայ, և անանկ սահման ու հարկ մը դրուի, որ յիշեալ վնասակաց օգնեն Սիսբանք Ս. Էրուսաղէմի : Բանդի անոնք ալ Աղգ են, անոնք ալ Հայկայ սերունդ են, անոնք ալ Հայաստանեայց օրինաւոր Եկեղեցւոյն հաւատարիմ ծառայներն են, և հետեւաբար անոնք ալ իրաւանց տէր են . . . վասն զի ինչպէս ըսինք, Ս. Էրուսաղէմայ Աթոռը՝ (Ռուսաւորչական անուանող) Ընդհանուր Հայոց Աղգինն է, և ոչ Պօլսոյ Հայերուն միայն . . . : Այս որովհետեւ Պօլսոյ Աղգայինք թագաւորական քաղաքի մէջ ըլլալուն՝ և մանաւանդ Ս. Էրուսաղէմայ Սիսբանուն ու Աթոռոյն վերայ 200 տարիէ՛ի վեր երբեմն երբեմն աղգատեաց անձինք՝ կապալաւ և ապօրինաւոր կերպիւ շահասիրութեամբ բռնակալելուն համար, վասն որոյ Պօլսոյ Աղգայինք ժամանակ ժամանակ բը-

նականաբար տեղի ունեցեր են Ազգասիրաբար վանքին գործոցը օգնել, ու Ինոր բարեկարգութեանցը ջանադիր ըլլալ. կը խնդրեմք Պօլսոյ Ազգային Պարչութենէն, որ վերստին նոյն օրինակ Ինոր բարեկարգութեանը ջանադիր ըլլայ, և Ինոր ներքին վիճակը հասկանալով (ինչպէս ըսինք, եթէ կարողութիւն ունի նէ) Միաբանութեանը առաջարկէ, որ իրենց ձեռքը դպրոցներ բանան, թէ Նրուսաղէմայ վիճակին մէջ, և թէ դուրսերը գիշերօթիկ։ Այլ ուշ թէ Ազգային Պարչութիւնը Ինոր ունեցածին ձեռք երկնցնելով՝ ծնացածն ալ Բոլորովին Դրկացնելով ընդունայն պեղը վապնէ, ժամանակաւ անցած գացած Ալրոռակալ անուանող բռնաւորներուն պէս . . . . . Տես Հանոյ պատմագիր. և Չամչեան Պատմութիւն Հայոց. հատոր. Գ։

Արդ՝ Դրկացնել և վապնել ըսինք. քանզի քան տարի է, համարեա թէ՝ 20 հազար քրսակի չափ ստակ առաւ Պօլիս Նրուսաղէմայ վանքէն, թէ Իւսկիւտարու Ռեմարանի շինութեան, թէ Հիւանդանոցի, թէ Սնոտուկի, թէ Ազգային պարտուց, թէ Ռեմարանի ամնական, և այլն անուամբ (33). բայց Ազգը

(33) Այս հաշիւն ալ Պատրիարքին լսածնուս նայելով դրինք. թէպէտ և մեղի չափազանց կ'երեւի, և իրեն խօսքին ալ՝ յայտնի է որ աւելի հաւատարմութիւն չունիր . . . ։ Այս. ինքն՝ իրեն պատմածը և ուրիշներէն լսածնիս (և այն ալ հա-

արդիւնք մը չունեցաւ, և կարաւ ոչ ինչ... և ընդհակառակն՝ բաց 'ի արդիւնք չունենալէն՝ այլ և վանքին գեղեցիկ և ընդարձակ տեղն ալ Յուսքիւտար՝ յափշտակուեցաւ... և 'ի նախատինս Աղգին՝ իբր գոմատուն և ամայի վայր մի ալ եղաւ... որուն համար վատնուած դրամներուն՝ քառորդ մասէն մէկը՝ եթէ հոն ուրիշ շինութեանց մնալէր, յայնժամ գոնէ տարուէ տարի բաւական եկամուտ մին ալ կը բերեր Աղգիս։ Դաւ. քանի որ Յովհաննէս եպիսկոպոսն ալ՝ Երուսաղէմայ Պատրիարք եղաւ նէ՝ վերը անտեսականի վերաբերեալ ապացուցուած անտեղի և աւելորդ 10 հազար քսակ վատնած դրամ ներէն զատ, և ընդունայն տեղը՝ 10 տարուան մէջ՝ 10 հազար քսակ ալ վերսին նոր վատ-

---

ւանական է որ Պատրիարքէն խմացած ըլլան)։ 16·000 քսակ Ճեմարանի շինութեան և անոր անուամբը տրուած ամսականները՝ 20 տարի է։ 1·000 քսակ Ճանիկ ամիրայն Երուսաղէմ դացած ժամանակը Պոլսս բերած է։ 1·000 քսակ ալ՝ Պատրիարք եղած ժամանակը խրկած է։ և երկու հազար քսակի չափ ալ՝ ժամանակ ժամանակ այլ և այլ բաներու համար տուած է Ամբողջ՝ 20 տարիէ 'ի վեր։ (ինչպէս նշանակեցինք։ Բայց ուրիշներն (այսինքն՝ Պոլսեցւոց կողմէն) ըսածնիս, 6·000 քսակի չափ թէ Ճեմարանի շինութեան։ և թէ անոր անուամբը առնուած ամսականներն։ 1·000 քսակ Ճանիկ ամիրայն բերած է Երուսաղէմէն։ 1·000 քսակ ալ Յովհաննէս եպիսկոպոսը յուղարկած է Պատրիարք եղած ժամանակը։ և 1·000 քսակի չափ ալ՝ Աղգին այլ և այլ պիտոյից համար առնուած է Երուսաղէմէն կ'ըսեն։ Եւ ահա երկուքն ալ դրինք։ որը կ'ախորժէ, և որուն հաւատք կ'ընծայէ մէկը նէ՝ զանի ընդունի։

նեց. թէ Պատրիարք ըլլալուն, թէ Պատրիարքարանի շինութեան, թէ ուսումնարանի կառուցմանը համար եւայլն... (34) նոյնպէս և Ազգիս արդիւնք մը չունեցաւ, թէ բարոյապէս և թէ նիւթապէս... այլ երկու կողմէն ալ վնաս եղաւ. այսինքն՝ թէ Ազգը բան մը չշահեցաւ, և թէ Ազգին գանձերը ընդունայն տեղը վատնուեցան... : Կը թողունք նաև Պատրիարքին՝ թէ փոխանորդութեանը, և թէ Պատրիարքութեանը առանձին տուած վնասները ու վատնած դրամները՝ 30 տարիէ 'ի վեր կուսակցութիւն շահելու համար... որոնց շատերը մեղնէ ծածկեալ են... անոնք ալ՝ իր առջևը դրած Գորիի գրոշը, և Թոռին ելեւմտից դեռ հաշուեգիրը (քիւթիւկը) և (եթէ կայ ու գրած է նէ) Պօլսոյ փոխանորդութեանը իր հաշուեպահարը, և իմ Բեռնիս ճապի մահտեսի Սկրտիչին՝ մահուան ժամանակը Երուսաղէմայ տունին մէջ իւր սենեակէն յափշտակուած հաշուեցոյցը՝ կրնան յայտնել... : Իւ եթէ առակաւն հաշուելով՝ համարենք թէ՝ 20 հազար քսակի չափ ալ՝ 30 տարուան մէջ իւր կամքը և իւր նպատակը յառաջ տանելու և

(34) Այսինքն՝ 6·000 քսակ Պատրիարքարանի շինութեանը. 2·000 քսակէն աւելի Ուսումնարանի կառուցմանը. 500 քսակ Փիլիպպոսի աղբիւրին. 560 քսակ Պատրիարք ըլլալուն. և հազար քսակէն աւելի ալ՝ վերոյիշեալ տունեալուն՝ իր կամքը պաշտպանելուն աւելորդ դրամ վատնեց...

կամ կուսակից գտնելու համար վասնեցնէ* . . . միանգամայն (2) թիւ ծանօթութեանս մէջ ակնարկած յաւիշտակութիւնն ալ մէկ տեղ առնելով, յայնժամ Լ՚թուին տուած վնասը՝ միայն ստակի կողմէն՝ 60,000 քսակի կը հասնի . . . (35) : Թէպէտ և միւս տուած վնասները ու ըրած կորուստները՝ որոնք որ նշանակեցինք, Թէպէտ նաեւ թէ երկրակալաց շահասիրութեանը զոհ գացած . . . և թէ Յունաց և Լատինացւոց բռնութիւններէն սոսկալով յարաժամ վատնուած մեծագումար գանձերը . . . որոնք ըստ մեծի մասին Լ՚զգիա անհոգութենէն, կամ լսա և Պօլսոյ Լ՚զգային տաբաձայն Լ՚արչութենէն՝ անխնամ թողուելով՝ Ս. Լ՚թուին իրաւունքները, ժառանգութիւնները, և տուացուածքները՝ ոչ թէ միայն կորսուած է՛ն, այլ և մնացածներն ալ՝ բաց 'ի տառապակրութենէն, իրենց ծանրութեամբը ոսկիով ձեռք բերուած ու պահուած է՛ն . . . և ամէն մէկ տուացուածոց և իրաւանցը համար, գրեա՛ թէ՝ երեքէն մինչև տասը հատ՝ և ըսելէ մինչև տասը անգամ, արտօնագիր

---

(35) Զլսա՛ն թէ՝ ճէմարդի և այլն անուամբ առնուած ըստ սկիները՝ բոլորն ալ իր Պատրիարքութեանը չէր, այլ անկից համարեա՛ թէ 10 տարի յառաջ սկսած էր : Կ՚ըսեմք թէ՝ իրեն փոխանորդութեանը գոյութիւն ունեցաւ. և իրեն թշնամութեամբն ու խորհրդովը հաստատուեցաւ, Պօլսոյ երեւելեաց հաճոյ երեւնալու համար . . . :

կամ հրամարտակներ ձեռք բերուած են. թէ Աբարայի դատաւորներէն, և թէ Տաճկաց թագաւորներէն . . . որոնց համար ալ, (առ ջիններեր մէկդի թողով . . .) համարեա թէ՝ 50 տարուան մէջ, 50 հազար քսակէն աւելի վատնուած է . . . : Այլ, այս ծածկեալները, ու իրաւունքները ձեռք բերելու համար վատնուածները, ու մեզի ծանօթ չեղածները մէկդի թողով, և միանգամայն վերը ապացուցուած՝ 60,000 գումարէն 10,000 քսակն ալ երբ աւելորդ գուրս ձգելով. այլ մնացած վերոյիշեալ յայտնի երեւցած ու կորսուած 50,000 քսակ ահագին գանձին, (այսինքն՝ 5,000,000 միլիոն ֆրանքին) համար կ'ըսեմք. թէ՝ արդեօք պէտքը չէր մի՞ ժամանակին յաջողութիւնը ու բարութիւնը ձեռքն ըլլալով՝ մէկ մասը՝ գանձքայի մը արուեր. մէկ մասն ալ երկիրներ գնուելով՝ մշակուեր՝ կամ արհեստարաններ կանգնուեր, և կամ գիւղոյք հաստատուեր. և մէկ մասովն ալ՝ թէ անշարժ կալուածներ առնուեր, թէ՝ Հայաստանու արդաւանդահող ու պտղաբեր երկիրներուն մէջ գաղթականու թիւն հաստատուեր, և թէ ուսանող ազգասիրի և յառաջադէմ երիտասարդ ոչ ձեռնտուութիւն և օգնութիւն ընելով՝ որոնցմէ, ոմանք դրսերը դատատու կարգուեր, և ոմանք արժանաւորներն ալ՝ Պատհանայ ու Վանական ըլլուեր, նաև ոմանք ալ

Աթոռին բաժանորդ կացուցանելով՝ վանական թեան ձեռք զարնուեր։։։

գէշութիւնները ու վնասները ըլլայ Ս. Աթոռին և Աղգիս . . . և գոնէ իւր փոխանորդութեան՝ ը՝ճանչնային զինքը . . . . ուրեմն պատճառ եղողաց հոգին Տէր լուսաւորեսցէ . . . և մեսցեալներն ալ՝ ահա այս գէշութիւններն տեսնելով՝ կամ բարեկարգելու ու դարման տանելու ջանան, և կամ բոլորովին ձեռքերնին քաշեն Ս. Աթոռէն, որ կամ Աղգասէր և Ազգաքինի Տէր մը և երեւելի Իշխան մը յարուցանելով Աստուած՝ օգնելու ու բարեկարգելու ջանայ, և կամ 'ի նախնեաց անտի ինչպէս որ ազատաբար կը կառավարէր նէ՞ Միաբանութիւնը Ս. Աթոռը, նոյնպէս և այսուհետև թող կառավարէ, մինչև որ վերին Աչքերութիւնը հասնի, ոչ միայն Երուսաղէմի, այլ և բոլոր վանօրէից Աղգիս . . . : Աչքէն անցեալին վերայ շատ ափսոսելն ալ՝ մեծ յիմարութիւն է, այլ խելացութիւնը այն է, որ անցեալէն օրինակ առնելով ապագան մտածելու, և ըստ այնմ բարեկարգելու է. ուստի անցածը անցած, և գացածը գացած համարելով՝ նորէն սկսելու եմք, Աբիւթեամբ, Աղգասիրութեամբ, և միանգամ

հակառակն՝ անոնց յուղարկած բոզբոյ գրոյն օրինակը տեսանք՝ հանգուցեալ Դաւիթ եպիսկոպոսին քովը Ս. Երուսաղէմ՝ որն որ Պոլսոյ ժողովոն գրեցին 1840 ին : Որուն օրինակը գրինք՝ տես 'ի վերոյ Մատենիս : Եւ Միաբանից 1850 ին ընդունելութիւնն ալ ինչպէս ըլլալը նշանակեցինք՝ էջ 49 :

մայն անշահասիրութեամբ, նաև առանց ոչ և իցէ նոյսակցութեամբ, բարեկարգութեան մէջ մրցունել Ս. անքը և արդիւնաւորել. և եթէ արդելք եղող մը կայ նէ Ս. նոր զարգացմանը, իսկոյն պատճառը վերցնելու և իբր նոր Ս. ասակ համարելու եմք . . . : Ս. ինչպէս ալ ըսինք, թէ Ս. նոր ցաւին դարման տանելէն ու բարեկարգելէն եռքը՝ յայնժամ կրնանք պրտուղ պահանջել և բարիք քաղել Ս. նկից ու վայելել . . . ապա թէ ոչ՝ անցան, գնաց այն բաղդաւոր միջոցները, և արդիւնաւոր ժամանակները . . . այժմ ելեր ի՞նչ կը փնտռէք, և ի՞նչ կ'ուզէք . . . : Ս. ոս, գիտես թէ՝ Ս. տուծոյ անքննելի և անիմանալի խորհուրդը ու գաղտնիքը կայ Ս. զգիս վերայ, որ իբր ուսնակութիւն և իբր ճակատագիր մը եղած է Ս. զգիս. որ երբ ժամանակ որ պատեհութիւն ու միջոց ունի՝ մէկ բարիք մը ստանալու. և երբ ժամանակ որ յաջողութիւնը ու բարիքը ձեռքն է, և կամ կ'ըլլայ թէ՝ ձեռք չ'բերելիք ու ամենուն փափաքած ու սկրնկալած բարիքը իւր ոտքին կը պլլուի, յայնժամ կամ կ'անարգէ, կամ հոգ չըներ, կամ տարաձայնութիւն յարուցանելով ձեռքէն կը փախցընէ, և կամ այնպիսի ապօրինաւոր և անբարի մարդկանց ձեռքը անցած կ'ըլլայ իշխանութիւնը և յաջողութիւնը, որ տգիտութեամբ չընդունիր, և յարգը չի ճանաչեր, և կամ

վոյթ չունենար, ու հեռատես չըլլալով՝ ապագան չի մտածեր, և կամ թէ՝ այնչափ կ'ըն-
նէ, որ ապագային բան չի մնար, զի անափա-
ռութեամբ նոյն բարիքները՝ կամ կ'անարգէ,
կամ կը վատնէ, և կամ կ'ուզէ՝ որ՝ իրեն ժա-
մանակը ըլլայ՝ ու ինքը միայն վայելէ. և որ ա-
մենագէշն է, միապետական կամք բանեցնե-
լով՝ միանգամայն և անձնասէր ու շահասէր ալ
լինելով, կ'ուզէ՝ որ՝ իր խօսքը ըլլայ. ո՞ւր կամ-
քը և նպատակը բանեցնէ . . . և առաւել ողբալին
է, որ թշնամիք ալ շուրջը պատած են, և ին-
քը չի տեսնելով՝ վերատին այս ազգակործան
գէշութիւններուն մէջ կը թաւալի . . . ընդ-
հակառակն՝ օտարքը, կամ թշնամիք Ազգիս՝
չանք ընելով կը յափշտակեն ու կը վայելեն
զանոնք, ու ինքը կը մնայ բացը . . . . : Ու-
ետքը կ'ելնէ, կ'ողբայ, կ'ուլայ, կը պօռայ,
կը ցաւի, կ'աղաղակէ՝, կ'ախսսայ, կը հե-
ծէ՝, կը գոչէ՝, կը պաղատի, կ'աշխարէ՝, կ'ար-
տասուէ՝, լացեր ու ողբեր կը շարէ՝, ու
կ'աշխատի ձեռք ձգելու՝ նոյն կորսուած բաղ-
ձալի բարիքը ու վայելչութիւնները, բայց
ի՞նչ օգուտ դիջոը և ժամանակը անցած ըլլալով՝
ընդունայն կ'ըլլայ լացը ու աշխատութիւնը.
ու դատարկ կ'ելնէ, և ձայնը լսող չըլլար . .
Ու աւելի գէշ և անարգն է, որ իրեն վե-
բայ ցաւող, և գթացող, ու դարման տանող
բարեբար մին ալ չունենար . . . ու կրսկսի

դայթակղիչ, տարակուսիչ, յուսահատիչ, վը-
հատիչ, ու վարանիչ . . . և յայնժամ իբր
մուրացիկ կ'սկսի դուռունէ դուռ պտըտիլ և
ստարաց ձեռքը նայելով անոնց գերի ու ծա-
ռայ ըլլալ, և կամ տգիտութեամբ անոնցմէ
օգնութիւն խնդրել . . . և որ վատթարագոյնն
է, երբեմն չարութեամբ իրեն Աստուն և ըն-
տանեացը վնաս հասցնել, օպարաց հաճոյ երե-
նալը՝ և կամ իրեն անիրաւ շահուն համար . . . . . :
Վա՜հ, յաւալի վիճակ . . . : Լու ահա հա-
մարեա թէ՝ 'ի սկզբանէ անտի այս օրինակ է՝
մեր ընթացքը և կառավարութիւնը. և այս
օրինակ ալ եղև ահա՝ այս Յովհաննէս Պատ-
րիարքին օրոմը Ս. Աթոռը . . . որ Աստուա
դիբաղդութենէն թռեան, սլացան, անցան
ժամանակը . . . այլ առնողը առաւ, ծախողը
ծախեց ու մենք դեռ ողբալի տարաձայնու-
թեան մէջ կը տապալտրկիմք . . . այսուհետև
փնտռէ՛ որ գտնես, ո՞վ խղճալի և ասաւապեալ
Աստ Հայոց . . . : (37)

Ի վերջ բանիցս, կ'ուզե՛ն Պօլսեցիք, որ
Ս. Աթոռը իրեն իրաւանցը տէր ըլլայ ու մի-
անդամայն բարեկարգութեան մէջ մնայ, և
իրենք ալ Ընկից արդիւնք քաղե՞ն . . . : Կը-

(37) Առանց բացատրութիւնք, տես Յարդարակ և Նէարագիր Էրուց. և Տէսորան Հայիանն Եկեղեցոյ. Նաև Ճանապարհորդութիւն Դ Ս. Երուսաղէմ քաւած աշխատութեանցս մէջ. եթէ Բարեբարի մը օգնակութեամբը 'ի լոյս ընծայի :

սեմք, թէ՝ վերը ակնարկած խնդիրներնուս գործադիր ըլլալէն 'ի զատ, այլ և Ս. Աթոռին մինչև ցայսօր յափշտակուած իրաւունքները՝ եկամուտները՝ ու սեպհական ստացուածքները՝ Միաբանից հետ Աղգասիրաբար աշխատելով ձեռք բերեն. որոնք մինչև ցայսօր 'ի վնաս և 'ի նախատինս Աղգիս և Սրբոց Աթոռոյն Երուսաղէմի, երեսի վերայ կեցած են . . . : Օրինակ.

Նախ՝ Ս. Օննդեան Տաճարին բաժանորդութիւնը, և Նոր դրան բանալին. այն որ յառաջ բոլորովին մերն էր . . . բայց 20 տարիէ 'ի վեր՝ բանալին անգամ թող չէ՛ն տար Յոյնք՝ բանալու ու գոցելու, և ալ համարձակ եկեղեցական պաշտօնեիս կատարելու . . . և մինչև անգամ Տաճարին Բաց դրան վրայի գտնուած՝ մեր նախնեաց արձանագրութենէն ալ չէն պատկառիր, որն որ ասկից վեց դար ու կէս յառաջ՝ նորոգութեան ժամանակը յիշատակ գրուած է : Ինդ հակառակն այսօր՝ գերի ըրած են մեզի, կ'ուզեն կը բանան դուռը՝ կ'ուզեն կը գոցեն, կ'ուզեն կը վռնտեն՝ կ'ուզեն կը ծեծեն. և այլն : Ինչպէս որ 1857 ին Ս. Օննդեան օրուան Ս. Պատարագի ժամանակ եղած պժգալի անցքը ամենուն յայտնի է, որ թ'նչ անօրէնութիւններ ըրին . . . . : Նաև հոն Լատին կղերաց ըրած գեշութիւններն ալ՝ չէ՛մք կրնար զանց առնել. որ մեր

կողմէն (դասին մէջէն) դուռ բացած են՝ քա-
նի մը տարիէ՝ ի վեր, և միշտ ամբարտաւա-
նութեամբ մեր ժամերգութեան ժամանակը
անգամ հանդարտ թող չ՚տալով՝ ի նախա-
ռինս քրիստոնէութեան՝ վրաներնուս կ՚անց-
նին ու կը դառնան հակառակութիւն յարու-
ցանելով . . . իբր թէ բոլորովին յափշտակե-
լու գիտմամբ՝ մեր ձեռքը մնացած բաժինը . .
և գոնէ Տաճարին ներքեւը Ս. Օհնդեան
Այրին դէմը առանձին դուռ ալ չունենան
երթեւեկելու համար . . . : (38)

Երկրորդ . Ս. Յարութեան Տաճարին շի-
նութեանը համար ըսինք վերը . որուն համար
վերատին կ՚ըսեմք, թէ անի մեր ձեռքը չին-
ուելուն հնարը նայվի, քանի որ արտօնու-
թեան հրամարակները մեր ձեռքն է . քանզի

---

(38) Եւ ասոնք ալեալ և լուսաւոր անուանեան գարուս մէջ
եղածներն են . և այնպէս անանկ մարդոց ձեռքը . որ ոչ միայն
քրիստոնէութիւնը մարդու մը չեն տար . այլ և Աղգային իրաւանց
և ազատութիւնը իբր թէ պաշտպան քարոզած են՝ ու դեռ կը
քարոզեն ինքզինքնին . . . : Ընդհակառակն խաբար և բաբեա-
բոս կարծուած դարերուն մէջ՝ համարեա թէ այսքան անկար-
գութիւն ու տառապանք և վնաս կրած չէր Աղգ մեր՝ յերե-
սաց անհաւատից . քան թէ այսօր լուսաւորութեան և ազատու-
թեան ու քաղաքակրթութեան և քրիստոնէութեան . նաև իրաւանց և
արդարութեան պաշտպան կարծուած ու քարոզուած անձանցմէն
կը կրէ . միանգամայն իրեն իրաւունքներն և ազատութիւնները ալ
բանի իբր ձեռքէն կորսնցուցեալով . . . : Ուրեմն աւագ քրիս-
տոնէութեանս . և վայ կեղծ ու պատիր լուսաւորութեան և ազա-
տութեանս . . . :

տակից 50 տարի յառաջ՝ յոյներուն ձեռքը նաւ-
ղոգուած ժամանակը, շատ խարդախութիւն-
ներ ըրին, մեր նախնեաց յիշատակարաններէն
ու բաժանորդութիւններէն բան մը չի ձգե-
լով . . . (39) : Ա՛յլ Ա՛նոր մէջն Ս. Գողգոթա-
յին յափշտակութեանը համար ալ կ՚ըսեմք,
որ չորս հարիւր տարիէ՝ ի վեր՝ սկիզբը անօ-
րէն Վրացիք յափշտակեցին մեր ձեռքէն, և ա-
նոնցմէ ալ այժմ Յունաց ձեռքն է : Ա՛րդ՝
գտնէ այս Սրբազան տեղը՝ Թրխատոսի Տեառն
մերոյ Ս. Գերեզմանին նման բաժանորդու-

(39) Ինչպէս և այս խարդախութիւնները և անօրէնութիւնները՝ 20 տարի յառաջ Սուրբ Ծննդեան փառաւոր Տաճարին նորոգութեան (Ծէփերը նորոգած) ժամանակին ալ բանեցուցին. այսինքն՝ որմերուն վրայի եղեալ մեր Նախնեաց յիշատակները ու փորագրուած արձանագրութիւնները բոլորն ալ կամ՝ նեռով կտրատեցին՝ քակեցին՝ ու անտեսի ըրին. և մինչև անգամ յանդգնելով՝ Տաճարին աւագ դուռն ալ բոլորովին պիտի վերցնէին. բայց Ազգասէր Հայրապետ Պատրիարքը՝ այս բարբարոսութեան շատ դէմ կենալով՝ թող չտուաւ. այլ միայն ամբաշտութեամբ մը գաղտագողի՝ դրան վրայի եղեալ մեր Թագաւորական փորագրուած Յիշատակարանը կտրատելով ծէփեցին. որ անտեսի ըլլայ մեր Նախնեաց հնութիւնը և սեպհական ժառանգութիւնը Ազգիս. որ է՝ որ երբեք իրենք ալ բոլորովին բառնութեամբ տիրապետեն Տաճարին ու մեզի արտաքսեն Անոր մէջէն : Բայց Աստուծով՝ մենք 1858 յուլիս ամսոյն նոյնպէս և գաղտագողի երթք գիշեր աշխատելով՝ բաղում և սաժանելի աշխատութեամբ ծէփերը հանեցինք. և խանգարեալ յիշատակարանը երեւան հանեցինք. որուն տակ գրութիւնն ալ՝ Յիշեալ Հանապարհորդութիւնս մէջ կնայ տեսնուիլ. երբոր Բարերարի մը ձեռնտուութեամբը՝ ի լոյս ընծայի :

թիւն մը ձեռք բերուի, որ Աղգերնիս ալ մը խնթարուի պաշտամամբ, նա մանաւանդ մեր նախնեաց ժառանգութենէն գտնէ բաժին մը ստացած ըլլայ, որով Ս. Աթոռն ալ փառաւորուի . . . :

Երրորդ. Հոն Աշխարհամատեան Տաճարին մէջ՝ ունեցած ջերմնիս, որ անցեալ տարի ամբարշտութեամբ յափշտակեցին Յոյնք. որուն իրաւունքը՝ հոն գտնուող Աղգայինք մեր պաշտպանած ժամանակներին՝ ոչ թէ միայն բարեպաշտ ուխտաւոր ժողովուրդնիս, այլ և ազգասէր Միաբան վարդապետներնուս մէկն ալ անխնայ ծեծեցին՝ բարբարոս Յոյնք. ուրոնց պատիւը պահանջող մը չըլլալէն՝ զատ՝ այլ և յիշեալ ջերմոն ալ վրայ տուին՝ այս ը-սա-ղեալ և աղաչ դարձ-ս մէջ . . . : Այսոր ալ բացատրութիւնը Տէս վերոյիշեալ (38) ծանոթութեանս մէջ:

Չորրորդ. Քրիստոսի Ս. Համբարձման Մոնակոս տեղը, և հոն տեղն ունեցած հրաշակաւոր վանքերնիս, որ ասկից 24 տարի յառաջ՝ երեք հազար քսակի չափ դրամ վատնեց Աթոռը, և հոյակապ շինութեամբ պայծառացուց, առանց խորութիւն մը ընելու միւս քրիստոնէ ազգաց երեթեւեկութեանը և ուխտին ու պաշտամանցը. բայց ՝երբ ժամանակ շինութիւնը լմնցաւ նէ՝ քանի մը տարիէն եաքը՝ Դրիսպոնէ անուանող օրիօպոս Յոյն՝ և ո-ղ

ղ՝ փառ՝ Լատին կղերները, ահ. չէ՞ որ սատա-
նային թելադրութենէն ստիպեալ, և իբր հե-
թանոսական ամբարշտութեան նախանձով մը՝
այն սարսափելի Տնօրինական Տեղը, Ի փառ՝
Հռովմի և Ի-ղանդիոյ Լրոոոյ . . . . հեթանո-
սաց ոտից կոխան ըլլին՝ և հռչակաւոր ու հա-
յակապ շէնքը բոլորովին փլցուցեալ, և վան-
քերնուս տեղը հիմնայատակ ու անյայտ ընել
տուին . . . . մինչև անգամ մէջի գտնուած
եկեղեցական Սրբազան անօթները՝ զարդերը,
և զգեստները՝ պըղծկ պըղծկ և ոտից կոխան
ընելով, և միանգամայն Ընոր շինութեան քա-
րերն ալ՝ կոտրտեցին, կողոպտեցին, թալեցին
ու յափշտակեցին. որուն իրաւունքը պաշտ-
պանող Ազգասէր և Առաքինասէր ու Իարե-
պաշտ Հայ մը և Քրիստոնէ մը չերևցաւ մինչև
յարդ . . . բայց ի Հայրենասէր լուսաւոր-
եալ հոգի Օ՝աբարիա Սրբազանին բողոքէն.
բայց դժբաղդաբար Ընդանելոյն մահը՝ (սրբ-
ոյն կսկիծէն) վրայ գալովը, մնաց այն Սրբա-
զան վայրը ամայի, միանգամայն Ազգիս ար-
դարացի իրաւունքը ու պատիւը վրայ տալով
. . . : Կեցցէ՝ Բրիւսոնէոր-ին-ն, կեցցէ՝ աղապո-ին-ն
և կեցցէ՝ ը-սաս-ուրեալ դարս՝ այս . . . :

Հինգերորդ. Յովակիմ Ընենային տունը՝
որն որ Տաճիկներէն քանի մը դար յառաջ Սա-
ղահապպինի ձեռքը յափշտակուած՝ ու շատ ժա-
մանակէ ի վեր ամայի մնացած էր. բայց ինչ

պէս ըսինք, Մալաքոֆի պատերազմին մէջ խնողջ Դաղղիացի զինուորաց համար, իբր թէ հնարհ մը ըրաւ Օսմանեան Տէրութիւնը, 1856 թուին . . . (40) չը գիտնալով ի սկզբան անոր անցքը, և անոր տէրը ով ըլլալը . . . : Ուստի անոր համար աղերսագիր մը տրուի, թէ իրաւասէր Օսմանեան Տէրութեան, և թէ Դաղղիոյ արդարասէր Կայսեր. խնայուն նելով թէ՝ մեր սեփհական ժառանգութիւնն ու մեր նախնեաց շինութիւնն է . . . : Իւ եթէ Տէրութիւնը տեղ մը պիտի հնարհ ընէ Լատին Կղերաց, կրնայ ուրիշ տեղ մը անանց հնարհելով՝ ու մեր սեպհական ստացուածքն ալ մեզի դարձուցնել. և ասոր կարծեմք թէ՝ Դաղղիոյ Վեհափառ Կայսրն ալ կը հաճի արդարութեան և իրաւանց պաշտպան ընելով:

Վերջերորդ. Յաֆայի գարանիինայի տեղը, ինչպէս որ վերը յիշեցինք. որ հազար քսակի չափ շինութեանը գնաց, (բայց ի հողէն, որ ամէնց 120 տարիի չափ յառաջ Ազգասէր Մեղրոս Իշխանը ստացած ու Ազգին յիշատակ

(40) Սխալ է գրած թիւը յիշեալ Մկրտիչ վարդապետն. Սաղ. էր. 214, որ չգիտնալով՝ 1857 ին կը դնէ. ընդհակառակն՝ 1856 հոկտեմբեր 24 ին օրը՝ հրապարակաւ կարդացուեցաւ Հրովարտակը Երուսաղէմայ մէջ. որուն ներկայ ըլլալով՝ Հիլենկիրեան Յակոբոս վարդապետը՝ այս տեղեկութիւնը մեզի հաղորդեց . . . : Շատ կ'ըլլայ ըսել, թէ միւս գիտցածներն ալ Մկրտիչ վարդապետին, անոնց ասոր նման շատ արբապրութեան կարօտ է . . . :

թողած է.) և համարեա թէ՝ 500 քսակի չափ ալ՝ ձեռք բերելու համար վատնուեցաւ քանի մը տարի է. բայց դէռ ձեռքերնիս չանցաւ ... : Ուստի եթէ Տէրուն թիւնը գարանթինայէ տեղ կ'ուզէ՞ նէ, հոն իւր հողին մէջ շատ տեղ ունի, ու կրնայ կառուցանել անոր համար շէնք մը. վասնորոյ կը խնդրեմք արդարասէր կառավարութենէն՝ որ՝ 16 տարիէ 'ի վեր՝ սրբ. չափ որ վայելեց նէ՝ բաւական համարելով, մեր սեփհական ստացուածքը մեզի վերադարձուն է ... :

Լրմնեալ. Հիւպատոս Մուրատ իշխանին՝ Ս. Աթոռին կտակաւ թողուցած յիշատակը, որ ապօրինաւոր կերպիւ վաճառուեցաւ անի եա առնուելուն հնարը նայվի. վասն զի Պատրիարքը տէր չէ անոր. այլ անոր տէրը, նախ՝ բոլոր Միաբանութիւնը, և ապա բովանդակ Ազգն է : Արդ՝ համարեա թէ՝ ասկից հարիւր քսան տարի յառաջ Սեղբոս Ազգասէր Իշխանը, և անկից հարիւր տարի ետքն ալ Մուրատ Հայրենասէր Իշխանը՝ Ս. Աթոռին բաւական գեղին յիշատակ ձգած ըլլալով, և երկուքն ալ հեռատեսութեամբ մը Ազգիս ապագային արդիւնաւոր յիշատակներ ձգած ըլլալով Յոպպէի մէջ, որոնք որ շատ պիտանին է՝ Երուսաղէմայ նաւահանգիստը՝ միանգամայն և ծովեզերեայ վաճառաշահ քաղաք մը ըլլալուն. և որոնցմէ 'ի զատ էմք կարդար յի-

շատակարանաց ու պատմութեանց մէջ, թէ Իշխանք մեր՝ 400 տարիէ ի վեր Աղգասիրաբար ասանկ երեւելի անշարժ յիշատակ ու կալուած մը Թողած ըլլալուն Ս. Աթոռին, (բայց ի Հնդկաստանու Աղգասէր բարերարներէն, . . . այլ բոլորն ալ՝ Միաբանից և քանի մը Առաքինագործ և Աղգասէր Պատրիարքաց աշխատութեամբն ու Ջանիւքը ձեռք բերուած է . . .) ընդ հակառակն յիշեալ տեղերէն այսօր պտուղ և արդիւնք քաղելու և շահելու ժամանակը, առջինը 16 տարիէ ի վեր Տէրութեան կողմէն յափշտակուեցաւ . . . և երկրորդն ալ՝ Յովհաննէս Պատրիարքին ձեռքը՝ մէկ Ղսալկի մը կորսուեցաւ. իբր իրեն անուանն ուֆաստը անջնջելի նախատինք մը Թողելով ապագայից . . . : Ուստի ինչպէս ըսինք՝ յիշեալ տեղերը ժամանակ չանցած ձեռք բերուի. քանզի կանգուն հարիւրէն մինչև երեք հարիւր ղուրուշի գեղին կը ծախուի կոր այսօր Լֆֆայու մէջ. և այս տեղերը՝ քանի մը հարիւր հազար կանգուն տարածութիւններ ունենալէն ի զատ, այլ և հոյակապ քարուկիր չէնքեր ու պարտէզներ ալ ունի, ինչպէս որ նկարագրեցինք : Ուրեմն Թող ընթերցողք մտածեն, թէ ինչեր եմք կորուսեր, և Աղգը ի՞նչ երեւելի վնասներ ըներ է . . . :

Ուրեմն՝ Ս. Աթոռին ունեցած Յոպպէու մէջ Արաբայիներէն յափշտակուած

տեղերնուս ու կալուածներնուս ի զատ, այլև Շամ Թարապլուսի, Աղեպոսի, Կիպրոսի, Տիգրանակերտի, Անդրիանուպոլսի, և Անիայի մէջ եղեալ վանքերը ու կալուածները ձեռք բերուի, որոնք բոլորովին յափշտակուած են շատերը. և շատերն ալ՝ քանի տարիէ ի վեր՝ չե՛ն յուզարկեր Աթոռին՝ անոնցմէ գոյացած արդիւնքները, և այլն, և այլն։ Իւ ահա աս սոնք ձեռք բերելու աշխատին Աղգայինք մեր եթէ Աղգ են և Աղգասէր՝ Թող օրինակներն ցուցնեն. որոնց ֆերմանները, խաթթիշերիֆները, ենիլիները. Ռահրիները, հէօճէլիները, ինհաները, ռէճիֆները, մոնասթիրները՝ կեցած են Աթոռին դիւանին մէջ. և չգտնուած ու կորսուածներն ալ՝ եթէ խնդրե՛ն, կարող են արձանագրութիւններէն ու դիւաններէն օրինակը (խայտը) հանել տալ ու պաշտպանել և ձեռք բերել Աթոռին ընդ նմին և Աղգիս իրաւունքները ու սեպհական ժառանգութիւնները և ստացուածքները . . . ։

Իւրարձեալ, եթէ աւելի ևս արդիւնք ձեռք բերել, և Աղգիս պատիւ ընել, ու Աթոռը փառաւորել, նաև իրենց Անուանը անջնջելի յիշատակ ընել, և իբր արձան ու կոթող մը կանգնեցընել կ՚ուզե՞ն։ Աթոռին՝ արդի Աղգասէրք և Աղգապէտք, սա երկու փափաքելի և ամենապիտանի ու կարեւոր խնդիրներն ալ կատարելու ջանք ընեն. որ յաւէ-

տենական փառացն ու Աղգիս օրհնութեանն ալ մանաւանդ արժանի ըլլան։ Եւ ահա հետեւեալքն են.

Ինն երորդ. Ս. Երուսաղէմ՝ մեր Ս. Յակոբայ վանքին սեղանատան պատին կից՝ Տէրութեան զօրաց ձմեռանոցին տեղը կայ՝ աւերակ և ամայի. որն որ 'ի վաղուց մերն էր կ'ըսուի, և Յեգիպտոսի կուսակալ բարձրապատիւ Իպրահիմ բաշան՝ ասկից 25 տարի յառաջ Ս. Աթոռին պարգեւեալ ուղեց յիշեալ տեղը՝ Մինասեանից հաւատարիմ ծառայութեանը համար. բայց նոյն միջոցին ժամանակին պարագայներէն երկիւղ կրելով՝ չընդունեց վանքը, և իբր թէ խոհեմութիւն չ'սեպեց Պօղոս Սրբազանը... որ ամենապիտանին է վանքերնուս։ Այլ այժմ կ'ըսեմք, գոնէ անոր բոլորն ալ չընլայնէ՝ մեր վանքին կողմէն կիսով չափ առնուի, որով վանքն ալ ապագայ գալիք վնասներէն ազատի... ։ Ուրեմն կ'աղաչենք, որ այս գործ՝ բայց Աղգիս համար մեծ բարիքը ձեռք բերէ Աղգային Պարչութիւնը պատերազմի պաշտօնէին ձեռքը։ Եւ կամ գոնէ Տէրութեան աղերս մը մատուցուի, որ փոխանակ Յովակիմ Աննայի տեղւոյն՝ այս տեղը կամ շնորհ ընէ, և կամ անի ալ մեզի վերադարձնելով՝ ասի ալ կամ պարգեւէ, և կամ դրամով վաճառէ Աղգիս. որով յարաժամ օրհնող ըլլանք նորին Կայսերական պեր-

ՀԱՍԹԵԱՆԸ. քանզի ինչպէս ըսինք, աւելի մեծ պիտանաւորութիւն ունի մեր վանքին . . . :

Եւ Տաճարորդ. նոյնպէս և կ'ուզէն Աթոռին արդիւնք բերել տալ, և Աղդիս պաշտօն ընել, և իրենք (Աղդային Վարչութեան վրայ եղող անձինք) ալ Ազաքիսութիւն գործել: Ահա կ'ըսեմք, թէ՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վերայ՝ ը-սարար մը կանգնեցնելու ջանք ընեն՝ ու անոր սրտօնութիւնը ստանան. որ Յոյնք՝ շահասիրութեան համար՝ հակառակելով թող չեն տար, ֆերմանիրին իբրեւ եպիսկոպիլ դիր. այսինքն՝ հրովարտակներոտ դեղը նշանագրած չ'այցելով. որն որ բոլորովին ընդդէմ և հակառակ ընդհանուր կառավարութեան աշխարհիս . . . : Ասա որում՝ բոլոր աշխարհի բողոք բառնալով կը հարցուցնեմք և իրաւունք կը պահանջեմք, թէ՝ մէկ մարդ մը, կամ մէկ ազգ մը, մէկ տան մը, կամ եկեղեցիի ու ստացուածքի մը տէր և բաժանորդ (հիւսէտար) որ ըլլայ. անոր մէջի եղած կառավարութիւնը ինքը չընէր, և պէտք ըլլալու սպասաւորութիւնը ինքը չ'տեսնէր, ու անօրէնութիւն մը ըլլայ՝ ինքը չ'անօրինէր, և թէ՝ անոր ունեցած պաշտօնը ինքը չ'վարէր, և կամ ունկիս դոյացած ստակը ինքը չ'առնէր մի . . . անշուշտ . . . : Այլ և անոր ունեցած սէնէրին կամ ֆերմանին մէջ՝ օրէնք մը և սովորութիւն կայ մի գրուիլ. թէ այս տունը՝ կամ

այս եկեղեցին, և կամ այս ինչ ստացուածքը այս ինչ անուն մարդուն՝ և այս ինչ ազգին ըլլալով՝ միանգամայն անոր կառավարութիւնը, տնտեսութիւնը, կամ սպասաւորութիւնը, ուրիշ այս ինչ մարդը կամ ազգը պիտի ընէ, և կամ թէ անկից գոյացած շահը և արդիւնքը՝ այս ինչ անուն մարդը պիտի առնէ, և այս ինչ անուն ազգը պիտի շահի. . . կ'արձեմք թէ՝ ամենեւին ոչ. . . յայտնի է՝ որ այս օրինակ օրէնք մը չկայ բնաւ . . . : Այս ուրեմն ոչքան յանդգնութիւն, ոչքան բըռնութիւն, և ինչ անտեղի կռիւ. ինչ աստիճան բարբարոսութիւն, և ոչչափ ամբարշտութիւն, և ոչչափ ալ ամբարտաւանութիւն է, Յունաց կղերաց ըրածը, որ մինչև անգամ յանդգնելով՝ Քրիստոսի Տեառն մերոյ սարսափելի և երկրպագելի Ս. Գերեզմանին վերայ ալ կը բանեցնեն իրենց անօրէնութիւնը . . . ու մեր Ազգն ալ՝ անհոգութեամբ երեսի վրայ ձգած է, ու արիաբար ջանադիր չըլլալով՝ իրեն իրաւունքը չի պաշտպաներ, և Ազգասիրաբար ձեռք չի բերեր. որով Ազգիս արդիւնքն ալ՝ Յոյնք համարձակապէս կը կողոպտեն . . . յորմէ ոչ փոքր արդիւնք կը գոյանայ . . . : Ուրեմն արիք մեռեալք . . . ոտք ելնենք, ու Ազգովին. խնդրեմք, մեր բարեգութ Ինքնակալ Սուլթան Ապտուլ Մէճիտէն որ ողորմելով՝ յատուկ հրովարտակ մըն ալ՝

այս մասին հնարէք տառապեալ Աղէս. որ պէս զի մեր իրաւանցը և արդեանցը տէր ըլլալով՝ զինքը յարաժամ Աղգովին օրհնող լինիմք . . . : Ո՜հ, ե՞րբ իցէ . . . :

Եւ ահա՛ փառք, և ահա՛ արդիւնք, և ահա՛ պատիւ և յաջողութիւն ու յառաջադիմութիւն Աղէս և Աթոռոյն Երուսաղէմի. եթէ այժմեան Աղգային կառավարութիւնը կու զէ՛նէ Աղէը յառաջանալ ու օգտիլ. նաեւ եթէ կ'ուզէ՛ն Աղէս բարիք գործել ու Աղգին բարութիւն ըլլալ, որով և իրենք ալ կ'ուզէ՛ն և կը փափաքի՛ն Աստուծմէ վարձք առնելնէ՞, թո՛ղ Աղգասիրաբար ասոնց գործ ծագրութեանը հոգ տանին. 'ի փառս Աստուծոյ, և 'ի սէր Ս. Աթոռոյն Երուսաղէմի: Գրանցի գրեալ է. "Երանեալք իցեն այք սիրեսցեն զքեզ Երուսաղէմ, և ցնծասցեն նոքա 'ի խաղաղութեան քում: Եւ անիծեալ լիցին ամենայն ատելիք քո, եւ եկեսցեն օրհնութիւնք 'ի վերայ սիրելեաց քոց": Տ. Ղ.

Ո՜հ, թէ մոռացաց զԱՂԷՍՍ ՔՈ ԵՐՈՒՍԱՂԷՄ,
ՄՈՌԱՑԻ՛ ԶԻՍ ԱՂ ԻՄ:

ՀԱՄԱՌՕՏ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի ՎԵՐԱՑ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ

ՍՐՈՑ ԱԹՈՌՈՑՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԵՒ ԱՅԼ ԱԹՈՌՈՑ ԵՒ ՎԱՆՔՐԻՑ ԱՋԳԻՍ

Եւ արդ՝ մինչեւ ցայս վայր թէ Երուսաղէմայ Պատրիարքին՝ և թէ Պօլսոյ կառավարութեանց վերայօք փոքր 'ի շատէ խօսեցանք. կը մնայ այժմ մեզի Երեք բանի վերայօք ալ Դիտողութիւն ընել, և վերջ տալ՝ այն ամենամեծ ամենադժուարին, և միանգամայն ամենավախուկ խնդրոյն. Այսինքն՝ Հաշոյն, Դանձին, և Միաբանութեանը վերայ. որոնք որ Ազգային կառավարութեանը ուշադրութիւնը գրաւած են, և գլխաւորապէս մեծ զբաղմունք մեն ալ տուած ըլլալով իրենց, վասն որոյ Ազգային շատ գործերն ալ երեսի վերայ կեցած են. որով և մէջերնին անհամայնութիւն և կրծեայ փարբերութիւն ալ դուրս գալով՝ չեն կրնար կոր համայնութեամբ ը-ծել այս կնճիռը՝ ու որոշում մը տալ. և կը տեսնենք ալ՝ որ այս խնդիրները հասարակութեան բերանն ալ կը պտըտին կերպ կերպ զրոյցներով, կամ լսեւ կերպ կերպ կուսակցութեամբ . . . որոնց աղբիւրը սուսկից յառաջ եկած ըլլալը յայտնի է խոհական անձանց . . . : Ուրեմն սկսինք

խոնարհաբար այս մասին մեր ըրած Դիտողութիւնները յայտնել. և

Նախ՝ Լ.թռուցն ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՒՈՅՆ վերայ խօսիմք. զի ոչ թէ մենք, այլ և բովանդակ Լ.զգն ալ՝ այդ համարմանը վերայ է. բայց գործին մէջ քանի մը երեւելի պարագաներ կան արգելք եղող, որոնցմով անկարելի կը լինի կատարեալ հաշիւ պահանջել Լ.թռէն։ Ի՞նչպէս. զոր օրինակ, անգամ մը Լ.զգը Հռոպէական կառավարութեան տակն ըլլալով՝ հետեւաբար ամբողջապէս միօրինակ կառավարութեան տակը ըլլալով՝ յորմէ և կարծեայ տարբերութիւն ալ դուրս գալով՝ դժուարութիւն կը ծագի գործոյն. որովհետեւ յայտնի է, որ Հրուսաղէմայ Լ.թռը Լ.զգին ընդհանրութեանը կը վերաբերի. և ըստ մեծի մասին ունեցած արդիւնքն ալ՝ Հնդկաստանու, Պարսկաստանու, և Ռուսաստանու մէջ բնակեալ Հայազգի ժողովրդոց տրօք և ողորմութեամբն է, որ ժամանակ ժամանակ՝ թէ Լ.թռը Նուիրակ հանելով ստացած է, և թէ բարեպաշտ անձինք ալ՝ յատուկ նուէրներով ու կտակաւ, նաև ուխտի երթալով՝ օժտած են զանի։ Ուստի ոչ միայն Պոլսոյ կամ Լմու և Թուքքիայի ժողովրդոց կը վերաբերի հաշիւ պահանջել, այլ և յիշեալ վիճակներէն ալ՝ գոնէ մէկ մէկ Անձինք ընտրուելով ներկայ գտնուելու են՝ նոյն հաշուոյն պահանջմանը։

Բայց այսու ամենայնիւ ասոր վրայ ալ դժուարութիւն կը ծագի. քանզի Պոլսոյ Ազգային կառավարութիւնն ալ պատճառ կը բերէ, թէ սրբան որ յիշեալ վիճակաց ժողովուրդները օժտած են նէ՛ Աթոռը՝ տրօք և արդեամբք. մենք ալ անոնցմէ նուաստ չենք, թէ քանի՛ քանի՛ անգամ պարտքը տալով, և թէ շատ ժամանակ ալ՝ վտանգաւոր միջոցներուն աշխատութիւն խնայած չենք՝ Անոր ուղեցած իրաւունքները պաշտպանելով. ինչպէս որ մինչեւ յարդ վերոյիշեալ վիճակներուն մէջ ունեցած նուիրական Սրբազան վայրերնուս և Աթոռներնուս ալ՝ անոնց մէջը գլխնուսղ Հայազգի Ուխտիքները կամ վարչութիւնները աշխատութիւն խնայած չեն քաղաքականապէս՝ յիշեալ նուիրական Տեղեաց իրաւունքները պաշտպանելու մասին. ուստի ինչպէս որ մինչեւ յարդ մենք անոնցմէ հաշիւ մը պահանջած չենք նէ՝ նոյնպէս և այս Աթոռին վրայօք ալ՝ անոնք ձեռնամուխ չըլլան հաշիւ պահանջելու մասին, քանի՛ որ Ս. Երուսաղէմ Թուրքիայի կառավարութեան տակն էնէ՝ կ'ըսեն։

Բայց ասոնք ալ վէճը չի դադարիր. քանզի բովանդակ Ազգը դարձեալ կ'աղաղակէ, թէ՝ երկրին և թէ՝ կառավարութեանց այժմեան տարբերութիւնը և բաժանումը չէ՛ն կրնար ժրկուսեր Ազգին վերաբերեալ իրաւունքը. և քա-

նի որ Ս. Հրուսաղէմայ Աթոռը, Նախածնօղ և Անդրանիկ, ու Այր է բոլոր Աթոռոց և Վիճակաց ամենայն Քրիստոնէից և յատկապէս Ազգիս. և քանի որ՝ նոյն Տնօրինական Սրբազան Վայրերը՝ Քրիստոնէութեան սկիզբէն, և առաջին դարերէն, այսինքն՝ Աբգար նախահաւատ՝ և Տրդատ բարեպաշտ Ս. Թադէոսներէն սկսեալ, մինչև անգամ Խագրատունեաց Տէրութենէն՝ և առաւել ևս Ռուբինեանց Տունէն՝ ընդ նմին և Նախարարաց և Պայազատաց Ազգիս շինութեամբը՝ նուիրօքը՝ ջանիւքը՝ արեամբը, և արդեամբը կառուցված՝ ու Անոնց հսկողութեամբը պայծառութեան մէջ պահուած է. ուստի համահաւասար Հայ անուանը կրող ամէն մէկ անհատ անձինք իրաւանց տէր և ժառանգորդներն. վասնզի միայն Թուրքիայի մէջ բնակեալ Հայոց չ'վերաբերիր Անոր հաշիւը պահանջել կ'ըսեն . . . :

Վերատին ասով ալ չէն բաւականանար Պօլսեցիք. քանզի կ'ըսեն. այն այդ իրաւունքը մենք չենք ժխտեր և չենք ալ ուրանար. բայց քանի որ Հրուսաղէմայ Աթոռը Թուրքիայի մէջ է՝ միանգամայն և Թուրքիայի մէջ ըլլալովն ալ Ազգը պարտէն է. ուրեմն ինչպէս կրնայ ըլլալ, որ միւս կառավարութեանց ներքեւը գտնուող Հայ ազգի ժողովուրդներս և եղբայրներնիս ալ Դպրոցներով՝ համաձայն կերպիւ

ըստ օրինի քննենք ու հաշիւ պահանջենք. և եթէ ասոնց Ֆրանսիանը աշխատելէն եռաբը գործ տեսնեմք ըսելու որ ըլլամք. նախ՝ անկարելի է. երկրորդ՝ եթէ կարելի ալ ըլլայ՝ Ֆինչ որ Ֆրանսա ըլլանք՝ անդին բան չի ճար . . . . ահա գործին կնճիռը հոս է . . . ուստի՝ Ազգը քանի որ իրաւանց տէր է, և քանի որ մենք ալ պատեհութիւն ունիմք նէ քաղաքակրթապէս՝ նաև քանի որ մենք ալ Հայ եմք, որով և իրաւանց տէրն է. հետեւաբար Ազգին իբր Ամբոխիանը համարուելով՝ կրնամք հաշիւ պահանջել և Ազգիս իրաւունքները պաշտպանել. մանաւանդ թէ՝ դեռ ոչ ինչ անոր ոնեցած իրաւանց և արդիանցը յեռանամոխ պիտի ըլլամ. (ինչ պէս որ ոմանք միամտաբար կարծելով, և ոչ մանք ալ շահասիրութեամբ այնպէս կ'ուզեն համբաւել՝ հակառակութիւն յարուցանելով Ազգիս մէջ . . .) որով յիշեալ վիճակներն ալ բողոք բառնալու տեղի ունեցած ըլլան. այլ Անոր ունեցած կարողութիւնը ու ցաւը հասկանալով՝ Բարեկարգութեան դէջ պիտի մտցնեմ. և պիտի նայիմք. եթէ կարողութիւն ունի նէ՝ ջըլլայ թէ՝ քանի մը Միաբան անուանով անձանց էֆէնտիին և շահուն ղոհ երթայ, և ցաւ մընալ ունի նէ նոյնպէս ջըլլայ որ յափշտակուած ու կորսուած ստացուածքներուս նման մնացածներն ալ կորնչին. և ահա այս է մեր նպատակը. վասնզի եթէ կարողութիւն ունի նէ՝

կարողութեանը համեմատ Ինոր Միաբանութեանը Ազգօգուտ առաջարկութիւններ պիտի ընեմք՝ և Սահմանադրութիւններ պիտի դնեմք. և եթէ կարողութիւն չունի՝ մենք ալ անոր յարմար պիտի շարժիմք. և յայնքամ կարծեաց պարբերութիւնը ո՞ պարայնութիւնը պիտի վերջացնեմ։ Ազգիս մէջէն։ Բանալի քանի՞ որ Ազգը՝ նոյն Աթոռոյն վերայ անկած է աչքը. նաեւ քանի՞ որ Ազգը՝ Ինկից օգուտ մը և արդիւնք մըն ալ տեսած չըլլալով. նա մանաւանդ անհաւատարմութեան գործքեր ալ տեսնելով ու նշմարելով՝ և միանգամայն խեղճութեան ու տգիտութեան մէջ կը տապալուելի, ու քանի մը անձինք ապահովապէս կը վայելեն Ինոր արդիւնքները՝ մանաւանդ թէ մեր Նախնեաց ապագային ձգած բարիքները կը կորսնցունեն կոր նէ. ուստի պէտք է որ անպատճառ ժամանակ չի կորսնցունելով՝ ժամ մի յառաջ հաշիւ պահանջեմք, ու հասկանամք թէ՝ ի՞նչ կայ և Նախնեաց ձգած արդիւնքներէն ու ժառանգութիւններէն ի՞նչ մնացած՝ և ի՞նչ կորսուած է. կ՚ըսեն . . . : Եթէ այդպէս է, ուրեմն հաշիւ պահանջեցէք, հաշիւ, կ՚աղաղակեն. : Հա՛ ընկալան Պօլսոյ Ազգայինք ամենուն և բոլանդակ Ազգին հաճութիւնը և հաւանութիւնը հաշուին համար. եա՛ . . . ուրեմն և մենք ալ Պօլսեցի ըլլալով հաշիւ պիտի պահանջեմք՝ հա՛ . . . հրամերեա՛. Ա՞ռ տեղի իշխա-

նո-Ռիւ-ն հաղորդն . . . Հիմայ հաշիւ պիտի առ-
նեմք, առնեմք ամենն ոնսկից, և ի՞նչպէս, ու-
ի՞նչ գիտենք, և ի՞նչ պիտի գտնենք, կամ
ի՞նչ ցոյց պիտի տան մեզի . . . ահա բանին
կնճիռը, դժուարութիւնը, ու վախճանը հոս
է . . . :

Ա՛կ դիցուք թէ՝ այս արդելքներն ու դժ-
ուարութիւններն ալ չըլլան, և ուղղակի հա-
շիւ տայ Միաբանութիւնը, կամ Միաբանու-
թիւնը չկրնայ տար նէ՝ Ա.Թոռին ելեւմտից
հաշուետուութիւնը ձեռք բերելով տեսնենք պի-
տի հաշիւը. անանկ չէ՞, այո՛, դիցուք թէ այդ-
պէս ըլլայ. յայնժամ հինգ բան պիտի հաս-
կանամք. այսինքն՝ ի՞նչ արդիւնք, կամ ի՞նչ
կալուածք. ի՞նչ ծախս՝ կամ ի՞նչ վնաս. և
կամ թէ ի՞նչ յափշտակութիւններու տակը
կը հեծէ ու կը ծառայէ կոր Ա.Թոռը . . . . :
Ասոնք հասկցա՞նք մի. յայնժամ պարայնո-Ռիւ-նը
Ա.Թոռին վրայէն չ'վերնալէն ու Բարէկարգո-Ռիւան
մէջ չ'մտնելէն ետքը, իսկոյն Ա.Թոռը ու Աչ-
գը տակն ու վրայ դառնալուն ալ պատճառ
պիտի ըլլամք . . . : Բանդի հոն պիտի տես-
նուի, ոչ թէ միայն Ա.Թոռին ծախքը ու ե-
կամուտը, և ոչ միայն ունեցած գանձը ու
կալուածը. այլ առաւել ևս եղած և ունե-
ցած վնասներն ու յափշտակութիւններն յա-
բաժամ . . . յայնժամ յետոյն չար բան զառա-
ջինն պիտի ըլլայ . . . : Այսն զի հոն գլխաւո-

բաղէս պիտի տեսնուի, ոչ միայն օտարաց և երկրակալաց տուած սարսափելի վնասները, այլ և ազգասէր և առաքինի համարուած, ու Աթոռին ջատագով կարծուած անձանց, կամ լաւ ևս Ս. Աթոռը՝ իրենց իբր եկամուտ ը-նած շահասէր և ազգակործան անձանց պատ-կերները՝ և անոնց տուած վնասներն ալ պիտի տեսնուի յայտնապէս . . . որով և բաղում և կերպ կերպ գէշութիւններ ալ դուրս պիտի գան անշուշտ . . . : Այս ահա սոսր համար է՝ որ ոչ Ազգային Վարչութեան կամ գործոցը մէջ գտնուող անձինք ոմանք հաճութիւն կու տան, և ոչ ալ Աթոռին Միաբանները կը զլխանին այս խնդրոյն. և հաճութիւն չի-տալէն զինի, այլ և չարաչար կուսակցու-թիւններով ալ կը գրգռեն միամիտ հասա-բակութիւնը, որ գաղտնիքը երևան չելնէ՝ . . . ուստի արդիւնք մը չունենալէն 'ի զատ Ազգը, նաև Աթոռին կործանմանն ալ պատճառ կ'ըլ-լայ . . . և թագաւորութիւն ու դքսութիւն մըն ալ չունիմք . . . որ անոր ձեռքը 'ի գործ դնեմք խնդիրը . . . ապա ուրեմն արդիւնք մը չպիտի ունենամք, ուրեմն օգուտ մը չպի-տի քաղեմք. անշուշտ . . . ուրեմն ծածկենք այս խնդիրը, որ գէշութեան հոտեր չի բու-րէ իր մէջէն . . . մինչև որ Վերին Այցելու-թիւնը հասնի Ազգիս . . . :

Երկրորդ. ԳԱՆՁԻՆ վերայօք խորհինք: Արդ՝

աշխարհիս վերայ թագաւորութիւն ունեցող ազգերը անգամ երկու բանով կ'ապրին կոր. այսինքն՝ կամ յոյսով՝ և կամ իրենց ունեցած կարողութիւնը. որմնցմէ մէկը ջրոյց նէ՝ միւսով կը բաւականանան կոր։ Ա՛հա ասոր պէս ալ՝ Աստուած մեր մեղացը համար որքան որ կարողութիւնս (Ռագաւորութիւնս) բարձեր է նէ՝ միանգամայն բոլորովին անմխիթար և անյոյս չի կրանցուցնելու համար՝ Հայոց ազգին իբր մխիթարութիւն մը ըլլալու համար յոյս մըն է թողեր՝ այս վերջին ժամանակներս. և այս յոյսն ալ՝ իբր թէ Ազգը մի միայն յիշեալ Աթոռին գանձին վրայ է դրեր... և Ինոր ուրուական գանձովը կը մխիթարուի կոր այսօր. թէ իրօք եղած ըլլայ՝ և թէ կեղծեօք...։ Ուստի դիցուք թէ ասոր ալ ձեռք երկնցուցնեմք և հաստատեմք թէ՝ ի՞նչ կայ, յայնժամ եթէ յուսայոյծնիս չգտնիմ՝ աւելի ևս ցաւալի պիտի ըլլայ մեր վիճակը. և եթէ յուսայոյծնիս գտնիմ, յայնժամ գարձեալ բան մը չպիտի շահինք... քանզի խորհուրդ չինալով ու տարաձայնութիւն յարուցանելով՝ բոլորովին ձեռքերնուս կորսնցընելուն պատճառ պիտի ըլլամք... Էյ, այն կարողութիւնն ալ չունիմք, որով կարողանամք դալիք արգելքներուն առջին առնուլ... վասնորոյ ի՞նչ պէտք է ընեմ. և ահա. դաղտնիք ըսած բանդ մէկ խորհուրդ մըն է, և խորհուրդ ըսուածն ալ՝ մէկ սրբազան բան մըն է.

ուսամ ասի որոնելը անխոհեմութիւն, մանաւանդ թէ խաշմոռանաց դէմ՝ ալ մեզանչում մըն է. հետեւաբար ասի հասկանալը՝ մեզի օգուտ ու բարիք մը չըներ, և օգուտ մը չի ծագելէն 'ի զատ՝ այլ և առաւելապէս վտանգը մեր ձեռքը հրաւիրել մըն է. ուրեմն և այս ալ թողուենք. և այս խնդիրն ալ ծածկենք, իրեն մինչև յարդ ծածկուած տեղը. որով և կարծեմ՝ աղէկ ալ կ'ընեմք. քանզի մէյմը որ՝ Նախնեաց սահմանին ու որոշմանցը դէմ մեզանչած չենք ըլլար. և մէյմ՝ալ որ՝ եթէ բան մը չենք ելլեր ըլլայ, անոյշ չենք կրնչիր... Թող նաև եթէ բարեբաղդաբար մեր յուսայցածին չափ բան մըն ալ ելնէ, ինչպէս ասինք, մեզի արդիւնք մը չուներնալէն 'ի զատ, այլ և կործանելուն ալ առիթ կուտամք... քանզի ամենքն ալ Ա՛զգ են, և ամենքն ալ Հայ են, և եթէ Հայ են, ուրեմն բնականաբար ամենքն ալ արիոն, ամենքն ալ անհամբեր, և ամենքն ալ հեպոչրդիր, ու ամենքն ալ հասկանալ կ'ուզեն. ինչպէս որ Հայ ազգին ոռնակոռիւն մը՝ կամ երկրորդ բնոռիւն մը եղած՝ ու իրեն ծնողքեան ժամանակը մօրը արգանդքեն և արիւնքեն գոյոռիւն ոռնեցած՝ ոռ իրեն հեպ մեկոնը աշխարհս բերած է՝ այս (իրբեմն խոհեմ և երբեմն անխոհեմ) վարմունքը և բնաւորութիւնը... = Լաւ ահա ասունք լաւ նկատելով ու գիտնալով մեր բարեյիշատակ Նախնիքները՝ խոհեմութեամբ գովելի

ընթացից և դրութեան մը վերայ կացուցած են անոր կառավարութիւնը՝ անտեսութիւնը ու պահպանութիւնը. և այնքան ալ ծածկեալ ու գաղտնի պահած են, որուն խորհուրդը մինչև անգամ անոր համար աշխատող, անոր վերայ հսկող, և անոր մէջը գտնուող Միաբանք, Եպիսկոպոսունք և Պատրիարգունք անգամ մինչև ցայժմ չեն գիտցեր և չեն ալ հասկըցեր, (բայց 'ի այժմեան բռնաւոր Պատրիարքէն, ինչպէս կ'իմանամք...) այլ միայն սուրբ խրճմոնայ և ուխտի ու երդման տակ ձգելով՝ մէկ հաւատարիմ անձի մը յանձներ են անոր պահպանութիւնը. և այն անձն ալ՝ Աթոռին Փակակալն է կ'ըսուի. որք յաջորդաբար կը պահպանեն, հանգերձ իրեն գաղտնիքներովը, մինչև ցմահ....: Ուրեմն ասի խնդրողը՝ և ձեռք երկնցունելով որոնել ու հասկանալ ուզողը՝ իրաւամբ և իրաւամբ ոչ միայն Աստուծոյ՝ այլ և հաւատարմութեան ու մարդկութեան դէմ կը մեղանչէ...: Ապա ուրեմն այս խնդիրն ալ ծածկենք. քանզի ասկից ալ բան մը չպիտի շահիմք. այլ ասոնք հասկանալէն ու ձեռք բերելէն աւելի Աստուծոյ օգտաւէտ խնդիր մը կայ՝ անոր ձեռք երկրնցունելիք, և անի բարեկարգելիք, ու անոր հոգ տանիք. որն որ մինչև ցարդ մեր բնաջնջած ու փոփաքած՝ և յուսացած խնդրոյն հաստատութիւն մը կրնայ ըլլալ, ու գործն ալ

արդիւնաւոր և շահաւոր ըլլալէն զատ՝ այլ և Ազգին ալ շատ բարիքներ կ'ըլլայ և շատ աղէ-կութիւններ ալ յառաջ կուգայ ամենայն կերպիւ . . . :

Եւ ահա այն է, որ մեր Երրորդ խնդիրն, այսինքն՝ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ է. և կամ լաւ ևս Միաբանո-ութիւն վերայ խօսելիքնիս է. և մեր բնտրելիք հաշի-ը ու գանձը, թէ բարոյապէս և թէ նիւթապէս Միաբանք ու Վանականք են. և պէտք է որ ըստ օրինի՝ և արդարութեամբ ու իրաւամբ Անոնք ըլլան մեր բնտրելիքը. և ասոնցմէ պէտք է որ բնտրեմք ու խնդրեմք, ինչ որ մեզի պէտք ըլլալիք ամենակարեւոր բաներ կան նէ . . . ուրեմն սկսինք քիչ մըն ալ Անոնց ընթացիցը վերայ խօսելով վերջ տալ այս ամենափափուկ խնդրոյն :

Երրորդ՝ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ. Արդ՝ Միաբանութիւն ըսելով՝ ընդհանրապէս Աթոռին թէ սարկաւագները, թէ վարդապետները, թէ եպիսկոպոսները, թէ փակակալը. թէ աթոռակալը, և թէ Պատրիարքը պէտք է որ հասկանամք. և քանզի մէկ ձայնով ամէնքն ալ Միաբան՝ և ըստ կարգի Աթոռին իրաւանցը տէր և պաշտօնեայ կը ճանաչէ Ազգը այն Անձերը : Ուստի ասոնց ամենուն համար է ընելիք խորհրդածութիւններս և խօսելիք խօսքերնիս. վասն զի 'ի սկզբանէ անտի՝ բովանդակ Միաբանութիւնը կը ճանչէ Ազգը, իրեն նուի-

բական Տեղեաց և սասցուածոց ու ժառանգ-
գութեանց նաև իրաւանցը վերայ՝ իւր կոչ-
մէն իբր Փոխանորդ՝ իբր Տեսուչ, իբր սահ-
մանաւոր Տէր, և իբր Նեռես Աթոռին։ Եւ
սոսնց մէջէն մէկ պակասութիւն մը ըլլայ՝ առ-
բոլորն կը վերաբերի, և բարութիւն մ՚ալ ը-
լայ՝ նոյնպէս։ Աւրեմն պէտք է որ Անոնցմէ՝
թէ բարոյապէս և թէ նիւթապէս՝ հաշիւ- պա-
հանջ Աղէտ՝ քանի որ ինքը բաձարցակ Տէր է՝
Աթոռին և բոլոր իրաւանց և արդեանցը . . .։

Պատքէն ի կոլմանէ և ի դիմաց Աղդին՝
հարցընեմք Միաբանութեան մեծագոյն մասին
կամ ամբողջին. թէ ի՞նչ արդիւնք. կամ ի՞նչ
ինաս հասուցեր են Աթոռին և անոր վիճա-
կաց և ժողովրդոցը . . . ։ Թէպէտ և վերը
մէկ մէկ կերպիւ իբր թէ ջրեցինք՝ արդի Աղ-
գայնոց մէջ յուզված խնդիրները. որմէ յա-
ռաջ ալ՝ իրենց (Միաբանութեան) խնդրած
ու յուսացած, և կամ ունեցած ցաւերնին՝
կարծեմ թէ՝ ըստ բաւականին յայտնեցինք,
և միանգամայն արդարութեամբ՝ալ խօսեցանք.
որով և գուցէ, թէ իրենք ալ մեզնէ գոհ և-
զան . . . . աղէկ, և շատ աղէկ։ Այց սակայն
մեր անկողմնասիրութիւնը զմեզ կը պարտա-
ւորէ, որ Աղէին ունեցած արդարացի իրա-
ւունքները պաշտպանելով՝ քանի մը խօսք ալ
իրենց ուղղենք . . . ։

Ա՛րդ՝ Աղէը ձեզնէ հաշիւ- չը՝պահանջէ ու-

հա-ապարիմ ըլլայ յեր վրայ, շատ բարի . . . և Աստուծ իրեն Աթոռին (ըսելէ իր Տանը և Հօրենական ժառանգութեանը) արդի-նէրը ո-գանչը չի բնդո-ւնէ ո- չը հասկանայ, խիստ բարի . . . բայց Աստուծ ինչպէս վատահ ըլլալով հա-ապարհ-ուի-ն ընէ յեր, ու վերատին իր իրաւունքները ձեր ձեռքը տայ ! ! ! : Անդամ մը մոռացելու էր, թէ՝ Հայոց Աստուծ ի նախնեաց անոի 72 վանք ունէր Ս. Լրուսաղէմայ վիճակին մէջ. հետեւաբար բազմաթիւ ժողովուրդներ . . . բայց այսօր յիշեալ վանքերէն հաղիւ թէ վեց հատ՝ և միւսնուսոր ժողովուրդներէն ալ 100 տունի չափ մնացեր է, և այն ալ յետին խեղճութեան մէջ . . . :

Ուստի Աստուծ աղէկատուր արտասուօք ոչ միայն կորսուած վանքերուն վերայ կ'ողբայ, այլ առաւել ևս ըսլսգին դիմօք կը բնտռէ՝ իրեն տարաբաղդ և վատնդեալ բանաւոր ոչխարները ու գառնուկները և սիրելի եղբայրները, ու անոնց շատերուն անխնամ կենալով այլակրօն ըլլալուն համար ալ՝ աղիողորմ արտասուք թափելով, կը հարցնէ Միաբանութեանը թէ՝ ո՞հ, ո՞ւր են, և ի՞նչ եղան, ու աշխարհիս ի՞ր կողմն մնացին ! ! ! : Դիտեմ գիտեմ, քանզի պատճառ պիտի բերէք ըսելով, թէ՝ մէկ մասը տեղւոյն աշխարհաւէր բարբարոսները փոխեցին՝ յափշտակեցին և անխնայ ջարդեցին ու կլեցին . . . մէկ մասն

ալ բռնաւոր ու անքրիստոնեայ Յոյները բարբարոսաբար յափշտակեցին՝ և մնացածներուն ալ շատ վնասներ հասուցին . . . և մէկ մասն ալ՝ մեր նախորդ վարձկան՝ ազգանախատ՝ ու աշխարհասէր Միաբանները՝ ոմանք արիութիւն չ'ունենալով, ոմանք անպաշտպան ու անօգնական մնալով, և շատերուն ալ հոգը չ'ըլալով, և երբեմն յիշեալ բարբարոսներէն նեղութիւն ու երկիւղ կրելով՝ ձգեցին և փախան. և միանգամայն վանքերուն և ժողովուրդին ինչքերն ալ՝ ձեռքերնուն եկածին չափ՝ բարբարոսներուն նման մէկ կողմէն ալ իրենք յափշտակելով ու կեղեքելով ելան գնացին . . . ուստի մնացածներովը մենք ալ այսօր բաւականանալով՝ անանցմով կը մխիթարուինք և անոնք իրենց իր պաշտպաներ ու պահեր. մանաւանդ թէ՝ ինչ անցնելն էր՝ մեր բոլոր վաստակած դրամներն ու կալ-ածները և զարդերը հոն կը թողուն կոր . . . : Ուրեմն ըսելէ որ՝ նախ՝ առջինները և առջի բարբարոսները վնաս հասուցեր են Լ'թուին և Լ'ղէս. երկրորդ՝ նախնեացմէ՝ ըսելէ որ այն ասպատակութիւնէն ու բռնութիւններէն և յափշտակութիւններէն օրքան որ մնացեր է նէ՝ անանք կը պահէք ու կը պաշտպանէք կոր. և երրորդ՝ դուք վախճանելէն զկնի՝ ձեր ունեցած բոլոր հարստութիւնդ հոն կը թողուք կոր. ինչպէս որ ասանք ձեր սովորական առարկան է . . .

շատ աղէկ, շատ աղէկ։ Բայց ներեցէք որ հաշիւ տեսնենք։

Կ'ըսեմք, թէ այդ գէշութիւնները և յաւիշտակութիւնները՝ համարեա թէ՝ դար ու կիսէն աւելի առաջները եղած են. արդեօք պէտքը չէր մի, որ դարու կիսէ 'ի վեր և կամ գոնէ 50 տարիէ 'ի վեր ըստ բաւականին խաղաղ և անդորը վիճակի մէջ ըլլալին ալ. ահա, պէտքը չէր մի կ'ըսեմ, որ նախնեաց ժամանակներուն կորսուած վանքերը ու Հայ Ազգի ժողովուրդները (գուք և ձեր նախորդները) ելլէք ու բնտռէք և իրաւունքնիդ պաշտպանէք։ Եւ քարոզելով և օգնելով անոնց հոգեւոր և մարմնաւոր պիտոյիցը հոգ տանէք, որով վերստին ձեռք բերէք ձեր իրաւունքները՝ և ձեր իրաւանց տակը եղող կրոնական ոչխարները՝ քանի որ միջոցը և ժամանակը ու արտօնութիւնը ձեռքերնիդ էր։։։ (41) փոխանակ նուիրակութեան ելնելնուդ,

---

(41) Թէպէտ և այս մասին ալ շատ յանցանաւոր չեն համարուիր Մաբանք. քանզի իրենց վերայ գլուխ և առաջնորդ ունին Պատրիարքները. վասնորոյ ան՝ կ. ու բանի՝ ամենայն ինչ, որ ասանք ընել տայ. բայց այս բարեկարգութիւնները ընելու և ընել տալու՝ օրինաւոր և ազգասէր Պատրիարք և առաջնորդ պէտք է. որ անանք ալ իրենց հրամայուած պաշտօնը գիտնան ու կատարեն. և երբ ժամանակ որ չունեն, յայնժամ յանցաւոր կրնան դասուիլ Մաբանք. զի յայտնի է՝ որ իրենց վերայ տիրապետող Պատրիարքունք՝ իրենց արտօնութեամբը կրնան ընել տալ։ ուստի առաւել ևս ժամանակին գահակալող Պատրիարքաց Ենեսու՝ այսպիսի բարեկարգութեանց դրդապրութեանը հոգ

և փոխանակ տուէք տուէք ըսելով՝ ժողովուրդը կեղեքելուդ ու խաբելուդ՝ Ա՛թոռին պարտքը և երկրակալաց առած մասնաւոր ինանները պատճառ բերելով, և միայն Ս. Յակոբայ վանքին մէջ ալ ապահովապէս նստելով՝ ու դրսի վանքերը՝ նաև անոնց ժողովուրդը ի՞նչ եղած են, և դեռ ի՞նչ կ'ըլլան կոր . . . ասոնց բնաւ հոգ չտանելով . . . միանգամայն և չի մտածելով՝ որ ասոնց Տէրը կայ (Ազգը) օր մը ելնէ՝ իրեն դրած Տնտեսներէն (այսինքն՝ ձեզնէ) համար և հաշիւ պահանջէ նէ ի՞նչ պիտի ընէք . . . :

Այլ գիտեմ ի՞նչ ընելնիդ (42), ինչպէս որ ձեր նախորդները ըրած են. Այսինքն՝ որերնիդ Աստուծմէ չվախնալով ու մարդոցմէ ալ չամչնալով՝ Նոր նեղութեան ժամանակը տու-

տանիլ. քան թէ Սիաբանից: Ինչպէս որ օրինակն ալ տեսնուեցաւ այժմեան անարժան Պատրիարքին վրայ. որ ինքը բոլորովին փոյթ չունի, բայց ընդհակառակն Սիաբանից մէջէն շատերը ուզեցան ալ նէ՝ անոր ուզեցած արտօնութիւնը չունին՝ որ իրենք ալ գործ տեսնեն. ուստի այսուհետեւ Պատրիարքը ընտրուելու որ ըլլայ՝ աւելի արժանաւոր անձին մէկը ընտրելու է, որ այս բարեկարգութիւնները ընէ, և ընել տայ Սիաբանութեան: Քանզի ըստ առաջին, մէկ մարդուն գլուխը ոչչ ըզլայ նէ՝ անդամներն ալ չի լարժիր . . . նաև յոռետ գլխէն ելեր նիւթ ըսեր են. պուլգ պաղդան գօշար գէնդլեր . . . և կամ թէ պալ եէրիմնէրնէն այագ եէրիմնէր:

(42) Այս զուցած դէպքերս թիւնները՝ օրինակ բերելու համար կ'ըսեմք կոր. քանզի մէկմը որ մասնաւորի վերաբերեալ են, և մէյ մ'ալ այժմ չեմք կարծեր. որ իրենց մէջը գտնուին այնպիսի ապգանախատ անձինք . . . :

կոտով դրամ տալերնիդ. (Գրիգոր Եպիսկոպոս) . . . որերնիդ ալ Ինոր տառապանաց ժամանակը՝ փոխանակ օգնութիւն ու ձեռնտուութիւն ընելու՝ վանքին և Աղգիս Թշնամի եղող Յոյն կղերաց (Յունաց Երուսաղէմայ վանքին) տոկոսով ստակ տալերնիդ. (Երէց Եպիսկոպոս) . . . Նաև որերնիդ՝ բանեցնուդ չի գալուն պէս՝ մէկ մէկ զարդ՝ կամ մէկ մէկ հընութիւն ու բաւական դանձ ալ կողոպտելով՝ Աթոռէն առնել քալերնիդ, (Յակոբ Եպիսկոպոս) . . . . որ մէկերնիդ ալ՝ հաշիւ պահանջաւած ժամանակը, և կամ վանքին պարտուցը համար նպաստ մը ընել խնդրուած միջոցին՝ քաջմշնալով և ուխտերնիդ ուրանալով՝ ընդ նմին և բաւական դանձ ալ թալելով՝ հաւատափոխ ըլլալնիդ և ամուսնանալնիդ (Յակոբոս Եպիսկոպոս և Գիւնէսիոս վարդապետ) . . . և ահա մեր մնա ժամանակներուն մէջ ալ՝ Աղգին ցուցուցած՝ ձեր վասպանիդ՝ պահպանուելնիդ՝ փառէրնիդ ու արդիւնքնիդ, որ ասոնք են . . . և ինչպէս որ ձեր Պատրիարքին ալ գործքերը ցոյց տուինք, որ ձեր Միաբանութենէն կամ ձեր վանքէն ձեռնադրութիւն առած է, և ոչ դուրսէն . . . = Ուրեմն ձեր մէջ բերած առաջին և երկրորդ պատճառներնիդ չի զօրեր, ըսելէ որ՝ ձեր յանցանքը ծածկելու չափ զօրաւոր ապացոյց մը չէ՛ն . . . և բերած երրորդ փաստերնուդ համար ալ կ'ըսեմք, թէ մեր

մեռ ժամանակները տեսանք՝ շատ Միաբան-
ներ ալ՝ որ Աթոռէն դուրս ելնելով՝ իրենց ը-
պոյտ-ածիչը, կամ լաւ ևս Աթոռէն յափշտա-
կած ոծգագոտ-մաղ դրամները և հոն-ռիխ-ոնները հե-
տերնին տանելով՝ թէ իրենց կենդանութեան-
նը և թէ իրենք անցնելէն ետքը Աթոռին օ-
գուտ մը չբերին, և ոնեցած հարստութիւնն Ա-
ռոռին չի հասց։ Այլ ոմանք իրենց կենդանու-
թեանը ղեղեռութեամբ վայելեցին՝ հանդերձ
ազգականներով, և ոմանցն ալ՝ վախճանած
տեղերնին մնացին, և մնացածներն ալ՝ ուր որ
վախճանելու որ ըլան՝ վրայ եկողը ու ձեռքը
հասնողը պիտի կողոպտէ. ուրեմն ձեր սպոյ-
ոնաձիչներն ու դրամներն ալ հոն չի հասէ իր . . . . ։
Ուստի ձեր մէջ բերած Երրորդ պատճառ-
ներնիդ ալ չի զօրեր. վասն զի այդ կողմէն ալ՝
սուելի ծառայութիւն և արդիւնք մը ըրած
չէք Աթոռին և Ազգիս. ինչպէս որ օրինակնե-
րը ունիմք։ Օրօրինակ.
Վերը յիշուած անարժան ու ազգատեաց ա-
պրատամբ անձանցմէն զատ, այլ և թէ իրենց
կամքը և թէ Աթոռին թոյլատուութեամբ ու
հրամանովը դուրս ելնող անձանց ոնեցածնին
ալ՝ ոմանք ցիրուցան եղան, և ոմանք ալ՝ եղած
տեղերնին պիտի հասց ու իրենք . . . . որպիսիք
են, վախճանեալ Եղիա եպիսկոպոսին մեծա-
գուժար գանձերը ու ինչքերը. նոյնպէս վախ-
ճանեալ Յակոբ եպիսկոպոսին ունեցած դը-

բանները և Ա.Թոռէն կողոպտած և թէ նուիրակութենէն հաւաքած զարդերը և ձեռագիր հնութիւնները. Եգիպտոսի Գաբրիէլ եպիսկոպոսին ունեցած ոսկեղէնները և Ա.Թոռէն եկամուտներէն հաւաքած գանձերը. Սեբաստիոյ Կարապետ եպիսկոպոսին ունեցած գանձերը. Եւդոկիայի Յակոբ եպիսկոպոսին՝ իր մեծաւորէն (Ալնա եպիսկոպոսէն) մնացած հարստութիւնները. Գաղատիոյ Առաքնորդ Մկրտիչ եպիսկոպոսին ունեցածները. Յակոբոս վարդապետին իր հայրենական ժառանգութենէն մնացած և կամ իրեն վստրկած կալուածները. Աբիսակէս, Մելքիսէթ, Աբրահամ և այլն վարդապետաց ունեցած գրամներն, գրեանքներն, և եկեղեցականի վերաբերեալ զարդերն և այլն։ Եւ ահա ասոնց նեմանալ Յովհաննէս եպիսկոպոսին Ա.Թոռէն կողոպտած մեծագուսմար գանձերն ալ պիտի գուրսը մնար՝ եթէ Աղգը ոսքը կապելով Պատրիարք չկացուցանէր զանի Ս. Երուսաղէմայ . . . ։

Կը թողունք նաև Նուիրակութեան մէջ վախճանողներուն դիզած՝ ու մեռած տեղերնին կորսուած գանձերը . . . որոնցմէ վերջինը բաւական է, որ դէռ մօտ ժամանակներս պատահեցաւ, և եղելութիւնն ալ Աղգիս շատերուն ծանօթ է, մանաւանդ թէ այժմեան Երուսաղէմայ փոխանորդ Սահակ Խաբերդա-

ցի վարդապետը կրնայ ականատես վկայ լինել . . . այն է, Պաղատացի Իսահակ վարդապետին՝ Հնդկաստանու նուիրակութենէն եւ դարձած ժամանակը՝ Ճանապարհին անէրէ-ոյի յեռ-ամբ և անհամանալի մահո-ամբ՝ յանկարծ օրէն վախճանիլը ի Ռիտոտ. և անոր հաւաքած բազմագուսմար գանձերուն վրայի եղած պարայանո-ռիւ-նները ո-նորո-պանները . . . : Ուստի յայտնապէս կը տեսնուի կոր, որ այս ընթացքով ալ՝ և այս մասին եւ՝ առաւել արդիւնք ու օգուտ մը չէն ըներ կոր Միաբանք Ս. Էջմիածնի՝ բայց ի վնասէն, ինչպէս որ ցոյց տուինք . . . :

Այս ուրեմն ինչ ընելու է, որ այսուհետև Միաբանութիւնը պատկառելի երեւնայ Աստուծոյ առջեւ, և օրինաւոր ծառայութիւն մը բրած համարուի, թէ Աթոռին և թէ Ազգին. և միանգամայն Միաբանք ալ և Ազգն ալ՝ վստահ և գոհ ըլլան, ու Աթոռն ալ և Ազգն ալ արդիւնաւորի և փառաւորի, միանգամայն և յառաջադիմութեան մէջ մտնելով եղած վնասներուն ցաւերը ու տարաձայնութիւնները և դէշութիւնները ծածկուին ու անհետ ըլլան և մոռցուին . . . և ահա մեր այս մասին ունեցած կարծիքը ու ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆԸ:

Ազգ՝ վերը ակնարկած Ս. Աթոռնուս թ-ղաւունքները և սեպհական ստացուածքները ձեռք բերելէն՝ նաև հոն յիշուած առաջարկութիւններնէս կատարելէն ի զատ՝ Ազգային

Վարչութիւնը, այլ և սասսիկ պայմանաւ և ուխտիւ հարկ ու օրէնք մը դրուի վանքին Միաբանութեանը վերայ այսպէս. Նախ և յառաջ իրենց մէջէն կուսակցութիւնը և անհամաձայնութիւնը վերնալու ու բարեկարգութեան մէջ մտնելու համար, պէտք է որ այսուհետև Միաբան ընդունելու անձինքներն բարի վարք ունեցող և քաղաքակիրթ ու հասակաւ ալ 20 տարին լրացուցած ըլլան։ Եւ ջրլոյ թէ՝ անցեալ և ներկայ Միաբանից շատերուն նման, ոմանք սափրիչութենէ, ոմանք բեռնակրութենէ, ոմանք բաղնեպանութենէ, ոմանք այվաղութենէ, և ոմանք ալ՝ այլ և այլ արհեստներէ փախչելով՝ միանգամայն բարոյականին խանգարուած ու տգէտ ալ ըլլալով՝ Միաբան ընդունուին... և եթէ ընդունուելու ալ հարկը ստիպէ, գոնէ վարքով բարի ու քիչ մըն ալ վարժութիւն առած ըլլան այնպիսիները...։ Եւ ոչ թէ վերոյիշեալներէն զատ՝ կոյսի, ժլատ, շողոքորթ, ծոյլ, տգէտ, լրտես, բանսարկու, և այլն անձինքները ընդունուի... որն որ ըստ մեծի մասին բոլոր վանօրէից խանգարմանը և Աղգիս յառաջադիմութեանը արգելք եղող գլխաւոր պատճառները ասոնք են... և յաւալին սին է, որ այսպիսի անձանցմէն օգուտ կ'ըսպասէ Աղգը... և իրեն թէ բարոյապէս և թէ նիւթապէս կառավարութիւնն ալ անանց ձեռքը

տուած է . . . ինչպէս բնականաբար տալու-
ալ պարտաւոր է . . . բայց որի՞ . . . եթէ ա-
սոնց նմանները ձեռքը պիտի ըլլայ նէ , ահա
այսօր արդիւնքնին կը տեսնուի կոր . . . արդ՝
դիրէ՛ ի գլոց ոչ՞ խաղաղ. կամ՝ ի պոպոսի՞ ռ-ղ. . . .

Երկրորդ . Ա. յլև ջըլայ թէ՝ այժմեան պէս
մէկ մէկ եպիսկոպոսի ու Պատրիարքի ծառա-
յելով՝ ու անոնցմէ վարժուելիւն առնելով
. . . ոմանք Պօղոսեան , ոմանք Կիրակոսեան ,
ոմանք Մարկոսեան , ոմանք Դաւիթեան . ո-
մանք Յովհաննէսեան , և ոմանք ալ Գէորգ-
եան ՝ՀՀըլան . . . որով և տարաձայնութիւն
յարուցանելով՝ յարաժամ մէկզմէկու հեա
ընդ ակամբ ՀՀայեին՝ ու անհամաձայն չի գըտ-
նուին՝ պէտք ըլլալու գործերուն ու ամէն ա-
ռիթներուն մէջ . . . հետեւաբար այժմեան
պէս՝ կամ չի ցրուին , կամ լաւ և իր ենց ի-
բաւունքը ու վարկուն մը , նաև պատիւնին կոր-
սընցնելով Ազգին գոյ-
թակցութիւն չտան . . . Եւ քանզի յատ-
կապէս Ս . Երուսաղէմայ Ազգին բոլոր
խանգարման և վնասներուն պատճառը՝ խսկը-
բանէ և այսր՝ ԱՅՍ ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷՆ ՅԱՌԱՋ
ԵԿԱԾ Է . . . վասնորոյ այս աւաղելի վիճակը
և ընթացքը անհետ ընելու համար , ՊԷՏՔ Է ՈՐ
ԱՄԵՆՔԻ ՄԻՕՐԻՆԱԿ ԿԹՈՒԹԻՒՆ ԱՌՆԵՆ . որով և
ամէնքն ալ Ռէ՛ փէրոզ ու Ռէ՛ գաղափարի . և Ռէ՛ Ա-
ռոռի ծառայեն , ու պիրով Մի-բանին : Եւ ասոնք

ընելու համար ալ՝ օրինաւոր Յառանգաւո-
բաց դպրոց մը պէտք է ունենայ Աթոռը՝ (հետ
զհետէ առնուելով) ընդ ամենը 80 ուսանող
աշակերտներէ բաղկացեալ, Աստուածաբա-
նական և Փիլիսոփայական և ամեն գիտու-
թիւնները ունենալով իր մէջը. և Հայկաբա-
նութեանէն զատ՝ պէտք է որ Աբաբերէն՝ Յու-
նարէն՝ Լատիներէն և Դաղղիերէն լեզուներ-
ըն ալ՝ հանդերձ խօսակցութիւններովը ու-
սանին աշակերտք։ Միանգամայն Աթոռոյն և
Աղգիս պէտք ըլլալու իրաւասութիւնները
սորվելէն զկնի ձեռնադրութիւն առնեն, որ
գո՛նէ Աղգիս ալ պիտանացու անձինք ըլլան..
ու ամենքն ալ հասարակաց ըլլան, ու հասա-
րակաց օգտին՝ այսինքն՝ Աղգին ծառայեն
միանգամայն իրենց ուխտին և պաշտամանցը
վերայ հաստատ կենալով.... Իւ ամենքն
ալ՝ իրենցմէ առաջին ու պատուաւոր Միա-
բանութեանը, թէ եպիսկոպոս ըլլայ և թէ
ծերունի Անդամ, ամենուն ալ միօրինակ ծա-
ռայութիւն ընեն. և իւրաքանչիւրոց պատ-
ուոյն համեմատ պատուեն և յարգեն զանոնք.
բայց միանգամայն յիշեալ պատուաւոր Ան-
դամք ալ՝ գիտնալու են՝ թէ իրենց յատուկ
Աշակերտին ու պաշտօնեայնին չեն, այլ Ա-
թոռին և Աղգիս. նմանապէս և Աշակերտք
ալ գիտնալու և այնպէս ճանաչելու են զիրենք,
թէ յատկապէս այն պատուաւոր ծերունի

Միաբանից՝ իբր ծառայ և Աշակերտ չէն, այլ Աթոռին և Աղգիս են. և ամէնքն ըստ կարգի Եղբայր և պաշտօնակից են Քրիստոսի։ Եւ եթէ խնդրէն այնպիսի ծերունի ու պատուաւոր Անդամները, կարող են հասարակ անձանցմէն իրենց ապատաւոր ունենալ, միանգամայն Աթոռին աշխատելու պայմանաւ։ Եւ ահա այս հիմնական սկզբունքը չ'ըլլալէն եռքը՝ անհնար է. որ Աղգը հոն բարեկարգութիւն մտցնէ, ու անկից շահ և օգուտ մը քաղէ . . . . .։

Երրորդ. Այս հիմնական սկզբան հաստատութիւնը, որ է ըսել կատարումը, պէտք է որ մինչև վեց տարուան մէջը կատարուի. և միշտ Աթոռը՝ 10ը եպիսկոպոս, 60 վարդապետ, 10 Աբեղ սարկաւագ, 10 Կիսասարկաւագ, և 40 կամ՝ 50 Դպիր ունենայ. ըսել է որ՝ 130 ի չափ Միաբան միշտ պէտք է որ գտնուի. նմանապէս 70 կամ՝ 80 ի չափ ալ՝ մառանապետ՝ ապատաւոր՝ մատակարար՝ խոհարար, և այլն գործակատար ստորին կարգի Եղբայրներ պէտք է որ ունենայ Աթոռը, (բայց 'ի դասատու վարժապետներէն). ըսել կ'ըլլայ որ՝ թէ ներքին և թէ արտաքին, թէ վերին և թէ ստորին, ընդ ամենը 200 ուխտեալ Միաբան և Եղբայր պիտի ունենայ. որով Աթոռն ալ՝ իրեն իրաւանցը տէր ըլլալով՝ միշտ բարեկարգութեան մէջ մնայ, ու Տնօ-

բինական Սրբազան վայրերն ալ՝ ըստ օրինի պահպանուելն ու պաշտամանց մէջ ալ պակասութիւն մը չ'ըլլայ. և միանգամայն կարողալ ըլլան՝ վերոյիշեալ ուսումնքները սորվելու և Ազգին օգտին համար օրինաւոր ծառայութիւն ընելու։ Իւ այս սկզբան հետ 'ի միասին՝ Աթոռէն դուրս քաղաքացի ժողովրդոց՝ օրինաւոր և հաստատուն կերպիւ նախակրթական դպրոց մը պէտք է որ բացուի, հանդերձ Սրաբերենիս. ու անոնց մէջէն երկու հատ արժանաւոր անձինք ալ Քահանայ ձեռնադրուելու է, որ ժողովրդոց հոգեւոր պարտաւորութիւնները ըստ օրինի կատարուին..։ Իւ ասոնք հաստատուելէն ետքը՝ պէտք է որ Ազգին աւելի ծառայութիւն մը ընելու համար Մշաբանք, Լաֆայու մէջ գիշերօթիկ՝ քանի մը լեզուով ուսումնարան մը բանան, իրենց իրաւասութեան ներքեւը, միանգամայն հոն տեղի վանքին կալուածը ու արդիւնքը՝ յիշեալ ուսումնարանին կապելով։ Իւ այս ուսումնարանն ալ՝ սկս.... եթէ կարելի է յիշեալ Ազգարակը ձեռք բերելով՝ անոր մէջը բացուի.... և անոր մէջը հիմակու հիմայ 150 նիւ չափ ուսանող աշակերտ ընդունի, ուրոնք արդէն նախակրթական վարժութիւնը առած ըլլան. և ասոնց 50 ը թոշակաւոր՝ և 100 ն ալ՝ այլ և այլ քաղաքներէն աղքատիկ տղոցմէն առնուելու պայմանաւ. և թոշա-

կաւորը՝ տարին չորս հազար ղուռուշ վճարէ. և անթոշակն ալ՝ եթէ ուսմունքը սորվելով ելնէ նէ ուսումնարանէն, Ս. Թոռին և Ս. Դիս ծառայութիւն մը ընելու, մանաւանդ թէ՝ իր պարտքը հատուցանելու համար, կամ տարի մը ձրիապէս ծառայութիւն ընէ՝ Ս. Թոռին հրամանաւը և արտօնութեամբը բացուած դպրոցներուն, և կամ թէ՝ ուխտադիր ըլլայ՝ գոնէ երեք տարի չափաւոր վարձքով մը Ասիայու մէջ Հայաստանի մանկանց կրթութիւն և ուսմունք սորվեցնելու։

Հորդորդ. Ս. Յս օրուան օրս՝ Ս. Երուսաղէմայ վանքին վայելած բարիքը՝ և ունեցած ժառանգութիւնները՝ հարստութիւնները ու հնութիւնները, համարեա թէ Կիլիկիոյ Թագաւորութեան և անոր ժողովրդոց արեամբը և աբչեամբը կրկին և կրկին վաստակուած, ու անոնց ձեռքը վերստին շինութեամբ պայծառացած, և անոնցմէ մնացած յիշատակներն ու հնութիւններն և բարիքներն են՝ որ կը վայելէ կոր Միաբանութիւնը ընդ նմին և Ս. Դը . . . ուրեմն ինչպէս որ Ս. Նոր Նախնիքը ու ծը նողքը շատ ժամանակ՝ և շատ առթի ու պարագայներու մէջ՝ Ս. Թոռին նեղութեանը ու վտանգաւոր ժամանակներուն օգնութեան հասեր է նէ՝ (և դե՛ռ մեր ժամանակներն ալ.) նոյնպէս և Միաբանք ալ պարտաւոր են Ս. Նոնց տառապեալ ու վտանգաւոր և անխնամ զա-

ուսակացը օգնել. (ինչպէս ըսինք, քանի որ աշնոնց Ալեքսանդրացը բարութիւնները կը վայելէն կոր նէ). միանգամայն նոյն վիճակին Կաթուղիկոսական իրաւանց և արդեանցը ձեռնամուխ չ'ըլլալով։ Ուստի ամենէն աւելի պարտաւոր են Պիտանք Երուսաղէմի, Կիլիկիոյ Տանը մէջ, ու անոր սահմանները՝ (իրենց իրաւասութեան սակը ըլլալու պայմանաւ) գիշերօթիկ ուսումնարաններ ու դպրոցներ բանալ՝ և օգնութեան հասնիլ՝ այն խղճալի և ողորմելի տառապեալ ու անօգնական Հոգ բայրներնուս, որպէս զի 'ի խաւարէ 'ի լոյս ելնեն՝ գիտութիւն սորվելով, որ մեացածներն ալ բոլորովին չի կորնչին . . . ։

Հոս այս ուսումնարանները, պէտք է որ, նախ՝ Կիլիկիոյ, երկրորդ՝ Ատանայի, և երրորդ՝ Կիպրոսի մէջ բացուին։ Ադանին մէջ՝ Սրճեական ըլլալու. Հրկրորդ ին մէջ՝ Հրկրագործութեան վարժութիւն առնելու. և Հրրորդին մէջ ալ Վաճառականութեան վերաբերեալ ուսմունքներ սորվելու պայմանաւ. և միանգամայն ամենուն մէջն ալ՝ Աշխարհագրութիւն և Աշխարհի պատմութիւն ու Հայերէնի գիտութիւն, նաև պէտք ըլլալու գիտութիւններէն ու լեզուներէն մէկ կամ երկու տեսակ գտնուելու են. բայց առջինին մէջ Կրօնագիտութիւն և Հիւղեցական պատմութիւն ալ պէտք է որ ըլլայ։

Եմանապէս Օէյթունի, Հաճընի, Մարաշի, և եթէ կարելի է Թիւրքիստանու (43) մէջ ալ՝ մանաւոր դպրոցներ պէտք է որ բացուին, և անոնց կառավարութիւնն ալ՝ նոյնպէս Երուսաղէմի Աթոռոյն իրաւասութեանը տակը ըլլալու պայմանաւ։ Ասոնցմէ 'ի զատ՝ երեք ալ Տպարան պէտք է որ ունենայ Աթոռը. նախ Երուսաղէմի, երկրորդ Կիլիկիոյ, և երրորդ Կիպրոսի մէջ. որոնցմով յայնժամ՝ ոչ միայն Երուսաղէմ կը փառաւորի ու յառաջադիմութեան մէջ կը մնայ, այլ և Ազգն ալ։ • • • Ամէն, եթէ ասոնք ըլլալու որ ըլլայ, անշուշտ բովանդակ Ազգիս համարումը ու սէրը իրեն գրաւելով Աթոռը, և միանգամայն

(43) Այս վիճակին մէջ եթէ Ազգը ընկերութեամբ գրաբատուններէն ելնող ազգատիպ ուսեալ երիտասարդաց ձեռնասութիւն ընելով դպրոցներ բանայ՝ աւելի աղէկ կը լինի երկու կողմէն ալ. այսինքն՝ թէ Ազգը յառաջադիմութեամբ կը փառաւորի, և թէ յիշեալ անձինք ալ Ազգին օրինաւոր ծառայութիւն մը ընելէն 'ի զատ՝ իրենք ալ անգործ չեն պարարեր, ու մանաւորապէս կ'ապրին ալ. որով յայնժամ Երուսաղէմայ Միաբանութեան վրայ ալ բան չըլլալով՝ (եթէ պիտի ըլլայ և յաղողի պիտի նե բաժնիս) անոնց օգնութիւնը չկարօտիր։ Բայց եթէ անկարելի լինի այս առաջարկութիւնները, ուրեմն կ'ըսեմ՝ թէ Տարոնոյ վանքին Միաբանութեանց հարկ դնեն՝ որ անոնք գործադիր ըլլան այս ամենակարեւոր գործոյն, քանզի աւելի անոնց անկ է, քան թէ Երուսաղէմայ Աթոռոյն և Գալոյս Ազգային Վարչութեանը։ Եւ եթէ անոր Առաջնորդ Տիգրանակերտցի Մկրտիչ վարդապետին վրայ գրած են յայտնենին նէ, ահա կանխաւ կ'ըսեմ, թէ Ընկերց խեր չկայ՛։ • • • Եւ ասոր համառօտ Սշխարհագրութիւնը, տես Յաւելուած Ե։

կ՚արձեմ թէ՝ բաւական նպաստ և օգնութիւն
ալ կ՚ելլայ Աթոռին, ու ըրած ծախքերուն
ամենքը չելլայ ալ նէ՝ բաւական եկամուտ մը
ալ կրնայ ձեռք բերել, թէ Տպարաններէն և
թէ Աղգիս նպաստներէն. մանաւանդ թէ՝ վե-
րոյիշեալ ստացուածքներն ալ եթէ ձեռք բեր-
ուի, անոնք ալ բաւական և բաւականէն ա-
ւելի արդիւնք կրնան բերել. ինչպէս կը կար-
ծեմք . . . : Թող նաև եթէ ասոնք կատար-
ուին, կամ կատարելու ջանք ըլլային, ամեն
Աղգայինք սիրով ու ընծայներով՝ ոչ թէ միայն
Ս. Աթոռոյն պիտի դիմեն՝ ու Անոր ցաւին
ցաւակից ըլլալով չորս ձեռքով պիտի բռնե-
նեն, այլ և կը յուսամք ալ՝ որ Միաբանու-
թեան յառաջադիմութիւնը և գովելի գործ-
քերը ու այս Աղգօգուտ ձեռնարկութիւն-
ները տեսանելով՝ որով և յայնժամ վստահու-
թիւններն ալ աւելնալով, կը հաւատամ, որ
ամեն առթի մէջ օգնութեան հասանելէն ետ-
քը, անշուշտ մեծամեծ կտակներ ալ պիտի ը-
նեն, եթէ Ճշմարիտ Հայ, և Ճշմարիտ Քրիս-
տոնեայ, նաև Ճշմարիտ Աղգասէր կան Աղգիս
մէջ . . . : Այլ՝ ՄԱՐԴ Է, ՈՐ ԳՈՐԾԷ ԶԵՐԿԻՐ
. . . : Այս որում ասոնք ընելու համար ոչ
թէ միայն գործադիր ըլլալու ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
ՄԱՐԴ ՊԷՏՔ Է՝ . . . այլ և առաւել ևս գոր-
ծադրելու ալ ԱՆՇԱՀԱՍԷՐ ՄԱՐԴ ՊԷ՞ՏՔ Է՝ :

Լերեմն ՚ի սէր Աստուծոյ, տարաձայնու-

թիւնը և կուսակցութիւնը բառնալով՝ սիրով և միաբանութեամբ ահա ասենք առաջարկենք Միաբանութեան, և ասենց վերայ ուխտ և երդում ընել տանք, (միանգամայն մենք ալ ուխտ և երդում ընենք, ամեն պարագաներու մէջ անենց օգնելու, և ասենք ընել տալու, չըլլայ թէ այսօրուան ըսածնիս վաղուան օրը կամ ուրանամք, և կամ անհոգ կենալով երեսի վերայ ձգենք . . . և կամ թէ՝ սկզբնաւորութիւնը տեսնելուս պէս՝ ամեն բանը եղած ու կատարած համարենք . . . և եսքը կուսակցութիւն յարուցանելով կործանեմք . . . (ինչպէս որ մեր սովորութիւնն է . . . .) և եթէ նոքով մին ալ դնել հարկ է՝ ասենց հակառակ վարուողներուն, և ասենք չընդունողներուն, և ասենց գործադիր չըլլողներուն համար՝ նոքվքներ և անաթեմաներ կարդամք . . . : Լուրեմն ասենք ըլլայ Ծէր աստուածաբիր-ին, ինդիրը, հոլէ-ը, և գանձ գտնելը . . . : Այս ալ անանկ սատանիկ պայմանի և հարկի մը տակ դրուի, որպէս զի վերատին տգէտ և նախապաշարեալ ու շահասէր և անձնասէր անապարձ անձինք խօսք տալով և Աստուածը խաբելով և կամ այնպիսի անձանց իշխանութիւն ու պատրիարքութիւն տալով՝ չխաբուի վերատին Աստուածը. որով և Աթոռին մնացած իրաւունքներն ու արդիւնքներն և հարստութիւններն ալ բոլորովին չի կորսուին . . . : Եւ թէ կղերաց գա

սէն պատրաստի և օրինաւոր կամ ասոնց գործադրութիւնը յանձն առնող անձինք չ'կրնան գտնուիլ նէ՝ աշխարհական անձանցմէն օրինաւոր ու բանիբուն՝ պատկառելի և ուսումնասէր ու հայրենասէր անձին մէկը ընտրելով՝ և զանի Պատրիարքը ձեռնադրել տալով՝ անոր յանձնուի այս ամենափափուկ և միանգամայն ամենակարեւոր պաշտօնը. որպէս զի գործը կարգին մտնելով՝ յառաջադիմութիւն ստանայ Ազգը . . . :

Ուստի պէտք է որ բոլոր Միաբանութեանը առաջարկուի ասոնք, և եթէ ընդունուի Միաբանութենէն, պէտք է որ ստորագրութիւն առնեն իրենց ձեռքէն՝ հանդերձ երդմամբ և ուխտիւ : Իւ այս դաշնագրութիւնները և պայմանները հաստատուելէն ետքը, պէտք է որ՝ Ազգային Վարչութեան կողմէն տարուէ տարի Այցելութեան երթալով՝ հաշիւ և արդիւնք պահանջեն անոնցմէ բարոյապէս. և Միաբանութեան տալիք հաշիւնին ալ՝ ինչպէս ըսինք՝ ահա ասոնք պէտք է որ ըլլան . . . որմէ Ազգն ալ խրախուսելով՝ անոնց վերայ այսուհետև վստահութիւններին աւելցնէ՝ ու ա նոնց ցաւին ալ ցաւակից ըլլայ յարաժամ : Նաև առ այժմ անանկ պայման մըն ալ դրուի, որ եթէ մինչեւ հինգ, կամ վեց տարիէն ասոնց բոլորին ալ գործադրութիւնը և կատարումը չ'տեսնէ նէ Ազգը՝ (գոնէ իր վիճա

կին մէջը բացուելիք ուսումնարաններուն ու դպրոցներուն,) յայնժամ կարող և մանաւանդ պարտաւոր ըլլայ Ազգն ալ իրեն արտօնութիւնները անոնց ձեռքէն առնելու, կամ ուրիշներուն յանձնելու, և կամ ինքը Ազգային Արչութիւնը տիրապետելով՝ բոլոր մը-տից և ելից և սոսացուածոց Արչութիւնը՝ իւր ձեռքն առնելու և ինքը տնօրինելու։ Բայց եթէ ընդունին ու չընդունին Միաբանք՝ այս Ազգօգուտ առաջարկութիւնները և պայմանագրութիւնները, պէտք է որ՝ նախազգուշութիւն ընելով Ազգը, իր կողմէն Տեսուչներ դնէ յառաջուց. առանց նեղբին իրաւասութեանը խառնուելու, ինչպէս յիշեցինք. որոնցմով վստահութիւն և հաւատարմութիւն ըլլայ . . . ։

Ի վերջ բանիցս, եթէ այս դաշնադրութիւնները չընդունին Միաբանք Ս. Յրուսաղէմի, ուրեմն Ազգն ալ անոնց վրայէն համարումը ու վստահութիւնը ալ վերցնելով, թող ուրիշներուն յանձնէ ասոնց կարգադրութեան պաշտօնը, միանգամայն և վանքին կառավարութիւնը . . . ։ Յետ կրնան ալ գտնուիլ այնպիսի ուխտադիր անձինք, որ Թուրքին այժմեան ունեցած արդիւնքովը՝ կարող են այս առաջարկութիւնները ընդունելով՝ ըստ ամենայնի գոհացուցիչ կերպիւ կատարել . . . . բայց ինչպէս ըսինք, եթէ Միաբանութիւնը

ջնդունի և գործադրութիւնը յանձն չառնելով չ՚ասորագրէ՝ այս հիմնական սկզբունքները և Աստուծոյ դաշնադրութիւնները . . . :

Եւ այս ալ կ՚ըսեմք, և միանգամայն կը վկայեմք թէ՝ յիրաւի թէպէտ և Աստուծոյն այժմեան Պարշութեան նպատակին մէջ չկայ, թէ Շրուսաղէմայ Թոռին վերայ տիրապետելով՝ բոլորովին անոր ունեցածը կամ իրենց սեպհականեն, և կամ անցեալ ժամանակներուն պէս, ներկայիս ալ անոր ունեցածը ընդունայն տեղը վատնեն՝ ինչպէս կարծեն ումանք. բայց սակայն անգամմը փորձը առած ըլլալուն համար՝ Աստը կասկածանաց և անհաւատարմութեան տեղի կուտայ : Երբեմն տեղի չի տալու համար որ և իցէ տարաձայնութեանց և կասկածանաց, (ինչպէս ըսինք) փոխանակ հաշիւ պահանջելուն՝ այս Աստուծոյ տնօրէնութիւնը ընենք Աստուծոյն Պարշութիւնը, աւելի ևս շահաւոր կ՚ըլլայ Աստուծոյն, քան թէ Անոր ունեցածը հասկանալով իր կառավարութեան ներքեւը մնանք Թոռը, և կամ թէ տարաձայն եղանակաւ ու բռնութեամբ հաշիւ պահանջէ . . . :

Եւ քանզի քանի որ՝ թէ Աստուծոյն Պարշութեան, և թէ Շրուսաղէմայ Փիսքանութեան նպատակին մէջ Թոռին ունեցած արդիւնքը՝ ըստ առաջնոյն պարապ տեղը վատնելու դիտաւորութիւն չըլլալով՝ Աստուծոյ գործե.

բուն համար ծառայեցնել կամ այժմ, ինչպէս կ'իմանամք. ուրեմն վերսին կ'ասեմք, թէ՝ այս կերպը բառնուի նէ՝ աւելի շահաւոր կրնայ ըլլալ Աղգիս, քան թէ հաշիւ պահանջելն, ու Անոր գաղտնիքը հրատարակելն ... որով Աղգին ու Միաբանութեանն ալ համարումը և միանգամայն վստահութիւնն ալ գրաւած կ'ըլլայ իրեն՝ Աղգային Պարչութիւնը, ու բոլոր տարաձայնութիւններն ալ կը վերջանայ Աղգիս մէջէն ...։

Հապա, ինչպէս ըսինք, սասր վրայօք խորհինք, և սասնոյ վերայ կայանք տանք, և ալ եթէ Աղգը յառաջանալ, նաև Աղգասիրութիւն, ու Առաքինութիւն գործել կ'ուզէն, թէ՝ Միաբանք Հրաւաղէմի, և թէ Աղգային Հոգեւոր և Մարմնաւոր կրկին կառավարութեան վերայ անցնող Յողովական Ընծինք, սասնոյ գործադրութեանը հոգ տանին 'ի փառս Աստուծոյ ...։

Իւ ահա՛ սասր պէս ալ՝ միւս երեւելի վանքերուն. այսինքն՝ Տարօնոյ, Խլթամարայ, Ընտրատաց, Կեսարիոյ, Բմաշու և այլ վանորէից ալ՝ եթէ այս կերպ օրէնք և հարկ մը դրուի, որով կարծեմք թէ աւելի շահաւոր կ'ելնէ Աղգը, քան թէ վանորէից Տեսչութիւն հաստատէ՝ ու անոնցմէ հաշիւ պահանջէ տարաձայնութեամբ ...։ Պան զի ինչ

որ Աստուածաշունչն վերայօք զուրցեցինք նէ՝ անկից առաւել քան զառաւել է՝ անոնց կրած վնասներն՝ հարստահարութիւններն և յափշտակութիւններն՝ յերեսաց ազգի, ծոյլ, շահասէր ու ազգասէաց անձինքներէն. թող նաև եթէ երբեմն բարեկարգելու ջանադիր ըլլաղ անձինք ալ գտնուելու որ ըլլան, յերեսաց նեռքին և արտաքին թշնամանեաց ասպատակութենէն և բարբարոսութենէն . . . չէ՞ն կարող յառաջադիմութեան մէջ մտցնել . . . Ուստի հաշիւ փնտռելու ելլեմք նէ՝ արդիւնք մը չունենալէն 'ի զատ, այլ և չարաչար կուսակցութեանց և տարաձայնութեանց տեղի կուտամք . . . քանզի քանի՛ որ Ազգը ազգութեան մէջ է. քանի՛ որ յիշեալ վանքերուն արդիւնքները ու կալուածները անիրաւաբար վայելող շահասէր և ազգասէր Միաբաններուն ձեռքն է. և քանի՛ որ անոնց կուսակցից և անիրաւութեանց պաշտպան եղող՝ ազգասէաց շահասէր ու բռնաւոր իշխաններ՝ կամ լափլիզող անձնասէրներ կան նէ, ... անկարելի է կարգի և կանոնի մտցնել զանոնք. և բարոյապէս պտուղ պահանջել անոնցմէ։ Ուրեմն ինչպէս ըսինք, այս ընթացքը եթէ բռնուի, շատ աղէկ կ'ըլլայ. որով յիշեալ վանօրէից վիճակներն ալ՝ բարեկարգութեան ու լուսաւորութեան և յառաջադիմութեան մէջ կը մտնէ. եթէ իւրաքանչիւր Ազգն

արդեանցը համեմատ սահմաններ որոշուին՝ և ըստ այնմ հարկ և օրէնք դրուին։ Եւ այս տնօրէնութիւնները կարծեմք թէ՝ գէշ չըլար. բայց միայն թէ՝ հաւասարիմ Ազգեալ և Ինձիչ պէտք է Ազգային Վարչութեան կողմէն, որ լրտեսաբար անոնց կարողութիւնը հասկանալով՝ ըստ այնմ հարկ դնեն՝ ոչքան և քանի դպրոց բանալ պէտք է խրատանչիւր վիճակաց։

Եւ այս տնօրէնութիւնն ալ՝ հարկաւ պէտք է որ ընէ Ազգային Վարչութիւնը. թէ և խրատ քանչիւր վանօրայք և Ուսէնորդք յանձնառու ըլլան ու չըլլան. յայտնի է որ Ազգային նորոգ հաստատուած Ահմանադրութեան համեմատ, անոնց վերայ Ինձիչ կամ Ազգեալ անձինք պիտի յատկացնէ, որոնցմէ և պիտի տեղեկանայ, թէ՝ ինչ արդիւնք և ինչ ցաւ ունին վանքերը . . . ։

Ուստի այս ընթացքը հաստատ բռնուելու համար, ժամանակ ժամանակ և գոնէ տարին անգամ մը Ինձիչ և Ազգեալ անձինք թէ որ խրկուին՝ յայնժամ գոնէ վարժապետութեան պէտք ըլլալու տեղուանք ալ գտնուին՝ այնքան ուսեալ երիտասարդներ կան սարսակ կեցող, որոնց բարի վարք ունեցողներուն մասնաւոր վարձք կամ ամսական ալ տրուելով կրնայ ու ղարկուիլ, միանգամայն հաստատուն պայման և հաւասարմութիւն պէտք է որ

ցուցուի՝ որ անոնք ալ հաւատարմութիւն ընելով փափաքին երթալու . . . : Բայց եթէ այս օրինաւոր և արդարացի և միանգամայն Աղգօգուտ առաջարկութիւնները չընդունին նէ յիշեալ վիճակներն ու վանքերը . յայնժամ կամ բուռն զօրութեամբ հաշիւ պահանջելու է , և կամ վանքերը ձեռքերնուն առնելու և ուրիշ օրինաւոր անձանց յանձնելու՝ ու բոլորովին վանօրէից Տեսչութիւնը իւր ձեռքն առնելու է Աղգային կառավարութիւնը . . . : Այսու ամենայնիւ եթէ ասոնք ալ անկարելի ըլլան , կ'ըսեմք , թէ՝ այնու հետեւ բոլորովին երեսէ ձգելու և անոնց օգտին աշխատելու չէ , և իբր կործանիչ Աղգին համարելու է . . . զի լաւ է , որ Աղգին անօգուտ , Աղգին նախատինք , և Աղգին ցաւ պատճառող , նաև Աղգին վնաս հասցնող վանքեր ու վանականներ չունենայ Աղգը՝ ու գոյուի բոլորովին , քան թէ բաց մնալով՝ անոնցմէ թէ բարոյապէս և թէ նիւթապէս օգուտ ու բարիք մը չի վայելէ . . . :

Եւ ահա՛ մեր դիտողութիւնները այս մասին , եթէ Աղգային Կարգութիւնը բարեհաճի մեր այս դիտողութիւնները , կ'աղաչեմք Աղգովին , որ ժամանակ չանցուցանելով՝ ասոնց գործադրութեանը հոգ տանի 'ի սէր Աղգին , և 'ի սէր Սուրբ և Լուսաւորչաւանդ Հաւատոյն Սերոյ :

ՈՀ. Նաբոլէոն, Նաբոլէոն . . . որ կոտոռ բէիր զսուտ Մարգարէս Հռովմայ, և քարկոծ առնէիր զԽաբեբայ Վանական Նորին . . . Զրդ՝ քանիցս անգամ պարտ էր, որ Հայեցուածեամբ Հայ եկանելով Խստուած ի վերայ Ազգիս՝ յարուցանէր մինն յորդւոց Հայկայ, որ Բէզ նման բարեկարգէր զվիճակ Ազգիս և զվանօրայս Հայաստանու . . . : Զրդ՝մի թէ յայսմ դարուս և յառուկ ի վերայ Ազգիս մարգարէացաւ Նայի, որ ասէ. "Հաւասիկ Տէր Տէր զօրութեանց բարձցէ ի Երեսատանէ և Յերուսաղէմէ (իմն և ի Հայաստանէ) . . . զԻատաւոր և զՄարգարէ և զգ Բնիչ և զՕրեր . . . և զքանչելի խորհրդական և զիմաստուն ճարտարապետ և զանճարեղ զուսնկնդիր : Նա կացուցից (ասէ) ի վերայ նոցա մանկունս և խաբեբայք տիրեսցեն նոցա . . . . . " : Զհ. դիր զցաւս ի վերայ ցաւոց՝ Ամ Մուսայդ Խորենեան . . . լաց, գոչէ, պաղատէ, և ուղածիդ չափ ալ՝ սղբեր շարելով գրէ. եթէ գրելով կը լինայ՝ ու լալով կրնայս հասկցուներնէ քու սրտիդ ցաւը հասկցուր . . . բայց լաւ է՝ որ յայտնես զգացած ցաւդ, քան թէ սիրտդ մնալով չառաւելենայ՝ և անբուժելի մնալով կորուստ պատճառէ . . . : Զ որ օրինակ. առած է որ կ'ըսեն, թէ՝ մարդուն մէկը ժամանակաւ՝ անդադար շատ սաստիկ կուլայ եղեր, և մարդուն մէկն

ալ վրայ գալով ըսեր է, թէ՝ աշխարհիս մէջ ամէն մարդ ցաւ ունի կերպ կերպ, բայց քեզ նման յուսահատաբար չի լար. արդ՝ ի՞նչ է ցաւդ՝ որ այդքան կը տառապիս կոծելով... Դարձեր ըսեր է լալկանը. եղբայր՝ եթէ ցաւս մէկ երկու կողմէն ըլլար՝ չէի յուսահատաբար այդքան լար. և եթէ դուրսէն թշնամի վրաս գալով զիս տառապեցուցաներ, վերստին այն-քան չէի՞ կոծ դներ. բայց իմին ցաւս՝ ոչ թէ միայն ասոնք են, այլ իմ առաւել տառապանքս ու կոծ դնելս՝ իմ ընտանեացս կողմէն է. և քանզի ոտքիս մինչև ցգլուխս առողջ տեղ մը չունենալիս եռքը, այլ և գոնէ Աստուծոյ համար մխիթարող բարեկամ մը և օգնական մին ալ չունիմ, որ կամ ցաւիս դարման մը ընէ, և կամ գէթ մխիթարական օգնութիւն-ներ ու ձեռնտուութիւններ ընելով՝ զիս մը խիթարէ... և ասոնք չըլլալէն եռքն ալ՝ ախ, որսուն դուռը որ զարկի նէ՝ ինձ օգնութիւն մը ընող՝ ու դուռ բացող մը չեղա՞... և ցաւիս դարման տանելու համար՝ որի որ հաւատարմութեամբ ծառայեցի՞նէ՝ մեծամեծ խոստմունքներ ընելով զիս խաբեց՝ ու բնա՞ օգնութիւն մը չըրա՞... և ընդ հակառակն որի՞ որ բարութիւն ըրի՞նէ՝ անկից փոխարինաբար չարութիւն ու գէշութիւն տեսայ... նաեւ ինձ օգնութեան հասնելու համար որսա՞ վերայ որ յոյսս դրեր էի՞նէ՝ անկից ևս առաւել

ՀԱՍՈՒԵՑԻ . . . : Ուստի գեշու�թենէ ՝ի գեշութիւն , թշուառութենէ ՝ի թշուառութիւն գլորելով՝ այսպէս ողորմելի և անօգնական մնացի . և աւելի ցաւալին է , որ հիմայ ինձ միսիթարելու օրինաւոր զաւակունք ալ չունիմ՝ որ զիս միսիթարէ՝ և կամ անանց վրայ նայելով փոքր ինչ միսիթարուիմ . . . վասն զի ես որ տանը մէջ իբր թէ մեծ պիտի ըլլամ . ես այս տառապանաց և աղէտից մէջը եղած ժամանակս՝ ընտանիքս և որդիքս ու բարեկամներս ի՞նչ վիճակի մէջ կ՚ըլլան նէ՞ գընայ մտածէ . . . յայտնի է՝ որ անանք ևս աւարաւել հիւանդութեան ու տառապանաց մէջ կը տագնապին , ինչպէս որ եղան ալ . . . . ուրով և մէկմէկու չ՚կրնար հասնելով՝ մանաւանդ թէ՝ այս գեշութիւններուն ալ միշտ ենթակայ ըլլալնուն համար , անհամաձայն և տարաձայն եղան . . . . քանզի ոչ թէ միայն օրինաւոր մեծ մը չունին իրենց մէջը՝ կամ իրենց վրանին , այլ և այս գեշութիւնները քանի՞ որ վրաս եկաւ նէ՝ որոնցմէ ոմանք յաւասահատաբար մեռան . . . ոմանք թշնամեաց ու դահճաց ձեռքը մատնուեցան ու մաշեցան . . . . ոմանք իրենց հաց գտնելու համար՝ օտարաց դուռը մաշեցան ու անյայտ եղան . . . և մնացած փոքրիկ մասին մեծագոյն մասն ալ անօթի ծարաւ մնալով՝ որմէ և ցրուելով՝ և հետեւաբար մէկ մէկ մեծամեծներ յափշտա-

կելով՝ իրենց գերի ու ծառայ լրիվն . . . վա-
սին ոչոյ ամեն մէկը որի որ ծառայեցնէ՝ մէկ
մէկ այլ և այլ գաղափարի տէր ըլլալով՝ միանա-
գամայն և ոգէտ ալ մնալով՝ այսօր մէկզմէկ
թշնամաբար կ'անարգէն կոր . . . և ես ալ
այն զօրութիւնը չունիմ որ անոնք մէկ տեղ մը
հաւաքեմ և ըստ առաջնոյն կառավարեմ . . .
ուստի անոնք մէկ կողմէն կը տառապին , ես
ալ մէկ կողմէն կը տագնապիմ . որով ոչ զանոնք
ինձի կրնան օգնել , և ոչ ես անոնց . . . և ա-
հա՛ ասոնք տեսնելոս աւելի և ես ցաւս կը
սաստկանայ կոր ամեն օր . . . և որովհետև
մէկ կողմէն յոյս մը և բարութիւն մը չկայ և
և չեմալ տեսներ կոր . . . ուստի ես չկրամ
աե ոմլ ըլ . . . և ահա՛ այս ցաւերուս ու վիշ-
տերուս համար է , որ գիշեր և ցերեկ յու-
սահատաբար անդադար կուլամ , կուլամ , և
դարձեալ կուլամ . . . մինչև որ Աստուած՝
կամ հոգիս առնէ , և կամ ինձի անոյշ չի կոր-
ծանցուներու համար՝ օգնական մը ու միխիթա-
բիչ մը յարուցանելով՝ զիս միխիթարէ . որ յու-
սահատաբար չի կրնչիմ ! . . . քանզի ինչպէս
ըսի , անդարմանելի է ցաւս , և անդժկելի է
վերքերս՝ ոտիս մինչև ցգլուխս . . . :

Այս առածին բացատրութիւնը՝ որքան որ
Տէարան ազէարի անցեց և ընթացեց Հայիկան Լինե-
ղեց-ոյ՝ ըսված աշխատութեանս մէջ պիտի
տեսնուի ամենի՝ բացց մէյմը որ՝ գեռ հրատա-

թակուած չէ. մեյմ՚ալ որ՝ հիմայ բոլորովին զանց առնելու որ ըլլամք՝ մեր դրած առակը մութ մնալէն ի զատ, այլև ցաւերնիս առաւել ևս պիտի ուստուկանայ . . . ուստի լաւ է որ փոքր ինչ յայտնեմք մեր ղգացած ցաւը՝ քան թէ ներսերնիս պահելով զայրացնեմք. չեմք գիտեր եա. գուցէ թէ Աստուած դարման տանելու համար բժիշկ մը կը յարուցանէ՝ (ի Խրատոց) ու մեզ լսկանուութենէն կ՚ազատէ . . . : Արդեօք ինչ է մեր ղգացած ցաւը կամ լացը, . . և ահա. ուրքան որ Ս. Երուսաղէմայ Աթոռին կամ թէ Թուրքի Տիրապետութեան տակը գտնուած Հայաստանու վանօրէից բարեկարգութեանցը վրայօք խօսելանք ալնէ. բայց միանգամայն չեմք կրնար առանց յիշատակի թողուլ Անծին Հայաստանու, այսինքն՝ այժմ Ռուսի Տիրապետութեան տակը գտնուող հռչակաւոր վանքերնիս և Աթոռներնիս ալ . . . որոց բովանդակ Աղգիս և բոլոր Վանօրէից գլուխ Ս. Էջմիածնի Գերագահ Աթոռը, ընդ նմին և Միւնեաց Առաքելական Աթոռը, նաև Հաղբատու, Սանահնու, Սեւանու, և այլն, և այլն, և այլն, վանօրայք և վանականք ալ այս դանդն ցաւոց և աղետից մէջեն, և ոմանք ալ բոլորովին անբնակ ու աւերակ եղած են՝ 30 տարի է ի վեր . . . : Մինչ, ուր են այն Առաքելի, Աղգատեր, Աշխարհաշէն և Եկեղեցաշէն Ե-

բանելի Ս. Հայրերը ու վարդապետները, ո-
րոնք որ նոցա մէջը բնակելով՝ խաւարեալ դար
կարծուած ժամանակները՝ բաղում և կերպ
կերպ արդիւնքներին ու փառքերնին կը վայելէր
Աղէը և Հայրենիքը . . . Ա՛հ, կ'ամաչեմ ա-
սել, որ անոնց բնակած Սրբազան վայրերը այ-
սօր իբր գամատուն և աւազակաց բոյն ու
վայրենեաց և անասնոց բնակարան եղած է՛ն
. . . . : Աչդ՝ մի թէ Քրիստոսին Տէրութեան
և արքայութեան տակը մնալնուն և փոքր
ինչ հանգստանալնուն համար է. որ յիշեալ
վիճակները և Թուռները ծուլութիւն և ան-
հոգութիւն կ'ընեն կոր Աղգայինք ու վանա-
կանք մեր. չէ՛ նէ՝ իրենց վերայ տիրապետող
կառավարութեան օրէ՛նքը մի արդեօք կ'ըլլայ
կոր՝ յիշեալ Վանօրէից և Թուռց և Ընա-
պատաց յառաջադիմութեանը : Ասոյց այս վեր-
ջինը չեմք կարծեր՝ և չեմք ալ յուսար, քանզի
քանի՛ որ մեր Աղգային պատմութիւնը Ասու-
սերէն Թարգմանուած է, և քանի՛ որ մեր
Աղէը՝ 100 տարիէ՛ ի վեր Ասուոց կառավա-
րութեան ծանօթ ըլլալով՝ և միանգամայն մե-
ծամեծ պաշտօններու մէջ ալ մնալով՝ հաւա-
տարիմ ծառայութիւն ընելէն՝ ի զատ, իրենց
կեանքը՝ ստացուածքը՝ ու հայրենիքը Ասոր
համար զոհած և անոր նուիրած են . . . . և
շատ առթի ու շատ պարագայներուն մէջ ալ՝
հաւատարմութիւնին ու իրենց արդիւնքներին

ցուցցած են, ուստի բնաւին չէմք յուսար, որ Ռուսաց կառավարութիւնը ասոնք գիտնալէն ետքն ալ՝ անդթութիւն բանեցնէ, ու անողորմաբար վարուի իրեն վիճակին մէջը գտնուած Աղգայնոցս հետ, ու անոնց բարոյապէս զարգացմանն ու յառաջադիմութեանը արգելք ըլլայ, մանաւանդ վանօրէից . . . . քանի որ ինքը քրիստոնէութեան պաշտպան համարուած է. և միանգամայն կրօնասէր Տէրութիւն մի համբաւուած է . . . : Ուրեմն դարձեալ կ'ըսեմք, թէ չկրնար ըլլար՝ որ հակառակ հաւատարմութեան, և հակառակ քրիստոնէութեան վարուի մեր Աղգայնոց ու Վանականաց հետ . . . : Եւ գիտէ՞ ալ Աւետարանական խրատը Քրիստոսի, որ կ'ըսէ. « Թէ զի՞նչ կամիք զի արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս արարէք և դուք նոցա. զի այս իսկ են օրէնք և մարգարէք . . . » :

Ուստի վերատին կ'ըսեմք թէ Ռուսաց կառավարութիւնը՝ ասոնք գիտնալով՝ խղճի, աղատութեան, քրիստոնէութեան, հաւատարմութեան, ու մարդկութեան դէմ չկրնար վարուիլ, որով ինքը առաջի Աստուծոյ և առաջի մարդկան պարտաւոր համարուիլ. մանաւանդ թէ՝ օտար Տէրութեանց տակը գտնուող քրիստոնէից ալ համարումը իրեն վրայէն վերցնել ուզել, այս կերպ ստոտիկ օրէնքներով : Նա մանաւանդ գրեալէ, « Զոր ինչ սերմանէ

ոք՝ զնոյն և հնձէ . . . »։ Բայց ինչպէս ըսինք, այս կարծիքներնուս մէկն ալ ըլլալու չէ . . . . քանզի Աստուծոյ մեղադրելի, և միանգամայն աղետալի բնաւորութիւնը կ՚ապացուցանէ, թէ՝ հանգստութեան մէջ Աստուած ու միանգամայն՝ մարդկութիւնն ալ կը մառնայ՝ ընդհակառակն նեղութեան մէջ՝ միշտ Աստուած կանչելով՝ լացեր ու ողբեր կը շարէ . . ։ Վասն որոյ կը մակաբերեմք թէ՝ այս Տէրութեան տակը անցած ժամանակն ալ՝ նոյն մեղադրելի և աղետալի յանցանաց մէջը գլորած են. և նոյն թշուառ վիճակի մէջ կը տագնապին Աստուծոյինք մեր . . . ինչպէս ականատես եղաք աղեկոտուր արտասուօք 1850 թուին, երբ ջանգայեցաք յիշեալ վիճակներն և նուիրական Ս. Գայրերն . . . ։ Բայց այսու ամենայնիւ, եթէ այս ալ չէ ու մեզնէ ծածկեալ գաղտնիք մը կայ, որով և իրենք կը պատկառին և երկիւղ կը կրեն կոր իրենց Տէրութեանը առաջարկելնէ՝ թող մեզի իմացուցեն, մենք իրենց կողմէն կ՚աղաչենք՝ և բաղձք բառնալով կը խնդրեմք Ուսաց ողորմածասիրտ Կայսրէն, որ արտօնութիւն ու թոյլտուութիւն տայ՝ բոլոր վանականաց յառաջադիմութեան և վանորէից բարեկարգութեան, նաև Աստուածային գոլորսայց աղատութեան. որով փառաւորի իրեն Անունը ի մէջ տիեզերաց. և իրեն հպատակ գանուողմեր համազգի եղբարց և

վանուրէից, գոնէ բարոյապէս յառաջադիմութիւնին տեսնելով՝ մենք ալ օրհնող լինիմք յաբաժամ Նորին Կայսերական պերճութեանը։

Ի վերայ այսր ամենայնի, ոչ այս և ոչ այն լցէ, ուրեմն եւս առաւել կ'աղաղակեմք և կը խնդրեմք Ռուսիոյ կառավարութենէն, որ իր վիճակին մէջ գտնուած՝ մեր Վանական-ներուն վերայ ստիպողական հարկ և սաստիկ օրէնք մը դնէ. որպէս զի Վանքերը դպրոցներ բանալով օրինաւոր և պիտանի վանականներ հասցուցնեն. և ամեն գաւառներուն ու քաղաքներուն մէջ ուսումնարաններ ու դպրոցներ բացուին Հայերէն լեզուի ու խօսակցութեան. և միանգամայն ընդհանուր Ազգայ Պատմութիւն և Աշխարհագրութիւն սորվելու արտօնութիւն շնորհէ՝ առանց եկեղեցիի տեսչութեան տակը ըլլալու պայմանաւ . . . . քանզի Հայոց Ազգէն բնաւին թող չ'վախէ անհաւատարմութեան մասին . . . նաև գիւղերէից մէջ ալ՝ Հայերէն և Ազգային Պատմութիւնը սորվելու հարկ մը դնէ, այսինքն՝ իրենց Հայրենի լեզուն ուսանելու և զանի նախապապի- դասէը- բնական իրաւանց արտօնութիւնը տայ. որով և ինքն ալ բանբասանքէն խալսի ու գայթակղութեան առիթ ալ տալով՝ ամենքն ալ իրմէն չի խորշին . . . ։

Վերջապէս կրկին և կրկին կը խնդրեմք Նորին ողորմած Կառավարութենէն, որ յատ-

կապէս այս շնորհը ընէ Աստուած Հայոց, որ մենք ալ անոնց բարի օրերը և յառաջադիմութիւնը տեսնելով՝ զինքը յարաժամ օրհնող լինիմք . . . քանզի գիտնայ, որ Հայոց Աստին ճրագը մարած է . . . . և Ինքը ձեռնտուութիւն ընելով՝ անոր լոյս պիտի շնորհէ, և օգնելով պիտի վերականգնեցնէ, կամ՝ ի մեռելութենէ՝ ի կեանս պիտի վերածնէ . . . »

ՎԵՐՋԱԲԱՆ

ՈՒ

ՆՊԱՏԱԿ ԳՈՐԾՈՅՍ

Վերոյիշեալ տեղեկութիւնները, այժմեան Ազգային Սահմանադրութիւնը, և Ազգասէր անձանց ջանասիրութիւնը տեսնելով, և մենք ալ իբր Հայ և Ազգին անհատներէն մեկը գտնուելնուս համար, յորդորուեցանք այս համառօտ Ազգային ազեկտուր տեղեկութիւնները՝ ակամայ կամաք հրատարակել . . . իբր հաւատարիմ ծառայութիւն մը ընել ու գովելով խրոխտալի Ազգիս. և իբր թէ այժմեան Ազգային կառավարութեան բռնած ընթացքներնուն շահաւոր խորհուրդ մը տալ . . . : Յուսամք՝ թէ մեր նպատակին հասած կը լինիմք . . . :

Եւ եթէ բարեհաճելով Ազգային Վարչութիւնը՝ տանց գործադրութեանը հոգ տանի, որով և Ս. Աթոռին և այլ Վանօրէից բարեկարգութիւնը տեսնելու որ ըլլամք, յայնժամ և մենք ալ վերոտին քաջալերուելով, ոչ թէ միայն ազգային իրենցմէն երախտապարտ կը լինիմք, այլ և ասոր նման պիտանի և օգտակար խորհուրդներ ու տեղեկութիւններ ալ կրնամք հաղորդել իրենց. Ի սէր Ազգային յառաջադիմութեան :

Որ և մնամ բարեացակամ.

Ընչնանո-էր Ծառայ

Թ. Մ. ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ

ՄԻՀՐԴԱՏԵԱՆՑ

1860 Նոյեմբեր 18

Ի Կ. Պոլիս :

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա.

Եպիսկոպոսաց Տ. Սրբազան Պատրիարքի Կ. Պոլսոյ. և Մեծարգոյ Ազգային Քրիստոսական։

Ո՛ լոյս աչաց իմոց սէր իմ Սրբազան.

Մեծապատիւ Յարգելիք՝ զնուաստութիւնս իբր Աստուծոյ և կառավարիչ առաքեցին այսր (Երուսաղէմայ). և Միաբանութիւնն հնազանդեցաւ, ոչ իմ կամացս, այլ Նոցին՝ որք զիս առաքեցին Մուրախասս։ Երբեմն և նախկին Պատրիարքաց գրով գրեցին մեզ, թէ՝ զանհնազանդն ի Միաբանից պատժեսայ, կամ մեզ ծանոյ, զի պատժեցուք. յորոց չգտաւ անհնազանդ որ. և ահա այժմ տեսանեմք մի միայն, զի Երուսաղէմի Պոլսոյ Վէքիլն է մեզ անհնազանդ. զի հաշիւ պահանջեմք՝ ոչ առաքէ, և կոչեմք՝ ոչ գայ։

Աղաչեմ, մի լեցի կարծել թէ ի պատուասիրութեան ախտից գրդեալ գրեմ զայս, յորմէ փախչել ցանկամ. այլ Աթոռոյն խնայելով՝ ոչ կամիմ զխանգարումն կարգադրութեանս։ Արդ՝ եթէ ոչ կարասցուք զհաշիւս քննել և կամ գործակալ մի փոխել, ոմն արդեօք հնազանդի մեզ այսուհետև, և զինչ Մուրախասութիւն է այս. չէք քան զայս

մեծ նախատինք. ոչ իմ պատուոյս, գոնէ իւրեանց խնայեսցեն, և զօգուտ Ս. Աթոռոյս որոշեցեն. որ վասն նոցին կամաքն եկեալ եմ սատ. մինչ Երուսաղէմի Պօղոս վեքիլութիւնն լոյծ իւր ժառանգ։

Ի փոքուէ առ մեծն ձեռնարկելով, և ի սակաւուց զբաղումն իմաստասիրելով, հայցեմ՝ ժամ յառաջ առաքել առ մեզ զՅՕ հանեալս վարդապետան։ Բանդն ըստ գրոյն, «Ամենայն տուն բաժանեալ յանձն իւր կործանի»։ Ուրեմն աղաչեմ կատարել զմերս կարեւոր խնդիր, որք յօգուտ Աթոռոյն Հայոց։

Ինամ յամենայն կեանս իմ վասն պայծառութեան՝ բարօրութեան Սրբազան Աթոռ, աղօթարար և բարեմաղթու.

(Ղազարոս Պապիկեան Պոլսոյ)
ՊՕՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՆԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԵՑԻ։

1838. Մայիս 16։
Ի Ս. Երուսաղէմ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ.

Ի՝ Աբբա-ածարեալ Տ. Սահականոս Արքեպս. Պարտիարք Կ. Պոլսոյ։

Աստուածարեալ և գերերջանիկ Վեհափառ Պատրիարքք Արքեպան Հօր խնամակալի զիսոնարհականն ակնածութիւն, և բարեկրօն հոգեւորականացն դասու զեղբայրականն ըստեր՝ հանդերձ Քրիստոսական Ս. ողջունիւ, և գերասլեսմ արժանապատիւ Աղգասէր Ամիրայից և Իշխանապերճ բարեպաշտօն էմնաֆ աղայից և Աստուածասէր ջերմեռանդ ժողովրդականաց համօրէն լուութեան օրհնեալ Աղգիս զՏնօրինական սրբազնասուրբ վայրացն զոգեպարարն զշնորհ և զձիր Աստուածային նախախնամական օրհնութեամբ ընծայեալ մատուցանեմք խորին յարգանս սուրբ ուխտիս համայն։

Իգալ ժամանել բարձր հրամանագրի Ամենապատիւ Ձերում մի հատուածութեան ի ժողով դումարեալ ամբողջութիւն միաբանութեանս ընթերցաւ ի լուր ամենեցուն՝ զամենայն զի ներդրոշմեալ բարեհաճութիւնն. յորում մի հրամայէիք ներկայացուցանել ձեր նախամեծարաստեան անուն այսր գասանեցեալ Եպիսկոպոսաց. յորմէ պարտաւորեալ և մեր փութացաւասիկ կատարել զառ ի մեզ հրամայեալն։

Ապաքէն համագումար Միաբանութիւն

մեր՝ գիտելով 'ի բնէ իսկապէս լաւ իրաւունք Պատրիարքական ընտրութեան կախեալ կայ 'ի յաղագս կամաց օրհնեալ Աղգիս լուութեան՝ ոչ իշխէ ասել ինչ, 'ի պատիւ վերածելով միշտ զիւրն պարկեշտ հնազանդութիւն։ Հայ և համայն Episkoposունք Աղգիս թէ ասա և թէ այդը և ուր ուրեք թէ իցէ՝ ոչ են հեռի 'ի տեսութենէ աչաց օրհնեալ Աղգիս. այլ իբրև ներկայ ծանուցեալ ամենեցուն ձեր ա-նուաստութեան. մի միայն զպարագայսէ իրիք հարկ համարեցաք զգացուցանել Ձեր գերա-պատուութեան, և այսու մահսեբագրովս ա-ռաջի առնել զայս մի ինչ կարեւոր խնդիր համայն Պիսքանութեանս ստորագրութեամբ։

Ամենայն ոք՝ որ ընդ իշխանութեամբ կա-ռավարութեան իմիք գտանի՝ պարտի հպա-տակ կալ կանոնաց, յորմէ կախեալ ունի զիւրն պարտաւորութիւն։ Վերահասու եմք գիտակ գալ խնամածու Աղգասէր Տեարցդ. թէ քանի ամք են յորս սրտամաշ լինի կառավարութիւն Ս. Աթոռոյս կոչելով զՅովհաննէս եպիսկո-պոսն, որ փոխանորդական պաշտօն վարէ՝ յայ-դբր 'ի Պոլիս յԱրքուսալէմատուն՝ գալ և տալ զհամար փոխանորդութեան իւրոյ։ Այլ նա յամառեալ ոչ անայ կոչմանն. և ոչ իսկ ունի կնդիր լինի գրութեանցն որ առնա 'ի կողմանէ Աղգնոցիս Խորհրդական կառավարչաց Ս. Աթոռոյս. և քանիցս անգամ գրութիւն ա-

ռաքեցաւ ուրոյն ուրոյն գլխաւորաց Աղգիս՝ յորդորել զնա և առաքել և ոչ կարացին։

Այսպէսն որ կառավարութիւն թոյլատրեսցէ այս, և որ իրաւունք ներէ տալ ընդարձակութիւն ընդդէմ իւր յարուցեալ սխեալիմ ապստամբութեանն, և ոչ իսկ բնաւ երբէք. և յիրաւի՝ կառավարութիւն մի ոչ կարէ ծառայել նպատակին, եթէ չիարօղանայցէ պահել զիւր ենթական կամ զպաշտօնեայն ընդ իշխանութեամբ կանոնաց կառավարութեանն։ Եւ գիտել զել և զմեռա արդեանցն և ծախուց ի ձեռին գտանեցեալ հաստատութեանցն, ոչ ապաքէն յետսախաղաց գնայ միշտ ի յետ կոյս ի կողմն անդր ի թշուառութիւն, եթէ չզօրեսցէ բառնալ զապստամբութիւն և անհաւատարմութիւնն ի միջոյ՝ կրելով զայնս ի ծոցի իւրում. միթէ չունիցի՞ իրաւունս բառնալ ըզ վնասակար պատճառն՝ զի մի քակտումն պատճառիցէ կառավարութեանն այնորիկ։

Արդ՝ համագումար լուութիւն Միաբանութեանս՝ զի մի խոպաւ կորուսանիցէ զիւր ընթաց կառավարութեան ի վնաս Աղգին և Ս. Էթոռոյն, այսու իրաւամբ ահա պատշաճ գատեցաւ բառնալ ի միջոց պաշտօնէից կառավարութեան զնոյն իսկ Յօհաննէս Եպիսկոպոսն, որ Միաբան համբաւէ զինքենէ. և Միաբանութիւնս չճանաչէ զնա երբէք գալ ի կարգէ ընտիր Միաբանից. զի չէ կացեալ նա

Յ. Թոռն ըստ վայելչութեանն կատարել զպաշտօն. այլ միայն քսութեամբ յարեալ մերս նախկին փոխանորդացն Յրուսաղէմի այդր 'ի Պոլիս, յետ ժամանակաց հրապուրեալ զմանս կարդեալ եղեւ 'ի փոխանորդութիւն սրբոյ Յրուսաղէմի. և մինչ ցարդ հակառակ կանոնաց Ս. Յ. Թոռայս վարիւր անհաւատարմաբար 'ի փառս իւր որսալով զպարզամիտս խարդաւանօք այդր 'ի կուսակցութիւն, 'ի վնաս ինքեան և Ս. Տանս։ Թէպէտ և գաղատացի գործէ զնա այս դարան նենգագործութեան՝ այլ յայս քանի տարիս ակներեւ յայտնեցաւ ընթացք անարժան գնացեալ նորա, և կեղեքէ վասնէ ըստ քմայ իւրոց զամենայն արդիւնս Ս. Յրուսաղէմի, և խրոխտայ 'ի վերայ Միաբանական կառավարութեանս, և քանիցս անգամ բողոք եբարձ Միաբանութիւնս յատեան Ազգային իշխանութեան փոխել իսկ աղերսելով 'ի պաշտօնէ փոխանորդութեան, և 'ի դերեւ ելանէր աղերսարկութիւնք մեր 'ի պաշտպանութեանցն այնմիկ, մինչև համարձակել նմա երդիծանել համայն Միաբանութիւնս։ Վասն որոյ չկարէ Միաբանութիւնս այսու հետև ընդունել և ճանաչել զայնպիսին իբրև հաւատարիմ Միաբան Ս. Յ. Թոռայն, այլ մերժէ իբրև հակառակ անհաւատարիմ և ապստամբ և յափշտակիչ վանքիցս և արդեանց Սրբոյ Յ. Թոռայս։

Իսկ եթէ գուն գործեսցէ նաև խաբել զազգ մի ողջոյն՝ իւրով չարանենգ հնարիւք առ 'ի յափշտակել զբարձրագոյն տիտղոս Պատրիարքութեանն, որպէս և լսեմք. արդէն իսկ ահա տեղեկացուցաք զնմանէ՝ մի խաբիլ նորին խորամանկ հնարից, զի յետինն այնպիսի անարժան անձին՝ ունի լինել չար քան զառաջինն։

Վերջապէս միով բանիւ ուրշափ եպիսկոպոսունք գտանի յազգի մերում թէ աստ և թէ այդր, բայց 'ի նմանէ զյետինն անդամ ընդունիմք մեզ դլուխ և հայր խնամածու և հոգաբարձու Ս. Տաճար. բայց Յոհաննէս եպիսկոպոս անուամբ Սիսբան անդամ չունիմք և չեմք ճանաչեր։

Արդ՝ 'ի սէր սարծանաց Ս. Աթոռոյս, խնդրեմք յատակապէս ընդունել յայսմ մասին զայս մեր կարեւոր խնդիր, և ըստ այնմ զարժանաւորն անօրինել զընտրութիւն Պատրիարքական իշխանութեանն. և զայն յանձնելով ամենաբարի և բարեհաճ կամաց Ձեր մեծախորհուրդ Ազգասէր Տեարցդ։

Սնամբ յաւէտ 'ի սրտէ մշտապաղատ բարեմաղթու 'ի Սրբազան Տնօրինական վայրն Բրիստոսի Տեառն մերոյ, վասն յարատեւ բարեբաւութեան Ազգիս և երջանկութեան աւուրց բարեխնամ վեհափառ Սրբազան Հօր մերում։

Մեք ամբողջ ստորագրեալ համագումար Միաբանութիւն Ս. Թադեոս Երուսաղէմի.

1840. Օգոստոսի 23
Ի տուրբ Աստուածածնայ Սրբոց Յակոբեանց։

Պօղոս Եպիսկոպոս
Անդրիանուպոլսեցի (*)
Ծերունի և տկար։

Կարապետ Եպիսկոպոս
Եւդոկիացի։

Կիրակոս Եպիսկոպոս
Երուսաղէմացի։

Զաքարիա Եպիսկոպոս
Մուշեղ Մամիկոնեան
Կոմիսի։

Մարկոս Եպիսկոպոս
Փոթիշանցի։

Կարապետ Վարդապետ
Կոյտակ։

Գրիգոր Վարդապետ
Նիկոմիդացի։

Սահակ Վարդապետ
Ժամ օրհնող։

Եփրեմ Վարդապետ
Հաճնցի։

Թովմաս Վարդապետ
Շնգուշեցի։

Աստուածատուր Վարդապետ
Պոլսոյ։

Սարգիս Վարդապետ
Խիզանցի։

Թադէոս Վարդապետ
Կեսարացի։

Յոհան Վարդապետ
Զմիւռնացի։

Մատթէոս Վարդապետ
Կեսարացի։

Թադէոս Վարդապետ
Սչեցի։

(*) Այս ստորագրութիւններուն առջեւ իրենց Հայրենեաց անունները դրուած չէր օրինակին մէջ, այլ խնամարհական կերպիւ, Նոռատոյ, Ժառայ, Ընէին, և այլն գրուած էր. բայց մենք՝ հեռաբերութեամբ մը անոնց Հայրենեաց անուններն ալ տեղեկանալով՝ նշանակեցինք, որչափ որ կրցինք տեղեկանալ նէ. սակայն զի գիտցուի, թէ որմանք էին այս պատկառելի սուրբ Հայրերը։

Դաւիթ Վարդապետ
Կարնեցի։

Գէորգ Վարդապետ
Ռոմանեցի։

Պետրոս Վարդապետ
Ժամասաց։

Անտոն Վարդապետ
(. . . . . .)

Յոհաննէս Վարդապետ
Չէյթինեան Եւթանիցի։

Մկրտիչ Վարդապետ
Բաղիշեցի։

Վրդանէս Վարդապետ
Աղիամանցի։

Պետրոս Վարդապետ
Սչեցի։

Սիմէոն Վարդապետ
Պօլսեցի Նիզամեան։

Սրապիոն Վարդապետ
Պօլսեցի։

Յարութիւն Վարդապետ
Տիգրանակերտցի։

Մարտիրոս Վարդապետ
(. . . . . .)

Ստեփան Վարդապետ
Վանեցի։

Գրիգոր Վարդապետ
(. . . . . .)

Երեմիա Վարդապետ
Զօրլուցի։

Յոհաննէս Վարդապետ
Ժամասաց։

Բարսեղ Վարդապետ
Բաղիշեցի։

Սարգիս Վարդապետ
Հաճընեցի։

Մեսրոպ Վարդապետ
Տիգրանակերտցի։

Եղիշէ Վարդապետ
Փօթիշանցի։

Աւետիս Վարդապետ
Մարաշցի։

Թէոդորոս Վարդապետ
Կէլիպոլուցի։

Ղերսէս Վարդապետ
Տարօնացի։

Յակոբ Վարդապետ
Մարսըվանցի։

Փիլիպպոս Վարդապետ
(. . . . . .)

Անտոն Վարդապետ
Աշտարակցի։

Նիկողոս Վարդապետ
Սսեցի։

Յակոբ Վարդապետ
Աշտարակցի։

Իսահակ Վարդապետ
Գաղատացի, որ կայ 'ի Պոլիս։

Իցէ թէ, այս նշանաւոր նամակիս մէջի նշանակուած Ս. Հարց դիտողութիւնները նաև ինչ ոգիի ծառայելին բաւական վկայութիւն մը ըլլար, արդի Ազգայնոց մէջ յուղուած տարօրինակ խնդրոյն. և սակայն կարծեմ, թէ Հոգեւորականաց և թէ Աշխարհականաց մէջ տարակուսութիւն ունեցող մի կամ նէ Հրուսաղէմայ Պատրիարքի ընտրութեան մասին՝ Աստուծով փարատեցաւ, և իրենց յարուցած անտեղի տարաձայնութիւններն ալ յուսամք, որ կը դադարին. և յայնժամ խաղաղ և միաբանական ոգւով՝ արժանաւոր Անձին մէկը կ'ընտրեն Պատրիարք Հրուսաղէմի. և այս ալ՝ թէ ներսէն ըլլայ, և թէ դրսէն՝ ինչպէս որ այս մասին՝ առանձին յայտարարութեամբ Հրամանագրով ալ ծանուցինք 1861 Օգոստոս 23ին. բայց և այնպէս հաւկառակ, կամ լաւ ևս յամառեալ կողմը՝ Ս. Կաթուղիկոսէն՝ այս մասին կնդակ մը բերել տալով, իբր թէ իրենց կամքը յառաջ տանելու ուզեցին, և իբր թէ՝ նղովքնք փակել ալ տուին, որուն դառն պտուղն ալ ցաւօք սրտի սեւնաւեցաւ . . . : Կ'ըսեմք, եթէ Ս. Կաթուղիկոսին վճռայն և հրամանին հնազանդիլ պարտէ նէ՝ (ինչպէս որ հոգեւորապէս պարտաւորեմք հնազանդելու), ուրեմն նախ և յառաջ Նորին Սեծապատուութեան անցեալ տարուան Պօլսոյ Ազգային Խորհրդոյն Սեթեան Յօ-

հանեցէս վարդապետին համար ուղարկած բո-
զոքագրոյն գործադրութիւնը նային, և եռ-
քը՝ Հրաստաղէմայ համար ապօրինաւոր կեր-
պիւ բերել տուած կոնդակներնուն գործա-
դրութիւնը ընեն։ Ապօրինաւոր կ'ըսեմք, նախ՝
Ազգային Վարչութեան խնդրանքը չեկաւ
յիշեալ կոնդակը. երկրորդ՝ եթէ եղած նը-
զովքն ալ վաւերական ընդունել պէտք էր
նէ՝ նորին Սրբազնութիւնը՝ յապաւելու և
այնպէս հրատարակելու չէր, մանաւանդ այն
մասը, որ բոլոր կղերոյ դասուն կը վերաբե-
րի. այն է Հին և Նոր Կարիերանոց հմուտ լինել
և արքանաւորութիւն ունենալ և այլն։ Լ;թէ Ս.
Կաթուղիկոսին հրամանին և վճռոյն չ'հնա-
զանդողը՝ ապարամբ և Հերետիկոս և Հայոց եկե-
ղեցիէն դուրս կը համարուի՝ քան վճռոյ Պ.
Յովհաննէս Զամուրճեանին. ապա ուրեմն
պէտք է որ՝ թէ՛ ինքը և թէ՛ Սեթեան վար-
դապետը և անոր համախոհ եղող անձինք ալ՝
հերետիկոս և ապարամբ համարուին . . . . մանա-
ւանդ թէ Յովհաննէս վարդապետը յաստուկ
ստորակարգեալ և ուխտադիր ալ է Ս. Կա-
թուղիկոսին հնազանդելու՝ և իւր կոչմանը
համեմատ պարտաւոր ալ է կատարելու այն
խնդիրը, որուն վերաբերեալ Ս. Կաթուղիկոսը կը
պանդատէր և իր Ստրձրագոյն հաճութիւնամբը
կը Հրամայէր, որ յիշեալ վարդապետը հան-
դիստութեամբ Պոլիս նստելուն՝ իր կոչմանը

համեմատ՝ դրսերը կարօտեալ վիճակներուն մէկուն Ղուկաս Եղիշայ ու կառավարէ և խրատէ տառապեալ և անխնամ ժողովուրդը ու եկեղեցւոյ Ս. Փարպեցոյ մոյնէ . . . . . : Բայց այսու ամենայնիւ՝ ոչ թէ միայն անհնազանդ գտնուելով Ս. Բահանայապետին Պօղոսէն չ'հեռացաւ, այլ և վերատին Կրօնական ժողովոյն Ընդամ ալ կարգուեցաւ՝ հակառակ կամաց և ընդդէմ Ս. Կաթուղիկոսի Հրամանին . . . :

Իւր այս անդամ ալ՝ ինքը Կրօնական ժողովոյն վերատին Ընդամ չ'կրցաւ որոշուիլ նէ՝ (ըստ որում իր վիճակը չեղաւ). վասնզոյ թէ իրեն և թէ իրեն կուսակցացը դրդմամբը բարեպաշտ ժողովուրդը վրդովեցին . . . ըստ ուրում պէտք է որ՝ թէ Յովհաննէս վարդապետը և անոր համախոհ մէկ երկու քահանայք ալ՝ յարաժամ Կրօնական ժողովոյն և կամ ժամանակին գտնուող Պատրիարքաց իբր խրատատու և կամ իբր թէ պատգամ ըլլան . . . որ իրենց և կամ իրենց կուսակցաց որ և իցէ նպատակներին յառաջ տանին . . . : Բայց որովհետև նորոգ հաստատուած Աղգային Սահմանադրութեան օրինաք եղած դէպքերուն ինքը Յովհաննէս վարդապետը և իրեն կուսակից ները (ըստ առաջնոյն) բաձարցակ արուծնութիւն չ'ունեցան նէ՝ միջամուխ ըլլալ Աղգային և Կրօնական գործոց թեանց, այն է

Նրուսաղէմայ Պատրիարքութեան, և անոր Աթոռոյն բարեկարգութեանը համար չինուած կանոնադրութեան որոշումը՝ իրենց ձեռօքը և իրենց Բարձրագոյն հաճութիւնամբը չ'կատարուեցան նէ, Սահակ վարդապետին երդումը նրի՞ւ եղած է, և կրօնական մասին հոգեւորիութիւնը ապրանայի ոգեցյալ է՝ ըսել ու վճռել տուին Օ-գոստոս 2 համագումար անուանեալ կրօնական ժողովին մէջ. որպէս զի հէմ Սահմանադրութիւնը վաստակաւոր ցուցնեն բարեմիտ հոստարակութեան, և հաւատքի կը դպչի ըսել տան. և ալ Կրօնական և Քաղաքական ժողովոց ըրած որոշումը խանգարեն, և անոնք սխալեալ ցուցնելով՝ միշտ թէ Յովհաննէս վարդապետը և թէ մայր եկեղեցւոյ Տ. Գէ-որգը, և անոր նման մէկ քանիները՝ Ազգին գլխէն ու Պատրիարքարանին մէջէն պակաս ջրլան . . . որով յայտնի է, թէ Ազգը դաւալ գլոր ընել տալու պատճառ եղան գոռոզութեամբ և միանգամայն անխոհեմութեամբ . . . : Ի՞նչ այս անխոհեմութիւնն ալ երկու կողմէն ալ եղաւ՝ Սահմանադրութեան հիմը գրուած օրէն. որուն համար ալ օր և ժամանակ ուշնենամք նէ կարելի է որ ապայոյներով գրի տակ առնենք . . . : Ի՞նչ Յովհաննէս վարդապետին խնդրոյն գալով կ'ըսենք, որ թող տեսնեն այժմ խոհական մտօք Ազգայինք մեր, թէ ո՞րն է հաճելի և անօրինելի : արդեօք Ս. Կա-

թուղթիսին՝ հեռատեսութեամբ՝ մանաւանդ թէ փորձը առած անձին համար վկայած Հրամանը մի առաւել ընդունել և պատուել ու զանի գործադրել հարկ է, և թէ Հրաստաղէմայ Պատրիարքութեան մասին՝ Ներսէն ըն-ալ ըսել տալով Հզդը այսչափ տարօրինակ աղետից ենթակայ ընել տալը մի հաճելի և ընդունելի է. և այս պատճառներուն դրն է աւելի նղովեալ . . . :

Հս գիտեմ, քանզի պատճառ պիտի բերեն յիշեալ վարդապետին կուսակիցները, ըսելով. նախ՝ թէ Յովհաննէս վարդապետը գրսի վիճակներուն Հրաշնորդ չերթալուն պատճառը՝ իրեն քաղաքականութիւն չգիտնալն է, (ինչպէս և այս խօսքերը իր բերնէն ալ լսած եմք, որն որ իր սովորական առարկան է). երկրորդ՝ Կրօնականի և Հկեղեցականի վերաբերեալ խնդրոյ վրայ քաջ հմտութիւն ունենալովը՝ աւելի Պօղոս Պատրիարքարանին պիտանացու անձ մի է՝ քան թէ դրսերուն. և ահա այս պատճառներուն համար՝ Պօղոս թողուցած եմք . . . : Հթէ այնպէս է, ուրեմն առանց առջևնին գալով կ'ըսեմք թէ՝ մեսերս քանի մը անգամ Հպարդոսին պալատը ու Ի. Դուռը՝ Պատրիարքին հետ երթեւեկելով ու անոր պաշտպան կանգնելով իր նպատակը յաւաջ տանիլ ուզեց ու չվախցաւ քաղաքակա-

նութենէն և ալ կրցաւ պատասխան տալ և առնել նէ՝ Տերութեան խպատկառելի ատենին մէջ. ուրեմն ի՞նչպէս չկրնար վիճակ մը ալ կատարել ու մանաւոր կուսակալի մը ալ գործ մը ուղեցած ժամանակը դիմել՝ այս Աղգասէր ու բանիբուն վարդապետը . . . բայց գրուած է «չիք ինչ ՝ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի . . . Այս եռբինին համար ալ ահա կ՚աւետեմք իւրեն կուսակիցներուն, թէ՝ իրեն եկեղեցական ու կրօնականի վերաբերեալ գիտութեանը արժէքն ալ կրնայ տեսնուիլ. մեր հրատարակած գրաւոր աշխատութեան ցուցակին 30՝ գործին՝ Բ. մասին՝ Տէտրան Աղգային կրօնական ժողովոյն Պոլսոյ ըսուած աշխատութեանս մէջ. եթէ հրատարակելու հարկը և պարագայները մեզի սոսրէ նէ . . . . հոն կրնայ տեսնուիլ կ՚ըսեմք, ոչ թէ միայն իրեն, այլ և իրեն նըմանն մէկ երկու անձին ալ գիտցած գոռոզաբար գիտութիւններն և ըրած անգիտութիւններն, միանգամայն և տուած վէճերնուն արդիւնքները . . . . Ահ, վերջապէս կ՚ըսեմք, թէ՝ կուսակցութիւն կուսակցութեանց ամենայն ինչ կուսակցութիւն է Աղգիս ընթացքը և կատարութիւնը . . . ուստի բնաւ քսոլ մը ալ յառաջ չ՚գնայ և բնաւ մէկ կերպիւ մը ալ յառաջ երթալիք չունի Աղգը . . . . . քանի՞ որ Օրէնք, Արդարութիւն, Իրաւունք, Աղգասիրութիւն և Պատիւ ճանչնալ չկայ,

և քանի՛ որ կուսակցութիւն ու տարաձայնութիւն և գաղափարներու տարբերութիւն կայ նէ Աղգիս մէջ . . . ։ Նաև կարճ խօսելով, հասարակաց կարծիքը կ՚ըսեմք , թէ՝ քանի՛ որ վէճ մը ու կրօնական վիճաբանութիւն մը , նաև վիճակներու վրայօք եղած տարաձայնութիւն և ատելութիւն մը որ երեւան ելնէ նէ Աղգիս մէջ , անկարելի է որ՝ Յոհաննէս Սեբեանի , Յոհաննէս Փափազեանի , Յոհաննէս Գէորգի(*), Յոհաննէս Զամուռճեանի , Յոհաննէս Սուրենեանի , և Յոհաննէս Տ . . . նի գլխին տակէն չելնէ և կամ ա՜նոնցմէ մէկուն ձեռքը չի գտնուի մէջը . . . և ալ ասոնք միշտ կրօնի դիմակա՜ և կրօնի պաշտպան ձեւանալով միջամտութիւն կ՚ընեն ամեն բանի մէջ . և այս ալ 25 տարուան փորձ մըն է , որն որ բոլոր Աղգայնոց ծանօթ է . . . ։ Կը մնայ ուներցած մէկ տարակոյս ալ նշանակելարդ՝ Գաղղիերէն չեմ գիտեր ու տեսութիւն ալ ըրած չեմ Գալաթիոյ Յէզուիթներուն կամ Լենետիկեան կրօնաւորներուն Մեծաւորին հետ , որ հարցնէի իրեն , թէ արդեօք իրեն անուն ալ Յոհաննէս է . . . ըսա որում յիշեալ Մեծաւորը՝ այս յարգելի Յոհաննէսներուն ծանօթ և բարեկամ ըլլալնին իմացած եմք . . . ։

(*) Այսինքն Մայր եկեղեցւոյ Տ. Գէորգի. որովհետև այս քահանային առէլի անունը Յոհաննէս էր ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ.

Ոբքան որ վերոյիշեալ տեղեկութիւնը Մինաբաններէն տեղեկանալով հոն գրինք ալ նէ՝ միանգամայն ուրիշ հետաքրքրական տեղեկութիւններ ալ իմանալով՝ ի վերայ անշարժ կալուածոց Կիպրոսի, պարտ անձին կը համարինք զմտոնք ալ նշանակել, որ պարոն Հայրապետ Մելքեան Կիպրոսի պատուարժան իշխանէն տեղեկացանք. 1861 յունիս 20 ին, երբ ժամանակ որ Կ. Պոլիս եկած էր Ազգօգուտ գործերու և իրեն վիճակին բարեկարգութեանը համար, բայց դժբաղդաբար յիշեալ Ազգասէրին ջանքը ընդունայն եղև, ժամանակիս մէջ պատահած Ազգային երկպառակութեանը պատճառաւը. և ահա ազգասիրաբար Անոր տուած տեղեկութիւններն ալ կը հաղորդեմք՝ ի տեղեկութիւն ընթերցասիրաց. միանգամայն յիշեալ Ազգասիրին խնդիրն ալ կատարելով։

1228 Հայ թուականին, այսինքն՝ 1779 ամին Տ. Մարտիրոս Արքեպիսկոպոս անուն անձ մի երբեմն Ս. Էջմիածնի և ապա Ս. Հրուսաղէմի Մինաբան ըլլալով, Կիպրոսի ալ Առաջնորդ եղած է, և յիշեալ թուականին տեղւոյն Տեյրմենլի* ըսված տեղը՝ իր ստացուածքէն երեք հատ Հաղացք առնելով՝ յիշատակ թողուցած է կտակաւ՝ որոնցմէ գոյացած ը-

տակը՝ տեղւոյն Լեֆոշայ թաղին Ս. Աստուա-
ծածնի Եկեղեցւոյն. Կիրնէ քաղաքի Ս. Մա-
կար վանքին, և մեծագործն ալ տեղւոյն որք և
անտէրունչ աղքատաց և կարօտելոց կապած է՝ անիծեալ։ Արքեպիսկոպոսիս օրինակ
եղած է, նաև իր յաջորդը Յովսէփ Եպիսկո-
պոսն ալ, որ կէս ջաղաց մի ալ նոր առնելով
յիշեալ Ս. Աստուածածնի եկեղեցւոյն կոտ-
կուտ թողած է՝ միանգամայն յիշեալ ջաղացքին
արդիւնքն ալ։ Յետ ասոնց վերայ կոտակատարաբ
գործակալ (մութէվէլլի) կացուցած են յիշեալ Արքեպիսկոպոսունք. որոնցմէ վերջինը Յարութիւն Պողոսեան իշխանը՝ 15 տարի կոտաւարած է. և անոր փեսան յիշեալ Աէլիքեան Հայրապետ իշխանն ալ՝ վեց տարի է՝ կը կոտաւարէ։ Յետ վերոյիշեալ ջաղացքներուն գոյացած ստակներէն՝ յիշեալ կոտակները գործադրելէն զկինի, այլ և եկեղեցւոյն և վանքին շինութեանց վերաբերեալ դրամներուն ալ անոնցմէ առնուած է. և անոնց եկամուտներէն ստեղծած ստակովն ալ՝ մէկ բաժին ջաղացք մի ալ յիշեալ Աէլիքեան Հայրապետ իշխանը ստացած է։ Յետ այս ջաղացքներուն մէկը Սարգիսեան Յովակիմ անձը՝ տակից 32 տարիի չափ յատաջ տեղւոյն կուսակալ Ա-
ռաքելի անուն քրիստոնեայ ծախեր է, որուն թոռ-
ունքը ունին այժմ. . . . Այլ միանգամայն
չեմք առանց յիշատակի թողուլ այն պատնէշելի-

.քը՝ որուն համար սկսանասես անձինք, սրբասասուելով կը վկայեն, թէ՝ Աստուծով կ'ըսեն հէմ վաճառող Յովակիմը՝ երեք օրէն եռքը տանը դռնէն դուրս յանկարծ ինկաւ ու շարաչար մեռաւ. հէմ ալ յիշեալ բդեշխը մեծ տառապանքով մեռաւ՝ նոյնպէս քիչ աւուր մէջ. նաև նոյն օրինակ ալ եղաւ յիշեալ բդեշխին տղան ալ . . . և այս ալ՝ մի միայն յիշեալ Արբազան Աղաջնորդին սարսափելի նզովքին արդիւնք նէ, որ Աստուած կատարեց 'ի զգուշութիւն ապագայիցս կ'ըսեն։

Ու այս ջաղացքներուն գոյացած տարեկան եկամուտն է 25 հազար ղուռուշ։ Անոնցմէ զատ 4 հատ ալ տուն ունի. որոնք երկերիս հազար ղուռուշ տարեկան կրնան բերել։ Նաև վանքը երկու հազարի չափ ձիթենի, ու հազարի չափ թթենի, և հազարի չափ ալ զարմուտի (քէջի պույնուղի) ծառեր ունի. որոնք հինգ հազար ղուռուշի չափ առ այժմ տարեկան եկամուտ կրնան բերել։ Նաև 300ի չափ ալ այծ ունի վանքը. որոնցմէ ալ իբր 2,000 ղուռուշ տարեկան եկամուտ կրնայ լինել։ Այս ասոնք հիմակու հիմայ անխնամ կերպով եղած շահերն են։ Այլև ասոնցմէ զատ՝ վանքը ունի բաւականէն աւելի չ'մշակուած ընդարձակ գետին ու անխնամ պարտէզներ. որոնք իբր 3,000 արտավար (տէօնիւմ) տեղ կ'ելնէ . . .։

Յաւ այս յիշեալ եկամտից դրամներդ հիմա-կու հիմայ ծանուցեալ 50,000 զուռուշի չափ տեղւոյն այլ և այլ անձինք յափշտակելով կե-բած են . . . : Յաւ եթէ այս հողերդ մշակուե-լու որ ըլլայ՝ ու վանքդ շինուԹեան մէջ մնայ, տարին 60,000 զուռուշէն աւելի եկամուտ կը լինի . 'ի բաց առնելով ջաղացքներէն և տուներէն գոյացած տոկոսներդ, և միանգամայն 'ի բաց առնելով ասոնց համար ծախս ըլլալիք տոկոսներն ալ . այլ միայն՝ բերելիք շահն է որ դրինք . ըստ վկայութեան յիշեալ Աղգասիրին և այլ ակնատեսից : Յաւ այս վանքդ հոյակապ շինուԹեամբ քարուկիր շինուածք մըն է գե-ղեցիկ դիրքով՝ օդին մաքրուԹեամբդ և անու-շահամ ջրովդ՝ և միանգամայն 30 սենեակէն ալ աւելի ունի՝ հանդերձ խոհանոցովդ և ալ բո-լորտիքդ ընդարձակ պարտէզներովդ և այլն : Որուն նմանը քիչ կը գտնուի Կիպրոսի կղզւոյն մէջ . բայց կ'ամաչեմ ըսել, Թէ անխնամ և ա-մայի կեցած է . . . :

Յաւ այս վերոյիշեալ Աղգասէր իշխանին փափաքն է . որ եկող գնացող պանդուխտ Հայազգի ժողովրդոց և կղերաց համար ծո-վեզերեայ և նաւամատոյց՝ Թորոսլայ կոչուած տեղդ՝ բաւական տարածուԹեամբ տեղ մը առնել ու իջեւան և պանդոկ շինել տալ՝ փոք-րիկ եկեղեցիով մը, որուն համար Ի. Ղուռնէն հրամանի և Պատրիարքարանէն ալ արտօնու-

թիւն մը առնելու կրսպասէր՝ և անոր համար ալ եկեր էր գրութեան ժամանակը. որուն տեղն ալ որոշեր էր առնելու, որ ըստ իւր աս սուրթեան 6,000 կանգուն ի չափ կայ, ու տեղ ուայն անունը Թ՝ուլայ Խիզէլէի կը կոչուի՝ ու փոստայի շոգենաւները հոն կը հանդիպին. որն որ շատ պիտանի և շատ օգտակար տեղ մըն է, թէ հոն տեղի քաղաքին ժողովրդոց և թէ պանդուխտ ու գաղթական գնացող Լ՝ գայնոց համար . . . . . ըստ որում քաղաքէն (Լ՝էֆքօշայէն), 6 ժամ հեռաւորութիւն ունի ծովուն եղերքը. և այս տեղը եթէ շինուի կամ գաղթականութիւն մը հաստատուի Լ՝ գիս համար շատ օգտակար կրնայ լինել՝ քանի մը կերպիւ, նախ Կիպրոսի վանքը ու եկեղեցիներս կը պայծառանայ. երկրորդ Կիլիկիայ ալ դէմը ըլլալով՝ վաճառականութիւն ալ կրնայ ըլլալ երթեւեկութեամբ. երրորդ՝ մէջէն վաճառականութեան վերաբերեալ շահաւոր ինչքեր ելնելուն համար ալ՝ աղէկ կրնայ ապրուիլ, զի բամպակ, մետաքս, այծի բուրդ, ձէթ, գինի, և այլն կելնէ իր մէջէն։

Լ՝ ահա այս անենման տեղին համար՝ Լ՝ գասիրայ օժանդակութեանը դիմելով՝ և միանգամայն իրեն արենակից և կարօտեալ ու արհեստէ զինկած եղբայրները հրաւիրելով կ՝ աղաչէ յիշեալ Պ. Հայրապետ Արլիքեան Լ՝ գասէր իշխանը, որ հոն իրենց հայրենիքը

գաղթելով հայց գոնեն ու ապրին, որով և միանգամայն հոն գտնուող՝ իբր բու աւերակի տքնող եղբայրներնին ալ մխիթարեն ու մխիթարուին . . . : Իւ ահա այսու առթիւ 'ի աեղեկութիւն Ազգասիրաց և խղճալեաց ծանուցի, 'ի կողմանէ յիշեալ Ազգասիրին : Կ'աղաչեմք վերոյին, թէ ասոր դարման մը տարուի և գործադրութիւնը ըլլայ առաջարկութեանս . ջըլլայ թէ՝ Լաթիքեայու վիճակի Հայազգի ժողովրդոց նման անօգնական ու անպաշտպան թողելով՝ ասոնք ալ Հոռոմանան և կամ ուրիշ կրօնքի մը ծառայեն յուսահատաբար, ինչպէս որ յիշեալ վիճակը 1858 թուականէն 'ի վեր 300 տունէն աւելի Յունադաւան և 200 տունի չափ ալ՝ Բողոքական եղան, ինչպէս որ ցաւօք սրտի լսեցինք 'ի Պերութ . . . Ազգասէր վարդապետներ և Ազգասէր իշխաններ, Պոլսոյ մէջ ապահովապէս նստելով բան չի լմնար . այլ ասոնց խնամք տանիմք, եթէ Հայ եմք և Ազգը կը սիրեմք նէ ...:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Դ.

Հետեւեալ Ազգօգուտ առաջարկութիւնը 1860 Գոստոս 25 երորդ օրուան Ընդհանուր ժողովը նիստը ելրած, ու Պատրիարքին ու Ատենապետին՝ քանի մը անձանց պատգամաւորութեամբը ժողովուրդը ներկայացուց, որպէս զի ժողովը կարդալով՝ ըստ այնմ իր գործողութիւնը սկսէ. բայց դժբաղդաբար, ինչպէս իմացանք՝ յայնժամ ժողովը ժամանակ չէր ունեցեր կարդալու. վասնորոյ քանի մը անգամ պարտաւորեցաւ ժողովուրդը Պատրիարքարան դիմելու. Թէպէտ և Ս. Պատրիարքը քանի՛ քանի՛ անգամ խօսք տուաւ իրեն դիմող պատգամաւորաց, բայց այսու ամենայնիւ գործադրութիւնը ժողովքէն ետեւ նուելով, վասնորոյ պաղութիւն ու շշնկոց մը սկսաւ մտնել յայնժամ ժողովրդոց մէջը... Ուստի նոյնը հարկ կը համարիմք ամբողջ հրատարակել՝ ի տեղեկութիւն ընթերցողաց, մանաւանդ թէ յիշեալ Առաջարկութեան երրորդ խնդիրն ալ Ս. Երուսաղէմայ Թոռոյն ու Պատրիարքին վրայօք ըլլալուն համար ալ՝ հարկ համարեցի հրատարակել հոս. որպէս զի եթէ չգիտցող Ազգայինք կան նէ՝ քաջ տեղեկանալով՝ անոր գործադրութեանը Ազգասիրաբար հոգ տանին, ու Ազգին արդարացի իրաւունքները պաշտպանեն.

Աղօթք առաջնորդութեան։

Ամենապատիւ Օրբազան Պատրիարքը Հայր և գերամեծար Տեարք Ազգային Ընդհանուր Ժողովոյ.

Այսօր ըստ Սահմանադրութեան առաջին նիստը ըլլալով ընդհանուր Ժողովոյդ՝ անշուշտ Ազգային կարգադրութեան և անոր պիտոյիցը հոգ տանելու համար արժանաւոր Ընձինք ընտրելիդ պարտաւորութիւն մին է, որ Ազգը քուէարկութեամբ զՁեզ ընտրեց այս պաշտօնը կատարելու, միանգամայն վստահ ըլլալով Ձեր Ազգասիրական ջանիցը վերայ՝ որ Ազգին արդարացի իրաւունքները պիտի պաշտպանեք. յորմէ և մենք ալ համարձակեցանք հետեւեալ Ազգօգուտ Առաջարկութիւնները ընել. յուսալով նախ՝ որ Ձեր գործին թեթեւութիւն մը կ'ըլլայ. Երկրորդ՝ ըրած տընտրութիւններդ յարատև կը մնայ։ Լուսի հետեւեալ ջորս Առաջարկութիւնը կ'ընեմ Ձեզի Ազգը։

Առաջին. ամեն դատարան՝ թէ հոգեւոր ըլլայ և թէ մարմնաւոր կամ քաղաքական, յայտնի է որ Օրէնք և Սահմանադրութիւն, բայց ըսենք՝ Օրինագիր կամ Դատաստանագիր մը ունի և անով կը վարուի։ Արդ՝ կը հարցնեմ Ազգը՝ որ դուք այսօր հանդիսացեալ էք դատաւոր և կամ տեսուչ ընտրել ո՛ և իցէ Ազ-

գային գործոց և իրաւանց վերայ. ուրեմն որ
օրէնքը պիտի թագաւորէ Աստին, և որ օրէ-
նաց համեմատ պիտի վարուի Աստը. և այս օ-
րէնքը կատարող որ օրէնագէտը, և որ իրա-
ւաբանը պիտի կացուցանէք, որ կարող ըլլայ
նոյն օրինաց համեմատ վարուելով Աստը յա-
ռաջադիմութեան մէջ պահել, և ինքն ալ
անբասիր մնալ առաջի Աստուծոյ և առաջի
մարդկան . . . : Այս որում շատ տարիներէ
ի վեր դժբաղդաբար կը տեսնենք, որ Աստը
շատ ժամանակ խոհական և Աստասէր Անձինք
ժողովոց անդամ կը կացուցանէ. բայց մէջեր-
նուն շատը, չըսեմք բոլորն ալ (թէպէտ և
բարի և առաքինի անձինք) ոչ իրաւաբանու-
թիւն կարդացած է, և ոչ օրինագէտ է, և
ոչ ալ Աստը օրինաց գիրք մը ունի՝ որ գտնէ
նոյն օրինաց համեմատ վարուելով՝ դատողը
ու դատեալը կարողանան մէկը դատելու՝ և
միւսը հպատակ կալու նոյն օրինաց վճռոյն.
այլ ընդհակառակն ցաւօք սրտի կը տեսնենք.
որ ըստ քմաց և ըստ կուսակցութեան կը վեր-
ջանայ բոլոր դատերը՝ ընդ նմին և կառավա-
րութիւնը. վասնորոյ եթէ այսուհետև վե-
րըստին նոյն աւազելի կացութիւնը շարունա-
կէ՝ ոչ հանդարտ վիճակի մէջ կարող է մնա-
նել Աստը, և ոչ ալ ամենուն իրաւունքը
յայտնուելով՝ Աստն ալ անդորրութեան և
սիրոյ ու միաբանութեան մէջ պիտի մնայ . . .

նաև ամենապիտանին է, և ոչ ալ հնազան-
դութեան ներքև պիտի մնայ . . . : Ուստի
կ'ըսեմք. առանց օրինաց և առանց սահմանաց
ընդունայն է ժողովք կազմել, ընդ նմին և
ժողովոց անդամ ընտրել, առանց դատաստա-
նագրի՝ քանի որ վերոյիշեալ խնդիրը չկայ
Թուրքիայի Հայոց մէջ : Թուրքիայի մէջ ը-
սինք. և քանզի Հայոց Ազգիս գլուխ և կեդ-
րոնական տեղի Պատրիարքն Ս. Աթոռը՝ որ-
քան դատաստան տեսնելու որ ըլլայ՝ առանց
դատաստանագրի բնաւ երբեք վճիռ մը չտար.
այլ միշտ օրինաց կը վարուի. այլ ընդհակա-
ռակն մեր Ազգային Պատրիարքարանը Պօլսոյ՝
որ Ս. Էջմիածնայ Մայր Աթոռոյն հարկա-
դրեալ և հեռաւոր պիտի ըլլայ, բայց առ-
կայն՝ այր և կնոջ անդամ դատաստանին՝ օրի-
նաց համեմատ վճիռ մը չի տալով, և կամ չե-
ղածին վրայ տարակուսելով՝ գոնե Ս. Աթո-
ռէն հրահանգ մըն ալ չի խնդրեր, այլ առ-
բիներով կը քշե դատը. վերջապէս դատաստ-
ատոր տեսնող անձն ալ կը զզուի, և դատը
խնդող անձն ալ կը յուսահատի, և 'ի դայ-
թակղութիւն Ազգիս՝ յուսահատելով ալ կ'ե-
նէ ուրիշ ազգաց դատերուն դիմել. որով շա-
տերն ալ ազգութիւնը ու կրօնքնին ալ ու-
բանալով՝ կ'օտարանան Հայկական Ս. Եկե-
ղեցիէն : Եւ այս յաւալի տեսարանը ամեն
օր մեր աչքին առջեւը ըլլալուն՝ ապացոյցի

կարօտութիւն չունի։ Կը թողումք ժառանգութեան վերաբերեալ շարունակ վէճերն ու վնասները, որ հետաքրքիր թէ Ազգիս կէսն ունեցեալին սակից փլած է . . . Թող և շատ դատաստան առանց արդարութեան և առանց վճռագրի կը կատարուի . . . ։ Ու այս ինչէն ըլլալն ալ յայտնի է. ինչպէս ըսինք, առանց օրինաց ընթանալուն Ազգային կառավարութիւնը, և առանց օրէնսգէտ անձինք ընտրելուն Ազգային ընդհանուր ժողովը։ Աւրեմն պէտք է որ, նախ և յառաջ ԳԱՏԱՍՏԱՆԱՑԻՐՔ մը ունենայ Ազգը, և ապա ժողովական անձինք յատկացնէ՝ որ և իցէ գործոց վերայ։ Ու այս օրինաց գիրքն ալ՝ շատ աշխատութեան և նուրբանոր կարգադրութեան և կամ վերատեսութեան հանմանելոյ կարօտութիւն մը չունի Հայկական Ս. Եկեղեցին. այլ կրօնականի գալով՝ Ս. Հարց կանոնական գրութիւններն բաւական են։ և եթէ անոնց մէջ պակաս մը գտնուելով և հարկն ալ պահանջէ՝ կարող է ժամանակին Հայրապետը վերատես ու սահմանել և հանդանակել Ս. Հարց շաւիղը բռնելով։ Ու ժառանգութեան ու քաղաքական վերաբերեալ մասին ալ՝ կ'ըսեմք, թէ Սրբոյ Հօրն մերոյ Ներսէսի Լամբրոնացւոյ, և Գրանելացոյն Մխիթարայ Գօշի դատաստանագրքերը բաւական են. վասն զի սրանց մէջ ըստ բաւականին՝ թէ ժառանգութեան և թէ

քաղաքական վերաբերեալ կանոն և օրէնք. ներ կան. բայց յայտնի է որ՝ ամէն կանոն և սահմանադրութիւն վասն հարկին և ըստ պահանջման ժամանակին կը դրուի. ուստի կ'ըսեմք. վերոյիշեալ դատաստանագրքերուն մէջէն տեղեկութիւն ստանալով՝ և աւելորդ համարուածը դուրս ձգելով, և այժմեան վրայօք ալ քանի մը օրէնք և կանոն սահմանել և տնօրինել հարկ ըլլայ, նոյն օրինաց վրայ հանգանակելով՝ դատաստանագիրք կամ օրինաց գիրք մը շինուիլը շատ դիւրին և օգտակար է Ազգիս, միանգամայն Խարձրագոյն Ազգան օրէնքներն ալ համեմատելով. որով ժողովական անդամք ալ ըստ օրինի վարուելէն ի զատ, այլ և չարաչար կուսակցութիւնը և տարաձայնութիւնն ալ կը վերնայ Ազգիս մէջէն, և Ազգարութիւնը, Սերը, ու Միաբանութիւնը կը թագաւորի Ազգիս վերայ...:

Երկրորդ. յայտնի է որ՝ քանի մը տարիէ ի վեր Արծնական կամ Հրգե-որական անուանով ժողովք մը կազմուեցաւ Ազգիս մէջ. բայց համարեա թէ՝ այս ժողովին մեծագոյն մասին արժանապատիւ Անդամները՝ իրենք ալ ըզգուեցան՝ շարունակ ընտրուելնուն. քանզի թէ իրենց գործերնուն կամ պաշտօններնուն մնալով վնաս կրեցին և պատիւնին զոհեցին, և թէ ժողովուրդը անոնց վրայ կասկածելով՝ գայթակղութեան տեղի տուին: Ուստի կ'ը

սեմք, թէ այսու հետև կրօնական ժողովոյ անդամք ընտրուելու որ ըլլան՝ ըստ Սահմանադրութեան 90ՐԴ յօդուածոյն՝ և ալ պէտք է որ քուէարկութեամբ ընտրուին, և ոչ ըստ հաճոյս առաջնոյն։ Իսկ այն ալ՝ ոչ թէ միայն Պօլսոյ կղերայց դասէն պիտի ըլլայ՝ այլ գոնէ վեցէն աւելի (Պօլսոյ մերձ եղող ծովեզերեայ վիճակներէն) վիճակաւոր Առաջնորդուս Էպիսկոպոսներ պէտք է որ ընտրուին. և քանզի պատահած է, որ շատ ժամանակ վիճակաւոր Առաջնորդաց դասն ալ տեսած է ու կը տեսնայ կրօնական ժողովը. վասնորոյ պէտք է որ ըստ եկեղեցական կանոնաց և Սահմանադրութեան վիճակաւոր Եպիսկոպոսներ ալ դրուին նոյն ժողովոյն. որպէս զի օրինաւոր դատելու կարող ըլլան։ (Յ–ԵԸ–ԺԴ. Էթէ անկարելի թուի Պօլսոյ մէջ միայն վիճակաւոր Առաջնորդները. կ'ըսեմք որ՝ թող յատկացուին կրօնական ժողովոյ Ընդամենից ընտրել վիճակաւոր Առաջնորդները, և ապա եթէ վիճակաւոր Առաջնորդաց վրայօք դատ մը տեսնելու հարկը ստիպէ, յայնժամ որոշեալ ժողովոյ Ընդամէնք, զոնէ տարին երկու կամ երեք անգամ կրնան գալ 'ի Պատրիարքարան, ունտիրադահութեամբ Ս. Պատրիարքի տեսնել զատը. և ասով սա աղէկութիւնն ալ կ'ըլլայ որ յարաժամ անձամբ յարաբերութիւն ունեցած կ'ըլլան Պատրիարքարանի հետ Առաջ

նորդները. որով ծանր դէպքերն ալ դիւրու-
թեամբ կը լմնան, և յարաժամ բողոքագիր-
ներու և մահէրագրութիւններու չէն կա-
ըստանար այժմեան պէս, և Պատրիարքարա-
նին ու վիճակներուն վրայ ալ ծանրութիւն
մը տալ. թող և շատ ժամանակ հանդիպած
է ու կը հանդիպի այնպիսի մահէրագրու-
թիւններ միմեանց հակառակ, որ երկու կողմ-
էն ալ տեղի չունին. և ահա ասով կուսակ-
ցութիւնն ալ կը վերնայ, ու վիճակներն ալ
փոքր ինչ հանդարտութեան մէջ կը մնայ։)
Բ. յետ ընտրուելոյն ալ՝ ինչ որ դատաստան
տեսնելու որ ըլլան՝ օրինաց համեմատ և վրձ-
ռադրոյ (ֆէթվայի) պիտի տեսնեն ու վճռեն
եղած դատը. և եթէ դատաստանագրէն դուրս
տարակուսական դէպք մը պատահի՝ ու չկրը-
նան դատել՝ նէ՝ պէտք է որ՝ կամ Ս. Աթոռին
ձգեն դատը, որ անկից ելլէ վճիռը. և կամ
անկից հրահանգ խնդրելով՝ իրենք պէտք է որ
վճռեն։ Ուստի առանց այս առաջարկութիւն-
ներով ընտրուած Կրօնական ժողովը՝ անբն-
դունելի պիտի դատուի Ազգիս լուութեանը։
Այս մասին կը խնդրէ Ազգը, թէ ինչ
պէս որ Ս. Էրուսաղէմայ փոխանորդը՝ Աթո-
ռին կողմէն հոս Պոլիս նստած ու կրօնական
ժողովոյն Ընդամենից ըլլալու արժանաւո-
րութիւնը ունեցեր է նէ մինչև յ՚արդ.
Նոյնպէս և պէտք է որ՝ Ս. Էջմիածնայ Աթո-

ուէն ալ փոխանորդ մը գալով՝ Կրօնական ժողովոյն Ընդամակից ըլլալու արժանաւորութիւնը ու պատիւը ունենայ. նոյնպէս և պէտք է որ՝ Պօլսոյ Աթոռոյս կողմէն ալ՝ մէկ մէկ անձ յատկապէս՝ վերոյիշեալ Աթոռոց, իբր փոխանորդ Պատրիարքարանի. որպէս զի Ազգը յարաբերութիւն ունեցած ըլլայ միշտ Աթոռներուն հետ. նոյն օրինակ ըլլայ Կիլիկիոյ Ս. Աթոռին հետ ալ. որով ամէն վիճակաց հետ յարաբերութիւն ունենալով՝ իբր Սի Հօտ և Սի Հովիւ եղած ըլլայ։

Երրորդ. այսօրուան օրս՝ մենք Հայոց Ազգ կամ Եկեղեցի կը կոչուինք կոր նէ՝ չգիտցուի թէ տիեզերատարած թագաւորութիւն մը, կամ հռչակաւոր չինք և երեւելի Սայրապետ մը ունենալու, և կամ երեւելի դրքասութիւն և իշխանութիւն մը ունենալու համար կը կոչուի՞կոր. ոչ երբէք... այլ տեղի ունեցող պարծանքներէն մի միայն երեք բան մնացած է. որոնցմով փոքր ինչ օտար ազգաց առջին գլխաւոր Ազգ ըսուելու և ճանչցուելու համարձակութիւն ու պատիւ կ'ունենամք կոր։ Ու ահա սոնք են։ Առաջին՝ մեր Հայրենի Ազատային լեզուն. Երկրորդ՝ մեր Ազգային հարազատ պատմութիւնը. և Երրորդ՝ Ս. Երուսաղէմոյ Տեսչութեան Տեղեաց բաժանորդութեամբն է որ՝ Հայոց Ազգ կամ Հայկական Եկեղեցի կայ կ'ըսուի կոր։ Ու այս

վերոյիշեալ առջի երկու խնդիրը՝ որչափ որ զօրաւոր է ալ նէ՝ բայց երրորդին չափ զօրաւոր և երեւելի ապացոյց մը չէ գլխաւոր Աստուծոյ կոչուելու. քանզի օտարազգիք ընդհանրապէս մեր լեզուին և կամ մեր պատմութեանը վերայ այնչափ տեղեկութիւն չունին ու մոռացեր և տեսանող չեն՝ քան թէ Ս. Գրուսաղէմայ ժառանգութեանը վերայ։ Արդ՝ թէպէտ և մեր հարստութիւնը օտարք վատնեցին և բնաջինջ ըրին. թէպէտ և մեր մարմնաւոր իշխանութիւնը բռնաւորք յափշտակեցին և կործանեցին... բայց՝ ի մխիթարութիւն և՝ ի պարծանս՝ իրեն սեփհական հօտին՝ (այսինքն՝ Հայկական Եկեղեցիին) անվնաս և անսասանելի պահեց Աստուած՝ քանի մը երեւելի Աթոռներնուս զատ՝ Ս. Գրուսաղէմայ Այր Աթոռը՝ յերեսաց երեւելի և աներեւոյթ դժոխոց...։ Լաստի որքան ալ փառաւորի Աստը օտարաց առջինէ՝ մի միայն Անով է պարծանքը և փառքը. և մանաւանդ ինչպէս ըսինք, մի միայն Անով կը ճանչցուի կոր այսօր՝ թէ Հայոց Աստ կամ Եկեղեցի կայ աշխարհիս երեսը...։ Երեմն փառք անիմանալի ողորմութեանն Աստուծոյ, որ բոլորովին անմիխիթար չէ թողուցած զԱստն մեր....։ Այց ինչ օգուտ, ցաւ է անբուժելի՝ տեսնել յետին և թշուառ վիճակի մէջ յիշեալ պարծանաց պարծանք հրաշալի Աշխատն մեր՝

ոյս լուսաւորեալ դարուս. ուր ընդհակառակն խաւարեալ և բարբարոս դարերուն մէջ անվնաս պահուած և արիւնով վաստակուած Տնօրինական Ս. Տեղեաց բաժանորդութիւնները և իրաւունքները ու կալուածները, ընդ նոսին և Միաբանութիւնը՝ որ իբր ամուր պարիսպ և պատուար եղած էր Ս. Թոռին՝ և Տնօրինական Ս. Տեղեաց. սակայն, ահ, օտարք յափշտակած են և դեռ կը յափշտակեն՝ մեր Ս. Տեղերը և իրաւունքները. և զանոնք պաշտպանող նախանձախնդիր Միաբանութիւնն ալ, շատ պակասած ու ցրուած են, և դեռ ցրուելու վրայ ալ ըլլալով՝ բոլորովին ամայութեան մէջ մնացած է այսօր։ Յառաջ Ղափապատուութեան շնորհիւն բժանացած Առաքելական Ս. Գահը. որ շրջակայ եղեալ քրիստոնեայք, նաև բարբարոսք անգամ կը պատկառէին և կը պատուէին զՍ. Թոռն և գերերջանիկ Հայրապետ Նորին. այլ ընդհակառակն այսօր՝ իբր ստորին ասպիճանի և յետին վիճակի ու անպատուութեան և աղետալի անցից մէջ կը թափառի. Թող և Տնօրինական Սրբազան Տեղեաց մեր բաժնի անշքութիւնը . . . և ասոնք որոնք, մի միայն յերեսաց անարժան Տեղակալին . . . ։ Լաստի ձայն գուժի և ողբոց ելաւ ու կ'ելլէ կոր հանապազ Յերուսաղէմ, այս Տեղակալին երեսէն՝ քանի մը տարիէ ի վեր. բայց դժբաղ

գարաբ՝ ի սէր Աղգին, և ի սէր անդին և անզուգական Աթոռին, և գոնէ ունեցած շահը . . . ի կարմրցուցանելու համար Աղգը, անոր վիճակը հարցնող և ցաւին դարման մը տանող այլեկու և բարեկարգիչ մը չեղան մինչև ցարդ. հետևաբար անշուշտ եմք, որ մնացած Տնօրինական Ս. Տեղերն ալ՝ ձեռքերնուս սիտի կորնչի, և մենք ալ գլխաւոր Աղգ կամ Ազգերուն կոչուելու բաժնին արժանաւորութենէն սիտի դադարիմք։ Բանալի ինչպէս ըսինք, յիշեալ Ս. Տեղեաց՝ քրիստոնէից հետ բաժանորդութիւն ունենալնուս համար է գլխաւորապէս, որ Աղգ կը կոչուինք կոր . . . Եւ եթէ այս զուլրացածներնիս ծանր և անհաւատալի ճշմարտութիւն մը երեւի, թող օրինակ բլլայ քանի մը տարիէ՝ ի վեր քսանիս չափ Ամենաբան վարդապետաց ցրուելը յերեսաց Տեղակալին. որմնցմէ մէկ քանին ալ՝ իրենց արժանաւորութեանը համար՝ Տաճկաստանի մէջ Առաջնորդ կարգեց Աղգը. նաև որմնցմէ մէկ քանին, այսինքն՝ վեցէն աւելին հոս Պոլիս է այժմ, ու Աղգիս դարմանին կ'սպասեն (*). թող օրինակ բլլայ տասնիւ չափ արժանապատիւ և Աղգասէր Ս. Հարց յուսահատութեամբ և ցաւօք սրտի՝ առանց դարման մը

(*) Այժմ ամիս մըն է՝ որ հեռագիրով ամենք ցրուելով յուսահատաբար իրենց վիճակը, և հայրենիքը գացին. և ոմանք ալ՝ մէկ մէկ պատճառով վերադարձան . . .

ասրուելու վախճանելը. նաև թող օրինակ ըլլայ, մինչև ցարդ հաստատուն կերպիւ ուսումնարան մը չի բացուելը, մանաւանդ թէ եղածն ալ՝ այս Պատրիարքին օրովը ցրուելը. յորմէ ուսանող կամ լեզուագէտ Միաբան կամ Վարդապետ չելլալը, որ քաղում պիտանին է՝ թէ Աթոռին, և թէ Աղգիս. այլ և թող օրինակ ըլլայ Ս. Աթոռին կտակաւ թողուած անշարժ կալուածները՝ առանց Աղգիս դիտաւորութեանը և առանց Միաբանից հաւանութեանը վաճառուիլը. ուր ընդհակառակն միւս քրիստոնէ ազգինք՝ մէկուն հաղար տալով՝ չունեցածնին կ'ստանան կոր այսօր. և այլն, և այլն, և այլն։ Ուրեմն որ օրի, և որ ժամանակի կ'սպասէ կոր Աղգը. արդեօք, մի թէ բոլորովին վաճառուելու՝ն . . . և կամ փլչելու՝ն կը նայի . . . ։ Այս եթէ այս մեր արդարացի բողոքին և օրինաւոր առաջարկութեանը չը հաւատայ ընդհանուր ժողովը, վասն որոյ բոլոր ակնատես ժողովուրդը կը պարտաւորի անձամբ Պատրիարքարանը գալ և վկայել մի առ մի։ Այսքէն մեր այս դանդաղ կացութենէն և անհոգութենէն չէ՞ մի, որ յիշեալ Աթոռին հոգ չի տանելով և կամ երբեմն օրինաւոր Տեղակալներ չի դնելով, մեծամեծ կորուստներ ունեցեր ենք մինչև ցարդ . . ։ Տեսէք. բացէք զաչս Ձեր և զլսելիս. վասն զի ապացուցական ճշմարտութիւն մը պիտի յայտ-

նեմք. արդ՝ Հայոց Աղգը Ս. Երուսաղէմայ վիճակին մէջ, 72 վանք ունէր ի նախնեաց ամսի. բայց այսօր ցաւօք սրտի կը տեսնեմք, որ յիշեալ վանքերէն հաղիւ թէ ութն հատը մնացեր է Աղգիս ձեռքը. անոնք ալ լաւ մեծի մասին ձեռքերնուս ելլելու բան մը մնացած չէ՞, եթէ Աղգը չօգնէ. միւս կորուսածներուն վրայ հրովարտակներով և տեղեկագիրներով ու պատմութիւններով, մի միայն կը մխիթարուի . . . եթէ հարցուի թէ՝ միւս մնացած կամ կորսուած 64 հատը ինչ է եղեր, ինչ պիտի ըլլայ. կէս մը տեղւոյն բռնաւորները կործաներ ու բնաջինջ են ըրեր. կէս մին ալ քրիստոնեայ անուանող Յոյն և Լատին կղերները խարդախութեամբ և մէկ մէկ կուսակցութեամբ յափշտակեր են՝ և մնացած կէսն ալ՝ գրեա՛ թէ Աղգին անհոգութեամբը ամայի մնացեր է, և կամ այժմեան Տեղակալին նման՝ անարժան մարդոցը ձեռքը վաճառուեր են ի կործանումն Աղգիս։ Հայոց զարմանքն այն է՝ որ մ՛ի՛շտ կուսակից ալ գտեր են այս պիսի անձինք . . . և աւելի զարմանալին է, որ Աղգն ալ այսպիսի եպերելի միջոցներուն անհոգ կեցեր ու դարման մը չէ՞ տարեր այժմեան պէս. ուր ընդհակառակն շատ ժամանակ մեծաւ ջերմեռանդութեամբ և Աղգասիրութեամբ՝ արեամբ չափ դիմանալով՝ ճակատուեր և պահպաներ են բարեյիշատակ նախ-

նիքն մեր. բայց մենք այժմ պատրաստ գտնե-
լով՝ անհոգ կեցեր եմք. աւաղ. . . : Ուրեմն
վերջապէս այս զուրցածներուս թող օրինակ
և գրգիռ մը ըլլայ՝ մեր ժամանակներուս պա-
տահած դէպքը. և ահա այն է՝ Յոպպէոյ
մէջ ունեցած տեղերնիս, որ յափշտակած ֆա-
ռանիինոյի տեղ ըրած են յարքունուստ. որ
Ազգապետներնուս մէկ քանին՝ չորս տարի է՝ ի
վեր՝ Ս. Աթոռին փոխանորդին հետ կ'աշխա-
տին ու բաղում դրամ ալ վատնելով՝ ձեռք
չեն կարեր կոր ձգել. հապա ոչքան ազգատե-
ցութեան ենթակայ է այն անձը՝ որ ձեռք
եղածն ալ կը կորսնցնէ՝ և կամ իրեն ֆէֆէն
կը վաճառէ. և այն ալ մի և նոյն վիճակին
մէջ՝ ի Յոպպէ՝ այս լուսաւորեալ և ազատ
դարուս մէջ. . . : Արդ՝ լալու արժանի բան
մըն է այս, որ մի և նոյն տեղւոյն համար Ազ-
գը աշխատի և դրամ մսխէ ձեռք ձգելու հա-
մար, և անդին միւս մէկ երեւելի տեղը՝ մի
և նոյն միջոցին և միևնոյն թաղին մէջ՝ Ազ-
գամիտաս էֆէնդի մը վաճառէ անձին մէկը. . :
Ուրեմն կ'աղաչեմք և կը բողոքեմք ալ Ազգա-
վին, որ այն անարժան վաճառումները եա
առնելով՝ Ազգիս իրաւունքները պաշտպան-
ուի. և ալ այցելու ու պաշտպան ըլլայ ընդ-
հանուր ժողովը Ս. Աթոռին, դեռ բոլորովին
Ազգիս իրաւունքները չի վատնուած . . . :

Եւ ջորջորդ, ոչքան որ Ազգը Սահմանա-

գրութիւն դնելով, իր իրաւանց ղեկը Երես-փոխանաց, կամ անոնց ընտրած ժողովական անդամոց ձեռքը տուած ալէ նէ՝ Ի վերայ այսր ամենայնի, եթէ անոնց տնօրինած ի և իցէ Ազգային գործոց և իրաւանց վերայ, կամ տարակուսական և կամ անհաճոյ խնդիր ու գործք մը պատահելու որ ըլլայ՝ Ազգը միշտ իրաւունք պիտի ունենայ ընդհանուր ժողովը քին՝ կամ առաջարկելու և կամ բողոքելու. և յայնժամ եթէ մեծագոյն մասին հաւանութիւնը առնելով՝ համոզուի Ազգը, կամ ասնկ ըսենք, յիշեալ առաջարկութեանը և կամ բողոքագրոյն գոհացուցիչ պատասխան մը առնէ, լրութեամբ պիտի պատուէ ժողովոյն տուած վճիռը. ապա թէ ոչ՝ կամ չի տրուի, և կամ չընդունուի, յայնժամ պարտաւոր և իրաւունք ունեցած պիտի ըլլայ Ազգը, լրագրաց միջոցաւ և կամ յայտարար գրով հրատարակել յիշեալ խնդիրները։ Ուրեմն և ահա այսու գրութեամբ ալ հիմակ ուրնէ խոնց կու տայ Ազգը ընդհանուր ժողովոյ Յարգելեացդ. որպէս զի եթէ պատահելու որ ըլլայ այնպիսի խնդիրներ, որ պարտաւորէ Ազգը կամ առաջարկել և կամ բողոքել, միշտ իրաւունք ունեցած պիտի ըլլայ՝ ամենապարտաւոր կերպիւ։

Ահա այս Ազգօգուտ և Հիմնական Ընդ-հանրութիւնները, առաջի ընդհանուր Մեծա

բելի ժողովրդ ներկայացնելով, որոնց գործադրութեանը և կարգադրութեանը անհամեմատաբար կ'ըսպասեմք։

Մնալով միշտ երախտապարտ Ազգասէր Տեարցդ.

ԼՈՒՍԱՒՈՐ ՀԱՅԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ

1860. Օգոստ. 25։ (Սիրագրութիւն)
Ի Պոլիս։

Յաւէ է ըսել, որ այս օրինաւոր և ամենահարկաւոր Ուսաջարկութեան ու խնդրոյն մէջ պատասխան մը տուուեցաւ Ազգայնոց՝ և մէջալ գործադրութիւնը տեսնուեցաւ. այո՝ թէպէտև Երրորդ խնդրոյն գործադրութեանը սկսեցին՝ բայց անխոհեմ կերպիւ. ինչպէս որ վերը ըստ բաւականին խմացուցինք...։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ե.

ՀԱՄԱՌՕՏ ԱՀԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԻՒՐՏԻՍՏԱՆՈՒ

ԵՒ ԱՆՈՐ ՍԱՀՄԱՆԻՆ ՄԷՋ ԲՆԱԿԵԱԼ ՀԱՅ ԱԶԳԻ ԺՈՂՈՎՐԴՈՑ

Այս սահմանին մէջ բնակեալ Հայազգի ժողովուրդներնուս համառօտակի նկարագրութիւնը՝ որուն մէջը բնակող երկու Քահանայներին տեղեկանալով կը նշանակեմք հոս միանգամայն ի բաց առնելով անառիկ և անմատչելի լերանց վրայ բնակող՝ և բոլորովին լեզուն ու ազգութիւնը և կրօնքը կորնցուցնող, նաև Տերութեան հարկ չի տուող ու բոլորովին Թիւրք ու վայրենի դարձող Ազգայինք մեր. այլ միայն Տերութեան հարկ տուող և փոքր ինչ Հայ լինելնին ալ գիտցող և ըստ մեծի մասին Սկրտեալ բայց միանգամայն անառաջնորդ և անայցելու ժողովուրդնիս՝ հանդերձ աւանաւը, գիւղերովը, նաեւ եկեղեցիներովն ու քահանայներովը և բնակիչներովը, հետեւեալքն են. որոնց սահմանագլուխ Աղերսը կացուցանելով կը նշանակեմք այսպես։

ԱՂԵՐՏ. Լիւ նոյն գաւառին մէջի բնակեալ Հայ ազգի ժողովուրդք. տունք 300. Եկեղեցի 1. Քահանայ 6. և հասարակ դպրոց մի,

որ նոր բացուեցաւ 1860 ին 'ի ձեռն Պ. Իսրայէլ Պօղոսեան, որ Ս. Փրկչի Ազգային վարժարանին մէջ կրթուելիւն առած, ու բնիկ Սղերցի է։

ՍՊԱՀԵՐՏ. Այս գաւառին մէջ. տունք 2,000 Եկեղեցի 6. Քահանայ 5. ոչ դպրոց, ոչ ուսուցանող, և ոչ ուսանող կայ։ Իւր այս քաղաքը՝ վերոյիշեալ Սղերտ գաւառին արեւելեան կողմը կ'ինայ. և տասը մէջը Թադէոս Սրբազան առաքելոյն շինած վանքը կայ անբնակ . . .։

ՏԻՀ կամ ՏԻՀ. Սղերտէն՝ վեց ժամ հեռի՝ նոյնպէս և արեւելեան կողմը կ'ինայ անոր. տունք 300. Եկեղեցի 2. Քահանայ 2. ոչ դպրոց, ոչ դպիր կայ, և այլն։

ՊԵՐՎԱՐԵՏ. Սղերտէն 7 ժամ հեռի, նոյնպէս անոր արեւելեան կողմը կ'ինայ. տունք 500, ոչ Եկեղեցի կայ, և ոչ Քահանայ, և շատք անկիրթք են . . .։

ՇԻՊԱՆ. որ Սղերտին բոլորտիքը գիւղերով աւան մի է. տունք 500. և այս աւանին Տերիկի կոչուած գիւղին մէջ. Եկեղեցի 1. Քահանայ 2. ոչ դպրոց կայ, և այլն։

ՏԵՐԿԻԼ. վերոյիշեալ ՏԻՀ գիւղաքաղաքէն իբր 10 ժամ հեռու է. և Սղերտին Արեւելեան Արեւմտակողմը կ'ինայ. տունք 200. ոչ Քահանայ, ոչ Եկեղեցի, և ոչ դպրոց կայ, և այլն։

ՈՒՏՎԱՆ. Լեան է. Սղերտու Արեւելեան Արեւմտակողմը կ'ինայ. իբր 12 ժամ հեռաւորութեամբ. տունք 800. Եկեղեցի 1. Քահանայ 7. ոչ դպրոց, եւայլն, եւայլն։

ԿՈՒՏԵԼԱՆ. Ութավանու մէջ. տունք 80. Եկեղեցի 1. Քահանայ 1։

ԴԱՐՁԱՆ. Մերձ Ութավանայ. Տունք 800. Եկեղեցի ոչ. Քահանայ 5. ոչ դպրոց, ոչ ուսանող եւ ոչ ուսուցանող կայ . . . ։

ՀԱԶՕ եւ ՊՈՇԻՒԿ. Լեան (խառապա). մերձ Պարզանայ. տունք 1,200։ Հաղցի մէջ Եկեղեցի 1. Քահանայ 6. եւ Պիշերիկի մէջ Եկեղեցի ոչ. Քահանայ 7. ոչ դպրոց, եւայլն։

ՍԻԼԻՎԱՆ. Գաւառ փոքրիկ, որն որ վերոյիշեալներուն Արեւմտեան կողմը կ'ինայ. հանգերձ գիւղերովն. տունք իբր 1,800. Եկեղեցի ոչ. Քահանայ 7. ոչ դպրոց, եւայլն, եւայլն։

ՀԱԶՐՕ. Յիշեալ գաւառին մերձ եւ անոր բոլորտիքն է. տունք 700. Եկեղեցի 1. Քահանայ 4. ոչ դպրոց կայ, եւայլն։ Եւ ասոր մէջն է ԴրբՀրոս անուանեալ վանքը՝ Թովմայ Առաքելոյ անուամբ կառուցեալ եւ հրաշագործ մասամբք փառաւորեալ. Միաբան . . ։

ԼԻՃՈՒ. Լեան է. եւ վերոյիշեալ Հաղցոյին Արեւմտեան կողմը կ'ինի, տունք 700. Եկեղեցի 1. Քահանայ 4. եւ ասոր բոլորտիքը գտնուած գիւղերուն մէջը ցրուեալ ժողո-

վուրդք, ոչ Եկեղեցի, ոչ Քահանայ, ոչ դպրոց ունին, և ոչ ալ որքանութիւնը կը գիտցուի . . . : Նաև այս տանին մէջն է Մակաբայեցւոց տնուամբ կառուցեալ Աբաքելաշէն վանքը. որն որ Լիճուէն 3 ժամ հեռաւորութեամբ լերան մը վերայ է. Միաբան . . . : Այլ և այս վանքին մօտ բարձր և անառիկ լերան մը մէջ, 400 տունի չափ Հայ ազգի ժողովուրդք կան հաստաբազուկ և կորովի քաջք որք առանց եկեղեցւոյ և առանց քահանայի թափառին քրիստոնեայ մէջը . . . :

ՀԻՆՆԻ. Մերձ Լիճուի. տունք 500. Եկեղեցի 1. Քահանայ 5. ոչ դպրոց ոչ դպիր կայ :

ՀԱՍԱՆ ՋԻՖ, որ Բրիթերէն Հասկիւ կոչի. և Ուէտվանէն մօտն է. տունք 100. ոչ Եկեղեցի. ոչ Քահանայ, և այլն :

ՇԵՐՔ ու ԶԵՐՊ. Տիգրանակերտէն օրուան մը ճանապարհ հեռի և անոր Արեւելեան կողմը կ'ելնի և Թիւրտիստանու վիճակ և սահմանն է. որուն մէջի ցրուած ժողովրդոց տունները, իբր 500 կ'ելնէ. բայց ոչ Քահանայ և ոչ Եկեղեցի ունին. այլ երբեմն Մակաբայեցւոց վանքի Միաբանք կը հովուեն. յայտնի է պրաղի հաւաքելու համար . . . :

ՍԱՂՈՒ ԳԻՒՂ. մերձ Տիգրանակերտի, տունք 120. Եկեղեցի 1. Քահանայ 2. ոչ դպրոց կայ. և այլն :

Իւ ահա այս վիճակը Տիգրանակերտցի

Մկրտիչ վարդապետը էբր թէ կը հովուէ և ասոնց Աղաջնորդն է . . . որոնք ընդ ամենը 11,500 . կամ 12,000 հաղարի չափ տուն Հայ ազգի ժողովուրդք ունենք Բիւրատիտանու մէջ. որոց ընդ ամենը՝ 100,000 հոգիի չափ կ'ելնէ , թէ այր և թէ կին , թէ մանչ և թէ աղջիկ . և այսքան բազմաթիւ ժողովրդոց համար , 17 հատ փոքրիկ և մատրան ձև Եկեղեցիներ կան . և 61 հատ աղ հաղիւ թէ կարդալ գրել գիտցող և օրական պարենի կարօտ խեղճ ու ապէտ Քահանայներ կան . ու մէկ աղ դպրոց մը ունին հատարակ կարդալու համար . այն ևս նոր բացուեցաւ քանի մը անձանց ընկերութեամբը և յիշեալ Խորայէլ վարժապետին ձեռօքը : Ուրեմն ոչ սքանչանալով չի կարդար այս նկարագիրը , և միանգամայն չի գոչէր՝ ըսելով թէ՝ այս ի՞նչ հրաշք է , և ի՞նչ սքանչելիք է , որ Հայոց Ս. Եկեղեց-ոյն վրայ կ'երե-է . . . քանզի ոչ միայն ասոնք հովուող և արածող օրինաւոր Քահանայներ և Աղաջնորդներ չ'ունին . և ոչ միայն ապօրինաւոր ու վարձկան մշակները ցրուած են . այլ և գողք և աւազակք յափշտակելով ոմանք թքացած , ոմանք քրդացած , և փոքրիկ մաս մ'ալ այժմ բողոքականութեան և հռովմէականութեան հետեւած՝ և կամ անոնց որսին մէջ ընկած . և շատք ալ 25 տարիէ 'ի վեր թէ՝ Ա. Գիւտասի կուսակալ Մահմետ Ալի բաշայի պատերազմին մէջ կոր-

ռուած, և մեծագոյն մասն մ'ալ Պետերհան պէյ-
կոչուած բռնաւորին ձեռաց տակը ընկճուած
ու Տրդացած. և բաւական մասն մ'ալ Անկըբ-
ոլիչ հրեշագործ վարդապետին երեսէն ցրուած
... նաև չեմք ալ գիտեր, որ ասկից 25 և 30
տարի յառաջ ալ ի՞նչեր՝ և որքան բազմաթիւ
գերդաստան Հայ ազգի ժողովուրդ եմք կո-
րուսած ... այլ միայն այս մեզի ծանօթ է-
ղած. ու 25 տարիէ 'ի վեր յայտնի կորսուած-
ներուն թիւը՝ եթէ 10,000 տուն ժողովուրդք
համարենք, չեմք սխալիր։ Այս ասոնցմէ 'ի զատ
կը թողուցեր նաև անառաջնորդ, անուսումն,
անօգնական, ու անխնամ թափառող, ու բո-
լորովին Տիւրբա ու անկրօն և վայրենի դարձ-
ած ժողովուրդնիս ալ ... եթէ քիչէն քիչ
ոնոնք ալ՝ 5,000 տուն համարենք, յայնժամ.
15,000 տուն ժողովուրդ կորսուած.
12,000 տուն անխնամ և այժմ կորսուելու վրայ
եղած.

27,000 ընդ ամենը, իբր 250,000 հոգի ժողո-
վուրդ կը լինի. որոնց կէսէն աւելին կորսուած,
ու մէկ մասն ալ այսօր թէ հոգեւոր և թէ մարմ-
նաւոր. այսինքն՝ թէ բարոյապէս և թէ նիւթա-
պէս՝ անխնամ և անօգնական ու անառաջնորդ և
անուսումն ու իբր անկրօն տառապելով վտանգի
տակ ինկած ու կորսուելու վրայ է ...։
Այլ՝ այսու ամենայնիւ, այսքան ահագին
միանգամայն և վտանգաւոր՞ վիճակին Ա՛ռաջ

նորդ անուանող անձը, ոչ թէ միայն հոս Պօ-
լիս կը դեգերի և մեծամեծաց դռները կը մա-
շեցնէ քանի տարիէ ի վեր. այլ և Խալու վի-
ճակին Ազգնորդութիւնն ալ անոր յանձնուե-
ցաւ, որ Բիւրտիստանու վիճակէն ուրիշ ա-
ւելի ճանապարհ հեռու է. ուրեմն ի՞նչպէս
և որը պիտի կառավարէ այս Ազգը. . . . թէ-
պէտև այս զուրցածս ալ անտեղի է. ըստ ո-
րում մեր մարդկային տկար դատողութեամբը
կը դատենք կոր. քանզի անոր Ազգնորդը
գէր ի վերոյ մեկ եակ մըն է, որ այս ինն և տաս-
ներորդ դարուս մէջ երեւան եկաւ. . . և ի-
րեն հրեշագործութեամբը ոչ միայն Բիւրտ-
իստանու և Խալուի բազմամարդ վիճակնե-
րը կրնայ կառավարել, այլ և մեկ բանի-բոլոր Տաճ-
կապանն ալ կարող է կառավարել. . . և ասոր ապա-
ցոյց այն է, որ մօտերս ոչ թէ յիշեալ վիճա-
կաց Ազգնորդութիւնները վերստին ձեռք
ձգեց, այլ և Սիսայու ժողովուրդներն ալ
հանվրդանելը- համար շրջաբերական կոնդակ մը
ալ ստացաւ Պատրիարքարանէն՝ քանի մը երե-
ւելեաց շնորհիւ ու միջնորդութեամբը. . .
և շատ չլքրշեր մինչև անգամ Պոլսոյ և Շրու-
սաղէմայ ու Լիմասնոյ Պատրիարքութիւն-
ներն ալ ձեռք կը բերէ. և կամ մեր երեւե-
լիները (եթէ ձեռվընուն գոյ) ու առաւել
ևս համարձուին իրեն խաբեական ձեռնարկու-
թեանցը, ու միամտաբար անոր ձեռքը եղած

ոչանչելեաց հաւատքընծայելով պաշտեն զինքը՝ անշուշտ ընդհանուր Աղգիս Տէսուչ կացուցանելու փափաք ունին . . . վասն զի ոչ հարցնող կայ , ոչ ալ բնտռող կայ , թէ այս մարդը ի՞նչ կրնէ կոր , և ասոր դիտաւորութիւնը ի՞նչ է . և կամ՝ ասոր յուցրցած արդիւնքները որո՞նք են մինչև ցարդ . որ 15 տարիէ՝ ի վեր Ի՛ի-րդիսպոնը պէրէ Բարեկարգեմ ո- դրդոց պէրէ հաստատեմ ըսելով աշխարհք դրդրդեցաց և դեռ կը թնդացուցնէ կոր ալ՝ լրագրաց միջոցներով . . . որով և բաղմադումար դրամ ու նպաստ և ձեռնտուութիւններ ու պարգեւներ ալ հաւաքեց ու դեռ կը հաւաքէ կոր ալ . . . . . բայց արդիւնք՝ ոչ մի ինչ . . . ի՛ վերայ այսր ամենայնի հարցրնող՝ մանաւանդ թէ հաշիւ պահանջող չկայ այս անձէն , թէ ի՞նչ կ՚ընէ կոր այս ստակները , և որքան է հաւաքած դրամները , գրեանքը , զարդերը , ու պարգեւները , և ո՞վ են իրեն ընկերները , և ո՞վ է հոգաբարձուն և գանձապետը այս ընկերութեան . . . նա մանաւանդ իրեն մէկ քանի գործերովը կասկածանաց և անհաւատարմութեան տեղի ալ տուաւ . . . բայց ասոնք ալ մէկդի կենայ . արդեօք ճի՞ր է՝ և աշխարհիս մը կոչմն է իրեն բացած անգոյ դպրոցը . . . . և գ՞նէ իրեն վիճակին մէջ ըրած բարեկարգութիւնները որո՞նք են . . . արդեօք ժամանակ ժամանակ ժողովուրդը ծեծելով փետտելով՝

ու մինչև անգամ երկրակալաց դուռը մատնելով՝ և անոնց հետ ընկեր ըլլալով՝ անմեղ ոչ խարներէն ու գառնուկներէն տուգանք առնելն է . . . և չէ նէ օրօրոցին մէջէն դեռ նոր եկած մանկիկներէն բռնի պատակ դրամներ, նաև ուռանց արդիւնք մը ցուցնելու իւր տարեկան պտղին հաւաքելու համար ըրած եղեռնագործութիւններն է . . . մանաւանդ թէ եկեղեցիներուն ու տուներուն մէջ յառաջադէմ անձինքները ու եկեղեցականները արատաւորելով ու ինքզինքը միայն անարատ քարոզելով՝ տարաձայնութիւններ՝ կռիւ և կռիւ սերմանելն է մի ասոր բարեկարգութիւնը . որ խոլամանկութեամբ՝ կ'ուզէ՝ որ կուսակցութիւն յարուցանէ և ինքը միայն շահի և տիրապետէ . և այս ալ ոչ միայն իրեն վիճակին մէջ՝ այլև ուր որ գտնուելու որ ըլլայ . ինչպէս որ հոս Պոլսոյ մէջ ալ տեսանք . և այս հրէշքներուն մանաւանդ թէ խաբեբայութիւններուն որին հաւատալու է, և որ ըրած բարեգործութիւնը և բարեգործութիւնը ու ազգասիրութիւնը նայելով կամ խաբուելու և կամ համոզուելու է . . . :

Ուրեմն մեղք է Ազգիս և հոն գտնուող անխնամ, անօգնական և անպաշտպան՝ միամիտ ու տառապեալ ժողովուրդներնուս . . . . և Ազգիս կառավարութեանը չի վայլէ՝ որ այս փորձը առնուած շահասէր խաբեբայն վերա-

ոին Հոն ուղարկեն. որով և անչուշտ միւս մեծագեալ յուսահատ ժողովուրդնիս ալ կամայ՝ ակամայ ձեռուընուս պիտի երթայ. քանզի այս անձէն մէկ կերպիւ մը յոյս չկայ բնաւին ... անգամ մը մտածելու է, որ այս անձը Պօլսոյ ժողովուրդները անգամ մինչև ցարդ կը խաբէ կորնէ. հապա այն միամիտ ու աղաւնաբարոյ եղբայրներնուս ինչեր չէ, ըրած, և ինչեր ալ չկրնար ընել ... մանաւանդ իրեն գաղտնիքները գիտցող և հրապարակող անձանց բոլորովին տունը քակելէն 'ի զատ՝ այլ քրիստերուն կամ իր կուսակիցներուն ձեռքը՝ մինչև անգամ այնպիսեաց կեանքն ալ կարելի է բառնալ տայ՝ Խ-ր ԱՌԱՆՁԷՕՔ.....: Ամէն գիտե՛մք, քանզի մէկ աւաղելի կառավարութիւն մի ալ կայ Ազգերնուս մէջը՝ որ այս օրինակ մարդերը դուրս կը ճամբեն. իբր թէ Պօլսոյ մէջ շփոթութիւն և տարաձայնութիւն չ'պատահելու և չ'սերմանելու և կամ իրենց կուսակից չ'գտնելու համար, (ինչպէս որ ըրին Յովհաննէս եպիսկոպոսն ալ՝ որ իր նը կարագիրը տեսանք ...) չ'մտածելով որ դուրսերուն առաւել ևս տարաձայնութիւն և գայթակղական գործոց առիթ կուտան, և որով դուրսերն ալ բոլորովին կործանելու և իրենց ուզած գէշութիւնները գործածելու պատճառ և ազատութիւն կուտան. փոխանակ ուսումնական, առաքինի ու հայրենասէր

անձինք լնտրելով ուղարկելուն. որ դուրսերը զարգանան ու յառաջանան. մանաւանդ թէ դուրսերն ալ խաղաղելով՝ Պօլսոյ Աղգայնոց կառավարութիւնն ալ գլխի ցաւէ կ'ազատի. և այս ալ ոչ թէ միայն Առաջնորդաց համար կը զբաղցնէ, այլ և Հօրսաձի և Իշխան անուանող ոմանց համար ալ, ո՞ր բանք որ յարաժամ իրենց գործիք ըլլած են ասոր նման շահասէր Առաջնորդները՝ իրենց շահուն ու բռնութեանը ընկեր ընելով. . . . Այլ և մեր խօսքին գալով կ'ըսենք, թէ այս պիսի անձերը հոս վար դնեն շատ աղէկ է՝ քան թէ դուրսերը նեռանեն . . . քանզի և ահա արդիւնքնին ցոյց տուինք . . . և քանզի չմտա՞ էիր վերտին գլխացաւութիւնն ալ պիտի քաշուի . . . քանզի առաւել գէշն է, մնացեալ ոչխարներնիս ալ պիտի ցրուին . . . Ուստի եթէ այսպիսի վիճակները բարեկարգել կ'ուզէ Աղգային կառավարութիւնը, խոնարհաբար կ'ըսենք, թէ յիշեալ վիճակներէն ուշիմ պատանիներ բերել տալով ու անոնք կրթել տալով ձեռնտուութիւն ընէ՝ որոնցմէ ալ վարժապետ և քահանայ կարգէ վիճակներուն. որ փոքր ինչ Աղգը յառաջանայ ու Աղգային կառավարութիւնն ալ ազատի գլխի ցաւէն. և կ'արձնենք այս ընթացքը շատ աղէկ կ'ըլլայ՝ քան թէ այսպիսի ոչխարազգեստ վարձկաններուն արտօնութիւն և առաջնորդութիւն

տալէն . . . որոնց պտուղը և արդիւնքը ցոյց տուինք , թէ ինչեր եմք կորուսեր և ինչեր ալ պիտի կորսնցնեմք , եթէ դարմանին չի նայի Ն՚զ գայթն կառավարութիւնը . . : Ն՚ւ սա ալ կ՚ըսեմք, որ եթէ այս վերջին առաջարկութիւնեիս ընդունուի՝ յայտնի է որ քանի մը տարի միջոց կ՚անցնի , ուստի մինչև որ այն պատանիները բերել ու կրթել տանիք՝ ժամանակ չի կորսընցնելու համար առ այժմ մէկ կողմէն ընկերութիւններ հաստատուելով՝ ուսեալ ու բանիբուն երիտասարդներէն՝ յիշեալ վիճակները ղրկուելով անմիջապէս պէտք եղած ձեռնարկութիւնները ընեն նէ , աւելի ևս շահաւոր կրնայ ըլլալ երկու կողմին ալ . այսինքն՝ մէյ մը ուսեալ երիտասարդները Ն՚զգիս օրինաւոր ծառայութիւն մը ընելով իրենց պարտքը կը կատարեն , և միանգամայն պարապ ալ չեն պտըտիր . մէյ մ՚ալ որ յիշեալ ողորմելի Ն՚զգայինք մեր՝ բոլորովին թէ բարոյապէս և թէ նիւթապէս չե՛ն կորնչիր . . . . Ար ունիցի ական ընելոյ՝ լուիցէ . . . :

ՅՈՐԴՈՐԱԿ

Արդ՝ մինչև երբ պիտի տեսնուի այս աշխատալի պատմութիւնները և նկարագիրները տառապեալ Ազգիս վրայ, մինչև երբ . . . . . Ահա ասոնց բոլորին ալ ծանօթ է՝ Յակոբ Սրբազան Նախորդ Պատրիարքը. բայց և այնպէս կարեկից ոգւով հոգ չ'տարաւ, հոգ չընրաւ կ'ըսեմք. քանզի փոխանակ այս և ասոր նման ուրիշ ընդարձակ վիճակներուն մէջ քանի մը դպրոցներ բանար, ու դպրոցներէն եկնող ուսեալ երիտասարդները անոնց վրայ վարժապետ դներ՝ աղէկ չէր մի բլլար. որով գոնէ թէ՛ վիճակները յառաջադիմութեան մէջ կը մնային, և թէ՛ յիշեալ ուսումնասէրները պարապ չէին պտըտեր՝ ու իրենց ալ հայ կը գտնէին ապրելու. մանաւանդ թէ՝ և ամենապիտանին է, որ ասով փոքրիկ գաղթականութիւն մը ալ կ'ըլլար, յիշեալ երիտասարդները իրենց հայրենի երկիրը երթալով, և անոնց մէջէն խնդրողն ալ հոն կարգուելով. որոնցմէ յառաջ եկած արժանաւորներն ալ Քահանայ ալ կրնային ըլլալ. բայց ասոնց մէկն ալ չընրաւ. և չընեղէն զկնի, ընդհակառակն 2,000 քսակի չափ ալ հաւաքելով՝ Իւսկիւտարու մէջ ուսումնարանի մը հիմը դրաւ հոյակապ շինութեամբ. գուցէ իր անունը յի-

ստակել տալու համար . . . գոնէ յիշեալ թաղին մէջ նոյնպէս հոյակապ շինութեամբ դպրոց մ՚ալ չ՚ունենայ Ազգը Ռ՚եմարան անուամբ . . . և գոնէ յիշեալ մեծագումար դրամը անշարժ կալուածներու տրուելով (մանաւանդ հիմայ, որ շատ աժան է գիները.) և անոնցմէ գոյացած եկամուտը յիշեալ ուսումնարանին և ուրիշ քանի մը կարօտեալ դպրոցներուն կապուելը, որով և ազգին վերայէն ծանրութիւնն ալ վերնար՝ մինթէ գէշ կ՚ըլլար, որով և իրեն Ընտունն ալ առաւել ևս կ՚անմահանար . . . մանաւանդ թէ ասով՝ Իւսկիւտարու Ռ՚եմարանին ընթացքն ալ օրինաւոր կերպիւ կը շարունակէր ու Ներուսաղէմայ վերայէն ծանրութիւնն ալ վերնալով՝ նա՛ ալ իր վիճակները կը բարեկարգէր՝ իր տուած ստակովը . . . և կամ թէ յիշեալ գումարը տոկոսով մէկ քանի հաւատարիմ անձանց տրուելը՝ և անոնց շահովը Աէլամբզի դպրոցը նայուելը՝ և աւելցած ստակովն ալ՝ Բիւրատիստանու մէջ քանի մը դպրոցներ բացուելով՝ անոնց վարժապետներուն և անոնց պէտք ըլլալու գրեանց մխուէր արդեօք ազէկ չէ՞ր մի ըլլար . . . ոչ. ասոնք ոմ պիտի ընէ, և ասոնք ոմ է մտածողը . . . : Այլ կամ խօսքս ըլլայ կամ իմին անունս զուրցուի, և կամ իմ նպատակս յառաջ երթայ, և անկից ետքը ինչ ըլլայ նէ ըլլա՛ . . . : Մէկը կ՚ելնէ Ռ՚եմարան

կը չինէ. և միւսը կ'ելնէ պալատի պէս ու-
ռումնարաններ և եկեղեցիներ կը չինէ. ու չի
նայիր և վերջը չի մոռանար՝ որ ինչով պիտի
ապրի. և ուրտեղ պէտք է կառուցանել զա-
նոնք... և ասոնց հակառակ մէկ միւսն ալ
կ'ելնէ չար նախանձով մը տարաձայնութիւն
յարուցանելով՝ զանոնք կը ցրուէ ու կը կոր-
ծանէ, և այն։ Վերջապէս շինութիւն շինու-
թեանց վրայ՝ և տնօրէնութիւն տնօրէնու-
թեանց վրայ է մեր Աստուծոյ գործը. և այս ալ
միմեանց հակառակ և աւելի ծախքերով, բայց
արդիւնք, ո՛չ մի ինչ.... գո՛նէ ասոնք վե-
ցայիշեալ վիճակներուն պէս կարօտեալ վի-
ճակներուն մէջ չինեն և անոնց պէտք ըլլալու
գործերուն վատնեն, ո՛չ... այլ իբր զեղխու-
թեամբ և շռայլութեամբ՝ օտար երկիրներ
միմեանց հակառակ և մէկմէկէ աւելի դրամ
վատնելով հոյակապ շինուածքներ կը չինեն.
չ'մոռանալով որ, նախ՝ իրենց հայրենեացը մէջ
չէ. երկրորդ՝ անոնք ինչով կրնան Աստուծոյ
ծառայութիւն մը չեղած յարատև մնալ. երրորդ՝
դուրսերը ի՞նչ վիճակի մէջ են, և ուր տեղ
պէտք է այնպիսի դպրոցներ կարգել, որով
Աստուն ալ յառաջանայ, թէ բարոյապէս և թէ
նիւթապէս. այլ ասոնք պարապ բաներ են
մեզի համար... Այնպէս և իմա՛ ժառան-
գաւորաց դպրոցի մասին ալ. որ 20 տարիէ 'ի
վեր խօսքը կը պարտի ու դեռ պիտի շինուի,

որոնցմէ օրինաւոր ու լեզուագէտ կղերներ յառաջ պիտի գայ. ռուսկից. արդեօք ուրուական կամ Պօլսոյ մթնոլորտին մէջ գոյութիւն ունեցած ժառանգաւորաց դպրոցէն, չէ նէ իր մօտը գտնուող Աբմաշու վանքէն. ռուսկից պիտի ելնէ և երբ պիտի ըլլայ. երբը մի հարցներ, քանզի 'ի միւսանգամ գաղտուկեան մնացած է Աղգիս բանը... ի՞նչ կ'ըսես... եա՛ Ասիսը ամեն օր գովութեամբ կը խօսի իր ըսդրին մէջ երկայն ճառեր հրատարակելով, թէ՝ Աբմաշը սանկ է բարեկարգուեր, Սեբաստիայ սանկ լուսաւորեր է. Պուրսան սանկ երկինքն է բարձրացեր. Կեսարիան սանկ թռեր է և կամ պիտի թռչի... և այս ինչ Աբիրան սանկ ժառանգաւորաց դպրոց մի պիտի կառուցանէ՝ և Պատրիարքը անոր սպաշտպան պիտի ըլլայ, և այլն, և այլն. միթէ ասոնք սուտ են..... սուտ չեն. բայց այսքան կ'ըսեմք, թէ չեղած ու չըլլալիք բանին, ով կրնայ սուտ կամ իրաւ է ըսել. ապա ուրեմն անգոյ է...:

Ահ, մինչև երբ, այս մնապարծութիւնները մեզ պիտի խաբէն. և երբ խելքերնիս գլուխնիս պիտի գայ ու աչուընիս ալ բանալով գլորած անդունդնիս պիտի տեսնեմք.. արդ՝ և ահա դրսերը այս խեղճութեան մէջ անխընամ կը թափառին՝ ու օր օրի վրայ կ'ոչնչանան և օտարները կերպ կերպ միջոցներով կը յափշտակեն կոր ամեն օր. և համաբեա՛ թէ՝

50 տարիէ 'ի վեր երեք միլիոնէն աւելի ժողովուրդ կորուսինք . . . Մնացած խեղճերն ալ իրենց օրական պարէնը չկրնար ճարելէն 'ի զատ, այլ և բռնութեան ու տգիտութեան տակը ճնշուելով՝ իրենց կրօնական պարտքերնին ալ չեն կրնար կատարել օրինաւոր կերպիւ ու զանոնք փրկութեան միջոցներով կը թող՝ և բարոյապէս ղարգացնող Տեսուչներ և Հովիւներ չունին, և ոչ ալ դպրոց ունին, որ ուսանին, որով կարող ըլլան ճանաչել իրենց լեզուն և Կրօնական ու Ազգային պարտիքները. բայց մենք՝ ոչ թէ միայն հանդստութեամբ բաղում և կերպ կերպ բարիքներ կը վայելեմք ու յարգն ալ չճանաչելով գոհութիւն ալ չեմք տար, այլ ընդհակառակն զեղխութեամբ մեկզմեկու հակառակ շինութեանց ձեռք կը զարնեմք օտարաց հետեւելով. չգիտնալով որ նիւթական շինութիւնները, և Հայրենիքէն դուրս օտար երկիրները շէնցնելը մեզի օգուտ մը չեն բեր՝ բաց 'ի վնասէն . . . վասն զի պէտք է որ մեր Հայրենիքը շէնցնեմք, որ մեր անմխիթար ու վայրենացեալ և օտարացեալ եղբայրներնիս ալ յառաջանան ու մխիթարուին. քանզի անոնցմով է, որ մեր Ազգութիւնը ու Եկեղեցինիս և Հայրենիքնիս կանգնած ու պահուած է. բայց աւաղ, որ ասոնց հակառակը կը տեսնեմք այսօր, և այն ալ աւելի Եւրոպասիրաց արդիւն

քըն է՝ որ մոռաւ մեր մէջը՝ քան թէ տպէ-
ռնաց . . . ըստ որում՝ քանի՛ որ Ազիայոյ մոմերոն
յարգը վերնալով՝ Եւրոպայի սպարմաքերներոն
լուսաւորութիւնները տարածեցաւ նէ Ազ-
գերնուս մէջ, և քանի՛ որ մեր տառապեալ
Հայրենիքը երեսէ ձգելով՝ շքեղ և փառացի
Եւրոպայի մէջ ճանապարհորդութիւնը յա-
ճախեցնէ՝ ամեն բան լմնցաւ ու մոռցվեցաւ
. . . որով ո՛չ հայրենիք, ո՛չ կրօնք. ո՛չ ջերմե-
ռանդութիւն, ո՛չ խիպ, ո՛չ ամօթ, ո՛չ պատ-
կառանք, և ո՛չ ալ խղճմտանք մնաց . . . . և
ընդհակառակն Ազգիս մէջեն ալ օրինաւոր և
պատկառելի Հայրեր ու Կղերներ ալ չի մնաց
որ այնպիսիները ուղղութեան ճամբան մըտ-
ցունէ . . . . այո՛ մնաց՝ ի՛նչ. անոնց դիմակը.
այլ արդիւնք և գործք, բնաւ երբէք . . . . :
Վասն զի անգամ մը մոռածելու եմք. որ բոլ-
ղովին մարմին և իբր անզգայ հրէշ մը դարձած եմք . . . և եթէ անզգայ չըլլամք, մեր
բարոյական մարմինը ամեն օր կը տանջուի, և
ամեն օր մէկ մէկ մաս կը կարեն ու կ՚առնեն
կը տանին կոր թշնամիք եկեղեցւոյս՝ իրենց
կորստեան անդունդը. բայց մե՛նք անհոգ կե-
ցեր՝ ո՛չ թէ միայն անոնց վրայ չեմք ցաւիր,
այլ և մնացած վերքերնուս ալ դարման մը և
օգուտ մը չեմք ըներ. արդեօք մի՞ թէ այս է
լուսաւորութիւնը և լուսաւորեալ դարը Ազ-
գիս, այո՛ օտարաց համար լուսաւորեալ է

գարս, բայց մեզի համար խաւար է . . . . . Այպաբէն ամաչելով և աղիողորմ արտասուօք ասեմ, Աղաչեմ, որ ճանապարհ է այս՝ որ մենք կ'երթամք կոր. և սատ վերջը ո՞ր պիտի կայանայ . . . արդ՝ մեր հայրենիքը և ահա այս գիշերութիւններուն և աղէտքներուն մէջ կը թաւալի ու կը տառապի, մենք որ ազգաւաչայ և իբր թէ անոնց եղբայրներն պիտի ըլլամք, բայց սակայն թէ բարոյապէս և թէ նիւթապէս անոնց օգնութիւն մը չընելէն՝ի զատ, այլև փառքերնիս ալ չգիտնալով ու ամէն վայելչութիւնները ձեռքերնիս՝ կ'ըսկսիմք մէկզմէկու անուն կոտրել, ու մէկզմէկու տուն կործանել, ու մէկզմէկու պատիւը արատաւոր ցուցնել՝ և երկպառակութիւններ յարուցանել ամէն օր. և ընդհակառակին Բրիտանիայ եմք կ'ըսեմք, բայց գոնէ կիրակի օրերը անգամ ջերմեռանդութեամբ Ս. Պատարագ չեմք տեսներ, և Եկեղեցի ալ չեմք երթար. սակայն գիշերները մինչև լոյս և կամ կիրակի օրերը օրն՝ի բուն՝ նարտերով ու թղթերով և դրամ ալ վատնելով ժամանակնիս այլ և այլ խաղերով՝ զեղխութեամբ և անառակութեամբ կ'անցունեմք. բայց գրեանք առնելու ու կարդալու համար ատակ չունիմք կ'ըսեմք. ու բարի օրինակ ալ չեմք ըլլար ընտանիքներնուս և զաւակներնուս՝ և սանկ բաներու հոգ չունիմք. Եկեղեցի երթալու համար ծոյլ եմք, Աստ-

ուսանպաշտութիւն ընելու դանդաղ ենք. կա-
ղօտելոց օգնութեան հասնելու կոչը ենք.
հայրենեաց ու հայրենակցաց նպաստելու և
անոնց օգնութեան հասնելու տգէտ ենք. և
աւելի գէշն է, որ գոնէ անոնց նեղ ժամա-
նակին ալ չենք օգներ. և անկից ետքն ալ Քրի-
սիանեայ ենք և Հայ ենք ըսելով ալ կը պար-
ծիմք... աւա՜ղ Քրիստոնէութեանս և վա՜յ
Հայութեանս... եթէ այս ընթացքներովէնէ
մեր Հայութիւնը ու Քրիստոնէութիւնը.
ահա՛ օրինակները սեսանք... : Արդ՝ ճշմարիտ
և ճշմարիտ կ'ըսեմ. որ ո՛չ միայն սև երես պի-
տի ելնենք 'ի հանդերձելումն առաջի ահեղ
աստեղին Քրիստոսի, այլ և 'ի մարմնի ատ ալ
շատ չ'երթայ՝ մեր Աղգին բանը բոլորովին
պիտի լմնայ... :

Ուրեմն աղաչեմ՝ 'ի սէր Յիսուսի, թէ
դառնանք այս ճանապարհէն, քանզի այս ճա-
նապարհը որ կ'երթամք կորնէ՝ Քրիստոսի և
անոր բոլոր Ընտրելոց ճանապարհը չէ. և այս
ճանապարհաւ ո՛չ թէ միայն Աբքայութեան փա-
ռացը հաղորդ չպիտի ըլլամք, այլ և աշխար-
հիս մէջ ալ խեղճութեամբ կեանքերնիս ան-
ցունելով պիտի կորնչիմք բոլորովին. գոնէ
մեր ապագան մտածենք և անոնց օգուտ ու
բարիք մը ձգենք, քանի՛ որ միջոցը ու ժամա-
նակը ձեռքերնիս է :

Եւ դպրոցներուն գալով ալ կ'ըսեմք վե-

բատին, որ եթէ դպրոց բանալ կ'ուզեմք նէ, չեմ ըսեր որ Պօլսոյ մէջ չ'ելլայ, այլ կ'ըսեմք. թէ առաւել ևս յիշեալ խղճալի վիճակներուն մէջ բանամք, ու անոնց զուարակութիւնը յառաջացընեմք. որոնք Պօլսոյ շինուածներուն նման աւելի ծախսերու ալ կարօտութիւն չունին, այլ Իւսկիւտարու մէջ շինուած դպրոցին ծախքովը՝ համարեա թէ 20, և 30, դպրոց կրնար բացուիլ. . . :

Իւ եթէ Յառանգաւորաց դպրոց որ կուզեմք բանալ նէ՝ ահա արդէն պատրաստ վանքեր կայ, որոնք ամայի և իբր անտէր կեցած է՝ անոնց մէջը բանամք, որոնցմէ մէկ քանին ալ ցուցընինք. ինչպէս և Կիպրոսի վրայօք ալ տեղեկութիւն տուինք. և անոր պէս դեռ շատ կը գտնուին պատրաստի, որն որ իրենց արդիւնքն ու կալուածներն ալ կրնան բաւել իրենց՝ եթէ ձեռք բերուի, որով Աստիս վերայէն ալ ծանրութիւնը կը վերնայ, և վերատին դրամ վատնելու հարկ չըլլար. այլ միայն թէ գործադրել տալու օրինաւոր անձինք պէտք է, որ ասոնք ընել տայ. և միանգամայն պէտք է որ տնտեսութիւնը և տարբաձայնութիւնը ու գաղափարներու տարբերութիւնը նա և անձնասիրութիւնը ու շատայլութիւնը մէկդի թողունք ու ԱՌԱՔԻՆԱՍԷՐ ԵՒ ԱՋԳԱՍԷՐ ՈԳԻՈՎ գործ տեսնեմք. և եթէ այս երկու ոգին ելլայ՝ յայնժամ ամէն

բան սիրով և յաջողութեամբ կը կատարի, ու Աղդն ալ կը զարդանայ օր քան զօր. ապա թէ ոչ՝ այս մեր այժմեան դնացած ճանապարհը անելանելի է. ինչպէս որ մինչև ցայս վայր ըսբ ցեցինք. և մնացեալներն ալ միւս հրատարակեալք աշխատութիւններուս մէջ կրնայ տեսնուիլ։

Ա՛խ. ե՞րբ Լամբրոնացիի ոգւով մեզի պատկառելի և Հայրենասէր Հայրապետ մը պիտի յարուցանէ Աստուած. որ անձնասիրութիւնը ու սնափառութիւնը մէկդի թողով, Աբիութեամբ և Աղգասիրութեամբ այս դիտողութիւններուս վրայ մտածէ և ասոնց գործադրութեանը ձեռք զարնէ... քանզի այս օրուան եղածները կը տեսնեմք կոր... այսինքն՝ եթէ վարդապետ է նէ՝ ժամ մը յառաջ եպիսկոպոս ըլլալ ու մատը մատանի դնել և ձեռքը սասյ առնել կ'ուզէ. եթէ եպիսկոպոս եղաւ նէ՝ Պօլսոյ և Էջմիածնայ Աթոռոյն Կաթուղիկոս ըլլալու հնարը կը բնառէ՝ և աւելի դեշն է, որ բոլորովին մարմին կտրելով կամ կուսակցութիւն ալ շահելով՝ Աղդապետ իշխաններնիս և միամիտ ժողովուրդնիս ալ կը դրդռէ կեղծաւորութեամբ, սնափառութեամբ, շահասիրութեամբ և աղդատեցութեամբ... ահ, մի՞թէ ասոնցմով կամ այս դիտաւորութիւնները ունեցող անձանց ձե-

ռ.ոքը՝ ըլ.սաւորութիւն և Ազգային յառաջա-
դիմութիւն ՝ի՛նչ մի ըլլալ . . . . ամենեւին
ոչ . . . և ահա այս զուրցածներուս փորձն ալ
տեսնուեցաւ մօտ օրերս ասոնց մէջ, և անոնց
ձեռ.ոքը եղած պարոն-ին ալ վայելեց Ազգը Պոլ-
սոյս մէջ. որով մինչև անգամ եղբայր եղբօր
արիւնը խմելու ջանացին ժողովուրդք . . . .
բայց Յերանելի եպիսկոպոսները՝ միայն հանդի-
սատես եղան այս աղետալի հանդէսին . . փո-
խանակ իրենց սուրբ կոչմանը համեմատ խաղա-
ղարար ըլլալնուն, ընդ հակառակն եթէ չեմք սը-
խալիր որ իրենց դրդմամբը եղաւ ըսեմք, ո-
րով բոլոր միամիտ հասարակութիւնը իրենց-
մէ ալ պաղեցուցին . . . : Ամէն Ամէն ասեմ,
թէ՝ մի՛շտ մեր Ազգին մէջ այսպիսի անխոհե-
մութիւններ քանի՛ որ պատահած է նէ՝ ան-
հնարի՛ն է որ Կղերաց մատը չըլլայ մէջը . . .
եթէ այս զուրցածս չափազանց համարուի կ'ը-
սեմք, թէ՝ ո՞ւր էին այն Կղերները և պատ-
կառելի Հայրենասէր եպիսկոպոսները Հոկ՞. 15
օրուան աղետալի անց.քին, արդեօ՞ք պէտք
չէր մի՝ որ մինչև անգամ իրենց անձը դնել
ալ հարկ ըլլար նէ՝ իրենց Յրկնաւոր Վարդա-
պետին նմանէին, բայց ո՜հ, ասոր հակառակը
տեսնուեցաւ . . . :

Արդ՝ վեց ամիսէ ՝ի վեր է Ազգը կը տա-
ռապի և վրդովը օր օրի կը շատնայ, բայց և
այնպէս Հայրենասէր մէկ Կղեր մը և Ազգա-

սէր մէկ Իշխան մը չելաւ ասոնց դէմ և այս երկու կուսակցութեանց չգոչեց ըսելով, թէ՝ Մարդիկ, ի՞նչ կ'ընէք կոր, և ի՞նչ կռիւ է այս ըրածնիդ. եթէ կարգ կանոն դնել և հաստատել կ'ուզէք, և կարգով կանոնով ըլլայ ամէն բանը Աղգին կ'ըսէք նէ՝ այս ընթացքով չըլլար . . . և եթէ Աղգին բարիք մը պիտի ընէք նէ՝ մէկզմէկ անարգելով՝ ու մէկզմէկու հերեթիկոս, ճիղձիր, անհաւատ կոչելով՝ նաև մէկզմէկ Եկեղեցիին վրնտելով չի լրմնար . . . . այլ խաղաղութեամբ ու սիրով և միաբանութեամբ կ'ըլլայ ամէն բան։ Եւ եթէ իմ խօսքս ըլլայ, ու իմ գրածս բռնուի, ու իմ նպատակս յառաջ երթայ կ'ըսէք նէ, գիտցած եղէք՝ որ այնպիսի անձը յաւիտենական դատապարտութեան արժանի է՝ քան թէ Հայ ու Բրիստոնէ կոչուելու . . . . վասն զի մեր Տունը և Հայրենիքը՝ այդ կերպ ըմբռնումները, և այդ կերպ մարդիկները և այդ օրինակ գաղափարները փլուց ու կործանեց. վասնորոյ յերկրէ և 'ի յերկնից նեղվեմ՝ ըլլայ այսուհետև այնպիսի անձը, որ այսպիսի չար խորհուրդներ մտածելով՝ և ապագան ալ չի մտածելով տառապեալ Աղգս կը վրդովէ յաբաժամ, և այն, և այն՝ չըսաւ ու չ'քարոզեց մէկը . . . ։ Բանդի մեր մեղացը համար, ոչ պատկառելի և կրօնասէր Կղեր մը՝ և ոչ ալ իրաւասէր ու Աղգասէր Իշխան մը մնաց, և

ոչ ալ ունկնդիր ժողովուրդ մնաց Աղգիս մէջ, որ համոզէ ու համոզուի, որով և Աղգիս իրաւունքը և պատիւը պաշտպանուի։ Ո՜հ, աւաղելի՛ վիճակ. ո՜հ, ամենավատթար աղգատեցութիւն. ո՜հ, ամենաղզուելի տգիտութիւն . . . ։ Իսկ թէ այս աղեսալի տեսարանը վերջինը ըլլար, ու անգամ մին ալ չերեւար խոշտալի Աղգիս վրայ . . . ։

Կնիք բանիս՝ Հայրենասիրութիւն, Կրօնասիրութիւն, Նղբայրսիրութիւն, Աղգասիրութիւն, նաև ամենէն աւելի Հարոյական կրքութիւն, և պիտանացու Կարգաւոր հաստատունել պէտք է, որ Սէրը և Միաբանութիւնը թագաւորելով Աղգիս վրայ, յայնժամ ասոնց գործադրութեանը հոգ տարուի. ապա թէ ոչ՝ այս դարուս մէջ ալ եթէ հարթենանք նէ մեր մահու քունէն, ողբալով կը գոչեմ, թէ բանեերնիս լմնցած է . . . Երիւն Ձեր Ի դըլուխս Ձեր, ով Կղերք և Իշխանք Հայոց . . . ։

Տէր, կեցո՛ զԱղգասէրս մեր, և բարձ Ի մէնք զազգատեացս. աղաչեմք . . . ։

Տէր, տուր զքո խաղաղութիւնդ՝ և զսէր միաբանութեան Աղգիս Հայկայ, և վերացո՛ Ի միջոյ զատելութիւնն և զանմիաբանութիւնն. աղաչեմք . . . ։

Արտաւանդ յօգնել մեզ նայեա՛, և Տէր յընկերել մեզ փութա՛. աղաչեմք . . . . ։

«Աստուած ողորմեա՛ մեզ, և օրհնեա՛ զմեզ, երեւեցո՛ զերեսս քո 'ի մեզ, և ողորմեա՛ մեզ. աղաչեմք . . . . :

Եւ ահա՛ այս Թողբլայ մի՛շտ մեր հայցուածքը և պաղատանքը առ Աստուած :

ՎԵՐՋ

ՎՐԻՊԱԿԻՐ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԷՋ.	ՏՈՂ.	ՍԽԱԼ.	ՈՒՂԻՂ.
9	ծանօթ՝.	գայցած	գնայցած
9	9	Աղգին	Աղգիս
20	23	իրեն	իրմէն
44	19	պատճառ	պատճառաւ
128	4	ըլլալուն	ըլլան
128	23	ջէնքեր	շէնքեր
188	1	վայլչութեան	վայելչութեան
190	3	օգոպոպոս	օգոպոս
194	12	որոշուիլ	ընտրուիլ